



# Միսիոներական Նախապատրաստություն

Ուսուցչի ձեռնարկ

Կրոն 130



# Միսիոներական նախապատրաստության ուսուցչի ձեռնարկ

*Կրոն 130*

Հրատարակված է  
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցու կողմից  
Սուրբ Լեյք Սիթի, Յուտա

Դիտողություններն ու ուղղումները ողջունելի են: Խնդրում ենք ուղարկել դրանք՝ այդ թվում նաև սխալները, հետևյալ հասցեով.

Seminaries and Institutes of Religion Curriculum Services  
50 E. North Temple St., Floor 8  
Salt Lake City, Utah 84150-0008  
USA

Email: [ces-manuals@ldschurch.org](mailto:ces-manuals@ldschurch.org)

Խնդրում ենք նշել ձեր լրիվ անունը, հասցեն, ծովսր և ցիցր:

Չմոռանաք նշել ձեռնարկի վերնագիրը: Այնուհետև նշեք ձեր դիտողությունները:

© 2014 by Intellectual Reserve, Inc.

Բոլոր իրավունքները վերապահված են:  
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում  
Տարբերակ 1, 6/15

Անգլերենի հաստատումը. 4/14  
Թարգմանության հաստատումը. 4/14  
Missionary Preparation Teacher Manual-ի թարգմանությունը  
Armenian  
02160 201

# Բովանդակություն

Միախոներական նախապատրաստության ուսուցչի ձեռնարկի նախաբան	v
1 Միախոներական աշխատանքի նպատակը	1
2 Քավության կարիքը մեր կյանքում	8
3 Սովորել Հոգով	17
4 Ուսուցանել Հոգով	26
5 Ո՞րն է Մորմոնի Գրքի դերը	34
6 Պատրաստվել միախոներական կյանքին	42
7 Ուսուցանել Վերականգնման ուղերձը (Մաս 1)	52
8 Ուսուցանել Վերականգնման ուղերձը (Մաս 2)	60
9 Զարգացնել Քրիստոսանման հատկանիշներ	68
10 Փրկության ծրագրի ուսուցում (Մաս 1)	76
11 Փրկության ծրագրի ուսուցում (Մաս 2)	85
12 Գտնել մարդկանց ուսուցանելու համար	91
13 Ուսուցանել Հիսուս Քրիստոսի Ավետարանը (Մաս 1)	101
14 Ուսուցանել Հիսուս Քրիստոսի Ավետարանը (Մաս 2)	112
15 Տաճարային և ընտանեկան պատմության աշխատանք	120



# Միսիոներական Նախապատրաստության ուսուցչի ձեռնարկի նախաբան (Կրոն 130)

## Մեր նպատակը

Մեմինարիաների և կրոնի ինստիտուտների նպատակը հետևյալն է.

«Մեր նպատակն է օգնել երիտասարդներին և չափահաս երիտասարդներին՝ հասկանալ Հիսուս Քրիստոսի ուսմունքները և Քավությունը և ապավինել դրանց, արժանի լինել տաճարի օրհնություններին և նախապատրաստվել ու պատրաստել իրենց ընտանիքներին ու մյուսներին՝ իրենց Երկնային Հոր հետ հավերժական կյանքին» (Gospel Teaching and Learning. A Handbook for Teachers and Leaders in Seminaries and Institutes of Religion [2012], 1):

Որպես ինստիտուտի ուսուցիչներ, դուք կարող եք օգնել հասնելու այս նպատակին՝ արդյունավետորեն ուսուցանելով ավետարանը. «Մենք ուսուցանում ենք ուսանողներին ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, ինչպես դրանք տրված են սուրբ գրություններում և մարգարեների խոսքերում: Այդ վարդապետություններն ու սկզբունքները ուսուցանվում են այնպիսի եղանակով, որը տանում է դեպի ըմբռնում և կատարելագործում: Մենք օգնում ենք ուսանողներին իրականացնել իրենց դերը ուսումնական գործընթացում և պատրաստում ենք նրանց՝ ավետարանը մյուսներին ուսուցանելուն» (Gospel Teaching and Learning, x):

Ավետարանն ուսուցանելու և սովորելու հիմունքները կօգնեն և ձեզ, և ձեր ուսանողներին՝ իրագործել Մեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների Նպատակը, երբ միաժամանակ ուսումնասիրում եք սուրբ գրությունները, մարգարեների խոսքերը և *Քարոզիչի Բն Ավետարանը* ձեռնարկը: Այդ հիմունքները հետևյալն են՝

- Ուսուցանել և սովորել Հոգով:
- Ջարգացնել սիրո, հարգանքի և նպատակասլաց ուսուցման միջավայր:
- Ուսումնասիրել սուրբ գրություններն ամեն օր և կարդալ դասընթացի տեքստը:
- Հասկանալ սուրբ գրությունների և մարգարեների խոսքերի հանգամանքներն ու նշանակությունը:
- Գտնել, հասկանալ, զգալ ավետարանի վարդապետությունների ու սկզբունքների ճշմարտությունն ու կարևորությունը և կիրառել դրանք:
- Բացատրել ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, կիսվել դրանցով և վկայել դրանց մասին:
- Մերտել սուրբ գրությունների կարևոր հատվածները և հիմնական վարդապետությունները:

«Երբ իմաստուն կերպով են կիրառվում և իրար հետ ներդաշնակ, [այս հիմունքները] խթանում են ուսանողների ընդունակությունը՝ հասկանալու սուրբ գրությունները և դրանցում պարունակվող վարդապետություններն ու սկզբունքները: Դրանք նաև քաջալերում են ուսանողներին ակտիվ դեր

ստանձնել ավետարանն ուսումնասիրելու հարցում և մեծացնում ուսանողների ըստ ավետարանի ապրելու և մյուսներին այն ուսուցանելու ունակությունը» (Gospel Teaching and Learning, 10): Այս հիմունքներն ավելի շուտ պետք է դիտվեն որպես արդյունքներ, քան ուսուցման մեթոդներ (տես Gospel Teaching and Learning, 10): Այս ձեռնարկի ուսուցման առաջարկները ներկայացնում են ձեր ուսուցման մեջ այս արդյունքներին հասնելու եղանակներ:

## Այդ դասընթացի նպատակը

Կրոն 130. Միսիոներական նախապատրաստությունը նախատեսված է՝ օգնելու ուսանողներին պատրաստվել լիաժամկետ միսիոներական ծառայության՝ կենտրոնանալով սուրբ գրություններում և մարգարեների խոսքերում գտնվող վարդապետությունների, սկզբունքների և խորհրդի, ինչպես նաև *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկի վրա: Այս ձեռնարկը, սուրբ գրությունները և *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկը ձեր հիմնական գործիքներն են, երբ դուք պատրաստվում եք և ուսուցանում այս դասընթացը: *Քարոզիչի Իմ Ավետարանը* ծառայում է որպես ուսանողների ձեռնարկ այս դասընթացի համար, այնպես որ դուք պետք է քաջալերեք ուսանողներին, որ ձեռք բերեն և ունենան իրենց սեփական օրինակները՝ ինչպես անհատական ուսումնասիրության, այնպես էլ դասարանում օգտագործելու համար: Դուք կօրհնեք ձեր ուսանողների կյանքը, եթե օգնեք նրանց ծանոթանալ այս գրքին և օգտագործել այն՝ միսիայի իրենց ծառայությանը նախապատրաստվելիս:

## Ինչպիսի՞ն է դասերի կառուցվածքը

Այս ձեռնարկը նախատեսված է օգնելու ինչպես նոր կանչված, այնպես էլ փորձառու ուսուցիչներին: Դասընթացի տևողությունը նախատեսված է լինել մեկ կիսամյակ և այն բաղկացած է 15 դասերից: Յուրաքանչյուր դասը նախատեսված է ուսուցանվելու 90 րոպեանոց դասաժամում: Եթե ձեր դասաժամը 90 րոպեից քիչ է տևում, ապա դուք կարող եք կամ կարճացնել դասերը, կամ բաժանել դրանք ավելի փոքր մասերի, որոնք կուսուցանվեն երկու կամ ավել դասաժամերի ընթացքում:

Ձեռնարկի յուրաքանչյուր դասը բաղկացած է հինգ մասից.

- Նախաբան
- Նախապատրաստություն
- Ուսուցման առաջարկներ
- Օգնություն ուսուցչին
- Գործելու հրավերներ

## Նախաբան

Յուրաքանչյուր դասը սկսվում է կարճ նախաբանով, որտեղ ամփոփվում է դասում պարունակվող վարդապետությունները, սկզբունքները և կարևոր գաղափարները:

## Նախնական պատրաստվածություն

Այս բաժինը պարունակում է ուսումնասիրության համար կարևոր աղբյուրներ և նաև թվարկում է աղբյուրներ (օրինակ՝ տեսանյութեր, օժանդակ նյութեր և այլն), որոնք օգտագործվում են յուրաքանչյուր դասի ժամանակ և որոնք դուք պետք է նախապես պատրաստեք: Օրինակ, եթե



դասն առաջարկում է դիտել տեսանյութ, ճիշտ կլինի նախօրոք ներբեռնել կամ այլ կերպ պատրաստել այն՝ դասին դիտելու համար:

### Ուսուցանման առաջարկներ

Այս բաժինն առաջարկներ է տալիս, թե ինչպես ուսուցանել դասընթացում սահմանված թեմաները: Որպես ուսուցիչ, դուք պետք է մանրակրկիտ ուսումնասիրեք այս բաժինը: Այս ձեռնարկի ուսուցման առաջարկները համապատասխանում են գլուխ 3 Gospel Teaching and Learning-ում սահմանված կարգին: Դրանք ցույց են տալիս, թե ինչպես կարելի է ընդգրկել Gospel Teaching and Learning-ի հիմունքները ձեր դասերում, որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ և կիրառել ավետարանի սկզբունքները և ամրապնդել իրենց անձնական դարձի գալու ընթացքը:

Յուրաքանչյուր դասի կառուցվածքում դուք կտեսնեք մի քանի կարևոր վարդապետություններ, սկզբունքներ և ճշմարտություններ, որոնք գրված են հաստ տառերով: Այս վարդապետություններն ու սկզբունքներն ընդգրկված են ուսումնական ծրագրում, քանի որ՝ 1) դրանք ներկայացնում են սուրբ գրություններում և *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում պարունակվող կարևոր ճշմարտությունները, 2) դրանք մասնավորապես համապատասխանում են ապագա միսիոներների կարիքներին և պայմաններին կամ 3) դրանք կարևոր ճշմարտություններ են, որոնք կարող են օգնել ուսանողներին՝ խորացնել իրենց հարաբերությունները Տիրոջ հետ և կպատրաստեն նրանց լիաժամկետ միսիայի ծառայությանը: Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգը խորհուրդ է տվել. «Երբ դաս եք պատրաստում, փնտրեք այնտեղ՝ դարձի բերող սկզբունքներ ... Դարձի բերող սկզբունքն այն է, որը նպաստում է Աստծո կամքին հնազանդվելուն» (“Converting Principles” [address to CES religious educators, Feb. 2, 1996], 1; si.lds.org): Տեղյակ եղեք, որ այս ձեռնարկը չի փորձում դիտարկել բոլոր վարդապետություններն ու սկզբունքները, որոնք կարող են ուսուցանվել դասին, և դուք կարող եք առաջնորդվել Հոգով՝ ուսուցանելու սկզբունքներ և վարդապետություններ, որոնք չեն դիտարկվում դասի նյութերում: Դասերի կիրառմանը վերաբերող լրացուցիչ գաղափարներ կարող եք գտնել ստորև՝ «Որոշեք, թե ինչ եք ուսուցանելու և ինչպես» բաժնում:

### Օգնություն ուսուցչին

Օգնությունն ուսուցչին հայտվում է վանդակներում՝ բոլոր դասերում և այն առաջնորդություն է առաջարկում ուսուցանման տարբեր մեթոդների, հմտությունների և տեխնիկայի վերաբերյալ: Դրանք նախատեսված են կրոնական կրթության հիմնական սկզբունքների հետ կապված լրացուցիչ մտքեր հաղորդելու համար: Աշխատեք մշտապես և արդյունավետորեն օգտագործել այս օգնության առաջարկները ձեր ուսուցման ժամանակ:

### Գործելու հրավերներ

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է. «[Ապագա միսիոներներ], իմ անկեղծ ցանկությունն է ձեզանից յուրաքանչյուրի համար, որ դուք ոչ թե պարզապես գնաք միսիա, այլ որ դուք միսիոներ դառնաք մինչև միսիոներական թղթերը ներկայացնելը, մինչև ծառայելու կանչը ստանալը, մինչև ձեր ցցի նախագահի կողմից ձեռնադրվելը և ՄՊԱ մուտք գործելը» («Միսիոներ դառնալ», *Ensign* կամ *Liahonnu*, նոյ. 2005, 45): Այս գաղափարի համաձայն, յուրաքանչյուր դաս պարունակում է

առաջարկվող վարժություններ՝ խրախուսելու ապագա միսիոներներին մտածել, գործել, և ծառայել միսիոներների նման, մինչև նրանց միսիոներների պատրաստման կենտրոն մտնելը: Այս բաժնում ընդգրկված վարժությունները քաջալերում են ուսանողներին տանը վարժվել նրա վրա, ինչ սովորեցին դասարանում: Այս վարժությունները հանձնարարելու կամ առաջարկելու տարբեր եղանակներ կան: Օրինակ, դուք կարող եք առաջին դասի ժամանակ բաժանել օժանդակ նյութը, որտեղ պարունակվում են առաջարկվող վարժություններ կիսամյակի յուրաքանչյուր շաբաթվա համար: Դուք կարող եք նաև գրել շաբաթական վարժությունների ցանկը գրատախտակին, կամ ամեն շաբաթ ուղարկել ձեր ուսանողներին այն տեքստի ձևով կամ է-փոստի միջոցով:

## Որոշեք, թե ինչ եք ուսուցանելու և ինչպես

### Ընտրեք ուսուցանման այնպիսի գաղափարներ, որոնք համապատասխանում են ուսանողների կարիքներին

Երբ պատրաստվում եք ուսուցանելու, կարող եք ինքներդ ձեզ այսպիսի հարցեր ուղղել. Ո՞ր մեթոդները կամ ուսուցանող վարժությունները կօգնեն իմ ուսանողներին հասկանալ այն, ինչի կարիքը նրանք ունեն: Ի՞նչը կօգնի իմ ուսանողներին բացահայտել, հասկանալ և բացատրել հիմնական վարդապետություններն ու սկզբունքները: Ի՞նչ էս կարող եմ անել, որպեսզի օգնեմ ուսանողներին զգալ ճշմարտությունը և այդ վարդապետությունների և սկզբունքների կարևորությունը: Ինչպե՞ս էս կարող եմ օգնել ուսանողներին կիրառել իրենց կյանքում այդ վարդապետություններն ու սկզբունքները:

Այս ձեռնարկը նախատեսված է օգնելու ձեզ դասերի նախապատրաստման ընթացքում: Մանրակրկիտ ուսումնասիրեք դասի նյութը: Ընտրեք այն ուսուցանման գաղափարները, որոնք լավագույնս են համապատասխանում ձեր ուսանողների կարիքներին և հարմարեցրեք դրանք ձեր ուսուցանման անձնական ոճին: Սուրբ Հոգին կառաջնորդի ձեզ այս գործընթացում: Դուք կարող եք օգտագործել ուսումնական ծրագրի վերաբերյալ բոլոր առաջարկները կամ դրանցից մի մասը, կամ էլ կարող եք հարմարեցնել առաջարկված մտքերը ձեր դասարանի կարիքներին ու պայմաններին: Երբ որոշելու լինեք, թե ինչպես հարմարեցնել դասերի նյութերը, հիշեք, որ մանրակրկիտ պատրաստվեք և նաև թույլ տաք Հոգուն, որ առաջնորդի ձեզ: Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Հ. Օուքսի հետևյալ խորհրդով. «Մենք առաջինը ընդունում ենք, ապա՝ հարմարվում: Եթե մենք ամբողջությամբ խորասուզված ենք նշանակված դասի մեջ, որը պետք է ուսուցանենք, ապա մենք կարող ենք հետևել Հոգուն, որ հարմարեցնենք այն» (“A Panel Discussion with Elder Dallin H. Oaks” [Seminaries and Institutes of Religion satellite broadcast, Aug. 7, 2012], 6; si.lds.org):

### Ուսուցանելու հնարավորություն տվեք ուսանողներին

Որպես այս դասընթացի ուսուցիչ ամենակարևոր բաներից մեկը, որ դուք կարող եք անել, ուսանողներին բազմիցս հնարավորություն տալն է, որ վարժվեն ուսուցանել և վկայություն տան դասի ժամանակ, քանի որ շատ երիտասարդներ ավետարանի վարդապետություններն ու սկզբունքները վստահությամբ չեն ուսուցանում: Ուսանողներին հնարավորություն տվեք պատասխանելու հարցերին, ավետարանի ճշմարտությունները բացատրելու դասարանի մյուս անդամներին և ուսուցանելու միսիոներական դասերը՝ *Քարոզիր Իմ Այլևտարանը* ձեռնարկից: Երբ ապագա միսիոներները սկսեն

հասկանալ, թե ինչպես են ավետարանի վարդապետությունները և սկզբունքները տանում փրկության, նրանք ավետարանը կուսուցանեն ավելի անկեղծորեն և ավելի մեծ գործությամբ:

Բացի սովորելուց, թե ինչ ասել և ինչ անել, ապագա միսիոներները պետք է սովորեն ուշադրություն դարձնել ունկնդիրների կարիքներին և Հոգու օգնությամբ կռահեն, թե յուրաքանչյուր ունկնդիր ինչի կարիք ունի, որպեսզի շարունակի դարձի գալու ճանապարհը: Օգնեք ուսանողներին հասկանալ, որ ունկնդրի տևական դարձի գալը ավելի քիչ է կախված միսիոների ասածից և արածից, քան նրանից, թե արդյոք ունկնդիրը հավատքով է գործում: Առավել արդյունավետ միսիոներները մեծ ուշադրություն են դարձնում ունկնդիրների ասածներին և արածներին և, ապա, սիրով օգնում են նրանց առաջադիմել դեպի դարձի գալը:

### **Սահմանել ակնկալիքներ ուսանողների համար**

Դասին նախապատրաստվելիս և այն ուսուցանելիս ձեզ համար օգտակար կլինեն հետևյալ առաջարկները.

- Ուսանողներին հանձնարարեք յուրաքանչյուր դասից առաջ կարդալ *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի կիրառման բաժինները կամ գերագույն համաժողովի ուղերձները: Դասընթացը սկսելուց առաջ ուսանողներին կարող էք տրամադրել ուսումնական կամ դասընթացի ծրագիրը, որտեղ բացատրվում է, թե ինչ է ուսուցանվելու դասերին և ինչ պետք է ուսանողները կարդան նախապատրաստվելով յուրաքանչյուր դասին: Այն ուսանողները, ովքեր նախօրոք պատրաստվում են, ավելի լավ կուսուցանվեն Սուրբ Հոգու կողմից դասերի ժամանակ:
- Ակնկալեք ուսանողներից, որ կատարեն իրենց դերը որպես սովորողներ (see Gospel Teaching and Learning, 6, 15, 55):
- Թույլ տվեք, որ ուսանողներն ինքնուրույն բացահայտեն ավետարանի ճշմարտությունները: Ուսանողները կատարելագործվում են, երբ դուք առաջնորդում եք նրանց ուսուցողական գործընթացի միջով, որը նման է նրան, ինչ դուք եք զգացել դասին նախապատրաստվելիս: Երբ ուսանողներն ինքնուրույն բացահայտեն վարդապետություններն ու սկզբունքները, նրանց հնարավորություն տվեք բացատրել այս ճշմարտություններն իրենց սեփական բառերով և թող կիսվեն ու վկայեն նրա մասին, ինչ գիտեն, ինչ զգացումներ ունեն և ինչ են պլանավորում անել:
- Ստեղծեք մթնոլորտ, որտեղ ուսանողները կզգան Տիրոջ Հոգին, երբ նրանք ուսուցանում են մեկը մյուսին և սովորում միմյանցից (տես ՎեՆՈՒ 88.78, 122):
- Քաջալերեք ուսանողներին յուրաքանչյուր դասին իրենց հետ բերել սուրբ գրությունները, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի իրենց օրինակը և ուսումնասիրության օրագիրը: Բացատրեք, թե ինչ է ուսումնասիրության օրագիրը և ինչպես այն օգտագործել:

Երբ որոշեք, թե ինչ ուսուցանել և ինչպես, ձեր մտքում պահել Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը.


«Իմ կյանքում մեծագույն ազդեցություն թողած ուսուցիչների մոտ ես մի ընդհանուր գիծ եմ նկատել: Նրանք օգնել են ինձ, որ ձգտեմ սովորել՝ հավատքով: Նրանք հրաժարվել են հեշտ պատասխաններ տալ իմ դժվար

հարցերին: Փաստն այն է, որ նրանք ընդհանրապես պատասխաններ չեն տվել: Փոխարենը, նրանք հուշել են ճանապարհը և օգնել են ինձ քայլեր ձեռնարկել՝ գտնելու համար իմ սեփական պատասխանները: Ես, իհարկե, միշտ չէ, որ գնահատում էի այդ մոտեցումը, սակայն փորձը հնարավորություն տվեց ինձ հասկանալ, որ մեկ այլ անձի տված պատասխանը հաճախ շատ երկար չի հիշվում, եթե ընդհանրապես հիշվում է: Բայց հավատք գործադրելով հայտնաբերած կամ ստացած պատասխանը, սովորաբար, պահպանվում է ողջ կյանքի ընթացքում» (“Seek Learning by Faith” [an evening with Elder David A. Bednar, Feb. 3, 2006], 5; si.lds.org):


### Ուսուցողական վարժություններ

Կան մի շարք եղանակներ, թե ինչպես օգտագործել դասարանային ուսուցողական վարժությունները, որոնք առաջարկված են դասի ծրագրում: Ընդհանրապես լավ է տարբեր եղանակներով կատարել վարժությունները, որպեսզի ուսանողները շարունակեն հետաքրքրված և կենտրոնացած մնալ: Օրինակ, դերակատարումների ժամանակ կարող եք հրավիրել ուսանողներին դերերով փոխվել՝ որպես միսիոներ և ունկնդիր, և որպես գնահատող, որտեղ պատշաճ է: Դուք նույնպես կարող եք մասնակցել կատարելով որևէ դեր, եթե անհրաժեշտ է:


#### Երկու հոգուց բաղկացած խմբեր




#### Երեք հոգուց բաղկացած խմբեր



#### Խմբային վարժություն



#### Չորս հոգուց բաղկացած խմբեր



Մ = Միսիոներ, Ու = Ունկնդիր, Գ = Գնահատող

### Ուսուցման մոդել

ՄՊԿ-ի ծրագրում կիրառվող ուսուցման մոդելը կարող է հարմարեցվել այս դասընթացի համար, որպեսզի օգնի ուսանողներին զարգացնել հմտություններ և ունակություններ: Այդ մոդելի տարրերը կարելի է օգտագործել ցանկացած հաջորդականությամբ և կրկնել, որպեսզի լավագույնս ծառայեն նպատակին՝ օգնելու ուսանողներին կիրառման միջոցով բարեփոխվել:

Բացատրել—Ցույց տալ—Կիրառել—Գնահատել—Կրկին կիրառել

### **Բացատրեք**

Բացատրեք գաղափարներն ու հմտությունները, որոնք ուսանողները պետք է իմանան, և ուսուցանեք նրանց, թե այդ հմտություններն ու գաղափարներն ինչպես կօգնեն իրականացնել միսիոներական նպատակը:

### **Ցույց տվեք**

Օրինակ ցույց տվեք, թե ուսանողներն ինչ պետք է անեն: Դրան կարելի է հասնել կենդանի ցուցադրումների, տեսաֆիլմերի կամ այլ միջոցների շնորհիվ:

### **Կիրառեք**

Խնդրեք ուսանողներին կիրառել հմտությունները գույգերով կամ խմբերով:

### **Չնահատեք**

Երբ ուսանողները կիրառեն, բացահայտեք այն, ինչ նրանք լավ են կատարում և թե ինչպես կարող են բարելավել իրենց հմտությունները: Քաջալերեք նրանց:

### **Կրկնեք կիրառելը**

Հնարավորության դեպքում ժամանակ տրամադրեք, որ կրկնեն կիրառումը:

## **Սոցանց միսիոներական աշխատանք**

Որպես լիաժամկետ միսիոներներ ձեր ուսանողները կօգտագործեն Համացանցը որպես քարոզչական գործիք՝ գտնելու և կապ հաստատելու ունկնդիրների հետ, կապ հաստատելու անդամների հետ, աշխատելու տեղի քահանայության ղեկավարների և միսիայի ղեկավարների հետ, պատասխանելու հարցերին, ընդունելու նոր մարդկանց անունները, ում հետ պետք է կապ հաստատեն, հետևելու պարտավորություններին, հաստատելու պայմանավորվածություններն ուսուցանելու սկզբունքներ *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկից: Այս ձեռնարկում զետեղված տարբեր առաջարկները կօգնեն ձեզ խրախուսել ուսանողներին՝ սկսել ավետարանով կիսվել, օգտագործելով առցանց գործիքները:

Որպես այս դասընթացի ուսուցիչ դուք կարող եք օգտվել էլեկտրոնային սարքերից՝ շարափվա ընթացքում կապ հաստատելով ձեր ուսանողների հետ տեքստային հաղորդակցությունների կամ սոցիալական կայքերի միջոցով, հետևելով դասարանում տրված հանձնարարություններին, խրախուսելով նրանց, որ նախքան դասարան գալն ուսումնասիրեն նյութը, կամ հիշեցնել, որ ամեն օր կարդան Մորմոնի Գիրքը:

## **Ձեռնարկը հարմարեցնել հաշմանդամներին**

Հաշմանդամություն ունեցող ուսանողներին ուսուցանելիս ուսուցիչները կարող են հարմարեցնել դասերը ուսանողների կարիքներին: Օրինակ, որպեսզի դասերը հարմարեցվեն այնպիսի ուսանողներին, ովքեր չեն կարող կարդալ, դուք կարող եք անձամբ բարձրաձայն կարդալ, որպեսզի ուսանողները լսեն, կամ օգտագործել նախապես ձայնագրված նյութեր (ինչպես օրինակ՝ սուրբ գրությունների, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի և զերագույն համաժողովի ելույթների ձայնագրություններն ու տեսագրությունները): Երբ դասերի ժամանակ հարկավոր է գրավոր պատասխաններ տալ, կարող եք քաջալերել ուսանողներին փոխարենը

բանավոր պատասխաններ տալ: Մյուս ուսանողները ևս կարող են օգնել հաշմանդամ ուսանողներին՝ նրանց համար անձնապես կարդալով նյութերը կամ գրելով պատասխանները:

Լրացուցիչ մտքերի և աղբյուրների համար օգտվեք [disabilities.lds.org](http://disabilities.lds.org) կայքի Հաշմանդամության ռեսուրսներ էջից և Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների քաղաքականության ձեռնարկի «Հարմարեցված դասեր և ծրագրեր հաշմանդամ ուսանողների համար» բաժնից:

# Միսիոներական աշխատանքի նպատակը

1

## Նախաբան

*Քարոզիչ Իմ Ավետարանն* ուսուցանում է, որ միսիոներական աշխատանքի նպատակն է «հրավիրել մարդկանց գալ դեպի Քրիստոսը, օգնելով նրանց ստանալ վերականգնված ավետարանը Հիսուս Քրիստոսի ու Նրա Քավության հանդեպ հավատքի, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևի և մինչև վերջ համբերելու միջոցով» (*Քարոզիչ Իմ Ավետարանը*, 1): Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենն ասել է. «Ձեր միսիան կլինի սրբազան

հնարավորություն՝ բերելու ուրիշներին դեպի Քրիստոս և օգնելու նախապատրաստվել Փրկչի Երկրորդ Գալուստին» («Նախապատրաստել աշխարհը Երկրորդ Գալուստին» *Ensign* կամ *Liahona*, մայիս 2011, 50): Այս դասընթացը կարող է օգնել ձեր ուսանողներին նախապատրաստվել մասնակցելու միսիոներական աշխատանքի սրբազան հնարավորությանը:

## Նախապատրաստություն

- Ուսումնասիրեք 2 Նեփի 31.2, 10–21, 3 Նեփի 11.31–41, և 3 Նեփի 27.13–21:
- Ուսումնասիրեք *Քարոզիչ Իմ Ավետարանի* 1-ին գլուխը:
- Պատրաստվեք ցուցադրել «The Purpose of Missionary Work: Robles Family» (9:19) տեսանյութը, որը մատչելի է LDS.org կայքում:
- Նախապատրաստեք օժանդակ նյութը, որը կոչվում է «Մեր միսիոներական նպատակը», որը գտնվում է դասի վերջում:

## Ուսուցման առաջարկներ

### Միսիոներական աշխատանքի նպատակը

Խնդրեք ուսանողներին գտնել միջոցառումներ և հանձնարարություններ, որոնք միսիոներները կանոնավորապես կատարում են և գրի առնեն դրանք գրատախտակին: (Պատասխանները կարող են ներառել տեղանքին ծանոթանալը, ուսումնասիրելը, ուսուցանելը, աղոթելը և ծառայելը:)

Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ «Ձեր նպատակը» վանդակը էջ 1, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում: (Քանի որ սա դասարանի առաջին հանդիպումն է, շատ ուսանողներ կարող է *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի օրինակ չունենան իրենց հետ, այսպիսով, գուցե դուք կարիք ունենաք բաժանել սրա և դասին վերաբերվող մյուս էջերի պատճենած օրինակները:)

Հաջորդը, հրավիրեք ուսանողներին համեմատել միսիոներական նպատակի հայտարարությունը, գրատախտակի հանձնարարությունների ցուցակի հետ և հարցրեք.


- Ինչպե՞ս կարող է միսիոներական նպատակի հայտարարությունը հասկանալը խորացնել ձեր ըմբռնումը, թե ինչ են անում միսիոներները: Ինչպե՞ս է այս նպատակը իմաստ տալիս այն հանձնարարություններին, որոնք միսիոներները կատարում են:
- Այս նպատակի հայտարարության *ո՞ր* մասերն են բնորոշում միսիոների պատասխանատվությունը, և *ո՞ր* մասերն են բնորոշում ունկնդրի պատասխանատվությունը:

### Հրավիրել Սուրբ

**Հոգին:** Հաճախ ուսանողի կողմից առաջնորդվող լավ պատրաստված հավաքը, որը ներառում է աղոթք, հիմնի կատարում և հակիրճ միտք սուրբ գրություններից, հրավիրում է Հոգին, միաբանում է ուսանողներին և պատրաստում է նրանց մտքերը և սրտերը հոգևոր ուսուցման համար:

- Ինչպե՞ս կարող է նպատակի այս հայտարարությունը առաջնորդող սկզբունք դարձնելը ձեր աշխատանքում ձեզ ավելի արդյունավետ միսիոներ դարձնել: (Նպատակի հայտարարությունը ուղղություն է տալիս աշխատանքին, որը միսիոները կատարում է: Դա օգնում է միսիոներներին ավելի քիչ կենտրոնանալ հանձնարարությունների վրա և ավելի շատ՝ իրենց իսկական նպատակի:)

Որպեսզի օգնեք դասարանի անդամներին ավելի լավ հասկանալ միսիոներական աշխատանքի նպատակը, հրավիրեք նրանց բացել էջ 2-ը *Քարոզիչ Իմ ա Ավետարանը*, ձեռնարկի և ապա խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ վերջին պարբերությունը, սկսելով «Դուք կանչված եք» բառերով:

 *Ուշադրություն. Բացատրեք ուսանողներին, որ ուսանողի ձեռնարկը այս դասընթացի համար Քարոզիչ Իմ Ավետարանն է: Խրախուսեք նրանց ամեն շաբաթ իրենց հետ դասարան բերել Քարոզիչ Իմ Ավետարանը ձեռնարկի տպագրված կամ էլեկտրոնային օրինակը: Դուք գուցե կամենաք ձեռք բերել նաև Քարոզիչ Իմ Ավետարանը ձեռնարկի օրինակները՝ օգտագործելու պրակտիկ վարժությունների հետ, որոնք շարադրված են ուսուցչի ձեռնարկում:*

Դասարանով քննարկեք հետևյալ հարցերը.

- Համաձայն այս պարբերության, ի՞նչ պետք է անի մարդը դեպի Փրկիչը գալու համար:
- Համաձայն այս պարբերության, ի՞նչ է անում միսիոները՝ օգնելու ուրիշներին գալ դեպի Հիսուս Քրիստոս:

Յուրաքանչյուր ուսանողի տվեք «Մեր միսիոներական նպատակը» օժանդակ նյութից մի օրինակ: Այդ նյութը պարունակում է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի ելույթից մի հատված: Ուսանողներին դասավորեք փոքր խմբերով, կամ նրանց հրավիրեք ինքնուրույն կազմել իրենց խմբերը: Հրավիրեք խմբերին միասին կարդալ օժանդակ նյութը և քննարկել վերջում գտնվող հարցերը:

Երբ ուսանողները բավարար ժամանակ կունենան ուսումնասիրելու և քննարկելու Երեց Քրիստոֆերսոնի դիտարկումները, կանչեք մի քանի ուսանողների կիսվել քննարկվող հարցերի շուրջ իրենց պատասխաններով: Ապա տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կարող եք սկսել կենտրոնանալ միսիոներական նպատակի հայտարարության վրա: (Պատասխանները կարող են ներառել հետևյալից որևէ մեկը. ուսանողները գուցե ընտրեն անգիր սովորել այն, գուցե նրանք գրի առնեն դա և դնեն մի տեղում, որտեղից կարող են տեսնել այն ամեն օր, նրանք գուցե աղոթեն օգնության համար, որ ավելի լավ հասկանան այն, կամ գուցե որոնեն մանրամասներ այդ նպատակից, որպես իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության մաս:

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Հ. Օուքսի հետևյալ մեջբերումը.




«Մենք չենք քարոզում և ուսուցանում, որպեսզի «մարդկանց բերենք Եկեղեցի», կամ մեծացնենք Եկեղեցու անդամակցությունը: Մենք չենք քարոզում և ուսուցանում, որպեսզի ուղղակի համոզենք մարդկանց ավելի լավ կյանքով ապրել: ... Մենք հրավիրում ենք բոլորին գալ դեպի Քրիստոսը ապաշխարությամբ, մկրտությամբ և հաստատմամբ, որպեսզի բացենք դռները դեպի սելեստիալ արքայություն Աստծո որդիների և դուստրերի համար [տես Վևու 76. 51–52]: Ուրիշ ոչ մեկը չի



կարող անել սա» («The Purpose of Missionary Work,» missionary satellite broadcast, Apr. 1995):

- Ինչո՞ւ է կարևոր հիշել, որ ավետարանը քարոզելը շատ ավելի մեծ բանի համար է, քան պարզապես ինչ-որ մեկին օգնելը Եկեղեցու անդամ դառնալ: (Տես նաև 3 Նեփի 11.33-34:)
- Ի՞նչ մտքեր եք ունենում, երբ մտածում եք, որ դուք կօգնեք «բացել սելեւստիալ արքայության դռները» նրանց համար, ում դուք կուսուցանեք:

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչպես նրանք կարող են կիրառել միախոնեթական նպատակն իրենց կյանքում և խնդրեք նրանց մտածել, թե միախա ծառայելու իրենց անձնական դրդապատճառներն արդյոք համապատասխանում են միախոնեթական նպատակի հայտարարությանը, որը գտնվում է *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում: Խնդրեք ուսանողներին մի րոպե տրամադրել գրի առնելու մի թերթիկի վրա կամ ուսումնասիրության օրագրում, թե ինչ կոնկրետ գործողություններ նրանք կարող են կատարել՝ բերելու իրենց միախա ծառայելու դրդապատճառները ավելի մեծ ներդաշնակության հայտարարության այս նպատակի հետ:

 *Ուշադրություն. Սուրբ գրությունների ուսումնասիրության օրագիրը կարող է լինել կարված օրագիր, տեսր կամ իրար կցված էջեր: Ուսանողները կարող են օգտագործել նաև Նշումների կամ օրագրերի գործիքը LDS.org կայքում, կամ Նշումներ կատարող որևէ հավելված էլեկտրոնային սարքի վրա: Ուսանողները պետք է օգտագործեն իրենց ուսումնասիրության օրագրերը Նշումներ կատարելու համար և գրի առնեն տպավորությունները դասերի ընթացքում և անհատական ուսումնասիրության ժամանակ:*

**Քրիստոսի վարդապետության ուսուցումը**

Բացատրեք դասարանին, որ Փրկիչը հայտարարել է, որ Մորմոնի Գրքի հիմնական նպատակներից մեկն է «ի լույս բերել իմ ավետարանը [և] իմ վարդապետության ճշմարիտ կետերը» (ՎևՈւ 10.62): Քրիստոսի վարդապետությունը ներառում է այն պատվիրանը, որ ողջ մարդկությունը հավատա Հիսուս Քրիստոսին՝ որպես Տեր և Փրկիչ, ապաշխարի մեղքից, մկրտվի և ստանա Հոգին (տես 3 Նեփի 11.32): Գրատախտակին գրեք հետևյալը.

2 Նեփի 31.2, 10–21	3 Նեփի 11.31–41	3 Նեփի 27.13–21
--------------------	-----------------	-----------------

Դասարանը բաժանեք երեք խմբի: Դասարանի մի խմբին հանձնարարեք ուսումնասիրել 2 Նեփի 31.2, 10–21, խնդրեք երկրորդ խմբին ուսումնասիրել 3 Նեփի 11.31-41, իսկ երրորդ խմբին՝ ուսումնասիրել 3 Նեփի 27.13–22 հատվածները: Խնդրեք յուրաքանչյուր խմբին կարդալ իրենց հատվածները և գտնել, թե ինչ է պահանջվում նրանցից, ովքեր ձգտում են հետևել Հիսուս Քրիստոսին: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին ընդգծել կամ նշել իրենց սուրբ գրություններում որոշակի ճշմարտություններ Հիսուս Քրիստոսի վարդապետության և ավետարանի մասին:

Հանձնարարված հատվածներն ուսումնասիրելու համար ուսանողներին բավարար ժամանակ տրամադրելուց հետո, խնդրեք նրանց իրենց գտածը գրել գրատախտակին յուրաքանչյուր հղման ներքո՝ այն որոշակի գործողությունները, որոնք պահանջվում են Հիսուս Քրիստոսի հետևորդներից:

**Կիրառում:**  
Ուսուցիչները պետք է ժամանակ տան ուսանողներին դասարանում մտածել, խորհրդածել կամ գրել այն հատուկ գործողությունների մասին, որոնք նրանք գուցե ձեռնարկեն, որպեսզի կիրառեն սկզբունքներն իրենց կյանքում: Ուսուցիչները պետք է խրախուսեն ուսանողներին խնդրել առաջնորդություն և ուղղություն Տիրոջից, երբ իրենք ձգտում են իմանալ, թե ինչպես անձնապես կիրառել սկզբունքները:

Ապա ուղղեք հետևյալ տիպի հարցեր.

- Եթե ինչ-որ մեկը հարցներ ձեզ, թե Մորմունները հավատո՞ւմ են Հիսուս Քրիստոսին, ինչպե՞ս կարող են գրատախտակին գրված այս երեք սուրբ գրության հատվածներն օգնել ձեզ պատասխանել այդ հարցին:
- Ձեր խոսքերով ինչպե՞ս կարող եք բացատրել Հիսուս Քրիստոսի վարդապետությունը կամ ավետարանը ինչ-որ մեկին, ով չգիտի, թե ինչ է դա:
- Որոշ մարդիկ գուցե հարցնեն ձեզ, թե ինչո՞ւ են միսիոներները քարոզում մարդկանց, ովքեր արդեն հավատում են Հիսուս Քրիստոսին: Ինչպե՞ս է Քրիստոսի վարդապետությունը, ինչպես այն ուրվագծված է գրատախտակի վրայի սուրբ գրքերի այս հատվածներում, օգնում ձեզ պատասխանել այդ հարցին:

Երբ ուսանողները պատասխանեն, հավաստիացե՛ք, որ նրանք հասկանում են, որ Քրիստոսի վարդապետությունը բաղկացած է նրանից, թե. (1) ինչ արեց Հիսուս Քրիստոսը և շարունակում է անել՝ մեզ Հորը մոտեցնելու համար (տես Ավմա 33.22, ՎնՈւ 76.40–42) և (2) ինչ մենք պետք է անենք Հիսուս Քրիստոսի Քավության օրհնություններին հասնելու համար, ներառյալ հավատք ունենալը, ապաշխարելը, մկրտվելը, Սուրբ Հոգու պարզև ստանալը և մինչև վերջ համբերելը (տես 3 Նեփի 27.16–21):

Ուսանողների ուշադրությունը կրկին հրավիրեք գրատախտակի վրայի միսիոներական նպատակի հայտարարության վրա և հարցրեք.

- Ինչպե՞ս է Քրիստոսի վարդապետությունը կապված միսիոներական աշխատանքի նպատակի հետ:

(Մինչ ուսանողները կքննարկեն այս հարցը, նրանք հավանաբար կարտահայտեն հետևյալ ճշմարտությունը. **Միսիոներները կատարում են իրենց նպատակը՝ օգնելով ունկնդիրներին ընդունել Քրիստոսի վարդապետությունը, զարգացնել հավատք, ապաշխարել, մկրտվել, ստանալ Սուրբ Հոգու պարզև և համբերել մինչև վերջ:**

Խորացնելու համար ուսանողների հասկացողությունը, որ ունկնդիրները պետք է գործեն Քրիստոսի վարդապետությունից ելնելով՝ վերականգնված ավետարանն ընդունելու համար, հանձնարարեք ուսանողներին բացել էջ 5-ը *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ առաջին երկու պարբերություններն այն բաժնում, որը կոչվում է «Հիսուս Քրիստոսի Ավետարանը»: Ապա ուղղեք հետևյալ տիպի հարցեր՝ որպեսզի օգնեք ձեր ուսանողներին տեսնել, թե ինչու է ունկնդիրների համար կարևոր հավատքով գործելը:

- Ի՞նչ ապացույց կարող է միսիոները փնտրել, որպեսզի որոշի, թե արդյո՞ք ունկնդիրը գործադրում է հավատք Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ՝ ապաշխարելով և նախապատրաստվելով ստանալու մկրտության ուխտը:

Ուսանողների պատասխանելուց հետո, բացատրեք, որ միսիոներները հաճախ մտահոգվում են ճիշտ բանը ասելիս կամ անելիս: Այնուամենայնիվ, միսիոներների ասածից կամ արածից ավելի կարևոր է այն, որ ունկնդիրները գործեն հավատքով, նրա վերաբերյալ, ինչ իրենք սովորում են: Ամենակարևոր հմտություններից մեկը, որ միսիոները կարող է

զարգացնել՝ Հոգով զանազանելն է, թե արդյոք ունկնդիրն իսկապես հավատքով է գործում և դարձի գալիս:

- Ի՞նչ ապացույց կարող է միսիոները փնտրել՝ որոշելու համար, թե արդյոք Սուրբ Հոգին ներկա էր դասի ընթացքում և ունկնդիրը զգում էր այն:
- Ի՞նչ կարող են ապագա միսիոներներն անել՝ ավելի լավ հասկանալու և կիրառելու Քրիստոսի վարդապետությունը: (Պատասխանները կարող են ներառել՝ աղոթել հավատքով ավելի մեծ հասկացողության համար, ուսումնասիրել սուրբ գրություններում Քրիստոսի վարդապետության որոշակի դրոյթները, ինչպես օրինակ՝ Հիսուս Քրիստոսի Քավությունը և ավետարանի առաջին սկզբունքներն ու արարողությունները, խոսել ուրիշների հետ այն մասին, թե ինչ են նրանք արել ամրապնդելու համար իրենց հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ, ուսումնասիրել հաղորդության աղոթքները՝ մկրտության ուխտերի վերաբերյալ ավելի մեծ հասկացողություն ձեռք բերելու համար և այլն:)



Ցույց տվեք «The Purpose of Missionary Work: Robles Family» (9:19)

տեսանյութը, և խնդրեք դասարանի անդամներին նշումներ կատարել նրա վերաբերյալ, թե ինչ արեցին միսիոներները՝ օգնելու Ռոբլսների ընտանիքին գալ դեպի Քրիստոսը:

Տեսանյութը ցույց տալուց հետո, ուղղեք հետևյալ տիպի հարցեր, որպեսզի օգնեք ուսանողներին բացատրել, թե ինչ արեցին միսիոներները՝ իրենց նպատակին հասնելու համար:

- Ի՞նչ արեցին այդ միսիոներները՝ օգնելու Ռոբլսների ընտանիքին հավատքով աճելու համար: (Պատասխանները կարող են ներառել հետևյալը՝ նրանք խրախուսեցին նրանց աղոթել Մորմոնի Գրքի մասին, պատասխանեցին նրանց հարցերին, ուսուցանեցին նրանց, թե ինչու է կարևոր հնազանդվել պատվիրաններին, օգնեցին նրանց ստանալ մկրտության արարողությունը, հավաստիացան, որ ծովը ներգրավվեց նրանց կյանքում և ուղղորդեց նրանց դեպի տաճար:)
- Ինչո՞ւ են թե *ունկնդիրներին* ուսուցանելը, և *թե հրավիրելը* նրանց գալ դեպի Քրիստոս, կարևոր բաներ, որոնք կատարում են միսիոներները:
- Ի՞նչ ապացույց դուք տեսաք, որ Ռոբլսների ընտանիքի անդամների հավատքը մեծացավ և որ նրանք ավելի շատ զգացին ներդաշնակություն Քրիստոսի Հոգու հետ:

Ձեր ուսանողներին տվեք մի քանի բույե՝ ուսումնասիրելու բաժինը, որը կոչվում է «Օգնել մյուսներին պարտավորություններ ստանձնել. Դուք դեպի հավատք և ապաշխարություն» *Քարոզիչի իմ Ավետարանը* ձեռնարկի էջ 9: Այնուհետև հանձնարարեք ուսանողներին զույգեր կազմել և հերթով կիսվել, թե ինչ նրանք զգացին հրավիրելով մյուսներին պահել պատվիրանները: Ի՞նչ երկյուղներ կամ մտահոգություններ ունեին նրանք: Ի՞նչն օգնեց նրանց վստահություն ունենալ, որ իրենք կկարողանան անել դա: Ապա տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կարող է Քրիստոսի վարդապետությունը հասկանալն օգնել ձեզ հրավիրել ունկնդիրներին պարտավորություններ ստանձնել:
- Ինչո՞ւ է Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ասել, որ միսիոները պետք է որ «ամայացած» գալ իրեն, երբ մարդիկ չստանձնեն պարտավորություն կարդալ կամ աղոթել Մորմոնի Գրքի մասին:

Հրավիրեք դասարանին պատկերացնել, թե ինչ կզգան՝ օգնելով մարդկանց փոփոխություններ կատարել և սկսելով: Հարցրեք, թե նրանցից որևէ մեկը օգնե՞լ է որևէ ընկերոջ կամ ընտանիքի անդամի գալ դեպի Քրիստոսը և հրավիրեք նրանց կիսվել, թե ինչ են զգացել օգնելով այդ գործընթացում:

**Մեծագույն պարտականությունը**

Քննարկեք, թե ինչպես են միսիոներներն իշխանությամբ ուսուցանում Երկնային Հոր զավակներին ավետարանը և օգնում նրանց ստանալ արարողություններ, որոնք թույլ կտան նրանց վայելել Քավության օրհնությունները: Ցուցադրեք հետևյալ հայտարարությունները և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք:



«Այն ամենից հետո, ինչ ասվել է, ամենամեծ և ամենակարևոր պարտականությունը Ավետարանը քարոզելն է» (Ջոզեֆ Սմիթ, մեջբերված է *Քարոզիչ Իմ Ավետարանը*, 12):



«Ավետարանը քարոզելը ավելի կարևոր է, քան մյուս բարի գործերը: Դուք մեծագույն գործի մեջ եք աշխարհում և ոչ մի բան չի կարող համեմատվել դրա հետ: Տներ և կամուրջներ կառուցելը ոչինչ է: Աշխարհներ կառուցելը ոչինչ է, համեմատած կյանքերի հետ, որոնք դուք եք կառուցում: Մահկանացու կյանքեր փրկելը այնքան էլ կարևոր ձեռքբերում չէ, համեմատած նրա հետ ինչ դուք եք անում: Դուք կարող ե գնաք այստեղի գերզմանոցներից մեկը և հարություն տաք մահացածներին, նույնիսկ հազարի կամ նրանցից տասը հազարի և դուք չեք արել ոչինչ, համեմատած նրա հետ, ինչ դուք անում եք, երբ փրկում եք մարդկանց» (The Teachings of Spencer W. Kimball [1982], 547):

Հարցրեք ուսանողներին՝ արդյոք կա՞ն ցանկացողներ կիսվելու, թե ինչու են նրանք կարծում, որ ավետարանը քարոզելը ամենակարևոր պարտականությունն է, որ մենք ունենք: Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ քարոզելով ավետարանը, մենք օգնում ենք ուրիշներին հասանելի դառնալ Քավության օրհնություններին:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 18.10, 15-16 հատվածները, մինչ դասարանը կհետևի նրան, փնտրելով այն օրհնությունները, որոնք գալիս են նրանց, ովքեր քարոզում են ավետարանը և նրանց, ովքեր ընդունում են ավետարանը: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ օրհնություններ են ստանում ավետարանը քարոզողները և նրանք, ում ուսուցանվում է ավետարանը:

Բացատրեք, որ միսիոներական աշխատանքը կարող է նաև դժվարին լինել: Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ մեջբերումը.



Ես համոզված եմ, որ միսիոներական աշխատանքը հեշտ չէ, որովհետև փրկությունը էժան փորձառություն չէ: Փրկությունը երբեք հեշտ չի եղել: Մենք Հիսուս Քրիստոսի Եկեղեցին ենք, սա է ճշմարտությունը և Նա է մեր Մեծ Հավերժական Գլխավորը: Ինչպե՞ս կարող ենք հավատալ, որ դա հեշտ կլինի մեզ համար, երբ դա երբեք, երբեք հեշտ չէր Նրա համար: Ինձ թվում է, որ


միսիոներները և միսիայի ղեկավարները պետք է անցկացնեն առնվազն մի քանի պահեր Գեթսեմանիում: Միսիոներները և միսիայի ղեկավարները պետք է մեկ կամ երկու քայլ կատարեն դեպի Գողգոթայի գագաթը:

... Ես հավատում եմ, որ միսիոներները և ունկնդիրները, դեպի ճշմարտություն գալու, դեպի փրկություն գալու, այս գնի մասին ինչ որ բան իմանալու համար պետք է վճարեն այդ նույն գնի մի խորհրդակիշ» (“Missionary Work and the Atonement,” Ensign, Mar. 2001, 15):

- Ինչպե՞ս այս միսիոներական աշխատանքի հեռանկարը կօգնի ձեզ, երբ դժվարություններ տանեք որպես միսիոներ:

Դասի ավարտին մոտ կարող եք ուսանողներին մի քանի ընդհանուր հարցեր առնել, թե ինչ իրենք սովորեցին միսիոներական աշխատանքի և Քրիստոսի վարդապետության փոխկապվածության մասին: Քաջալերեք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչ կարող են անել, որպեսզի ավելի լավ հասկանան Քրիստոսի վարդապետությունը, երբ նրանք պատրաստվում են իրենց միսիային: Հարցրեք ուսանողներին, թե արդյոք որևէ մեկը կցանկանա՞ր կիսվել իր վկայությունով դասարանի հետ: Մրտահայտեք ձեր վկայությունը, որ եթե ուսանողները սովորեն և գործեն Քրիստոսի վարդապետության վրա հիմնվելով, նրանք կլինեն ավելի հաջողակ միսիոներներ:

### Գործելու հրավերներ

 *Ուշադրություն. Յուրաքանչյուր դաս ներառում է առաջարկվող վարժություններ, որոնք նախատեսված են՝ օգնելու ուսանողներին դառնալ ավելի լավ պատրաստված միսիա ծառայելու համար: Կան տարբեր եղանակներ հանձնարարելու կամ առաջարկելու այս վարժությունները: Օրինակ, դուք կարող եք բաժանել օժանդակ կյուժ առաջին դասի ժամանակ, որտեղ թվարկված է առաջարկվող վարժությունները կիսամյակի յուրաքանչյուր շաբաթվա համար: Դուք կարող եք նաև գրել վարժությունների ամենշաբաթյա ցուցակը գրատախտակին, կամ եթե հնարավոր է դուք կարող եք ողարկել ձեր ուսանողներին ամենշաբաթյա տեքստ կամ էլ-փոստով ուղերձ այս վարժությունների վերաբերյալ:*

Բացատրեք ուսանողներին, որ արդյունավետ նախապատրաստությունը լիաժամկետ միսիայի համար պահանջում է դասարանից դուրս ջանքեր: Ուստի, յուրաքանչյուր դասի վերջում դուք կներկայացնեք առաջարկվող վարժությունները, որոնք նախատեսված են՝ օգնելու նրանց դառնալ ավելի լավ նախապատրաստված միսիայում ծառայելու համար: Որպեսզի օգնեք ուսանողներին այժմ սկսել մասնակցել Տիրոջ աշխատանքին՝ խրախուսեք նրանց կատարել հետևյալներից մեկը կամ մեկից ավելին.

- Օգտագործելով սոցիալական կայքերը, կիսվեք ուրիշների հետ, թե ինչու եք հուզված միսիա ծառայելու առթիվ և ինչ եք անում նախապատրաստվելու համար:
- Դիտեք մի քանի տեսանյութեր, որոնք գտնվում են «Hastening the Work of Salvation» բաժնում LDS.org-ի և գրի առեք ուսումնասիրության օրագրում այն զգացումները, որոնք դուք ունենում եք, երբ մտածում եք փրկության աշխատանքին մասնակցելու ձեր հնարավորության մասին:
- Հրավիրեք մի ընկերոջ ձեզ հետ հաճախել այս միսիոներական պատրաստության դասին: (Դուք կարող եք հղել այս հրավերը ուսանողներին յուրաքանչյուր դասի վերջում:)
- Հրավիրեք որևէ ոչ անդամի կամ ավելի քիչ ակտիվ անդամ ընկերոջը ուսուցանվելու միսիոներական դասերը:

# Մեր միսիոներական նպատակը

Երեց Դ. Թոդ Քրիսթոֆերսոն

Սեմինար միսիոների նոր նախագահների համար, 2008

Մտածեք մի քանի օրինակների մասին, որոնք ցույց են տալիս տարբերությունը, երբ միսիոներական աշխատանքը կենտրոնացած է միսիոներական նպատակի վրա և երբ այն կենտրոնացած է միայն միսիոներական գործողությունների վրա.

(1) Եթե միսիոներները նպատակաուղղված են գործում, նրանք ուսուցանում են մարդկանց այնպիսի ձևով, որն օգնում է նրանց իսկապես հասկանալ ավետարանը և թե ինչու և ինչպես նրանք պիտի ապաշխարեն: Եթե միսիոներների կիզակետը նրանց նպատակի վրա չէ, նրանք կարող են պարզապես հասնել որոշակի թվով դասեր ուսուցանելուն ամեն շաբաթ: Այդ դեպքում նրանք կփորձեն ավարտել դասը, փոխարենը իսկապես լսելու և արձագանքելու նրան, ինչ ունկնդրի մտքում է և սրտում: Նրանք ավելի շուտ կկիսվեն տեղեկությամբ, քան փրկություն կառաջարկեն, իսկ դրանք երկու տարբեր փորձառություններ են ունկնդրի համար (ինչպես նաև միսիոների համար):

(2) Միսիոներները, ովքեր մոռանում են իրենց նպատակը, գուցե «բացեն իրենց բերանները» և զբաղվեն միջոցառումներ գտնելով լցնելու ուսուցողական ավագանը որոշակի թվով մարմիններով, առանց ձգտելու և լսելու Հոգու, որպեսզի զանազանեն, թե ով է զգում Հոգին, երբ նրանք խոսում են: Գտնելը կենտրոնացած կլինի թվերի վրա առանց կապ ունենալու հնարավոր դարձի հետ:

(3) Առանց մտքում միսիոներական նպատակի, ամենօրյա ծրագիրը հավանաբար նման կլինի պարզապես ծառայելու գրաֆիկի և հանդիպումների օրացույցի: Մակայն հիմնական նպատակը մտքում ունենալով, ծրագիրը կդառնա մի գործիք հավաստիանալու, որ այն բաները, որոնք պետք է առաջ բերեն արդյունք, այսինքն՝ առաջ բերեն դարձ և մկրտություն, փաստացիորեն հայտնաբերված են, հիշատակված և իրականացված՝ յուրաքանչյուր ունկնդրի համար: Այլապես միսիոները, հավանական է, թակարդն ընկնի՝ մտածելով, որ իր հաջողության չափորոշիչը՝ իր զբաղվածությունն է:

(4) Միսիոները, ով յուրացրել է իր նպատակը, անհամբեր կսպասի իր ամենօրյա հնարավորությանը՝ սնվելու Աստծո խոսքով, որովհետև նրա ուսումնասիրությունը կունենա նպատակ: Նա կհետազոտի իր ունկնդիրների հոգու հարցերը՝ պատասխաններ գտնելու համար, ինչպես նաև՝ պատասխանելու իր սեփական հարցերին: Նա կորոնի

առաջնորդություն, թե ինչպես ուսուցանի և առաջնորդի ունկնդիրներին ապաշխարության արահետով: Առանց նպատակի այս զգացողության, միսիոները, հավանաբար, ավելի քիչ խանդավառությամբ կանցկացնի անհատական և ընկերակցի հետ ուսումնասիրությունը: Չնայած նա կարող է նվիրաբերել ժամանակ, այն կլինի առանց կրակի, որը հետագայում կարող էր լցնել նրա ուսուցումը հայտնության և մարգարեության ոգով: (Տես Ավմա 17.2-3, 43.2, Վևու 11.21, 25-26):

(5) Միսիոները գուցե մարդկանց Եկեղեցի այցելելու հրավերի թելադրանքներ զգա, որովհետև նա հավատում է, որ դա այն է, ինչ միսիոներներից սպասվում է որ անեն: Մակայն երբ միսիոներական նպատակի կրակը վառվում է նրա սրտում, միսիոները հասկանում է, որ մասնակցությունը Եկեղեցում կարևոր է ունկնդրի համար՝ զարգացնելու ավելի ուժեղ ցանկություն մկրտության համար և հաստատելու մի հիմք ավետարանի ուխտի մեջ մինչև վերջ համբերելու համար: Հիմնական նպատակը մտքում ունենալով, Եկեղեցի հաճախելու հրավերը կդառնա ավելի մեծ հրատապություն, կիրակնօրյա երկրպագության կարևորությունը և այն թե ինչ ակնկալել ՎՕՍ կիրակի ծառայությունից տարբեր կլինի, հոգին որը կուղեկցի միսիոներների խոսքերն, կունենա համոզիչ ուժ, որն այլապես ներկա չէր գտնվի:

Խնդրում ենք մի անտեսեք *Քարոզիչ Իմ Ավետարանը* գրքի գլուխ մեկը և դրա հարցը. «Ո՞րն է իմ նպատակը որպես միսիոներ»: Երբ միսիոներները յուրացրել են մարդկանց դեպի Քրիստոս բերելու նպատակը՝ վերականգնված ավետարանի սկզբունքների և արարողությունների միջոցով նրանք կհասկանան, որ միսիոներական աշխատանքը ծրագիր չէ, դա գործ է՝ Հոր, Արդու և Սուրբ Հոգու գործը: Նրանք կհասկանան, որ իրենք վաճառողներ չեն կամ տեխնիկական աշխատողներ, այլ աստվածայնորեն լիազորված և առաջադրված արդարության ուսուցիչներ: Նրանք կհասկանան, որ աշխարհին հասանելի չէ քավող շնորհը և փրկությունը, այլ նրանց և Եկեղեցու միջոցով նրանք ներկայացնում են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Եկեղեցին: Նրանք կհասկանան, թե ովքեր են իրենք և ինչի համար է այս ողջ աշխատանքը, և նրանք կարթնանան և պատրաստ կլինեն իրենց Հոր գործին: Ինչպես Մոսիայի որդիները, նրանք կուսուցանեն «Աստծո գործությամբ և իշխանությամբ» (Ավմա 17.3):

## Զննարկման հարցեր.

1. Ինչպե՞ս կարող է միսիոները որոշել, թե արդյոք իր գործողություններն առաջնորդվում են միսիոներական նպատակով:
2. Ինչպե՞ս կարող է կենտրոնանալ միսիոներական աշխատանքի նպատակի վրա ազդել ամենօրյա միսիոներական գործողությունների վրա:
3. Ինչպե՞ս է վերջին պարբերությունն օգնում ձեզ հասկանալ հավերժական բնույթը նրա, ինչ դուք անելու եք որպես միսիոներ:



© 2014 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈՒՆՈՒ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՐԵԶԵՐՎԻՆԵՐՆԵՐԸ

# 2

## Քավության կարիքը մեր կյանքում

### Նախաբան

Հիսուս Քրիստոսի Քավությունը Աստծո փրկության ծրագրի կենտրոնական մասն է: Իր Քավության միջոցով Հիսուս Քրիստոսը կատարեց Իր Հոր Նպատակները՝ փրկագնելով մեզ հոգևոր և ֆիզիկական մահից, բավարարելով արդարադատության պահանջները և մաքրագործելով մեզ մեր անձնական մեղքերից՝ ապաշխարության պայմանով: Փրկիչը Նան մխիթարում է մեզ մեր տկարություններում, տալիս է մեզ ուժ իրականացնելու բաներ, որոնք մենք ի վիճակի չէինք լինի

անել ինքնուրույն, և տալիս է մեզ հույս, որ մենք կարող ենք վերադառնալ ապրելու Իր և Երկնային Հոր հետ: Լիաժամկետ միսիոներները մասնակցում են փրկության աշխատանքին, օգնելով ուրիշներին սովորել, թե ինչպես հասանելի դարձնեն Քավության օրհնությունները առ Հիսուս Քրիստոս հավատքի, ապաշխարության, մկրտության, հաստատման և մինչև վերջ համբերելու միջոցով:

### Նախնական պատրաստվածություն

- Ուսումնասիրեք հետևյալը ավելի լավ հասկանալու, թե ինչու մենք կարիք ունենք Քավության: Հռովմանեցիս 3.23, 2 Նեվիի 9.6–10, և Ալմա 42.9–14:
- Ուսումնասիրեք հետևյալը տեսնելու այն օրհնություններից մի քանիսը, որոնք մատչելի են Քավության միջոցով: Մոսիա 3.19, 4.3, 24.12–15, և Ալմա 5.12–13, 7.11–13:
- Ուսումնասիրեք Երեց Զեֆրի Ռ. Հոլլանդի, “Missionary Work and the Atonement,” Ensign, Mar. 2001, 8–15:
- Ուսումնասիրեք «Քարոզիչ Իմ Ավետարանը», էջեր 51–52 և 60–61-ը:
- Պատրաստվեք ցուցադրել «Նա ապրում է: Փառք Նրա անվանը» տեսաֆիլմը: (2:51, կլիպ Երեց Ռիչարդ Գ. Սքոթի ելույթից, Ensign կամ *Լիստինա* մայիս 2010, 75–78), մատչելի է [lds.org/media-library](https://www.lds.org/media-library)-ում:

## Ուսուցման առաջարկներ

### Ինչո՞ւ մենք ունենք Քավության կարիքը

Սկսեք, ուսանողներին տալով հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս են մարդիկ սկսում հասկանալ, որ նրանք Հիսուս Քրիստոսի Քավության կարիքն ունեն իրենց կյանքում:

Ապա, ցուցադրեք հետևյալ խոսքերը.



«Ճիշտ ինչպես մարդը ուտելու ցանկություն իսկապես չի ունենում նախքան սովածանալը, այդպես էլ նա չի փափագում Քրիստոսի փրկությունը, մինչև նա չի իմանում, թե ինչու նա ունի Քրիստոսի կարիքը:

Ոչ ոք պատշաճորեն և ճշգրիտ չգիտի, թե ինչու ունի Քրիստոսի կարիքը, քանի դեռ չի հասկանում և ընդունում Անկման վարդապետությունը և դրա ազդեցությունը ողջ մարդկության վրա» (President Ezra Taft Benson, *A Witness and a Warning* [1988], 33):

Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ ենք մենք ի նկատի ունենում, երբ խոսում ենք Ադամի Անկման մասին:

Ցուցադրեք հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

Քանի որ Ադամը և Եվան ... օրինազանցեցին և ճաշակեցին բարու և չարի գիտելիքի ծառի պտղից, նրանք վտարվեցին Տիրոջ ներկայությունից (տես Վևու 29.40–41): Այլ խոսքերով, նրանք տարան հոգևոր մահ: Նրանք դարձան նաև մահկանացու՝ ենթակա ֆիզիկական մահվան: Այս հոգևոր և ֆիզիկական մահը կոչվում է Անկում: ...

«Որպես Ադամի և Եվայի հետևորդներ, մենք ժառանգում ենք անկումնային վիճակ մահկանացու կյանքի ընթացքում (տես Ավամ 42.5–9, 14): Մենք բաժանված ենք Տիրոջ ներկայությունից և ենթակա ենք ֆիզիկական մահվան: Մենք նաև դրվում ենք հակադրության մի վիճակում, որի ընթացքում մենք ստուգվում ենք կյանքի դժվարություններով և հակառակորդի գայթակղություններով (տես 2 Նեփի 2.11–14, Վևու 29.39, Մովսես 6.48–49)» (*Հավատքի Հավատարիմ* [2004], 56):

Օգնեք ուսանողներին գտնել այս մեջբերման մեջ ուսուցանվող վարդապետությունները՝ տալով հետևյալ հարցը.

- Ինչպե՞ս է Ադամի Անկումը ազդում մեզանից յուրաքանչյուրի վրա, որպես Ադամի և Եվայի հետևորդներ: **(Ադամի և Եվայի նման, մենք ևս ենթակա ենք ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր մահվան: Մենք ապրում ենք անկում ապրած աշխարհում և ենթակա ենք կյանքի դժվարություններին և հակառակորդի գայթակղություններին: Մենք կտրված ենք Հոր ներկայությունից և Փրկչի օգնության կարիքն ունենք, որպեսզի վերադառնանք Նրա մոտ):**

Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները և մի քանի բառերով և փոքր ուսանողներին դրանք ուսումնասիրելու համար.

Հռովմայեցիս 3.23

2 Նեփի 9. 6-10

Արմա 42.9-11, 14

**Նպաստեք սիրո և հարգանքի մթնոլորտի առաջացմանը** երբ ուսանողները դասարան են մտնում ողջունեք նրանց անուով, ասեք, որ երջանիկ եք նրանց տեսնել, գոհունակություն հայտնեք նրանց, կամ հարցրեք նրանց ընտանիքի, աշխատանքի կամ դասերի մասին: Ուսանողները, որոնք իրենց սիրված, վստահված են զգում, և գնահատված իրենց ուսուցչի և այլ ուսանողների կողմից, դասարան կգան ավելի բաց՝ Հոգու ազդեցության համար և մասնակցելու ավելի ուժեղ ցանկությամբ:



Երբ նրանք ուսումնասիրեն, խրախուսեք ուսանողներին փնտրել, թե մեզանից յուրաքանչյուրի վրա ինչպես է անդրադառնում Ադամի և Եվայի Անկման ազդեցությունը:

**Բացատրել վարդապետությունը:**  
Հմտություններից մեկը, որն անհրաժեշտ է բոլոր միսիոներներին, վարդապետությունները հասկանալու կարողությունն է, որոնք նրանք ուսուցանում են և բացատրում հստակ բառերով: Դուք կարող եք զարգացնել դա անելու ձեր ուսանողների հմտությունը՝ կանոնավորապես խնդրելով նրանց բացատրել մի վարդապետություն և բացատրել, թե ինչու է կարևոր, որ իրենք և ունկնդիրները հասկանան այն:

- Ինչպե՞ս են այս սուրբ գրության հատվածները բացատրում, թե ինչպիսի ազդեցություն ունի Ադամի և Եվայի անկումը յուրաքանչյուրիս վրա: (Երբ ուսանողները պատասխանեն, գրեք նրանց պատասխանները գրատախտակին: Չնայած նրանց պատասխանները կարող են տարբեր լինել, դրանք կարող են ունենալ հետևյալ տեսքը: **Մենք բոլորս մեղանշում ենք և անմաքուր դառնում Աստծո աչքում, քանի որ մենք մեղանշում ենք, մենք կտրված ենք Աստծո ներկայությունից, մենք կտանենք ֆիզիկական մահ, մենք ապրում ենք անկում ապրած աշխարհում և պետք է հաղթահարենք «բնական մարդուն» [Մոսիա 3.19]:**


Հարցրեք ուսանողներին, թե ինչ հարցեր ունեն վարդապետությունների և բառերի վերաբերյալ, որոնք իրենք նշել են: Թույլ տվեք դասախոսին քննարկում ծավալել, հետազոտելու այս հարցերը: Այնուհետև հարցրեք.


- Ինչպե՞ս են այս սուրբ գրություններն օգնում բացատրել, թե ինչու մենք բոլորս Հիսուս Քրիստոսի կարիքն ունենք: **(Հիսուս Քրիստոսի Քավությունը փրկագնում է մեզ Ադամի անկումից և մեր սեփական անհնազանդության գործողություններից:**

Բացատրեք, որ որպես Աստծո ողորմած ծրագրի մաս, Հիսուս Քրիստոսի Քավությունը թույլ է տալիս մեզ փախչել մահվան և դժոխքի «իրեշից» (տես 2 Նեփի 9.10), որը նշանակում է ֆիզիկական և հոգևոր մահ: Մենք բոլորս հարություն կառնենք: Փրկչի Քավության միջոցով մենք կարող ենք մաքուր լվացվել մեր մեղքերից, երբ մենք ապաշխարենք: Առանց Հիսուս Քրիստոսի, մենք ոչ միայն կոչնչանայինք, այլ ենթակա կլինեինք դևին ողջ հավերժության ընթացքում:

Կիսվեք համառոտ վկայությամբ Աստծո ծրագրի իմաստության և ողորմածության վերաբերյալ: Հավաստիացրեք ուսանողներին, որ անկման բոլոր հետևանքները կառող են հաղթահարվել Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:

**Քավության մասին ուսուցանելու կարևորությունը**

 Մտածեք կարդալ կամ ցույց տալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Մքոթի հետևյալ խոսքերի տեսահոլովակը: Խնդրեք ուսանողներին փնտրել, թե ինչու է կարևոր մեզ համար մեծացնել մեր ըմբռնումը Քավության վերաբերյալ:



«Երբ հիշեք Հարությունը և վճարված գինը և Քավության միջոցով տրված պարգևը, խորհեք, թե ինչ են սովորեցնում սուրբ գրություններն այդ սրբազան իրադարձությունների մասին: Ձեր անձնական վկայությունը դրանց իրական լինելու վերաբերյալ կգործազդի: Դրանք պետք է լինեն ավելին, քան անգիր սերտած սկզբունքներ: Դրանք պետք է միահյուսված լինեն ձեր բուն էության մանրաթելերում որպես հզոր պաշտպանություն պղծությունների ալիքի դեմ, որն այստահարում է մեր աշխարհը: ...

Առանց Քավության Երկնային Հոր երջանկության ծրագիրը չէր կարող լիովին գործի մեջ դրվել: Քավությունը տալիս է բոլոր հնարավորությունները հաղթահարելու կյանքում կատարված սխալների հետևանքները: Երբ մենք հնազանդվում ենք օրենքին, մենք ստանում ենք օրհնություն: Երբ մենք խախտում ենք օրենքը, ոչինչ չի մնում նախկին հնազանդությունից այդ

խախտված օրենքի համար՝ բավարարելու արդարադատության պահանջները: Փրկչի Քավությանը թույլ է տալիս մեզ ապաշխարել ամեն մի անհնազանդությունից և դրա միջոցով խուսափել պատիժներից, որ արդարադատությունը կներկայացնեն:

Իմ ականածանքն ու երախտագիտությունը Իսրայելի Սրբի, Խաղաղության Իշխանի և մեր Քավչի Քավության հանդեպ անընդհատ մեծանում է, երբ ես ձգտում եմ հասկանալ ավելի շատ բան դրա վերաբերյալ: Ես հասկանում եմ, որ ոչ մի մահկանացու միտք չի կարող պատշաճորեն հասկանալ, ոչ մի մարդկային լեզու պատշաճորեն արտահայտել այն ամենի լիակատար նշանակությունը, որ Հիսուս Քրիստոսն արեց մեր Երկնային Հոր զավակների համար Իր Քավության միջոցով: Սակայն, անհրաժեշտ է, որ մենք յուրաքանչյուր սովորենք դրա մասին այն ամենը, ինչ կարող ենք: Քավությունը մեր Երկնային Հոր երջանկության ծրագրի էական բաղադրիչն է, առանց որի այդ ծրագիրը չէր կարող գործել: Քավության ձեր հասկացողությունը և այն ներմբռնումը, որ այն տալիս է ձեր կյանքի համար, մեծապես կնպաստի ձեր մահկանացու կյանքում ձեռք բերած ողջ գիտելիքի, փորձառության և հմտությունների արդյունավետ օգտագործմանը: ...

Մեզանից յուրաքանչյուրի համար ծայրահեղ կարևոր է ամրացնել մեր հասկացողությունը Հիսուս Քրիստոսի Քավության նշանակալիության մասին, այնպես որ այն դառնա անսասան հիմք, որի վրա մենք կկառուցենք մեր կյանքը: ...

Սուրբ գրությունների անձնական խորն ուսումնասիրությունը և դրա հետ միասին խորհելը, սրտաբուխ աղոթքը կամրացնեն Նրա անգին Քավության ձեր ըմբռնումը և գնահատանքը» («Նա ապրում է: Փառք Նրա անվանը» Ensign կամ *Liahona*, մայիս 2010, 75-76):

Օգնեք ուսանողներին վերլուծել Երեց Մքոթի խոսքերը՝ ուղղելով հետևյալ տիպի հարցեր.

- Երեց Մքոթի ելույթի ո՞ր մասերն են շեշտադրում Քավությունը հասկանալու կարևորությունը: (Հավաստիացեք, որ ուսանողները ճանաչեն դրույթները հետևյալ ձևով. Փրկչի չարչարանքները «կազդեն մեր վրա ոչ միայն այս կյանքում, այլ ողջ հավերժության ընթացքում», «Նրա Քավությունը լիովին գործուն դարձրեց Իր Երկնային Հոր երջանկության ծրագիրը», «Հիսուսը կառավարում է հավասարակշռությունը արդարադատության և ողորմածության միջև, որը պայմանավորված է մեր հնազանդությամբ», «Քավությունը տալիս է ողջ հնարավորությունը հաղթահարելու կյանքում կատարած սխալների հետևանքները», և «Քավության ձեր հասկացողությունը և այն ներմբռնումը, որ դա տալիս է ձեր կյանքի համար, մեծապես կնպաստի ձեր մահկանացու կյանքում ձեռք բերված ողջ գիտելիքի, փորձառության և հմտությունների արդյունավետ օգտագործմանը»:)
- Երեց Մքոթը նշել է, որ Քավության սկզբունքները «պետք է ավելին լինեն, քան այն սկզբունքները, որոնք սերտում եք անգիր: Դրանք պետք է միահյուսված լինեն ձեր բուն էության մանրաթելերում: Ինչպե՞ս կարող է ապագա միսիոները սա իրական դարձնել:

Շատ երիտասարդներ չեն հասկանում օրհնությունները, բացի մեղքերի թողությունից, որոնք գալիս են նրանց կյանք Քավության միջոցով: Որպեսզի օգնեք խորացնել ուսանողների հասկացողությունը այս մյուս օրհնությունների վերաբերյալ, տվեք դասարանին մի քանի ընդհանուր ուսումնասիրելու հետևյալ սուրբ գրությունների հատվածները, փնտրելով այն օրհնությունները, որոնք գալիս են Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Մոսիա 3.19, 4.3, 24.12–15, Ալմա 5.12–13, 7.11–13: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, խնդրեք ուսանողներին բացատրել

Քավության շատ օրհնություններից մի քանիսը: Ամփոփեք նրանց պատասխանները գրատախտակին:



*Ուշադրություն. Նախքան առաջ շարժվելը, գուցե կամենաք մի քանի բույս հատկացնել՝ ուսանողների հետ կարդալու և քննարկելու Սուրբ Գրքերի Ուղեցույցից Քավություններն ազդիր:*

Ցուցադրեք հետևյալ մեջբերումը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

**«Հիսուս Քրիստոսի Քվության մասին ձեր հասկացողության աճի հետ մեկտեղ կմեծանա ավետարանով ուրիշների հետ կիսվելու ձեր ցանկությունը» (Քարոզիր Իմ Ավետարանը, 2):**

Օգնեք ուսանողներին ավելի խորապես հասկանալ այդ հատվածները՝ տալով հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ է ավետարանով կիսվելու մարդու ցանկությունը մեծանում, երբ նա հասկանում է Քավությունը:

Հանձնարարեք ուսանողներին աշխատել դասարանի մեկ ուրիշ անդամի հետ՝ հերթով բարձրաձայն կարդալով 1 Նեփի 8.10–12, Ենովս 1.5–9, և Մոսիա 27.34–36 և 28.1–4 հատվածները: Հանձնարարեք նրանց փնտրել այս հատվածներում գտնվող մի ձևաչափ: Բավականաչափ ժամանակից հետո հրավիրեք մի քանի ուսանողների բացատրել իրենց գտած ձևաչափը: (Լեքին, Ենովսը և Մոսիայի որդիները Քավության օրհնությունները ճաշակելուց հետո, զգացին ցանկություն կիսվել ավետարանով և օգնել ուրիշներին ստանալ նույն օրհնությունները:)

Որպեսզի ուսանողներին օգնեք զգալ գրատախտակին գրված սկզբունքի ճշմարտությունն ու կարևորությունը, հարցրեք հետևյալը.

- Եթե խիստ անձնական չէ, ինչպիսի՞ փորձառություններ եք ունեցել Քավության հետ կապված, որը դրդում է ձեզ՝ կիսվելու մյուսների հետ ավետարանով:
- Ինչպե՞ս են ձեր գիտելիքը և զգացումները Քավության վերաբերյալ, դրդել ձեզ ավելի մոտեցնել ուրիշներին Հիսուս Քրիստոսին:

Ուսանողներին մի պահ տրամադրեք, որ խորհեն, թե արդյոք Հիսուս Քրիստոսի Քավության իրենց հասկացողությունը իրենց դրդապատճառի մասն է կազմում միսիա ծառայելու և ինչ կարող են նրանք անել մեծացնելու իրենց երախտագիտության աստիճանը նրա հանդեպ, ինչ Հիսուս Քրիստոսն արել է նրանց համար:

**Օգնել ունկնդիրներին ստանալ Քավության օրհնությունները**

Ասեք ձեր ուսանողներին, որ ոչ մի վարդապետություն, որ նրանք կուսուցանեն որպես միսիոներներ, ավելի կարևոր չէ, ինչպես ունկնդիրների այնպես էլ միսիոներների համար՝ հասկանալ և ընդունել, քան Հիսուս Քրիստոսի Քավությունը:

Հանձնարարեք ուսանողներին ուսումնասիրել 2 Նեփի 2.6–8 և փնտրել, թե ինչ ուսուցանեց Լեքին, որ մենք պետք է անենք Քավության մեր գիտելիքի հետ: Մի քանի ուսանողների պատասխաններից հետո, օգնեք նրանց հասկանալ և ընդունել Քավությունը՝ ցույց տալով և կարդալով Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.



«Շրջանային համաժողովներում, որոնք ուսուցման մեծագույն պահեր են, որ մենք որպես Գերագույն Իշխանավորներ ունենում ենք այդ երիտասարդ երեցների և թույրերի հետ, և հարցրեցի միսիոներներին, թե նրանք ինչ էին ուզում, որ ունկնդիրներն անեին՝ իրենց գրույցների արդյունքում:

«Մկրտվել» գոչեցին նրանք բոլորը խմբովին:

«Այո», ասացի ես, «մենք իսկապես ուզում ենք, որ նրանք մկրտվեն, բայց ինչ պետք է նախորդի դրան:» ...

«... Գրեթե երբեք միսիոներներին չի հաջողվում ճանաչել երկու ամենահիմնական բաները, որոնք մենք կամենում ենք, որ ունկնդիրներն անեն՝ ունենան հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս և ապաշխարեն իրենց մեղքերից: Սակայն մենք հավատում ենք, որ Ավետարանի առաջնային սկզբունքներն ու արարողություններն են. առաջին՝ Հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս. երկրորդ՝ ապաշխարություն. [ապա] երրորդ՝ ընկղմամբ մկրտություն *մեղքերի թողության համար*, չորրորդ՝ ձեռնադրում Սուրբ Հոգու պարզևի համար» (Հավատո Հանգանակ 1.4, շեշտադրումն ավելացված է):

Նորադարձի նոր կյանքը պետք է կառուցվի Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա փրկագևող գոհաբերության հանդեպ հավատքի վրա, համոզմունք, որ Նա է իսկապես Աստծո Որդին, որ Նա ապրում է հենց այս պահին, որ Նա է փարախի դուռը, որ Նա միայն ունի մեր փրկության և վեհացման բանալին: Այդ հավատքին պետք է հաջորդի իսկական ապաշխարություն, ապաշխարություն, որը ցույց է տալիս մաքուր և նորացված և ողջ լինելու մեր ցանկությունը, ապաշխարություն, որը թույլ է տալիս մեզ Քավության լրիվ օրհնությունների համար պահանջ ներկայացնել» (“Missionary Work and the Atonement,” *Ensign*, Mar. 2001, 10–11):

Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ պետք է անի ունկնդիրը Քավության լրիվ օրհնությունների համար պահանջ ներկայացնելու համար: (Ունենալ հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ, ապաշխարել և մկրտվել:)

Բացատրեք ուսանողներին, որ Վարդապետություն և Ուխտեր 20.37-ը նկարագրում է մկրտության համար որակավորումները: Հանձնարարեք ուսանողներին կարդալ հատվածը և փնտրել, թե ինչ պետք է անեն ունկնդիրները մինչև մկրտվելը: Հարցրեք.

- Որո՞նք են այն մի քանի բաները, որոնք պետք է անեն ունկնդիրները, որպեսզի ցույց տան, որ նրանք զարգացնում են հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ: (Նրանք կլսոնարհեցնեն իրենց, կապաշխարեն իրենց մեղքերից, ցույց կտան բարի գործեր և այլն:)
- Ի՞նչ դեր են խաղում միսիոներները օգնելով ունկնդիրներին բավարարելու մկրտության համար որակավորումները: Ինչպե՞ս է դա կապված ձեր նպատակի հետ, որպես միսիոներ: (Անհարաժեշտության դեպքում հիշեցրեք ուսանողներին անցած դասի սկզբունքների մասին:)

### Միսիոներներին պատվիրված է ուսուցանել ապաշխարություն

Գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը.

*Ո՞րն է ամենակարևոր բանը, որ միսիոներները կարող են անել՝ օգնելու Աստծո գավակներին բերելու դեպի Քրիստոս:*

Հանձնարարեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 18.11–14 և գտեք գրատախտակի վրայի հարցի պատասխանը: Քննարկեք հարցի ուսանողների պատասխանները, ապա հարցրեք.

- Ինչո՞ւ է ապաշխարությունը միակ ուղին, որով Աստծո զավակներին կարող են հասանելի լինել Քավության լրիվ օրհնությունները: (Տես Սուսիա 16.13, Ալմա 11.37, և Հելաման 14.13:)

Գրատախտակին գրեք հետևյալ պատասխանը այն հարցին, որն արդեն ցուցադրված է.

*Միախոններին պատվիրված է ուսուցանել սպաշխարություն, որպեսզի նրանք, ում իրենք ուսուցանում են, կարողանան հասնել Քավության լրիվ օրհնություններին և սխեմ նոր կյանք Քրիստոսում:*


**Բացատրել, կիսվել և վկայել:** Ուսուցման մի հիմնական ձև, որը բոլոր միսիոներները պետք է սովորեն և հարմարվեն.

(1) վարդապետությունը բացատրելն է՝ օգտագործելով իրենց սեփական խոսքերը, (2) կիսվել մի սուրբ գրությամբ կամ անձնական փորձառությամբ, որն օգնում է բացատրել վարդապետությունը և (3) բերել վկայություն, թե ինչ են զգում այդ վարդապետության վերաբերյալ և ինչու է այն կարևոր:

Դասարանը բաժանեք երկու մասի: Հանձնարարեք դասարանի կեսին ուսումնասիրել բաժինը, որը կոչվում է «Քավություն» էջեր 55–56 *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկից: Հանձնարարեք դասարանի մյուս կեսին ուսումնասիրել բաժինը, որը կոչվում է «Քրիստոսի միջոցով մենք կարող ենք մաքրվել մեղքից» 66–67 էջեր, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ: Ուսանողներին տվեք մի քանի ընդհանուր կարգալու և պատրաստվելու ուսուցանել երկու ընդհանուր ակնարկ իրենց կարդացած նյութից: Որպես իրենց ակնարկի մաս, խրախուսեք ուսանողներին. (1) գտնել և բացատրել վարդապետության հիմնական կետերը, (2) կիսվել անձնական մի փորձառությամբ կամ սուրբ գրությամբ, որը հաստատում է վարդապետությունը և (3) բերել վկայություն այն մասին, թե ինչ են դրանք ուսուցանում: Ամփոփեք այս երեք քայլերը գրատախտակին:

Պատրաստվելու համար բավարար ժամանակ տրամադրելուց հետո, դուք կարող եք հանձնարարել ուսանողներին առաջին խմբից զույգ կազմել մյուս խմբի ուսանողներից որևէ մեկի հետ և հերթով ուսուցանել միմյանց: Հետո, երբ յուրաքանչյուր ուսանող հնարավորություն է ունեցել ուսուցանելու դասարանի մեկ ուրիշ անդամի, դուք կարող եք հրավիրել մի ուսանողի, ով կամավոր կգա դասարանի առջև և կուսուցանի իր ակնարկը դասարանին: Ներկայացնելը վերջացնելուց հետո, հաճոյախոսեք ուսանողին, ով կատարեց ներկայացումը և հարցրեք ուսանողներին, թե ինչ կարծիքներ ունեն այդ փորձառության վերաբերյալ: Ծշտեք, թե արդյոք ունեն որևէ հարցեր, ապա հարցրեք.

- Ի՞նչ զգացիք ուսուցանելիս և Հիսուս Քրիստոսի Քավության վերաբերյալ վկայելիս:
- Որո՞նք են ձեր հայտնաբերած դրույթները, որոնք կարող են օգնել ձեզ, երբ դուք կուսուցանեք ունկնդիրներին Հիսուս Քրիստոսի Քավության մասին:
- Ինչո՞ւ եք անհամբեր սպասում ուսուցանելու Հիսուս Քրիստոսի Քավության մասին ուրիշներին:

 *Ուշադրություն. Եթե ժամանակը թույլ է տալիս, դուք կարող եք մտածել օգտագործել հետևյալ ուսուցողական գաղափարը օգնելու ուսանողներին զարգացնել ավելի մեծ վստահություն Հիսուս Քրիստոսի Քավության մասին ուսուցանելիս: Հակառակ դեպքում եզրափակեք, հրավիրելով մի քանի ուսանողների կիսվել իրենց զգացումներով Փրկիչի և Նրա Քավության մասին:*

**Սուրբ գրություններն օգտագործելը**

Բացատրեք ուսանողներին, որ որպես միախոններ, նրանք կարող են ուսուցանել ավելի մեծ գործությամբ, երբ նրանք օգտագործեն սուրբ գրությունները: Դասարանի մի կեսին հանձնարարեք հետագոտել սուրբ գրությունների հատվածները «Քավություն» բաժնի Սուրբ գրությունների

ուսումնասիրություն վանդակում էջ 57, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ: Հրավիրեք դասարանի մյուս կեսին հետազոտել սուրբ գրքերի հատվածները՝ Սուրբ գրությունների ուսումնասիրություն վանդակում էջ 67, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ: Խրախուսեք ուսանողներին ընտրել մի հատված Հիսուս Քրիստոսի Քավության մասին, որը նրանք հասկանում են և հարմարավետ են զգում վկայություն բերելու: Ուսանողներին կիսվելու բավարար ժամանակ հատկացնելուց հետո, հարցրեք.

- Ինչպե՞ս կարող եք օգտագործել սուրբ գրությունը, որը դուք ընտրել եք՝ օգնելու ինչ-որ մեկին ավելի լավ հասկանալ Հիսուս Քրիստոսի Քավությունը: (Խրախուսեք մի քանի ուսանողների պատասխանել:)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր միսիոներների համար օգտագործել սուրբ գրությունները, երբ իրենք ուսուցանում են:

Հանձնարարեք ուսանողներին բացել բաժինը, որը կոչվում է «Օգտագործեք սուրբ գրությունները» 202 էջ, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ:

Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ առաջին պարբերությունը, ներառյալ չորս պարբերանչված կետերը, իսկ հետո խնդրեք դասարանի անդամներին մտածել, թե ինչպես են սուրբ գրություններն օգտագործելու կարևորության մասին նրանց գաղափարները համապատասխանում այն խոսքերին, որոնք գտնվում են *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում:

Ասեք ձեր դասարանին, որ մի քանի ընտանիքները կուսուցանեն մեկ ուրիշ ուսանողի՝ օգտագործելով սուրբ գրությունը Քավության վերաբերյալ, որը նրանք ավելի վաղ էին ընտրել: Բացատրեք, որ կան սկզբունքներ *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում, որոնք կօգնեն նրանց, երբ նրանք ուսուցանեն:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ ենթաբաժինը, որը կոչվում է «Ներկայացրեք սուրբ գրությունը» էջ 203, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ: Հարցրեք, թե արդյոք ուսանողները որևէ հարց ունեն այս քայլի վերաբերյալ և տվեք նրանց մի պահ մտածելու, թե ինչպես նրանք կներկայացնեին սուրբ գրությունը, որն ընտրել են:

Հաջորդը, հանձնարարեք որևէ այլ ուսանողի բարձրաձայն կարդալ ենթաբաժինը, որը կոչվում է «Կարդացեք հատվածը» էջեր 203-204, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ: Ուսանողներին տրամադրեք մի պահ, որ մտքում կարդան իրենց ընտրած սուրբ գրության հատվածը և գտնեն որևէ բառեր կամ արտահայտություններ, որոնք գուցե կարիք ունենան բացատրելու որևէ ունկնդրի: Ապա երրորդ ուսանողին հանձնարարեք բարձրաձայն կարդալ ենթաբաժնի վերնագիրը «Կիրառեք սուրբ գրությունները» էջ 204: Կրկին հարցրեք ուսանողներին, թե իրենք որևէ հարցեր ունեն:

Որպեսզի օգնեք ուսանողներին հաջողակ լինել սուրբ գրություններից ուսուցանելիս, դուք պետք է զարգացնեք այդ հմտությունը նրանց մեջ: Մտածեք ընտրել մեկ կամ երկու հատված Մոսիա 3.7–11 and 16–19-ից այնպես ուսուցանել, որպեսզի դուք չօգտագործեք սուրբ գրությունների հատվածներից որևէ մեկը, որոնք ուսանողներն են ընտրել: Եղեք պարզ և համառոտ, երբ ցուցադրեք երեք քայլերը. ներկայացրեք, կարդացեք և կիրառեք սուրբ գրության հատվածները: Այս ցուցադրումը կօգնի ուսանողներին ընկճված չզգալ նրանից, ինչ իրենցից ակնկալվում է: Երբ վերջացնեք, հարցրեք ուսանողներին, թե արդյոք որևէ հարցեր ունեն:

Ուսանողներին տվեք մի քանի ընտանիքներ, որպեսզի պատրաստվեն ուսուցանել իրենց ընտրած սուրբ գրությունների հատվածները՝ օգտագործելով երեք

քայլերը, որոնք գտնվում են *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում: Ապա յուրաքանչյուր ուսանողի զույգ դարձրեք դասարանի որևէ այլ անդամի հետ, և հանձնարարեք նրանց միմյանց ուսուցանել: Երբ ուսանողներն ավարտեն ուսուցանելը, հավաստիացրեք նրանց, որ երբ նրանք ուսումնասիրեն սուրբ գրությունները և *Քարոզիչ Իմ Ավետարանը*, նրանց ունակությունն ու վստահությունը ավետարանն ուսուցանելիս կմեծանա:

Այսօրվա դասը եզրափակելու համար, հարցրեք ձեր ուսանողներին, թե նրանցից որևէ մեկը կկամենա՞ր կիսվել իրենց զգացումներով Հիսուս Քրիստոսի մասին, հատկապես Հիսուս Քրիստոսի Քավության մասին:

### **Գործելու հրավեր**

Հրավիրեք ձեր ուսանողներին կատարել մեկ կամ ավելի հետևյալ բաներից՝ որպեսզի օգնեք նրանց ավելի լավ հասկանալ Հիսուս Քրիստոսի Քավությունը:

- Սուրբ գրությունների ձեր անձնական ուսումնասիրության ընթացքում նշեք կամ ընդգծեք հատվածներ, որոնք օգնում են ձեզ հասկանալ Հիսուս Քրիստոսին և Նրա Քավությունը:
- Կիսվեք ձեր վկայությամբ Քավության վերաբերյալ որևէ մեկի հետ տանը, եկեղեցում կամ առցանց:
- Երբ հանգամանքները թույլ տան, բերեք վկայություն Քավության մասին մի ուսուցողական տեսակցության ընթացքում լիաժամկետ միսիոներների հետ:
- Ժամանակ հատկացրեք՝ ամեն օր ուսումնասիրելու Հիսուս Քրիստոսի Քավությունը սուրբ գրություններում:

## Նախաբան

Որպեսզի միսիոներներն ավետարանում աճեն և մնան այն ուղու վրա, որն առաջնորդում է դեպի հավերժական կյանք, նրանք պետք է զարգացնեն ավետարանի ուսումնասիրելու սովորույթ: Միսիոներական ուսուցման կենտրոններում, միսիոներներն ամեն օր մի քանի ժամ անցկացնում են ինքնուրույն և զուգընկերների հետ ուսումնասիրելով: Միսիոներական դաշտում նրանցից ակնկալվում է ամեն օր

շարունակել ավետարանի իրենց ուսումնասիրությունը: Նրանք պետք է սովորեն «ուսումնասիրելով և նաև հավատքով» (ՎևՈ 88:118) որպեսզի կառուցեն ավետարանական գիտելիքի պաշարներ և մեծացնեն իրենց դարձը: Միսիոներների համար կարևոր է ունենալ Հոգու առաջնորդությամբ ձեռք բերված գիտելիքի այս պաշարը, որպեսզի ուսուցանեն զորությամբ և հասնեն իրենց նպատակին:

## Նախապատրաստություն

- Ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 8.2–3, 9.7–8, 11.12–17, 21–22, 26–28, և 138.1–2, 11:
- Ուսումնասիրեք *Քարոզիչ Իմ Ավետարանը*, էջեր 19–20, 24–25:
- Ուսանողներին տվեք թղթի թերթեր օգտագործելու, եթե նրանք չունեն ուսումնասիրության օրագիր:
- Պատրաստվեք ցուցադրել «Advice for Studying the Scriptures» (2:07) տեսանյութը, որը մատչելի է LDS.org-ում:
- Նախապատրաստեք «Անհատական սուրբ գրությունների ուսումնասիրության սովորություններ», վերնագրով օժանդակ նյութը, որը տրված է դասի վերջում:
- Պատրաստվեք ցուցադրել Ջոզեֆ և Հայրում Մսիթների պատկերը:


## Ուսուցման առաջարկներ

### Ավետարանի ուսումնասիրության կարևորությունը

Ուսանողներին ցույց տվեք Ջոզեֆ Մսիթի և նրա եղբոր Հայրումի նկարը և խնդրեք նրանք բացել իրենց սուրբ գրությունները Վարդապետություն և Ուխտեր, 11 բաժինը: Օգնեք ուսանողներին հասկանալ այս բաժնի ենթատեքստը՝ բացատրելով, որ երբ Ջոզեֆ Մսիթը թարգմանում էր Մորմոնի Գիրքը, նրա ավագ եղբայրը՝ Հայրումը խորապես հետաքրքրվեց աշխատանքով և ցանկացավ կիսվել Վերականգման ուղերձով ուրիշների հետ: Որոնելով Տիրոջ կամքը, Հայրումը խնդրեց Ջոզեֆին իր անունից հայտնություն խնդրել: Տիրոջ պատասխանը գրված է Վարդապետություն և Ուխտեր 11-ում: Շատ առումներով Հայրումը նույն վիճակում էր, ինչ ձեր դասարանի անդամներն են, ովքեր իրենք են պատրաստվում կիսվել ավետարանի վերականգման ուղերձով:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 11.15-17 հատվածները, մինչ դասարանը կհետևի, որոնելով խորհուրդ, որը Տերը տվեց Հայրումին: Այնուհետև հարցրեք.

- Ինչո՞ւ Տերն ասաց Հայրումին «մի քիչ էլ սպասել» մինչև ուրիշների հետ ավետարանի ուղերձով կիսվելը:




Ջոզեֆ և Հայրում Մսիթներ



Հանձնարարեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 11.21–22 և 26-ը, որոնելով խորհուրդ, որը կիրառելի է ապագա միսիոներների համար այսօր:

- Ի՞նչ հրահանգեց Տերը Հայրումին անել, երբ նա պատրաստվում էր կիսվել ավետարանով ուրիշների հետ: Ի՞նչ է նշանակում ձեռք բերել Աստծո խոսքը: Ի՞նչ է նշանակում գանձել Տիրոջ խոսքը ձեր սրտում:
- Ինչպե՞ս կարող է այս հատվածների Տիրոջ խոսքն օգնել ինչ-որ մեկին այսօր, ով պատրաստվում է ծառայել միսիայում: (Չնայած նրանք կարող են օգտագործել տարբեր խոսքեր, ուսանողները պետք է հասկանան հետևյալ սկզբունքը. **Ավետարանի ուսումնասիրությունը նախապատրաստում է միսիոներներին քարոզել ավետարանը Հոգով և զորությամբ:**)
- Ի՞նչ օրհնություններ է խոստանում Տերը նրանց, ովքեր «կձգտեն ձեռք բերել [Նրա] խոսքը»:

 *Ուշադրություն. Երբ միսիոներները սովորեն ավետարանի վարդապետությունները և ձեռք բերեն ավելի ուժեղ վկայություններ, Հոգով ուսուցանելու նրանց ունակությունը կմեծանա: Միսիոներներին խրախուսելու է սովորել և աճել կարդալով Մորոմնի Գիրքը և ուսումնասիրելով դասերը, որոնք գտնվում են գլուխ 3-ում Քարոզի Իմ Ավետարանը ձեռնարկում: Օգնեք ձեր ուսանողներին հասկանալ, որ այս ուսումնասիրությունը կարող է օգնել իրենց սկսել այժմ «ձեռք բերել [Աստծո] խոսքը»:*

Հանձնարարեք ուսանողներին բացել էջ 203-ը *Քարոզի Իմ Ավետարանը*, ձեռնարկում և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ պարբերությունը, որը սկսվում է «Սուրբ գրությունները զորությամբ ուսուցանելու ձեր ունակությունը » բառերով: Այնուհետև հարցրեք.

- Ո՞ր գաղափարներն են այս պարբերությունում ամրապնդում սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրության կարևորությունը նրանց համար, ովքեր ուզում են դառնալ արդյունավետ միսիոներներ: (Սուրբ գրությունների ուսումնասիրությունը նախապատրաստում է միսիոներներին ավետարանը զորությամբ ուսուցանելու համար:)

Ասեք ուսանողներին, որ դասի մնացած մասը կենտրոնացած կլինի նրա վրա, թե ինչպես նրանք կարող են ավելի շատ բան ստանալ սուրբ գրքերի իրենց անհատական ուսումնասիրությունից: Խրախուսեք ուսանողներին խորհել դասի ընթացքում, թե ինչպես կիրառեն այն, ինչ սովորում են, որպեսզի բարելավեն սուրբ գրությունների և ավետարանի ուսումնասիրության արդյունավետությունը:

**Ուսումնասիրության օրագրի օգտագործում**

Հրավիրեք դասարանին բացել x էջը *Քարոզի Իմ Ավետարանը* ձեռնարկի նախաբանում: Հրավիրեք ուսանողներին բարձրաձայն կարդալ երկու պարբերություն «Ուսումնասիրության օրագրի» ենթաբաժնում: Ուսանողների ընթերցումից հետո հարցրեք.

- Համաձայն այս բաժնի, ինչպե՞ս կարող է ուսումնասիրության օրագրի օգտագործելն օգնել ձեզ ուսումնասիրել ավետարանը:
- Ինչո՞ւ է կարևոր գրի առնել այն գաղափարները և զգացումները, որոնք դուք ունենում եք ավետարանի ուսումնասիրության ընթացքում:

Կարող եք հարցնել ուսանողներին, թե նրանք արդյոք ունեն ն ուսումնասիրության օրագիր, և հրավիրեք նրանց, ովքեր ունեն, կիսվել, թե

ինչպես է օրագիրը օգտակար եղել իրենց համար: Խրախուսեք ուսանողներին սկսել օգտագործել ուսումնասիրության օրագիր, եթե նրանք դա դեռևս չեն արել: Հիշեցրեք նրանց, որ ուսումնասիրության օրագիրը կարող է լինել ոչ թանկ օրագիր, տետր կամ իրար կցված էջեր: Նրանք կարող են նաև օգտագործել «notes and journal tools» LDS.org կայքում, կամ նշումներ անելու ծրագիր՝ էլեկտրոնային սարքերի վրա: Խրախուսեք ուսանողներին բերել ուսումնասիրության օրագիրը ամեն դասին՝ գրելու գաղափարները, զգացումները և ներդրումները, որ իրենք ունենում են դասի ընթացքում:

**Սովորելի Հոգու միջոցով**

Բաժանեք ուսանողներին զույգերի: Հրավիրեք նրանց աշխատել միասին՝ կարդալով 19 էջի երկրորդ պարբերությունը *Քարոզիր Իմ Ավետարանը* ձեռնարկում և ապա քննարկեք, թե ինչ է պահանջվում իմաստալի ուսուցողական փորձառություններ ունենալու համար: Երբ ուսանողները բավականաչափ ժամանակ ունենան քննարկելու պարբերությունը, հրավիրեք նրանցից մի քանիսին կիսվել իրենց քննարկմանը հնչած մի քանի գլխավոր գաղափարներով: Կարող եք տալ հետևյալ տիպի հարցեր.

- Ի՞նչ է նշանակում ուսումնասիրել «անկեղծ միտումով»: (*Անկեղծ միտումը* նշանակում է, որ մենք մտադիր ենք հնազանդվել կամ կիրառության մեջ դնել այն, ինչ մենք սովորում ենք:)
- Ինչպե՞ս կարող է «անկեղծ միտումով» ուսումնասիրելը և «արդարության համար քաղցելն ու ծարավելը» ազդել մարդու ավետարանական ուսումնասիրության վրա: (Երբ ուսանողները պատասխանում են, կարող եք հուշող հարցեր տալ, որպեսզի ավելի խորը մտածեն պատասխանների շուրջ: Օրինակ, եթե ուսանողները պատասխանեն, որ անկեղծ միտումը երևում է նրանում, թե ինչպես է մարդ աղոթում, դուք գուցե խնդրեք նրանց բացատրել, թե ինչպես աղոթքները կարող են տարբեր լինել: Եթե ուսանողը պատասխանի, որ դա կարող է երևալ նրանց ցանկություններից, խնդրեք նրանց ծավալվել այդ գաղափարի շուրջ):

Խնդրեք երեք ուսանողի հերթով բարձրաձայն կարդալ պարբերությունները «Սովորելի Սուրբ Հոգով» բաժնից, էջ 20, *Քարոզիր Իմ Ավետարանը* ձեռնարկ: Հանձնարարեք դասարանի սյուս անդամներին հետևել և ընթացքում նշել այն օրհնությունները, որոնք ունենում ենք, երբ Սուրբ Հոգին օգնում է մեզ սովորել ավետարանը: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ օրհնություններ կարող ենք ունենալ, երբ Սուրբ Հոգին առաջնորդում է ավետարանի մեր ուսումնասիրությունը: (Կարող եք այս սկզբունքը գրել գրատախտակին, մինչ ուսանողները պատասխանում են. **Երբ Սուրբ Հոգին առաջնորդում է ավետարանի մեր ուսումնասիրությունը, մենք ստանում ենք ավելի մեծ լույս և հասկացողություն:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչպես կարելի է հրավիրել Սուրբ Հոգին ավետարանն ուսումնասիրելիս՝ իրենց ուսուցանելու համար, կարդացեք կամ ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի հետևյալ մեջբերումը. Խնդրեք նրանց թվարկել, թե ինչ կարող են անել իրենց անհրաժեշտ պատասխանը կամ օգնությունը ստանալու համար:

**Հետևողական հարցեր** Հետևողական հարցերը կարող են օգնել ուսանողներին ավելի խորը մտածել որևէ սկզբունքի մասին և պատասխանել ավելի անկեղծորեն: Օրինակ, երբ ուսանողները պատասխանում են հասարակ կամ համառոտ պատասխանով, դուք գուցե հարցնեք. «Կարո՞ղ եք օրինակ բերել, թե ինչ է նկատի ունեք:» Կամ «Կարո՞ղ եք հիշել ինչ-որ ժամանակ, երբ դուք զգացել եք ճշմարտացիությունն այն բանի, ինչի մասին մենք խոսում ենք:»



«Որպեսզի ավետարանը գրվի ձեր սրտում, դուք պետք է իմանաք, թե ինչ է դա և աճեք այն ավելի լիովին հասկանալու համար: Դա նշանակում է, որ դուք կուսումնասիրեք այն: Երբ ես ասում եմ ուսումնասիրել, ի նկատի չունեմ պարզապես կարդալը: Երբեմն լավ է սուրբ գրություններ կարդալ որոշակի ժամանակահատվածի ընթացքում՝ ձեռք բերելու ընդհանուր գաղափար դրա ուղերձի վերաբերյալ, բայց դարձի համար դուք պետք է ավելի շատ հոգ տանեք այն ժամանակի համար, որ դուք անցկացնում եք սուրբ գրությունների հետ, քան այն քանակության համար, որ դուք կարդում եք այդ ժամանակի ընթացքում: Ես տեսնում եմ, թե ինչպես եք դուք երբեմն կարդում մի քանի հատված, ապա դադար առնում և խորհում դրանց մասին, այնուհետև կրկին ուշադիր կարդում հատվածները, մտածում դրանց նշանակության մասին, աղոթելով հասկացողության համար, հարցեր տալով ձեր մտքում, սպասելով հոգևոր հուշումների և գրի առնելով այն տպավորությունները և մտքերը, որոնք ստանում եք, որպեսզի հիշեք և ավելի սովորեք: Այս ձևով ուսումնասիրելով, դուք միզուցե շատ գլուխներ կամ հատվածներ չհասցնեք կարդալ կես ժամում, բայց դուք ձեր սրտում տեղ կտաք Աստծո խոսքին և Նա կխոսի ձեզ հետ» («Երբ դուք դարձի գաք», Ensign կամ *Liahona*, մայիս 2004, 11): Ռիչարդ Գ. Սքոթ, «Ինչպես ստանալ հայտնություն և ոգեշնչում ձեր անձնական կյանքի համար», Ensign կամ *Liahona*, մայիս 2012, 45–47:

Օգնեք ուսանողներին լրացնել նախադասությունը՝ տալով հետևյալ հարցերը.

- Ի՞նչ գործողությունների մասին է խոսում Երեց Քրիստոֆերսոնը, որոնք կարող են տանել դեպի սուրբ գրությունների ավելի մեծ ըմբռնման:
- Ինչպե՞ս են այս գործողություններն ավելի լավ թույլ տալիս, որ Սուրբ Հոգին ուսուցանի ձեզ:
- Ինչպե՞ս են այս գործողություններից մեկը կամ ավելին օգնել ձեզ խորացնել ավետարանի ձեր հասկացողությունը:

Բացատրեք, որ սուրբ գրություններն ուսումնասիրելիս օգտակար է հասկանալ, թե ինչպես է Սուրբ Հոգին հաղորդակցվում մեզ հետ: Դասարանը բաժանեք զույգերի (հավանաբար նախորդ վարժության նույն զույգերը կլինեն): Գրատախտակին գրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները և խնդրեք ուսանողներին արտագրել դրանք իրենց ուսումնասիրության օրագրերում կամ թղթի մի թերթիկի վրա. Վարդապետություն և Ուխտեր 8.2–3, 9.7–8, 11.12–14, և 138.1–2, 11:

Ուսանողներին ժամանակ տվեք ուսումնասիրելու այս հատվածները և նշել բառերն ու արտահայտությունները, որոնք նկարագրում են, թե ինչպես է Սուրբ Հոգին հաղորդակցվում մեզ հետ: Նրանք կարող են նաև գրել մի քանի նշումներ իրենց ուսումնասիրության օրագրում այն մասին, թե ինչ են իրենք սովորում այս հատվածներից: Խնդրեք ուսանողներին քննարկել իրենց զուգրակերների հետ այն, ինչ իրենք նշել են այս հատվածներում և այն, ինչ իրենք սովորել են: Բավարար ժամանակ տրամադրելուց հետո, տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ խոսքեր կամ արտահայտություններ դուք գտաք, որոնք, նկարագրում են, թե ինչպես է Սուրբ Հոգին հաղորդակցվում մեզ հետ: (Գրեք ուսանողների պատասխանները գրատախտակին:)
- Ինչպե՞ս է Սուրբ Հոգին ուսուցանել ձեզ այդ ուղիներից մեկը և խորացրել ձեր հասկացողությունը ավետարանի որևէ վարդապետության կամ սկզբունքի վերաբերյալ: Ինչպիսի՞ առանձնահատուկ փորձառություններ եք դուք ունեցել:

Հրավիրեք ուսանողներին բացել էջ 24-ը *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկում և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ առաջին չորս պարբերանը՝ կետերը «Ուսումնասիրության մտքեր և առաջարկություններ» վերնագրի ներքո: Խորհեք հետևյալ հարցերի առաջադրման շուրջ.

- Ինչպե՞ս կարող են այս առաջարկություններն ազդել միսիոներին ունակության վրա՝ ավելի արդյունավետորեն կիսվելու ավետարանով ուրիշների հետ:
- Ինչպե՞ս կարող եք հարմարեցնել այս գաղափարները և դնել դրանք կիրառության մեջ այժմ, որպես հետագա միսիոներներ:
- Ինչպե՞ս կարող է սուրբ գրությունների ուսումնասիրության ձեր հմտություններն ու սովորույթները բարելավելը նպաստել ձեր հաջողությանը որպես միսիոներներ: (Ուսանողները հավանաբար կնշեն այսպիսի մի սկզբունք. **Երբ միսիոներները զարգացնեն ավետարանի ուսումնասիրության արդյունավետ սովորույթներ, նրանք կուսուցանվեն Հոգու կողմից, նրանց փորձառությունը կլինի ավելի պարզևստորոգ, և նրանք կլինեն ավելի պատրաստված ավետարանն ուսուցանելու համար:)**

Դասարանի անդամներին բաժանեք երեք կամ չորս հոգանոց խմբերի: Խնդրեք յուրաքանչյուր խմբին միմյանց միջև բաժանել վեց ենթավերնագրերը «Ուսումնասիրության մտքեր և առաջարկություններ» վերնագրի ներքո, 24–27 էջերը *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկում և հանձնարարեք խմբի անդամներին ուսումնասիրել իրենց նշանակված ենթավերնագրերը: Խմբի որոշ անդամները կարող է կարիք ունենան ուսումնասիրելու ավելի քան մեկ ենթավերնագիր: Նշանակեք ղեկավար յուրաքանչյուր խմբում՝ քննարկում վարելու նրա վերաբերյալ, թե ինչ սովորեցին խմբի անդամները և ինչ կարող են անել այժմ՝ ավետարանի իրենց ուսումնասիրությունը ավելի գորեղ և արդյունավետ դարձնելու համար: Երբ զույգերը բավական ժամանակ կունենան քննարկելու համար, դասարանին տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս են ուսումնասիրության այս հմտություններն ու սովորույթներն օգնել ձեզ՝ սուրբ գրություններն ավելի արդյունավետորեն ուսումնասիրելու համար:

Օգնելու համար ուսանողներին անձնապես կիրառել այն, ինչ քննարկվել է, տվեք յուրաքանչյուր ուսանողի «Սուրբ գրությունների անհատական ուսումնասիրության սովորույթներ»-ի օժանդակ նյութից մեկական օրինակ: Դասարանին տվեք մի քանի րոպե՝ օժանդակ նյութի վարժությունը կատարելու համար:

Բավարար ժամանակից հետո, խնդրեք ուսանողներին կիսվել իրենց մտքերով և գաղափարներով, որ նրանք ձեռք բերեցին այս վարժությունից: Խրախուսեք նրանց հետևել ընթացքում՝ ներառելով սուրբ գրությունների ուսումնասիրության հմտությունները և սովորույթները, որոնք նրանք ընտրել էին իրենց անձնական ուսումնասիրության մեջ: Հավաստիացրեք նրանց, որ երբ նրանք դա անեն, Սուրբ Հոգին կլուսավորի նրանց մտքերը և կմեծացնի ավետարանի նրանց հասկացողությունը:

Օգնեք դասարանին հասկանալ, որ բացի նրանից, թե *ինչպես* են նրանք ուսումնասիրում, շատ կարևոր է նաև *երբ* և *ինչ եմ* նրանք ուսումնասիրում՝



արդյունավետ միսիոներներ լինելու համար: Հանձնարարեք դասարանի անդամներին բացել viii էջը *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի նախաբանում և նայեք Միսիոների օրվա ռեժիմը, որը գտնվում է «Անհատական ուսումնասիրություն, զուգրնկերոջ հետ ուսումնասիրություն, շրջանի ժողովներ և տարածքային համաժողովներ» բաժնում: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս է «Միսիոների օրվա ռեժիմը» ցույց տալիս ավետարանի ուսումնասիրության կարևորությունը:
- Ինչպե՞ս կարող է ամենօրյա հետևողական սուրբ գրությունների ուսումնասիրությունն այժմ պատրաստել ձեզ այս խիստ ռեժիմին որպես միսիոներ:

### Սուրբ գրություններում նշումներ կատարելը



Եթե բավականաչափ ժամանակ կմնա, կարող եք ցուցադրել «Advice for Studying the Scriptures» (2:07) տեսանյութը, որպեսզի օգնեք դասարանին մտածել, թե ինչպես կարող են բարելավել իրենց սուրբ գրություններում նշումներ կատարելու եղանակը:

Տեսանյութի դիտումից հետո, ուղղեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ դուք սովորեցիք Երեց Բեդնարից, որը կօգնի ձեզ բարելավել սուրբ գրությունների ձեր ուսումնասիրությունը:
- Ո՞րն է սուրբ գրությունները նշելու նպատակը: (Օգնել ձեզ վերհիշել, թե ինչ եք սովորել վերջերս, երբ դուք կրկին կարիք ունենաք:)
- Ինչո՞ւ է կարևոր, որ միսիոներները մի արդյունավետ ուղի ունենան վերհիշելու այն, ինչ նրանք սովորել են:

### Ապրեք ըստ ձեր սովորածի

Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ դասարանի համար առաջին պարբերությունը «Ապրեք ըստ նրա, ինչ սովորում եք» վերնագրի ներքո *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի էջ 21: Այնուհետև հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Հովհաննես 7.17: Օգնեք ուսանողներին բացահայտել մի սկզբունք, որն ուսուցանվում է *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում և Հովհաննես 7.17-ում հարցնելով.

- Ի՞նչ տարբերություն կա սուրբ գրություններն իմանալու և սուրբ գրություններում գտնվող ուսմունքներով ապրելու միջև: (Չնայած նրանք կարող են օգտագործել տարբեր խոսքեր, ուսանողները պետք է հասկանան հետևյալ սկզբունքը. **Երբ մենք ապրում ենք համաձայն ավետարանի ուսմունքների, Սուրբ Հոգին կվկայի այդ սկզբունքների ճշմարտացիության մասին և կուժեղացնի մեր հավատքը, գիտելիքը և վկայությունը:**)

Բացատրեք, որ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է ըստ մեր սովորածի գործելու կարևորության մասին: Ցուցադրեք հետևյալ մեջբերումը, և խնդրեք որևէ կամավորի կարդալ այն բարձրաձայն դասարանի համար.



«Որպես ավետարանն ուսումնասիրողներ մենք պետք է լինենք «խոսքը կատարողներ, ոչ թե միայն լսողներ» (Հակոբոս 1.22): Մեր սրտերը բաց են Սուրբ Հոգու ազդեցության առջև, երբ մենք պատշաճորեն գործադրում ենք մեր ազատ կամքը և գործում ճիշտ սկզբունքների համաձայն, և դրանով հրավիրում Նրա ուսուցանող և վկայող գործունեությունը» («Հսկել ողջ հաստատակամությամբ» Ensign կամ *L'haħnna*, մայիս 2010, 42):

- Ի՞նչ է նշանակում լինենք խոսքը կատարողներ, ոչ թե միայն լսողներ:
- Ինչպե՞ս է գործելը «համաձայն ճիշտ սկզբունքների» խորացնում մեր հասկացողությունը մի ձևով, որը միայն ուսումնասիրությունն անկարող է անել:
- Ինչպե՞ս է գործելը համաձայն ճիշտ սկզբունքների թույլ տվել ձեզ ձեռք բերել ավելի խորը հասկացողություն և վկայություն այն ավետարանական սկզբունքի վերաբերյալ, որով ձգտում էիք ապրել:

Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ 21 էջի երկրորդ պարբերությունը *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում, մինչ դասարանը հետևում է ընթացքում, որոնելով լրացուցիչ ուղիներ, երբ ավետարանով ապրելն ազդում է միսիոներների սրտերի և ունակությունների վրա: Կարդալուց հետո, տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ լրացուցիչ օրհնություններ են գալիս միսիոներներին, երբ նրանք ապրում են ավետարանի սկզբունքներով, որոնք նրանք գիտեն, որ ճշմարիտ են: (Օգնեք ուսանողներին հասկանալ այս սկզբունքը. **Երբ միսիոներներն ապրում են ավետարանով, Սուր Հոգին մեծացնում է ավետարանով կիսվելու նրանց ցանկությունն ու ունակությունը:**)
- Երբ նախապատրաստվում էիք միսիա ծառայել, ինչպես է Սուրբ Հոգին մեծացրել ծառայելու ձեր ցանկությունը:

### Ունկնդիրներին հրավիրել Եկեղեցի

Միսիոներներն օգնում են ունկնդիրներին առաջադիմել դեպի մկրտություն, հրավիրելով նրանց, որ պահեն պարտավորությունները: Օրինակ, բացատրեք ուսանողներին, որ երբ ունկնդիրները Եկեղեցի են հաճախում, նրանք կարող են ստանալ աճող հայտնություն Սուրբ Հոգու միջոցով և ցանկանան ավելի մոտենալ Աստծուն: Եկեղեցի հաճախելը կարող է օգնել ունկնդիրներին վկայություն ձեռք բերել վերականգնված ավետարանի վերաբերյալ և պատրաստվել մկրտվելու:

Ցուցադրեք, թե ինչպես հրավիրել ինչ-որ մեկին Եկեղեցի: Առաջինը, համառոտակի կիսվեք օրհնություններով, որոնք գալիս են Եկեղեցի հաճախելուց: Ապա օգտագործեք միսիոներական *Վերականգնումը* գրքույկը (էջեր 22–23) բացատրելու, թե ինչ է տեղի ունենում հաղորդության ժողովի ընթացքում: Ապա ցուցադրեք, թե ինչպես Եկեղեցու ժողովներին հաճախելու հրավեր ուղարկել ունկնդրին: Ցուցադրումից հետո հանձնարարեք ուսանողներին զուգրնկերոջ հետ դերերով խաղալ այն քայլերը, որոնք դուք ցուցադրեցիք: Թույլ տվեք նրանցից յուրաքանչյուրին հերթով համառոտակի կիսվել այն օրհնություններով, որոնք նրանք ստացել են Եկեղեցի հաճախելով, բացատրելու թե ինչ է տեղի ունենում հաղորդության ժողովի ժամանակ, և հրավիրել մյուս անձնավորությանը հաճախել Եկեղեցի:

Վկայեք այս դասին քննարկված վարդապետությունների և սկզբունքների մասին:

### **Գործելու հրավերներ**

Կոչ արեք ուսանողներին ավետարանի անհատական ուսումնասիրությունը դարձնել առաջնահերթություն, մինչ նախապատրաստվում են միսիայում ծառայելուն: Հետևյալ առաջարկվող վարժությունները կարող են օգնել ուսանողներին կենտրոնանալ Հոգով սովորելու վրա.

- Հաստատեք մի սովորություն ամեն օր ավետարանի անհատական ուսումնասիրություն կատարել, ներառյալ Մորմոնի Գրքի ուսումնասիրությունն ու դրա շուրջ խորհրդածելը:
- Աղոթեք նախքան ավետարանի անհատական ուսումնասիրությունը սկսելը՝ հրավիրելու Հոգին, ձեզ օգնելու համար: Եթե դուք դեռ չեք արել այդպես, սկսեք օգտագործել ուսումնասիրության օրագիր՝ ավետարանի ձեր անհատական ուսումնասիրության ժամանակ:
- Ընտրեք ավետարանի ուսումնասիրության գաղափարներից և առաջարկներից մեկը, որը գտնվում է էջեր 24–25-ում *Քարոզիր Իմ Ավետարանը* ձեռնարկում և ներառեք այն ձեր անհատական ուսումնասիրության մեջ այս շաբաթ:

# Սուրբ գրությունների անհատական ուսումնասիրության սովորույթներ



Հետևյալ դրույթներից յուրաքանչյուրի համար գնահատեք ձեզ՝ հիմնվելով հետևյալ աստիճանակարգի վրա.

- 1= Երբեք
- 2=Երբեմն
- 3=Գրեթե ժամանակի կեսը
- 4=Գրեթե միշտ

- \_\_\_\_\_ Ես աղոթում եմ և խնդրում Երկնային Հորը օրհնել ինձ Հոգով, երբ ես ուսումնասիրում եմ սուրբ գրությունները:
- \_\_\_\_\_ Ես ձգտում եմ ուսումնասիրել սուրբ գրությունները մի ժամանակաընթացքում և տեղում, որտեղ ես կարող եմ բացառել խանգարող հանգամանքները:
- \_\_\_\_\_ Ես օգտագործում եմ ուսումնասիրության օրագիր, երբ ուսումնասիրում եմ սուրբ գրությունները, որպեսզի կարողանամ գրի առնել այն, ինչ սովորում եմ:
- \_\_\_\_\_ Ողջ օրվա ընթացքում ես մտածում եմ այն բաների մասին, ինչ ուսումնասիրել եմ, և թե ինչպես այն կարող է օգնել ինձ կյանքում:
- \_\_\_\_\_ Ես գրի եմ առնում մտքերս և զգացումներս սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրում:
- \_\_\_\_\_ Երբեմն ես ուսումնասիրում եմ սուրբ գրությունները թեմաներով, որպեսզի մեծացնեմ հասկացողությունս հատուկ վարդապետությունների կամ հոգևոր ճշմարտությունների վերաբերյալ:
- \_\_\_\_\_ Ես գործում եմ օրվա ընթացքում ըստ իմ սովորածի:
- \_\_\_\_\_ Ես օգտագործում եմ սուրբ գրությունների ուսումնասիրության օժանդակ նյութերը, ինչպես օրինակ՝ ծանոթությունները, Թեմատիկ Ուղեցույցը և Աստվածաշնչյան Բառարանը, որպեսզի ավելի լավ հասկանամ սուրբ գրությունների հատվածները:
- \_\_\_\_\_ Ես նշում եմ սուրբ գրությունները մի ձևով, որն օգնում է ինձ հիշել կարևոր բաները, որոնք ես սովորել եմ:
- \_\_\_\_\_ Ես ձգտում եմ ավելի շուտ հասկանալ, ինչ ես կարդում եմ, քան ուղղակի խոսքերը կարդալ:

Վերոհիշյալ ոլորտներից ո՞ր մեկը կամ երկուսը, ձեր կարծիքով, կարող է փոխել սուրբ գրությունների ձեր ուսումնասիրությունը և Հոգով սովորելու ձեր ունակությունը: Ի՞նչ կպահանջվի ձեզանից, որպեսզի դարձնեք այս սովորույթը ամենօրյա ձեր կանոնավոր ուսումնասիրության մի մասը:





# 4

## Ուսուցանել Հոգով

### Նախաբան

Հաջողակ միսիոներները հասկանում են, որ «երբ մարդը խոսում է Սուրբ Հոգու գործությամբ, Սուրբ Հոգու գործությունը տանում է այն մինչև մարդկանց զավակների սրտերը» (2 Նեփի 33.1): Միսիոներներն ինքնուրույն չեն կարող բերել վկայության օրհնություններն ու դարձը մեկ այլ մարդու, անկախ նրանից, թե որքան նրանք գիտակ են կամ փորձառու: Միայն Սուրբ Հոգին կարող է առաջ բերել իսկական դարձ: Երբ


ունկնդիրները զգում են, թե ինչպես է Հոգին աշխատում իրենց ներսում, կամ երբ նրանք տեսնում են Տիրոջ սիրո և ողորմածության ապացույցն իրենց կյանքում, նրանք շենացվում են և զորացվում հոգեպես, նրանք հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ մեծանում է և նրանք ավելի մեծ հավանականություն ունեն դարձի գալու:

### Նախապատրաստություն

- Ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 42.14, 50.12–14, 17–23 հատվածները:
- Ուսումնասիրեք հետևյալը՝ տեսնելու որոշ ուղիներ, որոնցով Սուրբ Հոգին կարող է ազդել ուսուցիչների և սովորողների վրա. Ղուկաս 12.12, Հովհաննես 14.26, 1 Նեփի 2.16, 2 Նեփի 33.1, Ալմա 18.16, Սորոնի 10.5, և Վարդապետություն և Ուխտեր 6.14–15, 23:
- Ուսումնասիրեք *Քարոզիր Իմ Ավետարանը*, էջեր 92–93, 176–78, և 182–86:
- Պատարաստվեք ցուցադրել «A Man without Eloquence» (6:06) տեսանյութը, որը մատչելի է LDS.org-ում:
- Պատարաստվեք ցուցադրել «Teach People, Not Lessons: Jynx» (6:34) տեսանյութը, The District 2, որը մատչելի է youtube.com-ում:
- Պատարաստվեք ցուցադրել «Teaching about the Holy Ghost and Prayer: John» (5:00) տեսանյութը, The District 2, որը մատչելի է LDS.org-ում:

### Ուսուցման առաջարկներ

#### Ուսուցանել Հոգով

 Բացատրեք ուսանողներին, որ Նախագահ Բրիգամ Յանգը մի անգամ խոսել է դեպի ավետարանը՝ իր դարձի և միսիոների մասին, ով օգնեց նրան ձեռք բերել վկայություն: Ապա ցուցադրեք «A Man without Eloquence» (6:06) տեսանյութը: Խնդրեք ուսանողներին ուշադրություն դարձնել, թե ինչպես է Հոգին ազդում Նախագահ Բրիգամ Յանգի վրա և օգնում նրան դարձի գալ:

Ֆիլմը դիտելուց հետո, տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս լսելով խոնարհ այդ մարդուն իր վկայությունը բերելիս օգնեց Բրիգամ Յանգին դառնալ իսկապես դարձի եկած:
- Բրիգամ Յանգի փորձառությունից ի՞նչ սկզբունքներ սովորեցիք Հոգով ուսուցանելու մասին: (Ուսանողները կարող են նշել այս սկզբունքները. **Հոգով ուսուցանելը կարող է առաջնորդել դեպի ուրիշների դարձի գալը: Երբ մենք ուսուցանում ենք Հոգով, մենք պետք է անկեղծ լինենք և խոսենք սրտից: Մենք պետք է խոնարհ լինենք [տես ՎևՈՒ 136.33]:**)

Հանձնարարեք ուսանողներին՝ կարդալ Վարդապետություն և Ուխտեր 42.14, 50.13–14 և 17–23-ը, և փնտրել Տիրոջ հրահանգները նրանց, ովքեր ուսուցանում են Իր ավետարանը: Այնուհետև հարցրեք.

- Ավետարանի ուսուցման ի՞նչ սկզբունքներ են տրվել այս հայտնություններում: (Կան մի քանի ճիշտ պատասխաններ, որոնք կարող են տալ ուսանողները: Պատասխանները կարող են ընդգրկել հետևյալ սկզբունքը: **Տերը պատվիրել է, որ ավետարանը պետք է ուսուցանվի Հոգով և ուրիշ ոչ մի ձևով:**)
- Համաձայն Վարդապետություն և Ուխտեր 50.22-ի, ի՞նչ է տեղի ունենում, երբ միսիոներն ուսուցանում է Հոգով: (Միսիոները և ունկնդիրը «հասկանում են միմյանց, և երկուսն էլ շենանում են և միասին ցնծում»:  
Պարզաբանեք ուսանողների համար, որ **Հոգով ուսուցանելը կարող է տեղի ունենալ, երբ Սուրբ Հոգին ներկա է և զգացվում է ուսուցչի, սովորողի կամ երկուսի կողմից էլ:** Կարող եք այդ սկզբունքը գրել գրատախտակին:)

Հիշեցրեք ուսանողներին, որ Հոգու ներկայությունը միշտ չէ, որ դրսևորվում է հուզմունքի կամ արցունքների միջոցով: Եթե անհրաժեշտ է, կարդացեք դասարանի համար Նախագահ Հովարդ Վ. Հանթերի հետևյալ խոսքերը.



«Թույլ տվեք զգուշացման խոսք ասել ձեզ այս թեմայով: ... Ես մտահոգվում եմ, երբ կարծես թե ուժեղ հույզերը կամ ազատ հոսող արցունքները հավասարեցվում են Հոգու ներկայության հետ: Անշուշտ Տիրոջ Հոգին կարող է առաջացնել ուժեղ հուզական զգացողություններ, ներառյալ արցունքներ, բայց այդ արտաքին դրսևորումը չպետք է շփոթել Հոգու՝ իր իսկ ներկայության հետ:

Ես հետևել եմ իմ եղբայրներից շատ շատերին տարիների ընթացքում, և մենք միասին կիսվել ենք որոշ հավաքներ և անասելի հոգևոր փորձառություններով: Այդ փորձառություններից բոլորը եղել են տարբեր, յուրաքանչյուրը յուրովի իր իսկ ձևով և այդպիսի սրբազան պահերը կարող են կամ չեն կարող ուղեկցվել արցունքներով: Շատ հաճախ դրանք ուղեկցվում են արցունքներով, բայց երբեմն էլ դրանք ուղեկցվում են բացարձակ լռությամբ: Ուրիշ անգամներ դրանք ուղեկցվում են ուրախությամբ: Դրանք միշտ ուղեկցվում են ճշմարտության մեծ դրսևորմամբ, հայտնությամբ սրտում» (“Eternal Investments” [address to Church Educational System religious educators, Feb. 10, 1989], 3; si.lds.org):

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչպես Սուրբ Հոգին կարող է ազդել ուսուցիչների և սովորողների վրա, գրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները գրատախտակին, կամ բաժանեք դրանք ուսանողներին օժանդակ նյութի տեսքով: (Հիշեցում. Ուսանողներին տվեք միայն հղումները, փակագծերում ամփոփված նյութը նախատեսված է ուսուցիչների համար).

- Դուկաս 12.12 (սովորեցնում է, թե ինչ ասել)
- Հովհաննես 14.26 (բերում է բաներ հիշողության մեջ )
- 1 Նեփի 2.16 (փափկացնում է սրտերը)
- 2 Նեփի 33.1 (հասցնում է ճշմարտությունները սրտին)
- Ալմա 18.16 (օգնում է բացահայտել ուրիշների մտքերը)
- Մորոնի 10.5 (վկայություն է բերում բոլոր ճշմարտության վերաբերյալ)
- Վարդապետություն և Ուխտեր 6.14–15, 23 (լուսավորում է միտքը, տալիս է ուրախություն և խաղաղություն)

**Զույգերով**

**աշխատելը:** Զույգերով աշխատելը թույլ է տալիս յուրաքանչյուր ուսանողի մասնակցել որևէ վարժության և դա կարող է ստեղծել ապահով մթնոլորտ, որում ուսանողները կարող են ուսուցանել միմյանց և կիսվել իրենց գզացումներով, մտքերով և վկայություններով:

Հանձնարարեք ուսանողներին զույգերով ուսումնասիրել սուրբ գրությունների այդ հատվածները: Հանձնարարեք յուրաքանչյուր զույգից մի ուսանողի ուղիներ գտնել, որոնցով Սուրբ Հոգին կարող է ազդել ավետարանի ուսուցչի վրա, մինչ մյուս ուսանողը փնտրում է ուղիներ, որոնցով Սուրբ Հոգին կարող է ազդել ինչ-որ մեկի վրա, ով ուսուցանվում է: Այս հրավիրեք ուսանողներին քննարկել միմյանց հետ իրենց սովորածով: Երբ յուրաքանչյուր զույգ իրենց սովորածը քննարկելու համար բավական ժամանակ կունենա, հետևյալ տիպի հարցեր տվեք՝ օգնելու նրանց շարունակել վերլուծել այն, ինչ իրենք կարդացել են.

- Ըստ ձեր ուսումնասիրած հատվածների, ինչպե՞ս է Հոգին ազդում նրանց վրա, ովքեր ուսուցանում են: (Մինչ ուսանողները պատասխանում են, դուք կարող եք հարցնել նրանց, թե ո՞ր սուրբ գրությունների հատվածներում են նրանք գտել իրենց պատասխանները:
- Ինչպե՞ս է Հոգին ազդում ուրիշների վրա դարձի գալու դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը:
- Ինչպե՞ս են այս հատվածները ցույց տալիս, թե ինչու է կարևոր միսիոներների համար Հոգով ուսուցանել:

**Հրավիրել Հոգին, երբ ուսուցանում եք**

Ասեք ձեր դասարանին, որ *Քարոզիչ Իմ Ավետարանը* ունի մի քանի բաժիններ, որոնք բացատրում են, թե ինչ կարող են անել միսիոներները հրավիրելու Հոգու առաջնորդությունը, երբ նրանք ուսուցանում են: Բաժանեք ձեր դասարանը փոքր խմբերի՝ ոչ ավել, քան յուրաքանչյուր խմբում չորս ուսանող: Հանձնարարեք յուրաքանչյուր խմբին ուսումնասիրել հետևյալ բաժիններից մեկը *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում.

1. «Ինչպե՞ս սկսել ուսուցանելը», էջեր 198–199 (առանց ներառելու Վարժության վանդակը)
2. «Ձեր ուսուցումը հարմարեցրեք որոշակի կարիքներին» էջեր 200–201 (առանց ներառելու Վարժություն և Սուրբ գրությունների ուսումնասիրություն վանդակները)
3. «Սովորեցրեք հասկանալի ձևով» էջեր 205–206 (առանց ներառելու Սուրբ գրությունների ուսումնասիրության վանդակը)
4. «Լսեք» էջեր 208–209 (առանց ներառելու Վարժության վանդակը)

Գրատախտակին գրեք հետևյալ հրահանգները, որպեսզի խմբերն իմանան, թե ինչ իրենք պետք է անեն.

*Կարդացեք Քարոզիչ Իմ Ավետարանը ձեռնարկի ձեր բաժինը:  
Ձեռնարկեք ձեր խմբերում, թե ինչ սկզբունքներ դուք կարդացիք, որոնք թույլ են տալիս միսիոներներին ավելի արդյունավետ ուսուցիչներ լինել և ունենալ Հոգին իրենց հետ, երբ իրենք ուսուցանեն:*

Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, յուրաքանչյուր խմբից մի ուսանողի խնդրեք ամփոփել, թե ինչպես հմտությունը, որի մասին իրենք կարդացին, կարող է նպաստել Սուրբ Հոգով միսիոներին ուսուցանելու կարողությանը: Խնդրեք ուսանողներից մեկին ամփոփել կարևոր կետերը

գրատախտակին: Երբ խմբերն ամփոփեն իրենց գաղափարները, մտածեք ուղղել հետևյալ տիպի հարցեր.

- Ինչպե՞ս կարող է դասը պատշաճ ձևով սկսելը հրավիրել Սուրբ Հոգուն ուղեկցել դասի ուսուցմանը:
- Ինչպե՞ս կարող է ավետարանի ուղերձը պարզ պահելը հրավիրել Սուրբ Հոգուն ուսուցանել և շենացնել ունկնդրին:
- Ինչպե՞ս կարող է դասը ունկնդրի կարիքների վրա կենտրոնացած պահելը հրավիրել Սուրբ Հոգուն:
- Ինչպե՞ս կարող է լսելը, թե ունկնդիրն ինչ է ասում, նպաստել միախոնների Հոգով ուսուցանելու կարողությանը:



Որպեսզի ուսանողներին օգնեք տեսնել, թե վերոհիշյալ ուսուցման հատկություններից մի քանիսն ինչ տեսք ունեն, ցույց տվեք «Teach People, Not Lessons: Jynx» (6:34) տեսանյութը: Ուսանողներին հորդորեք ապացույց փնտրել, որ միախոններն ուսուցանում էին Հոգու միջոցով: Ուսանողները կարող են հատկապես հետևել՝ տեսնելու, թե ինչպես էին միախոններն օգտագործում այն հատկությունները, որոնք դասարանը ուսումնասիրեց *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում և ինչպես այդ հատկություններն օգտագործելը հրավիրեց Հոգին միախոններական ուսուցմանը:

Տեսանյութը դիտելուց հետո, քննարկեք հետևյալը.

- Ի՞նչ արեցին միախոններները իրենց ուսուցման ընթացքում, որը նրանց թույլ տվեց ուսուցանել Հոգով:
- Ի՞նչ ապացույց տեսաք, որ Ջինքսը սովորում էր Հոգով:

Նախքան շարունակելը, ուսանողներին տրամադրեք մի պահ գրի առնելու հետևյալ հարցի պատասխանը:

- Ինչպե՞ս կկիրառեիք սկզբունքները, որոնք մենք մինչև այժմ քննարկեցինք այս դասում:

### Օգնել ունկնդիրներին ճանաչել Հոգին

Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ «Հոգու գործունեությունը դարձի ընթացքում» էջեր 102–103 *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում (առանց ներառելու Վարժություն և Սուրբ գրությունների ուսումնասիրություն վանդակները): Դասարանի մնացած մասին հանձնարարեք հետևել ընթացքում և նշել արտահայտությունները, որոնք նկարագրում են, թե ինչ ունկնդիրը պետք է զգա, որպեսզի դարձը տեղի ունենա: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ պետք է ունկնդիրները զգան, որպեսզի դարձը տեղի ունենա: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են հետևյալ սկզբունքը. **Եթե ունկնդիրները զգում են, որ Հոգին աշխատում է իրենց հետ, նրանք ավելի հավանական է, որ դարձի գան դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը:**)
- Ինչպե՞ս կարող եք իմանալ, թե երբ է ունկնդիրը զգում Սուրբ Հոգու ազդեցությունը: (Հնարավոր պատասխաններ՝ երբ միախոնները զգում է Սուրբ Հոգին, երբ ունկնդիրն ազատ հարցեր է տալիս, երբ կամենում է ավելի շատ բան սովորել և հոժար է պարտավորություններ ստանձնել և պահել, երբ առկա է հասկացողություն, ուրախության և Աստծուն մոտ

#### «Փնտրեք»:

Ուսուցիչները կարող են մեծացնել սուրբ գրությունների հատվածների, տեսանյութերի ներկայացան և մեջբերումների արդյունավետությունը՝ նախապես հրահանգելով ուսանողներին, թե ինչ պետք է նրանք փնտրեն, երբ նրանք դիտում են կամ կարդում: Ուսուցիչները կարող են դա անել գրատախտակին գրելով հատուկ բաներ, որոնք ուսանողները կարող են փնտրել կամ հարցեր մտածելու համար: Սա մեծացնում է հավանականությունը, որ ուսանողները կգտնեն և կսովորեն համապատասխան և կարևոր կետերը:

լինելու զգացում և երբ ավելի խորը ընկերություն է ստեղծվում միսիոներին և ունկնդրի միջև:)

- Երեց Մ. Ռասել Բալլարդն ուսուցանել է. «Փորձառությունները Հոգու հետ բնականաբար հետևում են, երբ մարդը կամենում է փորձարկել խոսքը» («Այժմ է ժամանակը», Ensign, Nov. 2000, 75): Ի՞նչ կարող է միսիոներն անել՝ խրախուսելու ունկնդիրներին փորձարկելու խոսքը:

Ուսանողներին բացատրեք, որ նրանց ամենադժվարին դերերից մեկը որպես միսիոներներ՝ օգնելն է ունկնդիրներին ճանաչել Սուրբ Հոգու հուշումները և ապա օգնել նրանց գործել՝ հիմնվելով այդ մտքերի և զգացումների վրա: Սուրբ Հոգու ոգեշնչման միջոցով, միսիոներները կարող են իմանալ, թե ինչ հոգևոր հուշումներ ունկնդիրը կարիք ունի ստանալ, որպեսզի դարձի գա և նրանք կարող են ապահովել մի միջավայր, որտեղ այդ հուշումները կարող են տեղի ունենալ:



Պատկերավոր դարձնելու համար, թե ինչպես դա կարելի է անել, ցույց տվեք «Teaching about the Holy Ghost and Prayer: John» (5:00) տեսանյութը: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչպես միսիոներներն օգնեցին Ջոնին սովորել ճանաչել Հոգին:

Ֆիլմը դիտելուց հետո, տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս միսիոներներն օգնեցին Ջոնին ճանաչել Հոգին:
- Ի՞նչ արեցին միսիոներները՝ օգնելու Ջոնին իմանալ, թե ինչպես ստանալ պատասխաններ Տիրոջից:

Հանձնարարեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 11.12-ը, և այնուհետև հանձնարարեք նրանց քննարկել հետևյալ հարցը գույգերով.

- Եթե որևէ ունկնդիր հարցնի ձեզ, թե ինչպիսի՞ զգացողություն է պատճառում Սուրբ Հոգին, ինչպե՞ս Վարդապետություն և Ուխտեր 11.12-ը կօգնեն ձեզ պատասխանել:

### Գործել ըստ Հոգու հուշումների

Ցուցադրեք հետևյալը և հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Մեր Երկնային Հոր հետ հաղորդակցությունը սովորական բան չէ: Դա սրբազան արտոնություն է: Այն հիմնված է հավերժական, անփոփոխ սկզբունքների վրա: Մենք օգնություն ենք ստանում մեր Երկնային Հոր կողմից ի պատասխան մեր հավատքի, հնազանդության և ազատ կամքի պատշաճ օգտագործման» (Ռիչարդ Գ. Սքոթ, «Ինչպե՞ս ձեռք բերել հայտնություն և ոգեշնչում ձեր անձնական կյանքի համար», Ensign կամ *Liahona*, մայիս 2012, 47):

Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս կարող է մեր հաղորդակցությունը Երկնային Հոր հետ դառնալ սովորական: Ի՞նչ կարող ենք անել՝ մեր աղոթքներն ավելի իմաստավոր դարձնելու համար:
- Ի՞նչ է նշանակում ձեզ համար, որ «մենք օգնություն ենք ստանում մեր Երկնային Հորից՝ ի պատասխան մեր հավատքի, հնազանդության և ազատ կամքի ճիշտ օգտագործման»: (Թեև նրանք կարող են օգտագործել տարբեր խոսքեր, ուսանողներն ամենայն հավանականությամբ

կպատասխանեն հետևյալ կերպ. **Մենք ստանում ենք օգնություն մեր Երկնային Հորից, երբ մենք կենտրոնանում ենք՝ մեր հավատքը, հնազանդությունը և ազատ կամքի ճիշտ օգտագործումը մեծացնելու վրա:** Գրեք այս սկզբունքը գրատախտակին:)

Որպեսզի օգնեք ուսանողի ըմբռնումը խորացնել այս սկզբունքի վերաբերյալ, ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ երկու մեջբերումները և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն՝ դասարանի համար.



«Հոգու այդ ձայնը խոսում է մեղմորեն, հուշելով ձեզ, ինչ անել կամ ինչ ասել, կամ այն կարող է զգուշացնել կամ նախազգուշացնել ձեզ:

Այս հուշումներն անտեսելու կամ չհնազանդվելու դեպքում Հոգին կհեռանա ձեզանից: Դա ձեր ընտրությունն է՝ ձեր ազատ կամքը» (“Personal Revelation: The Gift, the Test, and the Promise,” Ensign, Nov. 1994, 60):



«Հոգին մեր ուշադրությունը չի գրավում աղաղակելով կամ մեր ուսերից բռնած ուժգին թափահարելով: Դրա փոխարեն նա շշնջում է: Նա այնքան քնքշորեն է մոտենում մեզ, որ եթե զբաղված լինենք, կարող ենք ոչինչ չնկատել: ...

Երբեմն Հոգու ներգործությունը բավական է լինում լույս մեր ուշադրությունը գրավելու համար: Սակայն հիմնականում, եթե մենք ուշադրություն չենք դարձնում մեղմ զգացողությանը, Հոգին հեռանում և սպասում է, մինչև մենք կգանք փնտրելով և լսելով և մեր ձևով ասելով, ինչպես Սամուելը հին ժամանակներում. «Խօսիր [Տեր], որովհետեւ քո ծառան լսում է» (“The Candle of the Lord,” Ensign, Jan. 1983, 53):

- Ի՞նչ եք սովորում Նախագահ Փաքերի այս ասածներից:
- Քանի որ Սուրբ Հոգին խոսում է մեզմ, ի՞նչը կարող է դժվարացնել լսելը կամ Հոգուն ճանաչելը այսօրվա աշխարհում:

Երբ ուսանողները պատասխանեն, մտածեք, թե ինչպես կարող են էլեկտրոնային սարքերի չափից ավելի օգտագործումը դժվար դարձնել Հոգին ճանաչելը: (Այս թեմայի շուրջ ավելին իմանալու համար տես Երեց Մ. Ռասսել Բալլարդ, «Հանգիստ եղեք և իմացեք, որ ես եմ Աստված» [Եկեղեցու կրթական համակարգի հավաքույթ երիտասարդ չափահասների համար, մայիս 4, 2014]:)

Հաջորդը, մտածեք կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերը.



«Համեստությունը եական է հոգևոր գիտելիք ձեռք բերելու համար: Խոնարհ լինել նշանակում է ուսանելի լինել: Համեստությունը թույլ է տալիս, որ դուք դաստիարակվեք Հոգու կողմից և ուսուցանվեք Տիրոջ կողմից ոգեշնչված աղբյուրներից, ինչպես, օրինակ, սուրբ գրքերը: Անձնական աճի և հասկացողության սերմը ծլում է և ծաղկում համեստության բերրի հողում: Դրանց պտուղը հոգևոր գիտելիքն է՝ առաջնորդելու ձեզ ինչպես այստեղ, այնպես էլ հետայսու:

«Հպարտ մարդը չի կարող իմանալ Հոգու բաները: Պողոսն ուսուցանել է այս ճշմարտությունն ասելով.

«Աստուծոյ բաներն ոչ ով չգիտէ, եթէ ոչ Աստուծոյ Հոգին: ...

«Բայց շնչաւոր մարդն Աստուծոյ Հոգու բաները չէ ընդունում. որովհետեւ նորակը յիմարութիւն են նորա համար. եւ չէ կարող էլ գիտենալ՝ որովհետեւ հոգեւոր կերպով են քննվում» (1 Կոր. 2.11, 14) («Acquiring Spiritual Knowledge,” Ensign, Nov. 1993, 87):

- Ի՞նչ դեր է խաղում համեստությունը Հոգու հուշումներն ընդունելու և ճանաչելու հարցում:
- Ունեցե՞լ եք փորձառություններ, երբ դուք ուղղորդվել եք Հոգու կողմից: Ինչպե՞ս էիք զգում: Ինչպե՞ս իմացաք, որ դա Հոգին էր: (Տես Սորոնի 7.13:)

Դասարանը բաժանեք երկու մասի: Բացատրեք ձեր ուսանողներին, որ նրանք պատրաստվում են նայել երկու սուրբգրքյան դեպքերի ուսումնասիրություն, տեսնելու, թե ինչպես է Տիրոջ Հոգին ուղղորդում Իր ծառաների աշխատանքը: Թող դասարանի մի մասը կարդա Գործք 4.5–13 հատվածները: Ասեք դասարանի այս մասին, որ Գործք 3-ում, Պետրոսը և Հովհաննեսը բժշկեցին մի մարդու: Գործք 4-ում, նրանք ձերբակալվեցին և բերվեցին հրեա առաջնորդների առջև՝ հարցաքննվելու բժշկության մասին: Հանձնարարեք դասարանի մյուս մասին ուսումնասիրել Գործք 16.6–15-ը: Ասեք դասարանի այս մասին, որ այս հատվածները Պողոսի մասին են իր միախոնեռական ճանապարհորդություններից մեկի ժամանակ: Դասարանի երկու կեսին էլ հանձնարարեք փնտրել, թե ինչպես Սուրբ Հոգին օգնեց Պետրոսին և Պողոսին քարոզել ավետարանը: Բավականաչափ ժամանակից հետո, հորդորեք ուսանողներին հաղորդել, թե ինչպես Սուրբ Հոգին համապատասխանաբար առաջնորդեց Պետրոսին և Պողոսին: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս Պետրոսը և Պողոսը օգտագործեցին իրենց ազատ կամքը հետևելու Հոգու ուղղորդմանը:
- Ի՞նչ ապացույց կա, որ Պետրոսն ու Պողոսը հետևում էին Հոգուն:
- Մասնավորապես ի՞նչ տեղի ունեցավ Պետրոսի Գործք 4 և Պողոսի հետ Գործք 16, քանի որ նրանք յուրաքանչյուրն էլ հետևեցին Հոգու ուղղորդմանը:
- Ինչպե՞ս եք դուք օրհնվել հետևելով Սուրբ Հոգու ուղղորդմանը:

Ավարտեք՝ հրավիրելով ուսանողներին վկայել, թե ինչպես է Տերն օրհնել իրենց Իր Հոգու միջոցով: Խնդրեք նրանց մտածել, թե Հոգով ուսուցանելու մասին ավելի շատ սովորելը ինչպես է ազդել ուրիշներին դեպի Քրիստոս հրավիրելու իրենց ցանկության վրա: Հավաստիացրեք նրանց, որ եթե նրանք որոնեն Հոգին իրենց կյանքում, նրանք կմեծացնեն Հոգով ուսուցանելու իրենց ունակությունը:

### Գործելու հրավերներ

Հրավիրեք ուսանողներին պատարաստվել՝ ուսուցանելու ավետարանը Հոգու միջոցով, լրացնելով հետևյալ առաջարկվող վարժություններից մեկը կամ ավելին:

- Դիտեք մի քանի հատվածներ «The District»-ից (որը գտնվում է LDS.org-ում), երբ պատրաստվեք ծառայելու միսիայում:
- Կիրառեք տարբեր ուղիներ դասի ուսուցումը սկսելիս՝ Հոգին հրավիրող մի քանի հզոր արտահայտություններով *Քարոզիր Իմ Ավետարանը* ձեռնարկից, էջեր 198–199:
- Խորհեք և աղոթեք մի անձնավորության մասին, ում դուք կկամենայիք գորացնել ավետարանում: Աղոթեք ավետարանի որևէ ուղերձի մասին, որի մասին դուք կկարողանայիք կիսվել այդ անձնավորության հետ: Կիսվեք ուղերձով և ձեր վկայությամբ այդ անձնավորության հետ, կամ դեմ առ դեմ, կամ սոցիալական կայքում:

#### Ուսանողական վկայություններ:

Ուսանողները կարող են ավելի լավ հասկանալ, թե ինչպես ավետարանի սկզբունքները կարող են կիրառվել և ավելի ոգեշնչված կլինեն կիրառելու դրանք իրենց կյանքում, երբ նրանք լսեն ուսուցչին և մյուս ուսանողներին՝ բերելիս վկայություն այդ սկզբունքների արժեքի մասին: Ուսուցիչները կարող են խրախուսել ուսանողներին վկայել ավետարանի ճշմարտությունների մասին, այնպիսի հարցեր տալով, որոնք հրավիրում են կիսվել իրենց փորձառություններով և համոզմունքներով:



# 5

## Ո՞րն է Մորմոնի Գրքի դերը

### Նախաբան

Մորմոնի Գիրքը հզոր ապացույց է Հիսուս Քրիստոսի աստվածայնության և Վերականգնման հաստատումն է Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Այն պատասխանում է «հոգու հարցերին» (տես *Քարոզիր Իմ Ավետարանը*, 119) որոնք երկնային Հոր շատ զավակներ ունեն՝ իրենց կյանքի վերաբերյալ: Դարձի հիմնական մասը Սուրբ Հոգու

վկայությունը ստանալն է, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Ապագա միսիոները պետք է ուսումնասիրի Մորմոնի Գիրքն ամեն օր, ունենա անձնական վկայություն Մորմոնի Գրքի վերաբերյալ և ձեռք բերի փորձառություն՝ կիսվելով այդ վկայությամբ ուրիշների հետ:

### Նախապատրաստություն

- Ուսումնասիրեք 1 Նեփի 10.14, 2 Նեփի 3.12, 3 Նեփի 16.4-5, 20.13:
- Ուսումնասիրեք «Մորմոնի Գիրքը՝ վկայություն Աստվածաշնչի հետ մեկտեղ», *Ensign*, հոկ. 2011, 24–27.
- Ուսումնասիրեք *Քարոզիր Իմ Ավետարանը*, 115--122:)
- Պատրաստվեք ցուցադրել «Մորմոնի Գիրքը՝ Գիրք Աստծուց» տեսանյութը (1:55; հատված Երեց Թեդ Ռ. Քալիպթերի ելույթից, *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2011, 74–76, մատչելի է [lds.org/media-library](http://lds.org/media-library) կայքում:
- Պատրաստվեք ցուցադրել «A Book of Mormon Story» (5:15), որը մատչելի է [LDS.org](http://LDS.org)-ում:

### Ուսուցման առաջարկներ

#### Մորմոնի Գիրքը հզոր ապացույց է Հիսուս Քրիստոսի աստվածայնության մասին:

Հրավիրեք ուսանողներին նայել Մորմոնի Գրքի իրենց օրինականներին, կամ վեր բռնել մի օրինակ դասարանի համար, որ ուսումնասիրեն: Ապա սովեք հետևյալ հարցերը.

- Եթե դուք ոչինչ չիմանայիք Մորմոնի Գրքի մասին, ի՞նչ կիմանայիք պարզապես կարդալով ենթավերնագիրը (*Եվս մեկ վկայություն՝ Հիսուս Քրիստոսի մասին*):
- Ի՞նչ կակնկալեիք գտնել գրքում:

Հրավիրեք ուսանողներին բացել Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը և աչքի անցկացնելով երկրորդ պարբերությունը, ուշադրություն դարձնել, թե ի՞նչ էին ցանկանում համոզել աշխարհին Մորմոնի Գրքի գրողները: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ էին ցանկանում համոզել աշխարհին Մորմոնի Գրքի գրողները:

#### Գրատախտակին գրեք հետևյալը. Մորմոնի Գրքի հիմնական նպատակն է համոզել բոլոր մարդկանց, որ Հիսուսը Քրիստոսն է:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ բաժինը, որը կոչվում է «Մորմոնի Գիրքը վկայում է Քրիստոսի մասին» էջ 117 *Քարոզիր Իմ Ավետարանը* ձեռնարկում, մինչ դասարանը հետևում է ընթացքում, փնտրելով

ուղիներ, որոնցով Մորմոնի Գիրքը ծառայում է, որպես վկայություն Հիսուս Քրիստոսի մասին:

Այնուհետև հարցրեք ուսանողներին.

- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը ծառայում որպես վկա Հիսուս Քրիստոսի մասին:
- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը գորացրել ձեր վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին:

Հրավիրեք դասարանի անդամներին կիսվել դասարանի մեկ ուրիշ անդամի հետ իրենց անձնական վկայություններով, կարդալու և աղոթելու իրենց փորձառություններով, կամ Փրկիչի և Նրա առաքելության վերաբերյալ իրենց սիրելի հատվածներով: Ասեք ուսանողներին, որ ամենակարևոր բաներից մեկը, որ նրանք կարող են անել ՄՈՒԿ ընդունվելուց առաջ, Մորմոնի Գիրքն ամբողջապես կարդալն է և աղոթելը դրա ճշմարտացիության վերաբերյալ: Խրախուսեք ուսանողներին հետևել Եկեղեցու անդամներին ուղղված Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի խորհրդին՝ 30 րոպե ամեն օր կարդալ Մորմոնի Գրքից:

**Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը հաստատում են միմյանց:**

Հանձնարարեք ուսանողներին բացել *Քայլողի Իմ Ավետարանը* ձեռնարկի էջ 118-ը: Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ բաժնից, որը կոչվում է «Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը հաստատում են միմյանց»:

Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս են Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը հաստատում միմյանց:
- Ինչո՞ւ միսիոներները պետք է ունենան թե Մորմոնի Գիրքը, և թե Աստվածաշունչը, երբ նրանք օգնում են մյուսներին՝ սովորել Հիսուս Քրիստոսի ավետարանը: (Ուսանողների պատասխանները պետք է արտացոլեն հետևյալ ճշմարտությունը. **Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչն աշխատում են միասին որպես Հիսուս Քրիստոսի և Նրա ուսմուքների վկաներ:**)

Որպեսզի օգնեք դասարանին հասկանալ այս տեսակետը, խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 3.12-ը: Մեկ այլ ուսանող թող բարձրաձայն կարդա Եզեկիել 37.15–17-ը: Հանձնարարեք դասարանին ուշադրություն դարձնել այն արտահայտություններին, որոնք վերաբերում են Աստվածաշունչին և այն արտահայտություններին, որոնք վերաբերում են Մորմոնի Գրքին: Այս հատվածները կարդալուց հետո հարցրեք դասարանին.

- Ինչպե՞ս են այս սուրբ գրությունները հաստատում երկու վկաների գաղափարը:
- Ի՞նչ օրհնություններ են խոստացված, որպես Մորմոնի Գրքի և Աստվածաշնչի մեկտեղ գալու արդյունք:



Որպեսզի լուսաբանեք, թե ինչպես են Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը միասին ծառայում որպես Հիսուս Քրիստոսի վկաներ, հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Յոթանասունից Երեք Թեդ Ռ. Քալիսթերի հետևյալ խոսքերը, կամ ցուցադրեք մեջբերման տեսահոլովակը:



«Ինչո՞ւ է այդքան կարևոր ունենալ Մորմոնի Գիրքը, եթե մենք արդեն ունենք Աստվածաշունչը, որն ուսուցանում է մեզ Հիսուս Քրիստոսի մասին: Չեզ երբևէ հետաքրքրե՞լ է, թե ինչու այդքան շատ Քրիստոնեական եկեղեցիներ կան աշխարհում այսօր, երբ նրանք ձեռք են բերում իրենց վարդապետությունները հիմնականում նույն Աստվածաշնչից: Դա այն պատճառով է, որ նրանք տարբեր ձևով են մեկնաբանում Աստվածաշունչը: Եթե նրանք մեկնաբանեին նույն ձևով, նրանք կլինեին նույն եկեղեցին: Սա մի իրավիճակ չէ, որը Տերն է կամենում, քանի որ Պողոս Առաքյալն ասել է. որ կա «մեկ Տեր, մեկ հաւատք, մեկ մկրտութիւն» (Եփեսացիս 4.5): Որպեսզի իրականացվի այս մեկ լինելը, Տերը հաստատել է վկաների աստվածային օրենքը: Պողոսն ուսուցանել է. «Երկու կամ երեք վկաների բերանից ամեն բան կհաստատուի» (2 Կորնթացիս 13.1):

Աստվածաշունչը մի վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին, իսկ Մորմոնի Գիրքը՝ ևս մեկ վկայություն: Ինչո՞ւ է այդքան կենսական այս երկրորդ վկայությունը: Հենկյալ պատկերը կարող է օգնել: Որքա՞ն ուղիղ գծեր դուք կարող եք անցկացնել մեկ կետով մեկ թղթի վրա: Պատասխանն է՝ անսահման: Մի պահ պատկերացրեք, որ մեկ կետը ներկայացնում է Աստվածաշունչը, իսկ հարյուրավոր ուղիղ գծերը, որոնք անցնում են այդ կետով, ներկայացնում են Աստվածաշնչի տարբեր մեկնաբանությունները, և որ այդ մեկնաբանություններից յուրաքանչյուրը մի եկեղեցի է ներկայացնում:

Ի՞նչ է պատահում, երբ այդ թղթի վրա հայտնվում է երկրորդ կետը՝ Մորմոնի Գիրքը: Քանի՞ ուղիղ գիծ դուք կարող եք տանել այս երկու կետերի՝ Աստվածաշնչի և Մորմոնի Գրքի միջև: Միայն մեկ: Քրիստոսի վարդապետությունների միայն մեկ մեկնաբանություն կարող է ճշմարիտ լինել, եթե կա երկու վկաների վկայություն:

Կրկին և կրկին, Մորմոնի Գիրքը գործում է որպես հաստատող, պարզաբանող, միավորող վկայություն այն վարդապետությունների մասին, որոնք ուսուցանվում են Աստվածաշնչում, որպեսզի լինի միայն «մեկ Տեր, մեկ հաւատք, մեկ մկրտութիւն» («Մորմոնի Գիրքը՝ գիրք Աստծուց», Ensign կամ Liahona, նոյ. 2011, 75):

Տեսանյութը ցույց տալուց կամ մեջբերումը կարդալուց հետո, հարցրեք.

- Ո՞րն է Հիսուս Քրիստոսի մասին երկու սուրբ գրքերի վկաներ ունենալու կանոնությունը:
- Ի՞նչ եք սովորում Երեց Քալիսթերի ելույթից, որը կօգնի ձեզ ուսուցանել ուրիշներին, թե ինչպես են Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը գործում միասին:

**Ուշադրություն.** Եթե դուք զգում եք, որ ուսանողները կարիք ունեն տեսնելու օրինակներ, թե ինչպես են Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը միասին գործում՝ Հիսուս Քրիստոսի ուսմունքները պարզաբանելու համար, կարող եք օգտագործել որոշ օրինակներ, որոնք գտնվում են «Մորմոնի Գիրքը՝ վկայություն Աստվածաշնչի հետ մեկտեղ» ելույթում, Ensign կամ Liahona, հոկ. 2011, 24–27:

### Մորմոնի Գրքի դերը Իսրայելի հավաքման գործում

Ապահովելու համար ենթատեքստ, երբ ուսուցանեք հաջորդ սկզբունքը, դուք գուցե հանձանարարեք ուսանողներին վերընթերցել երկրորդ պարբերությունը Մորմոնի Գրքի տիտղոսաթերթում և ընդգծեք կամ նշեք այդ խոստումը, որ ընթերցողները կարող են «իմանալ Տիրոջ ուխտերը, որ նրանք վտարված չեն հավիտյան»: Բացատրեք, որ այս պարբերությունն ակնարկում է այն փաստը, որ Իսրայելի ցրված տան Աստծո զավակները պետք է հավաքվեն: Հիշեցրեք ուսանողներին, որ Աստված հին ժամանակներում ուխտեր է կապել Իր զավակների հետ: Մակայն Տերը ցրեց Իսրայելի տան անդամներին ողջ աշխարհով մեկ, իրենց անարդարության և ապստամբության պատճառով:

Խնդրեք ուսանողներին կարդալ գրատախտակին գրված հատվածներից մեկը և փնտրել, թե ինչպես են հավաքվելու Աստծո զավակները: 1 Նեփի 10.14, 3 Նեփի 16.4-5 կամ 3 Նեփի 20.13: Ապա ուղղեք հետևյալ տիպի հարցեր, օգնելու նրանց գտնել վարդապետությունը, որն ուսուցանվում է սուրբ գրության այս հատվածներում.

- Ըստ այս հատվածների՝ ի՞նչ պետք է պատահի, որպեսզի մարդիկ հավաքվեն որպես Իսրայելի տան մի մաս: (Նրանք պիտի բերվեն Հիսուս Քրիստոսի մասին գիտելիքին:)
- Ո՞րն է Մորմոնի Գրքի դերն այս գործընթացում: (Չնայած ուսանողները կարող են տարբեր բառերով պատասխանել, նրանք պետք է արտահայտեն հետևյալ ճշմարտությունը. **Մորմոնի Գիրքը ծառայում է որպես գործիք՝ օգնելու հավաքել Աստծո զավակներին՝ օգնելով նրանց գալ դեպի Հիսուս Քրիստոսի մասին գիտելիքին:**)

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. ՄակՔոնկլիի (1915–1985) հետևյալ ելույթը, որտեղ նա խոսում է Իսրայելի հավաքման գործում Մորմոնի Գրքի դերի մասին.



«Ինչ վերաբերվում է Իսրայելի հավաքմանը, Մորմոնի Գիրքը ամենակարևոր գիրքն է, որ երբևէ գրվել է կամ կգրվի: Դա այն գիրքն է, որը հավաքում է Իսրայելը և որը հստակությամբ և կատարելությամբ բացահայտում է հավաքման վարդապետությունը: ... Դա Մորմոնի Գիրքն է, որ պատճառ է դառնում մարդկանց համար, որ հավատան ավետարանին և միանան Եկեղեցուն, և ինչպես մենք մինչև այժմ ենք տեսել, դա զորությունն է, որ իրականացնում է Իսրայելի հավաքումը» (A New Witness for the Articles of Faith [1985], 554):

**Բացահայտել վարդապետությունները** Երբ ուսանողները սովորում են բացահայտել և հասկանալ վարդապետություններն ու սկզբունքները, դա օգնում է նրանց նմանեցնել սուրբ գրություններն իրենց իսկ կյանքին և կարող է առաջնորդել նրանց որոշումներ ընդունելիս: Երբեմն դուք կմատնանշեք վարդապետություններն ու սկզբունքները: Սակայն, դուք պետք է ձգտեք օգնել ուսանողներին սովորել ինքնուրույն բացահայտել վարդապետություններն ու սկզբունքները:

Հետո ուղղեք հետևյալ տիպի հարցեր.

- Ինչպե՞ս են միսիոներները մասնակցում Իսրայելի տան հավաքմանը: (Օգնելով ուրիշներին ուսումնասիրել և հասկանալ Մորմոնի Գիրքը, որպեսզի նրանք գան դեպի Քրիստոս՝ հավատքի, ապաշխարության, մկրտության, հաստատման և մինչև վերջ համբերելու միջոցով:)
- Ինչո՞ւ է կարևոր, որ միսիոներներն օգտագործեն Մորմոնի Գիրքը, երբ նրանք օգնում են ուրիշներին գալ դեպի Քրիստոս:

**Մորմոնի Գրքի վերաբերյալ վկայություն ստանալը դարձի գալու էական մասն է հանդիսանում**

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Փարլի Պ. Պրատի (1807–1857) ինքնակենսագրականից հետևյալ պատմությունը, որում նա նկարագրում է առաջին անգամ Մորմոնի Գիրքը կարդալու իր փորձառության մասին.



«Ես անհամբերությամբ բացեցի այն և կարդացի տիտղոսաթերթը: Ապա կարդացի մի քանի վկաների վկայությունն այն մասին, թե ինչպես էր այն գտնվել և թարգմանվել: Դրանից հետո ես սկսեցի կարդալ բովանդակությունը, ըստ հաջորդականության: Ես կարդացի ողջ օրը, ուտելը բեռ էր, ես ցանկություն չունեի ուտելու, քնելը բեռ էր, երբ եկավ գիշերը, և քնելու փոխարեն ես նախընտրեցի կարդալը:

Երբ ես կարդում էի, Տիրոջ Հոգին ինձ վրա էր, և ես գիտեի և հասկանում էի, որ գիրքը ճշմարիտ էր, այնպես հստակորեն և այնպես ակնհայտորեն, ինչպես մարդն է հասկանում և գիտի, որ ինքը գոյություն ունի» (Autobiography of Parley Parker Pratt, ed. Parley P. Pratt [1874], 38):

- Ինչպե՞ս Տիրոջ Հոգին ազդեց Փարլի Փ. Պրատի վրա, երբ նա կարդում էր Մորմոնի Գիրքը:
- Կարո՞ղ եք կիսվել մի դեպքով, երբ Հոգին դիպչել է ձեզ, երբ կարդում էիք Մորմոնի Գրքի որոշակի մաս կամ հատված:

Հրավիրեք ուսանողներին ընդգծել կամ նշել հետևյալ նախադասությունը *Քարոզիր Իմ Ավետարանը*, էջ 116: «Մորմոնի Գիրքը, Հոգու հետ միասին, ձեր դարձի գալու ամենագորավոր միջոցն է»: Օգնեք ուսանողներին հասկանալ այս ճշմարտությունը, հանձնարարեք նրանց կարդալ «Մորմոնի Գիրքը մարդկանց մոտեցնում է Աստծուն» բաժինը էջ 120 *Քարոզիր Իմ Ավետարանը*: Այնուհետև հարցրեք.

- Ըստ *Քարոզիր Իմ Ավետարանը* ձեռնարկի այս բաժնի՝ որոնք են այն մի քանի առանձնահատուկ բաները, որոնք կարող են պատահել, երբ մարդը սկսում է ուսումնասիրել Մորմոնի Գիրքը:
- Ինչո՞ւ է ունկնդիրներին օգնելը ուսումնասիրել և վկայություն ձեռք բերել Մորմոնի Գրքի մասին, միսիոներին ամենակարևոր նպատակներից մեկը:

Բացատրեք դասարանին, որ նրանք կարող են օգնել ունկնդիրներին զգալ Մորմոնի Գրքի դարձի բերող գործությունը՝ օգնելով ունկնդիրներին գտնել դրա էջերում պատասխաններ կյանքի ամենակարևոր հարցերին: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ պարբերություններն ու հարցերը, որոնք գտնվում են էջ 119, *Քարոզիր Իմ Ավետարանը* ձեռնարկում: Դասարանին խնդրեք փնտրել «հոգու հարցեր» արտահայտության իմաստը: Այնուհետև քննարկեք հետևյալը.

- Ի՞նչ է նշանակում «հոգու հարցեր» արտահայտությունը ձեզ համար:

Գրատախտակի գրեք հետևյալ ճշմարտությունը.

***Մորմոնի Գրքի ուսումնառնությունը պատասխանում են հոգու հարցերին:***

Քննարկեք հետևյալը ուսանողների հետ.

- Ինչպե՞ս կօգտագործեիք Մորմոնի Գիրքը՝ պատասխաններ գտնելու ձեր հոգու հարցերին:
- Հոգու ի՞նչ հարցերի պատասխաններ եք գտել Մորմոնի Գրքում:

Մտածեք մի կարճ ցուցադրում կատարել դասարանի համար, թե ինչպես օգտագործել Մորմոնի Գիրքը հոգու հարցերին պատասխաններ գտնելու համար: Ընտրեք ցուցակի հարցերից մեկը էջ 119-ում *Քարոզիր Իմ Ավետարանը* ձեռնարկում: Օգտագործելով Մորմոնի Գրքի հատվածները, որոնք գրված են հարցի հետ, ցույց տվեք, թե ինչպես է Մորմոնի Գիրքը պատասխանում ձեր ընտրած հարցին: Մտածեք նաև, թե ինչպես օգտագործել Topical Guide, Bible Dictionary, կամ Մուրբ Գրքերի Ուղեցույցը՝ հարցերին պատասխաններ գտնելու համար: Դասարանի հետ կիսվեք ձեր զգացումներով այն մասին, թե ինչպես Մորմոնի Գիրքը կարող է օգնել նաև նրանց և նրանց ունկնդիրներին՝ գտնել իրենց հարցերի պատասխանները:

Երբ ուսանողները կարդան առաջին օրինակը, հրավիրեք նրանց հետևել նույն գործընթացին: Խնդրեք նրանց ընտրել ցուցակի հարցրից մեկը, իսկ հետո վերանայեք համապատասխան հատվածը Մորմոնի Գրքում՝ գտնելու վարդապետություններ և սկզբունքներ, որոնք պատասխանում են այդ հարցին: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, հրավիրեք ուսանողներին համառոտակի կիսվել իրենց գտածով մեկ ուրիշ ուսանողի հետ: Երբ նրանք վերջացնեն, քննարկեք հետևյալը.

- Ինչպե՞ս միսիոներները կարող են օգտագործել Մորմոնի Գիրքը օգնելու ունկնդիրներին գտնել պատասխաններ հոգու հարցերին:



Շարունակելու համար լուսաբանել, թե ինչպես է Մորմոնի Գիրքը պատասխանում հոգու հարցերին, ցույց տվեք «A Book of Mormon Story» տեսանյութը: Խնդրեք ուսանողներին դիտել, թե ինչպես է Մորմոնի Գիրքը պատասխանում Եղբայր Քուփի որոշ հարցերին, մինչև նրա միանալը Եկեղեցուն:

Տեսանյութի դիտումից հետո, ուղղեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ կարևոր հարցերի պատասխաններ տրվեցին Եղբայր Քուփին, երբ նա կարդաց Մորմոնի Գիրքը:
- Ինչպե՞ս այս պատասխաններն ազդեցին նրա վրա:

Հրավիրեք ուսանողներին մտածել ավետարանի հետ կապված մի կարևոր հարց, որի պատասխանը նրանք կամ նրանց ընկերներից մեկը կամենում են ստանալ: Վկայեք, որ Տերը կօգնի պատասխանել նրանց հարցերին, Մորմոնի Գրքի իրենց ուսումնասիրության միջոցով:

**Մորմոնի Գիրքը հաստատում է Վերականգման ճշմարտությունը:**

Հրավիրեք ուսանողներին հերթով բարձրաձայն կարդալ *Քարոզիչ Իսմայիլի Բուստարանը*, ձեռնարկի բաժինը, որը կոչվում է «Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է», որը սկսվում է 115 էջում և շարունակվում մինչև 116 էջի աղյուսակը: Երբ կարդան, խնդրեք նրանց մտածել Մորմոնի Գրքի կարևորության վերաբերյալ Ջոզեֆ Սմիթի հայտարարության մասին: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ առումով է Մորմոնի Գիրքը «վկայության հիմքը» հանդիսանում:
- Ինչո՞ւ է եք կարծում, որ հակառակորդը ընդդիմանում է Մորմոնի Գրքին և ձգտում էտ պահել ժողովրդին այն կարդալուց: (Որովհետև այն մեր կրոնի պորտաքարն է:)

Բացատրեք, որ կան շատ մարդիկ աշխարհում, ովքեր թերահավատորեն են մոտենում Ջոզեֆ Սմիթի պատմությանը և Մորմոնի Գրքի սկզբնաղբյուրին: Միսիոներները պետք է պատրաստ լինեն պատասխանել Մորմոնի Գրքի աստվածային ծագման վերաբերյալ ունկնդիրների կասկածներին:



*Ուշադրություն. Չնայած կարևոր է զգուշացնել ուսանողներին, որ նրանք կարող են հանդիպել առարկությունների ոմանց կողմից, ովքեր քննադատաբար են մոտենում Մորմոնի Գրքին, օգտակար չի լինի դասարանում մանրամասնորեն քննարկել փաստարկները, որոնք օգտագործում են քննադատները՝ փորձելով հերքել Ջոզեֆ Սմիթին և Մորմոնի Գիրքը: Հստակեցրեք ուսանողների համար, որ միսիոներին հանձնարարությունը չէ ապացուցել Ջոզեֆ Սմիթի պատմության կամ Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին: Ավելի շուտ, միսիոներները պետք է ուսուցանեն և վկայեն Մորմոնի Գրքի մասին և օգնեն, որ ունկնդիրները կարդան և իրենց համար պարզեն, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է՝ Տիրոջ շնորհ կողմից անձնական հայտնության միջոցով: Մտածեք խորհուրդ տալ*

**Տալ օրինակ:** Երբ օգնեք ուսանողներին սովորել հմտություններ, օգտակար է օրինակ բերել ուսանողների համար, տրամադրեք ժամանակ պրակտիկայի համար, իսկ հետո սովեք քաջալերող արձագանք:

ուսանողներին կարդալ տանը երեց Ջեֆրի Ռ. Շոլլանդի «Ապահովություն հոգու համար» ելույթը (Ensign կամ Լիառնա, նոյ. 2009, 88-90):


Երբ դուք մտածեք ձեր ուսանողների կարիքների և շոգու տպավորությունների մասին, դուք կարող եք ուղղակի մի քանի բույս հատկացնել և ցույց տալ դասարանին, թե ինչպես գտնել վարդապետորեն ճշգրիտ տեղեկություն՝ օգտագործելով սկզբնաղբյուրներ, ինչպիսիք են Gospel Topics բաժինը LDS.org-ում կամ Եկեղեցու ամսագրերի հոդվածները:

Որպես դասարան միասին կարդացեք բաժինը, որը կոչվում է «Օգտագործեք Մորմոնի Գիրքը հակաճառություններին պատասխանելու համար», որը գտնվում է *Քարոզիչ Իմ Ավետարանը*, էջեր 121–122: Խնդրեք ուսանողներին փնտրել խորհուրդը, որը կօգնի նրանց գորացնել ունկնդիրների հավատքը, ովքեր մտահոգություններ կամ կասկածներ ունեն: Ուղղեք հետևյալ տիպի հարցեր՝ օգնելու ուսանողներին գտնել մի սկզբունք, որը գտնվում է իրենց կարդացածում:

- Համաձայն Նախագահ Բենսոնի, ինչո՞ւ է կարևոր մարդու համար, ով մտահոգություններ ունի մեր հավատքի հանդեպ, գիտենալ, թե արդյոք Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:
- Ի՞նչ ուղիներով է օգնում Մորմոնի Գիրքը մարդուն լուծել հոգևոր մտահոգություններ և կասկածներ:

Ուսանողների գտած սկզբունքներն ամփոփելու նպատակով կարող եք գրել այս սկզբունքը գրատախտակին: **Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին վկայություն ստանալը կարող է օգնել ունկնդիրներին հաղթահարել հոգևոր մտահոգություններն ու կասկածները:**

Յուզադրեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) հետևյալ խոսքերը և խնդրեք մի քանի ուսանողների, որ յուրաքանչյուրը կարդա մեկ կամ երկու պարբերություն:



«Յուրաքանչյուր անգամ, երբ մենք քաջալերում ենք ուրիշներին կարդալ Մորմոնի Գիրքը, մենք նրանց օգտի համար ենք դա անում: Եթե նրանք այն կարդան աղոթքով և անկեղծ սրտով իմանալու ճշմարտությունը, նրանք կիմանան Սուրբ Շոգու զորությամբ, որ գիրքը ճշմարիտ է:

«Այդ գիտելիքից կառաջանա համոզմունք շատ բաների ճշմարտության վերաբերյալ: Քանի որ, եթե Մորմոնի Գրքը ճշմարիտ է, ապա Աստված ապրում է: •

Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, ապա Հիսուսն իսկապես մեր Քավիչն է՝ Փրկիչն աշխարհի: Մորմոնի Գրքի հիմնական առաքելությունը, ինչպես գրված է գրքի տիտղոսաթերթում, համոզելն է «հրեային և հեթանոսին, որ Հիսուսը Քրիստոսն է՝ Հավերժական Աստվածը, որն իրեն հայտնում է բոլոր ազգերին»: (Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ:)

Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, Ջոզեֆ Սմիթը Աստծո Մարգարեն էր, քանի որ նա Աստծո ձեռքերում գործիք էր՝ ի լույս բերելով այս վկայությունը մեր Տիրոջ աստվածայնության մասին: •

Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, Եկեղեցին ճշմարիտ է, քանզի նույն իշխանությունը, որի ներքո այս սրբազան հիշատակարանը լույս բերվեց, ներկա է և դրսևորվում է մեր մեջ այսօր: Սա Պաղեստինում Փրկիչի կողմից հաստատված Եկեղեցու վերականգնումն է: Սա մի Եկեղեցու վերականգնումն է, որը հաստատվեց Փրկիչի կողմից, երբ Նա այցելեց այս մայր ցամաք, ինչպես նկարագրվում է այս սրբազան հիշատակարանում» (“The Power of the Book of Mormon,” Ensign, June 1988, 6):

Խորհեք հետևյալ հարցերի առաջադրման շուրջ:

- Ինչո՞ւ է այդքան կարևոր ունկնդիրների, միսիոներների, և անդամների համար ձեռք բերել վկայություն Մորմոնի Գրքի մասին:

- Ինչպե՞ս են Հավատո Հանգանակի վարդապետություններն օգնում առաջնորդել ձեզ և ամրացնել ձեր վկայությունը, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն էր: (Տես Մատթեոս 7.13-15):
- Ինչպե՞ս է Մորմոնի Գրքի մասին ձեր վկայությունը Վերականգման հավերժական կարևորությունը հաստատել ձեր սրտում:

Մտածեք կիսվել ձեր սեփական վկայությամբ, որ Մորմոնի Գիրքը Վերականգման ճշմարտացիության ապացույցն է: Ավարտեք ձեր դասը հրավիրելով մի քանի ուսանողների կիսվել իրենց վկայություններով Մորմոնի Գրքի մասին և բացատրել, թե ինչու են իրենք ուրախությամբ օգնում ուրիշներին կարդալ Մորմոնի Գիրքը և աղոթել դրա մասին:



*Ուշադրություն. Իմացեք, որ դաս 8-ում ուսանողները հնարավորություն կունենան փորձելու հրավիրել ինչ-որ մեկին կարդալ և աղոթել Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին:*

## Գործելու հրավերներ

Հիշեցրեք ապագա միսիոներներին, որ լիաժամկետ միսիայի նախապատրաստվելու լավագույն ուղին՝ այժմ՝ միսիոներական աշխատանք կատարելն է: Հրավիրեք դասարանի անդամներին դնել անձնական նպատակներ՝ անելու հետևյալը.

- Կարդացեք ամբողջ Մորմոնի Գիրքը և աղոթեք՝ իմանալու համար դրա ճշմարտացիության մասին, եթե նույնիսկ նրանք արդեն արել են դա անցյալում:
- Մովորույթ դարձրեք Մորմոնի Գիրքն ամեն օր կարդալը:
- Ինչ-որ մեկին ներկայացրեք Մորմոնի Գիրքը եկող շաբաթվա ընթացքում (կամ անձնապես կամ սոցիալական կայքերի միջոցով) և նրանց հրավիրեք կարդալ և աղոթել դրա մասին:



# 6

## Պատրաստվել միսիոներական կյանքին

### Նախաբան

Ծառայել լիաժամկետ միսիա նշանակում է ընդունել Տեր Հիսուս Քրիստոսի ներկայացուցիչը լինելու կանչը: Միսիան ուրախալի փորձառություն է, բայց նաև ընդգրկում է քրտնաջան աշխատանք: Արդյունավետ միսիոներներ լինելու համար երիտասարդ տղաներն ու աղջիկները պետք է

պատրաստ լինեն վստահել Տիրոջը, երբ դժվարություններ ունենան: Երբ ապագա միսիոներները կառուցում են միսիոներական կյանքի առողջ ակնկալիքներ, նրանք ավելի պատրաստ կլինեն ծառայելու իրենց ողջ «սրտով, զորությամբ, մտքով և ուժով» (Վևու 4.2):

### Նախապատրաստություն


- Ուսումնասիրեք 2 Նեփի 4.19–26 և Ալմա 17.2–3, 9, 26.11–13, 29.10:
- Ուսումնասիրեք Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի «Becoming a Missionary», Ensign կամ *Liahon*, նոյ. 2005, 44–47:
- Պատրաստվեք ցուցադրել տեսաֆիլմերը. «Becoming a Missionary, Part 1» (2:26) and «Becoming a Missionary, Part 2» (1:01; clips from Elder David A. Bednar’s talk, Ensign կամ *Liahon*, նոյ. 2005, 44–47), որոնք առկա են [lds.org/media-library](https://www.lds.org/media-library) կայքում:
- Պատրաստվեք ցուցադրելու «Stay within the Lines» տեսանյութը (5:10), որն առկա է [youth.lds.org](https://www.youth.lds.org) կայքում:
- Պատրաստվեք ցուցադրելու «Preparation of Gordon B. Hinckley: Forget Yourself and Go to Work» տեսանյութը (2:04), որն առկա է [LDS.org](https://www.LDS.org) կայքում:
- Պատրաստեք «Միսիոներական կյանքի պահանջները» անվանումով օժանդակ նյութը, որը գտնվում է այս դասի վերջում:

### Ուսուցման առաջարկներ

#### Ինչպես դառնալ միսիոներ

Դասը սկսեք դասարանին տալով հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս եք ակնկալում, որ ձեր կենսակերպը փոխվի, երբ դուք սկսեք ձեր ծառայությունը որպես միսիոներ:
- Ի՞նչ դուք կարող եք անել այս պահից սկսած, որպեսզի պատրաստվեք կենսակերպի փոփոխություններին:

 Ցուցադրեք և որևէ ուսանողի հրավիրեք կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքը, կամ ցուցադրեք այդ ելույթի տեսահոլովակը: Բացատրեք, որ թեև Երեց Բեդնարն իր խոսքն ուղղել էր գերագույն համաժողովի քահանայության միստի երիտասարդ տղամարդկանց, սակայն նրա ուսուցանած սկզբունքները վերաբերում են նաև երիտասարդ կանանց:



«Ամբողջ աշխարհի եկեղեցու երիտասարդ անդամների հետ հանդիպումների ժամանակ ես միշտ հրավիրում եմ ներկաներին հարցեր տալ: Հարցերից մեկը, որ շատ հաճախ են ինձ տալիս երիտասարդ տղամարդիկ, հետևյալն է. «Ի՞նչ կարող

եմ անել, որ ամենաարդյունավետ կերպով պատրաստվեմ ծառայելու որպես լիաժամկետ միսիոներ: Այսպիսի անկեղծ հարցը արժանի է լուրջ պատասխանի:

Իմ սիրելի երիտասարդ եղբայրներ, միակ ամենակարևոր բանը, որը դուք կարող եք անել պատրաստվելով ծառայության կանչին՝ միսիոներ դառնալն է շատ ավելի շուտ՝ մինչև ձեր միսիա գնալը: Խնդրում եմ նկատեք, որ իմ պատասխանի մեջ *դառնալը* նա ավելի շեշտեցի, քան *գնալը*: Թույլ տվեք բացատրեմ, թե ինչ է նկատի ունեմ:

Մեր եկեղեցական սովորական բառապաշարն օգտագործելիս մենք սովորաբար խոսում ենք Եկեղեցի *գնալու*, տաճար *գնալու*, կամ միսիա *գնալու* մասին: Թույլ տվեք լինել համարձակ և ասել, որ *գնալու* վրա սովորականի պես շեշտը դնելիս իմաստը կորում է:

Հարցը Եկեղեցի գնալը չէ, այլ հարցը երկրպագելն է և ուխտերը նորացնելը, երբ հաճախում ենք Եկեղեցի: Հարցը տաճար գնալը կամ տաճարով անցնելը չէ, ավելի շուտ՝ մեր սրտերում Հոգին ունենալն է, ուխտերը, և Տիրոջ տան արարողությունները: Հարցը միսիա գնալը չէ, այլ՝ միսիոներ դառնալն է և ծառայելը մեր ողջ կյանքի ընթացքում մեր ամբողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով: Հնարավոր է, որ երիտասարդ տղամարդը *գնա* միսիայի, բայց *չդառնա* միսիոներ, և սա այն չէ, ինչ Տերը պահանջում է կամ այն, ինչ Եկեղեցուն պետք է:

Երիտասարդ տղամարդիկ, իմ անկեղծ ցանկությունն է ձեզանից յուրաքանչյուրի համար, որ դուք ոչ թե պարզապես գնաք միսիա, այլ որ դուք միսիոներ դառնաք մինչև միսիոներական թղթերը ներկայացնելը, մինչև ծառայելու կանչը ստանալը, մինչև ձեր ցգի նախագահի կողմից ձեռնադրվելը և ՄՈՒԿ մուտք գործելը» (“Becoming a Missionary,” Ensign կամ *Liahona*, նոյ. 2005, 45):

- Ի՞նչն է ըստ Երեց Բեդնարի ամենակարևոր բանը, որ դուք կարող եք անել՝ պատրաստվելով միսիայում ծառայելու կանչին: (Միսիոներ դառնալ մինչև միսիա գնալը):



Խնդրեք ուսանողներից մեկին կարդալ Երեց Բեդնարի ելույթի հաջորդ մասը կամ ցուցադրեք այդ ելույթի տեսահոլովակը.



«Ակնհայտ է, որ միսիոներ դառնալու գործընթացը չի պահանջում երիտասարդից հազնել սպիտակ վերնաշապիկ և փողկապ կապել ամեն օր դպրոց գնալիս, կամ քնելու և արթնանալու հարցերում հետևել միսիոներների ուղեցույցին, թեև շատ ծնողներ, իհարկե, կողմ կլինեն այդ գաղափարին: Բայց դուք կարող եք աճել ձեր ցանկությամբ՝ ծառայելու Աստծուն [տես ՎևՈւ 4.3], և կարող եք սկսել մտածել այնպես, ինչպես միսիոներներն են մտածում, կարդալ այն, ինչ միսիոներներն են կարդում, աղոթել այնպես, ինչպես նրանք են աղոթում, և զգալ այն, ինչ նրանք են զգում: Դուք կարող եք խուսափել աշխարհիկ ազդեցություններից, որոնք Սուրբ Հոգուն հեռացնում են, և դուք կարող եք մեծացնել ձեր վստահությունը՝ ճանաչելով և արձագանքելով հոգևոր հուշումներին: Տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղից և մի քիչ այնտեղից, դուք աստիճանաբար կարող եք դառնալ ձեր երագած միսիոները և այն միսիոները, որը Փրկիչն է ակնկալում, որ լինեք» (“Becoming a Missionary,” 45–46):

**Այնուհետև հարցրեք.**

- Համաձայն Երեց Բեդնարի՝ ի՞նչ կերպ դուք կարող եք միսիոներ դառնալ մինչև միսիոներների ուսուցման կենտրոն մտնելը:

Ուսանողների պատասխաններից հետո, գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. **Ես կարող եմ միսիոներ դառնալ այժմ՝ այդ կերպ մտածելով, զգալով և գործելով:** Այս սկզբունքը պատկերավոր դարձնելու համար խնդրեք ուսանողներին բացել Ալմա 17.2–3, 9, 11 հատվածները և բացատրեք, որ այս հատվածները նկարագրում են Մոսիայի որդիներից, ովքեր միսիա էին ծառայում լամանաջիների մոտ: Հրավիրեք որևէ ուսանողի

բարձրաձայն կարդալ այդ հատվածները, մինչ դասարանը կհետևի, տեսնելով, թե ինչ արեցին Մոսիայի որդիները, որպեսզի պատրաստվեն ուսուցանել գործությամբ և իշխանությամբ: Այնուհետև հարցրեք ուսանողներին.

- Ի՞նչ արեցին Մոսիայի որդիները, որպեսզի պատրաստվեն ուսուցանելու գործությամբ և իշխանությամբ:
- Ինչպե՞ս կարող են ապագա միսիոներները հետևել Մոսիայի որդիների օրինակին, պատրաստվելով միսիոներներ դառնալ այժմ:

Թող ուսանողները բացեն 153 էջը *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում և խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ երրորդ պարբերությունը: Այնուհետև հետևյալ բնույթի հարցեր տվեք.

- Միսիոներական կանչի նամակի համաձայն՝ միսիոներներից ի՞նչ է ակնկալվում, որ նվիրեն Տիրոջը, և ինչ է ակնկալվում, որ նրանք թողնեն ետևում:
- Ի՞նչ «անձնական գործերի» օրինակներ կան, որ միսիոներներից պահանջվում է թողնել ետևում, երբ նրանք սկսում են իրենց միսիոներական ծառայությունը:
- Ե՞րբ է եղել, որ օրհնվել էք՝ գոհաբերություններ անելով Աստծուն ծառայելու համար:

Հաջորդը, ուսանողներին մի քանի բույսեր հատկացրեք, որպեսզի խորհեն և գրի առնեն հետևյալ հարցերի պատասխանները իրենց ուսումնասիրության օրագրերում: Քաջալերեք ուսանողներին հատկապես գրել այն, ինչը զգում են, որ Մուրբ Հոգին է հաղորդում իրենց անձնապես: Այնուհետև հարցրեք.

- Որո՞նք են այն բաները, որ դուք կարող եք այժմ անել, որպեսզի սկսեք մտածել, զգալ և գործել ինչպես միսիոներ:
- Ինչպե՞ս դուք կարող եք պատրաստվել՝ ետևում թողնելու անձնական գործերը և նվիրելու ձեր ժամանակն ու ուշադրությունը Տիրոջը ծառայելուն:
- Ինչպե՞ս կարող եք այս բաներն անելով պատրաստվել ուսուցանելու գործությամբ և իշխանությամբ, ինչպես Մոսիայի որդիները:

Քաջալերեք ուսանողներին հատուկ նպատակներ գրել իրենց օրագրերում: Գաղափարները կարող են ընդգրկել՝ Մորմոնի Գրքի ընթերցանությունն ամեն օր, առավոտյան և երեկոյան աղոթելը, Եկեղեցու բոլոր ժողովներից հաճախելը, մինչև 10:30 անկողին մտնելը և 6:30-ին արթնանալը, էլեկտրոնային տեխնիկայի օգտագործելուց զերծ մնալը, կամ պատվիրաններին ավելի հնազանդ լինելու ձգտումը:

### Արժանավորության չափանիշը


Գրատախտակին գրեք «նախապայման» բառը և խնդրեք ուսանողներին մտածել իրավիճակներ, որտեղ նախապայմաններ են անհրաժեշտ: Ուսանողներին տվեք մի քանի բույսեր, որ Վարդապետություն և Ուխտեր 88.74 հատվածում փնտրեն միսիայում ծառայելու համար անհրաժեշտ որոշ նախապայմանները: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ է խորհուրդ տվել Տերը, որ Իր թագավորության մշակներն անեն, որպեսզի պատրաստվեն ավետարանը քարոզելուն: (Մրբագործեն իրենց, մաքրագործեն իրենց սրտերը, մաքրեն իրենց ձեռքերը:)

**Սովորելի Հոգով:** Երբ Մուրբ Հոգին ներկա է դասի ժամանակ, Մուրբ Հոգին կտասի ձեր ուղերձը դեպի ուսանողների սրտերը և կօգնի նրանց անձամբ կիրառել սկզբունքները՝ ըստ իրենց անհատական կարիքների և հանգամանքների (տես 2 Նեփի 33.1): Դուք կարող եք օգնել ուսանողներին սովորել Հոգով և կիրառել սկզբունքները՝ խրախուսելով նրանց (1) ավելի շատ ուշադրություն դարձնել նրան, ինչ նրանք զգում են դասարանում, քան նրան, ինչ նրանք տեսնում կամ լսում են և (2) գործել համաձայն նրա, ինչ զգում են:

- Ի՞նչ է նշանակում սրբագործված լինել: (Լինել մաքուր, լինել արժանի Սուրբ Հոգուն):
- Միսիոներներին վերաբերող ի՞նչ սկզբունք է ուսուցանվում Վարդապետություն և Ուխտեր 88.74 հատվածում: (Երբ ուսանողները պատասխանեն, գրատախտակին գրեք հետևյալը. **Տերը պատվիրում է Իր ծառաներին մաքուր լինել:**)


Որպեսզի բացատրեք, թե միսիոներների համար ինչ է նշանակում մաքուր և արժանի լինել միսիայի ծառայությանը, ցուցադրեք հետևյալ քաղվածքը Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ս. Ռասսել Բալլարդի խոսքից և հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Որպես Տեր Հիսուս Քրիստոսի Առաքյալ, ես կոչ եմ անում ձեզ սկսել հենց հիմա, այս Երեկոյան, լինել լիարժեք և ամբողջովին արժանի: Վճռեք և պարտավորվեք ինքներդ ձեր և Աստծո առաջ, որ այս պահից սկսած դուք ջանասիրաբար կձգտեք մաքուր պահել ձեր սրտերը, ձեռքերը և մտքերը և անբիծ մնալ ցանկացած տեսակի բարոյական օրինազանցությունից: Վճռեք հեռու մնալ պոռնոգրաֆիայից, ինչպես դուք հեռու կմնայիք ամենանենգ հիվանդությունից, քակի որ դա հենց այդպիսին է: Վճռեք կտրականապես հեռու մնալ ծխախոտից, ալկոհոլից և ապօրինի թմրադեղերից: Վճռեք ազնիվ լինել: Վճռեք լինել լավ քաղաքացիներ և հարգել երկրի օրենքները, որտեղ դուք ապրում եք: Վճռեք, որ այս Երեկոյից սկսած դուք երբեք չեք պղծի ձեր մարմինը և չեք օգտագործի խոսելաճոճ, որը գռեհիկ է ու անհարիր քահանայություն կրողին» (“The Greatest Generation of Missionaries,” Ensign կամ *Liahona*, նոյ. 2002, 47):

Տվեք հետևյալ հարցերը, որպեսզի օգնեք ուսանողներին վերլուծել Երեց Բալլարդի խորհուրդը.

- Ի՞նչ պատվիրաններ է Երեց Բալլարդը հատուկ նշել, որոնց պետք է հնազանդվեն ապագա միսիոներները:
- Ի՞նչ է նշանակում՝ ձեր սրտերը, ձեռքերը և մտքերը «անբիծ պահել ցանկացած տեսակի բարոյական օրինազանցությունից»: (Անհրաժեշտության դեպքում հղում կատարեք «Մեռական անարատություն» բաժնին՝ *Երիտասարդներին գործազանցում համար* [գրքույկ, 2011], 35–37):
- Ինչո՞ւ է խելամիտ խուսափել պոռնոգրաֆիայից, ինչպես մի նենգ հիվանդությունից, և ձեր կարծիքով պոռնոգրաֆիայից խուսափելն ինչպես կօգնի զգալ և գործել ինչպես միսիոներ:

 Ցուցադրեք «Stay within the Lines» տեսանյութը (5:10), որպեսզի օգնեք ուսանողներին զգալ ճշմարտությունը և միսիայի ծառայությանն արժանի լինելու կարևորությունը: Տեսանյութը ցուցադրելուց առաջ քննարկեք, թե որոշ սպորտաձևերում ինչո՞ւ են կարևոր սահմանագծերը: Քննարկեք «գծից ներս» և «գծից դուրս» իրավիճակների տարբերությունը և թե խաղի ժամանակ ինչպես են սահմանագծերն ազդում սպորտսմենների գործելակերպի վրա: Ուսանողներին ասացեք, որ Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը Տասներկու Առաքյալների Քվորումից խոսել է նրա մասին, թե ինչ է նշանակում մնալ հոգևոր գծերից ներս մինչև միսիա զնալը:

Տեսանյութը դիտելուց հետո, կարող եք ուսանողներին տալ հետևյալ հարցերը.

- Ո՞րն է կապը՝ «գծերից ներս մնալու» և միսիայի ծառայությանը պատրաստվելու միջև:

- Երեց Հովանդը խնդրել է նրանց համար, ովքեր Տիրոջ թիմից են, որ մնան թիմում և դուրս չգան «սահմաններից»: Ի՞նչ է սա նշանակում ձեզ համար:
- Նախկին մեդքերն ապաշխարելու հարցում թերանալն ինչո՞ւ կլիանգարի, որ միսիոներն արդյունավետորեն օգնի մարդկանց գալ դեպի Քրիստոսը:

Ուսանողներին մի պահ ժամանակ տվեք, որպեսզի խորհեն միսիայում ծառայելու հարցում իրենց արժանավորության մասին: Բացատրեք ուսանողներին, որ եթե նրանք որևէ մտահոգություն ունեն իրենց արժանավորության առումով, նրանք պետք է առաջնորդություն փնտրեն անկեղծ աղոթքի միջոցով և քննարկեն այդ մտահոգություններն իրենց եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ:

### Ֆիզիկական և էմոցիոնալ պատրաստվածություն

Ցուցադրեք Առաջին Նախագահության 2002 թվականի հետևյալ հայտարարությունը և հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ այն: Կամ ուսանողներից մեկը թող բարձրաձայն կարդա հայտարարությունը:

«Լիաժամկետ միսիոներական ծառայությունը արտոնություն է նրանց համար, ովքեր կանչված են ոգեշնչմամբ Եկեղեցու Նախագահի կողմից: Եպիսկոպոսները և ցցերի նախագահները լուրջ պատասխանատվություն ունեն՝ հայտնաբերելու արժանի անդամներին, ովքեր հոգեպես, ֆիզիկապես և էմոցիոնալ առումով պատրաստ են այս սուրբ ծառայությանը և ովքեր կարող են անվերապահորեն երաշխավորվել» (First Presidency letter, Dec. 11, 2002).

Այնուհետև հարցրեք.

- Միսիայում ծառայելու համար հոգեպես պատրաստ լինելուց բացի, ինչո՞ւ է անհրաժեշտ, որ անձը պատրաստվի ֆիզիկապես և հույզերով:

Ցուցադրեք հետևյալ ելույթը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

**«Կանոնավոր (ամենօրյա) մարզանք:** Միսիոները պետք է կարողանա քայլել օրական միջինը վեց մղոն (10 կմ) տարածություն և հեծանիվ վարել օրական` 12 մղոն (19 կմ): Ապագա միսիոներները, ովքեր չեն քայլում ավելի երկար տարածություն, քան մեքենայից միևնույն դասարան կամ աշխատանքի վայր, ամենայն հավանականությամբ, միսիայի դաշտ հասնելուն պես կունենան ոտքերի ցավ և բշտիկներ: ... Միսիոները, ով հեռու է ամուր կազմվածք ունենալուց, ուժասպառ կլինի միսիոներական աշխատանքից, իսկ հոգևած միսիոները ավելի խոցելի է հուսահատության և առողջական խնդիրների դեպքում, քան այն միսիոները, ով ֆիզիկապես պատրաստ է:


Ապագա միսիոներները կարող են պատրաստվել միսիոներական կյանքի խստապահանջությանը` ամեն օր կանոնավոր կերպով կատարելով մեկ ժամ տևողությամբ մարմնամարզություն. քայլք, վազք կամ հեծանվավազք: •

**Համապատասխան քուն:** Չնայած նրան, որ քնելու կարիքները տարբեր են լինում, չափահաս երիտասարդները հիմնականում պետք է քնեն օրական յոթից ութ ժամ: Իդեալականորեն, նրանք պետք է անկողնում լինեն երեկոյան ժամը 10:30-ին և վեր կենան առավոտյան 6:30-ից մինչև 8:00-ն: Մինչև գիշերվա ժամը 2:00-ը կամ 3:00-ը արթուն մնալը և մինչև առավորտվա 10:00 քնելը մարդուն հոգևած է դարձնում և ստիպում, որ նա ցանկանա քնել մինչև կեսօր: ... Միսիոներները պլանավորված օրակարգով են ապրում: Ամեն օր նրանք քնում են ժ.10:30-ին և արթնանում` ժ. 6:30: Այս օրակարգը դժվար կլինի, եթե ապագա միսիոներները նույնատիպ ընթացքով չչարժվեն նախքան ծառայության կանչը:

**Առողջ սնվելու սովորույթներ:** Շաքարով ու ճարպերով սնվելու փոխարեն երիտասարդները պետք է սովորեն վայելել այն կերակուրը, որը հարուստ է սպիտակուցներով և բջջանյութով,

ինչպիսիք են ոչ յուրալի միսը, մածուկը, բանջարեղենն ու մրգերը: Բացի այդ, օրական ավելի քան 12 ունցիա (350 մլ) գազավորված ըմպելիքներ խմելը չափից շատ է» (Donald B. Doty, "Missionary Health Preparation," Ensign, Mar. 2007, 64):

- Եթե միսիոները ֆիզիկապես առողջ չէ, ի՞նչ ազդեցություն դա կարող է ունենալ աշխատանքի առաջընթացի, միսիոների գույրնկերոջ, և միսիոների սեփական բարեկեցության վրա:

 *Ուշադրություն. Որոշ երիտասարդներ չեն կարողանում ծառայել քարոզչական միսիաներում ֆիզիկական, մտավոր կամ էմոցիոնալ խնդիրների պատճառով: Այս երիտասարդ տղամարդիկ և կանայք կարող են հսկայական գործ անել Եկեղեցում՝ ամբողջ աշխարհում, որպես Եկեղեցու ծառայության մեջ գտնվող միսիոներներ: Դուք կարող եք օգնել ուսանողներին ավելի շատ բան սովորել այս հնարավորությունների մասին ուղղորդելով նրանց Young Church-Service Missionary (YCSM) Program վեբ կայք՝ [lds.org/ydsm](http://lds.org/ydsm):*

Խնդրեք ուսանողներին լուր խորհել հետևյալ հարցերի շուրջ.


- Ինչպե՞ս կնկարագրեիք ձեր ներկայիս ֆիզիկական պատրաստվածությունը միսիայում ծառայելու համար:
- Դուք ի՞նչ կարող եք այժմ անել, որպեսզի պատրաստվեք և համապատասխանեք լիաժամկետ միսիայի ֆիզիկական պատրաստվածության պահանջներին:

Խրախուսեք ուսանողներին ծրագիր կազմել՝ թե ինչպես սկսել բավականաչափ քնել, ուտել առողջարար սնունդ և մարզվել, որպեսզի ունենան ֆիզիկական տոկունություն, որն անհրաժեշտ է որպես միսիոներներ հաջողության հասնելու համար: Եթե ժամանակը թույլ կտա, հրավիրեք ուսանողներին գրել իրենց ծրագրերը իրենց ուսումնասիրության օրագրերում:

Խնդրեք ուսանողներից մեկին բացատրել, թե ինչպես է մարմինն արձագանքում ֆիզիկական ակտիվ վարժություններին, ինչպիսիք են՝ աստիճաններով վեր ու վար անելու մրցումը (սրտի զարկի արագացում, ծանր շնչառություն, քրտնարտադրություն, հոգնած մկաններ, և այլն): Բացատրեք, որ *ֆիզիկական* լարվածությունը դժվարությունների միայն մի տեսակն է, որին հանդիպում են միսիոներները: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս կարձագանքի միսիոներների մարմինն ու միտքը *էմոցիոնալ* կամ *հոգեբանական* լարվածությանը, որը կարող է լինել դժվար իրավիճակների կամ անսպասելի խնդիրների հետևանքով:

Բացատրեք, որ բոլոր միսիոներները որոշ չափով ենթարկվում են էմոցիոնալ լարվածության, ունենում են կարտոի և անհամապատասխանության, տխրության կամ այլ զգացումներ, որոնք կարող են նրանց ներքև տանել, և սրանք միսիոներական կյանքին բնորոշ երևույթներ են:

 Ցուցադրեք «Preparation of Gordon B. Hinckley. Forget Yourself and Go to Work» (2:04) տեսանյութը: Քաջալերեք ուսանողներին փնտրել պատճառները, թե ինչո՞ւ էր Նախագահ Գորդոն Բ. Հինքլին հուսահատված, երբ Անգլիայում երիտասարդ միսիոներ էր:

Հարցրեք դասարանին.

- Ի՞նչ պատճառներով էր Նախագահ Հինքլին հուսահատված զգում իրեն, երբ ժամանեց միսիայի վայր:

- Ի՞նչ արեց Նախագահ Հինքլին, որն օգնեց նրան հաղթահարել հուսահատությունը:

Բացատրեք դասարանին, որ սուրբ գրություններում հիշատակվող ակնառու միսիոներներից շատերն են զգացել հուսահատություն և այլ դժվարություններ ունեցել իրենց միսիոներական աշխատանքի ընթացքում: Գրատախտակին գրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները. Երեմիա 1.4–9, Ալմա 17.5, 26.27, և Մովսես 6.31–32: Խնդրեք դասարանի անդամներին ընտրել և մտքում կարդալ սուրբ գրության հատվածներից որևէ մեկը, փնտրելով, թե ինչ մարտահրավերների էին հանդիպում այն մարդիկ, որոնց մասին նրանք կարդում են: Երբ ուսանողները պատասխանեն ամփոփեք նրանց պատասխանները գրատախտակին, ինչպես ցույց է տրված.

*Երեմիա 1.4-9 Երեմիան վախենում էր, որ մարդիկ չէին լսի իրեն, քանի որ նա շատ երիտասարդ էր:*

*Ալմա 17.5, 26.27: Ամմոնը և նրա ընկերակից միսիոներները տառապել էին և մարմնով, և մտքով: Նրանք ընկճված էին և պատրաստ էին ետ դառնալ:*

*Մովսես 6.31–32: Ենովքը մտահոգված էր, որ ոչ ոք չի լսի իրեն, քանի որ նա ծանրախոս էր և դեռ շատ երիտասարդ էր:*

**Այնուհետև հարցրեք.**

- Ի՞նչ էք սովորում այս երեք պատմություններից՝ ավետարանը քարոզելու հուզական դժվարությունների մասին: (Երբ ուսանողները պատասխանեն գրեք այս ճշմարտությունը գրատախտակին. **Ֆիզիկական և հուզական դժվարությունները միսիոներական կյանքի նորմալ մասն են հանդիսանում:**)
- Ի՞նչ մտքեր էք ունենում, երբ կարդում եք, որ Ֆիզիկական և հուզական դժվարությունները միսիոներական կյանքի *նորմալ* մասն են հանդիսանում:
- Իմանալը, որ բոլոր միսիոներներն ունենում են դժվարություններ, ինչպե՞ս է ազդում ձեր վրա, երբ պատրաստվում եք ծառայել:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ գրեթե բոլոր միսիոներներն ունենում են էմոցիոնալ կամ ֆիզիկական դժվարություններ: Հետևաբար, միսիոներները պետք է իմանան, թե ինչպես հաղթահարել սթրեսը խելամիտ և միսիային վայել ձևով: Հաճախ, լարվածությունը հաղթահարելու խելամիտ եղանակները արդյունավետ են լինում միսիայից դուրս, ինչպես օրինակ մենակ մնալը, երաժշտություն լսելը կամ սպորտով զբաղվելը. հիմնականում դրանք հնարավոր չեն միսիոներների դեպքում: Միսիոներները պետք է սովորեն հաղթահարել սթրեսը միսիայի կանոններին համապատասխան ձևով:

Դասարանը բաժանեք փոքր խմբերի և ուսանողներին բաժանեք «Միսիոներական կյանքի պահանջները» օժանդակ նյութը: Թող յուրաքանչյուր խումբը (1) բարձրաձայն կարդա առաջին բաժինը՝ «Միսիոներական կյանքի պահանջները» անվանումով, և (2) քննարկի, թե միսիոներական կյանքի պահանջներին ծանոթ լինելը ինչպես կօգնի նրանց ավելի պատրաստ լինել միսիայի կյանքի դժվարություններին:

Երբ խմբերը բավարար ժամանակ կունենան բաժինը կարդալու և քննարկելու համար, խնդրեք մի քանի ուսանողի կիսվել իրենց խմբում քննարկված կարևոր կետերով: Այնուհետև մի քանի լուսնի տրամադրեք դասարանով կարդալու և քննարկելու օժանդակ նյութի հաջորդ բաժինը, որը կոչվում է «Հարմարվել նոր փորձառություններին», և խոսեք նրա մասին, թե ինչպես կօգնի ուսանողներին հարմարվելուն բնորոշ փոփոխությունները նրանք մտնում են ՄՈՒԿ:

**Դժվարությունների ժամանակ դիմեք Տիրոջն օգնության համար**

Որպեսզի խրախուսեք ուսանողներին մտածել նրա մասին, թե նրանք ինչպես կհաղթահարեն դժվարությունները, երբ այդպիսիք ունենան միսիայի ժամանակ, բացատրեք, որ Նեփին անհամապատասխանության և հուսահատության ուժեղ զգացումներ ունենալը և գրել է այն մասին, թե ինչ է նա արել այդ զգացումները հաղթահարելու համար: Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 4.17–19 հատվածները: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ բառեր և արտահայտություններ է օգտագործել Նեփին նկարագրելու համար իր թուլությունների արդյունքը:

Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել 2 Նեփի 4.19–26 հատվածները, փնտրելով բաներ, որոնք օգնեցին Նեփին հաղթահարել հուսահատության զգացումները: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ արտահայտություններ է օգտագործել Նեփին նկարագրելու համար, թե ինչպես է ինքը հաղթահարել իր խիստ բացասական զգացումները: (Ուսանողները պետք է նշեն, որ Նեփին ապավինել էր Տիրոջը [տես հատված 19], նա հիշել էր, թե ինչ է Տերն արել իր համար անցյալում [տես հատվածներ 20-23], նա հզոր աղոթքներ էր ասել [տես հատված 24], և նա հիշել էր Տիրոջ ողորմածությունը [հատված 26]):
- Տիրոջը և Նրա բարությունը հիշելը ինչպե՞ս է օգնել ձեզ հուսահատության կամ լարվածության պահերին:
- Դասի սկզբում մենք իմացանք, որ նորմալ է, որ միսիոներներն ունենում են հուզական լարվածություն, կարոտի և անհամապատասխանության զգացումներ, տխրություն կամ այլ զգացումներ, որոնք կարող են նրանց տրտմեցնել: Հաշվի առնելով, թե ինչ է Նեփին գրել 2 Նեփի 4.19–26 հատվածներում, ի՞նչ խորհուրդ դուք կտաք այն միսիոներին, ով նման զգացումներ ունի: (Օգնեք ուսանողներին նշել հետևյալ սկզբունքը և գրեք այն գրատախտակին. **Երբ միսիոներներն ապավինեն Տիրոջը, Տերը կօգնի նրանց տիրապետել միսիոներական կյանքին բնորոշ ֆիզիկական և էմոցիոնալ պահանջներին:**)

Կիսվեք ուսանողների հետ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքով.

**Փոքրիկ խմբեր:**  
Խմբային աշխատանքն ավելի արդյունավետ է, երբ յուրաքանչյուր խմբում կա չորս հոգուց ոչ ավել մարդ: Սա հնարավորություն է տալիս, որ խմբի յուրաքանչյուր անդամը մասնակցություն ցուցաբերի: Աշխատանքն ավելի հաջող է լինում, երբ յուրաքանչյուր խմբում որևէ մեկին հանձնարարվում է լինել խմբի ղեկավարը: Ղեկավարը կարող է քաջալերել խմբի անդամներին, որ մասնակցեն և ապահովում է, որ խումբն աշխատի հանձնարարությունն ավարտելու ուղղությամբ:







«Ես չեմ կարծում, որ միսիոներական աշխատանքը երբևէ հեշտ է եղել, ոչ էլ դարձի գալն է հեշտ, դա պահպանելը, կամ հավատարմությունը շարունակելը: Ես կարծում եմ, որ դա պահանջում է մեր հոգու խորքից եկող որոշակի ջանքեր:

Եթե նա կարող էր առաջ գալ գիշերը, ծնկի իջնել, ընկնել երեսն ի վայր, արյունահոսել ամեն մի ծակոտից, և աղաղակել. «Աբբա, Հայր (Papa), այս բաժակն ինձակից անցրու» [տես Մարկոս 14.36], ապա քիչ զարմանալի է, որ փրկությունը արտառոց կամ հեշտ բան չէ մեզ համար: Եթե ձեր մոտ հարց ծագի, թե չկա՞ արդյոք ավելի հեշտ ճանապարհ, դուք պետք է հիշեք, որ առաջինը չեք, որ այդ հարցը տալիս եք: Ավելի մեծ ու ավելի վեհ մեկը երկար տարիներ առաջ հարցրել էր, թե արդյոք չկա՞ր ավելի հեշտ ճանապարհ:

«Քավությունն առաջ կտանի միսիոներներին՝ հավանաբար նույնիսկ ավելի նշանակալիորեն, քան ունկնդիրներին կտանի: Երբ դժվարությունների մեջ եք, երբ դուք մերժված եք, երբ ձեր վրա թքում են և դուրս վտարում, փափսում են և ասեկոսում, դուք կանգնած եք այս աշխարհում երբևէ հայտնի լավագույն կյանքի հետ, երբևէ ապրած միակ անբիծ ու կատարյալ կյանքի: Դուք առիթ ունեք հասակով մեկ կանգնելու և երախտապարտ լինելու, որ Ապրող Աստծու Ապրող Որդին ամեն ինչ գիտի ձեր վշտերի և չարչարանքների մասին: Փրկության միակ ճանապարհը՝ Գեթսեմանիի միջով է, որը գնում է դեպի Գողգոթա: Դեպի հավերժություն տանող միակ ճանապարհը Նրա միջոցով է՝ ով ճանապարհն է, ճշմարտությունը և Կյանքը» (“Missionary Work and the Atonement,” *Ensign*, Mar. 2001, 15):

Այնուհետև հարցրեք.

- Համաձայն Երեց Հովանդի՝ ի՞նչ պատճառ ունեն միսիոներները հասակով մեկ կանգնելու դժվարությունների ժամանակ:

Ասեք ուսանողներին, որ երբ միսիայի ժամանակ հանդիպում են փորձություն հանդիսացող հանգամանքների, նրանք պետք է հիշեն, որ նրանց կատարած աշխատանքը բերում է ուրիշներին Հիսուս Քրիստոսի մոտ: Գրատախտակին գրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները. Ավմա 26.11–13, 29.10, և Վարդապետություն և Ովխտեր 18.15–16: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ այս հատվածները, մինչ դասարանը կհետևի, թե ինչ են սովորեցնում այս հատվածները միսիոներական կյանքի մասին: Հրավիրեք ուսանողներին կիսվել մտքերով, ապա հավաստիացրեք նրանց, որ թեև լիաժամկետ միսիոներական ծառայությունը դժվար աշխատանք է և երբեմն կարող է հուսահատեցնող լինել, սակայն **երբ մենք աշխատում ենք մյուսներին Հիսուս Քրիստոսի մոտ բերելու համար Տերն օրհնում է մեզ ուրախությամբ:** Կարող եք խնդրել ուսանողներին, որ կիսվեն իրենց փորձառություններով, թե երբ են նրանք արդեն զգացել այս սկզբունքը:

Նշեք ուսանողներին, որ ժամանակ առ ժամանակ նրանք հոգեկան կամ մտավոր առողջական խնդիրներ ունեցող գուգրնկեր կարող են ունենալ: Այդպիսի դեպքերում նրանք պետք է լսեն և սեր ցուցաբերեն իրենց գուգրնկերոջ հանդեպ, քանի որ գուգրնկերոջ աջակցող տրամադրվածությունը կարող է վճռորոշ լինել խնդիրները հաղթահարելու հարցում: Նրանք երբեք չպետք է ասեն, որ եթե դժվարացող միսիոներն ավելի շատ հավատք ունենա, ապա դժվարությունները կանցնեն:

Բացատրեք նաև, որ որոշ դժվարություններ լրացուցիչ օգնություն են պահանջում քահանայության ղեկավարներից և հոգեբաններից, և որ միսիոներին մեծ մասը ապահովում են միսիոներներին համապատասխան մասնագետներով: Հոգեբանական խնդիրներ ունեցող միսիոներները պետք

Է քննարկեն իրենց իրավիճակը իրենց միսիոների նախագահների հետ՝ որոշելու, թե ինչ կարգի օգնություն է նրանց հարկավոր:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ պատկերացնել, թե ինչպես նրանք կարող են հաղթահարել ֆիզիկական և հոգեբանական խնդիրները, որոնց նրանք կհանդիպեն որպես միսիոներներ, տվեք նրանց մի քանի բույսեր, որպեսզի գրեն այն պահերի մասին, երբ նրանք պետք է հաղթահարեն դժվար իրավիճակներ: Ստուգեք, հարցնելով ուսանողներին, թե ինչ նրանք սովորեցին Տիրոջ և իրենց մասին այդ փորձառության ժամանակ և ինչպես նրանք կարող են օգտագործել այդ փորձառությունը սպազայում իրենց գորացնելու համար:

Եզրափակելով, ձեր վստահությունն արտահայտեք ձեր ուսանողների և նրանց ընդունակության հանդեպ՝ միսիոներական կյանքին ուղեկցող փոփոխությունները հաղթահարելու հարցում: Կիսվեք ձեր վկայությամբ, որ Տերն օգնում է անհատներին, ովքեր դիմում են Նրան՝ իրենց կյանքի ֆիզիկական և հոգեբանական պահանջները կառավարելու համար:

## Գործելու հրավերներ

Հրավիրեք դասարանի անդամներին նախապատրաստվել միսիոներական կյանքին՝ կատարելով հետևյալ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը.

- Մտածեք, թե ինչ պետք է անեք, որպեսզի մաքուր դառնաք և արժանի միսիայում ծառայելուն: Եթե կարիք կա, վերացրեք անհարկի մտքերն ու վարքագծերը, որոնք վիրավորական են Հոգու համար:
- Սահմանեք անձնական նպատակներ՝ հետևելու ամենօրյա մարզական ծրագրի, ավելի առողջ սնվելու, կամ զարգացնելու քնելու սովորույթներ, որոնք համապատասխանում են միսիոներական ամենօրյա ժամանակացույցին:
- Վերանայեք հազնվելու չափանիշները լիաժամկետ միսիոներների համար, որը գտնվում է LDS.org կայքում:
- Քննարկեք վերադարձած որևէ միսիոների հետ, թե ինչ է նա արել հաղթահարելու սթրեսը և միսիոներական կյանքի դժվարությունները:
- Քննարկեք ծնողների կամ քահանայության ղեկավարների հետ, թե ինչպես վերաբերվել միսիոներ գուզրնկերոջ հետ, ում հետ դուք կարող եք ունենալ շատ ընդհանրություններ, կամ, ում հետ դուք կդժվարանաք հաղորդակցվել:

# Միսիոներական կյանքի պահանջները

Վերցված է Միսիոներական կյանքին հարմարվելը գրքույկից (ռեսուրս-գրքույկ, 2013)

Երբ որևէ նոր փորձառություն եք սկսում (ինչպես օրինակ՝ Եկեղեցուն միանալը կամ նոր դպրոց հաճախելը), ոգևորված եք ձեզ զգում հնարավորության համար և հուզված՝ քանի որ չգիտեք, թե ինչ սպասել: Ժամանակի ընթացքում դուք սովորում եք դիմակայել այդ մարտահրավերներին և այդ ընթացքում դուք աճում եք:

Միսիաները ոչնչով չեն տարբերվում: Երբեմն միսիան թվում է սքանչելի հոգևոր մի արկած, կամ առնվազն մարտահրավեր, որը դուք կարող եք հաղթահարել: Մյուս դեպքերում, այնուամենայնիվ, դուք կարող եք հանդիպել անսպասելի խնդիրների կամ փորձառությունների, որոնք ավելի դժվար են կամ տհաճ, քան դուք ակնկալում էիք: Դուք, հավանական է, զարմանաք, թե ինչպես կարող եք հաջողության հասնել: Ռեսուրսները որոնց դուք մի ժամանակ ապավինում էիք, կարող է հասանելի չլինեն: Փոխարենը դրդված զգալու փորձել, դուք կարող եք դառնալ նեղսրտված, դյուրագրգիռ, հոգնած կամ հիասթափված: Դուք կարող է ունենաք ֆիզիկական ախտանիշներ՝ ինչպես օրինակ՝ ցավ, ստամոքսի խանգարում, անքնություն կամ այլ հիվանդություն: Դուք կարող է դժվարություն ունենաք սովորելիս կամ մարդկանց հետ կապեր հաստատելիս: Դուք կարող է հուսահատված զգաք կամ ցանկացաք ընդհատել աշխատանքը:

Միսիոներական աշխատանքի պահանջները ընկնում են մի քանի կատեգորիաների մեջ.

## Ընդհանուր

Ձեր միսիայի ընթացքում դուք շատ փոփոխություններ և տեղափոխություններ կունենաք: Հաղթահարելու ծանոթ ուղիները միշտ չէ, որ հասանելի են և դուք պետք է սովորեք նորերը: Երեկոները և շաբաթավերջը, որն օգտագործվում էր հանգստանալու համար, այժմ ձեր ամենազբաղված ժամանակն է: Դուք գուցե անհարմար զգաք: Երբեմն դուք գուցե մաքառեք: Հնարավոր է անհանգստանաք, թե ինչպես օգնեք մյուս միսիոներներին, ովքեր մաքառում են:

## Ֆիզիկական

Դուք, հնարավոր է, ոտքի վրա լինեք օրեկան 11-12 ժամ՝ քայլելով, հեծանիվ վարելով, աստիճաններ մագլցելով: Դուք

գուցե այնքան շատ չքնեք, որքան սովոր եք քնել: Ուտելիքը կարող է անծանոթ լինել: Դուք կարող է դրսում լինեք վատ եղանակին և ենթարկվեք նոր մանրէների ազդեցությանը: Ուղղակի իրավիճակի նոր լինելը կարող է հոգեցուցիչ լինել:

## Հուզական

Դուք կարող է նեղսրտված զգաք այն ամենի հետ կապված, ինչ դուք պետք է անեք և դուք գուցե դժվարություն ունենաք ետ գալու: Դուք կարող է կարոտեք, հուսալքվեք, ձանձրանաք, կամ միայնակ զգաք: Դուք կարող եք հանդիպել մերժման, հուսահատության կամ նույնիսկ վտանգի: Դուք կարող է անհանգստանաք ընտանիքի և ընկերների մասին, երբ դուք այնտեղ չեք օգնելու նրանց:

## Սոցիալական

Դուք ապրելու եք նեղվածքի մեջ ձեր ընկերակցի հետ, ում հետ դուք գուցե շատ բան չունեք ընդհանուր: Ձեզանից ակնկալվում է խոսել անծանոթների հետ, շփվել Եկեղեցու ղեկավարների հետ, արագ ճանաչել Եկեղեցու անդամներին և սովորել սիրել ունկնդիրներին:

## Մտավոր

Դուք երևի սովորեք նոր լեզու: Դուք պետք է տիրապետեք սուրբ գրությունների և դասերի, ձեռք բերեք ուսուցողական հմտություններ և լուծեք մտահոգությունները, որոնք կառաջանան: Դուք պետք է ծրագրեք, հասնեք նպատակների, հարմարվեք փոփոխությունների և լուծեք ամեն տեսակի պրակտիկ խնդիրներ:

## Հոգևոր

Դուք կզգվեք՝ ամրացնելու ձեր վկայությունը, դիմադրելու գայթակղության և սովորելու՝ զգալ և ճանաչել Հոգին: Դուք կարիք կունենաք ընդունել ուղղումը, ապաշխարել, խոնարհությամբ դիմակայել ձեր թուլություններին ու զղջումներին, և ապավինել Տիրոջը ավելի քան երբևէ նախկինում:

# Հարմարվել նոր փորձառություններին

Շատերի նման, ովքեր նոր իրավիճակում են հայտնվում, միսիոներները հաճախ անցնում են Էմոցիոնալ հարմարվողականության չորս փուլերով կամ աստիճաններով, երբ նրանք մտնում են ՄՈՒԿ և կրկին՝ երբ մտնում են միսիոներական դաշտ.

## 1. Ակնկալիք

Դուք կարող է պատրաստ զգաք ընդունելու մարտահրավեր (տես 1 Նեփի 3.7):

Դուք կարող է զգաք նպատակի և հավատարմության աճող զգացում Երկնային Հոր հանդեպ (տես 3 Նեփի 5.13):



© 2014 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈՒՆՈՒ ԿՐԻՍՏՈՍՈՍՆԵՐԸ ՎԵՐՈՒՂԱԿՆԵՐԸ



## 2. Անսպասելի հայտնագործություններ

Դուք կսկսեք կարտեղ տանը, ընտանիքին և ընկերներին և նույնիսկ կասկածել ծառայելու ձեր որոշման առթիվ (տես Ալմա 26.27):

Դուք կարող է սթրեսի ֆիզիկական դրսևորումներ նկատեք, ինչպես օրինակ՝ խանգարված քուն, ախորժակի փոփոխություններ, կամ դյուրագրգռություն:

Դուք կարող է անսպասելիորեն դառնաք քննադատական և անհամբեր՝ կանոնների և ակնակիքների հանդեպ:

Այս զգացումները նորմալ են: Եթե դուք ունեք այս խնդիրներից որևէ մեկը կամ բոլորը, խնդրում ենք իմացեք, որ սա ժամանակավոր իրավիճակ է, որով անցնում են նոր միսիոներներից շատերը: Քաջալերվեք այն գիտելիքով, որ այս զգացումները կանցնեն և դուք կկարողանաք հարմարվել:

## 3. «Ես կարող եմ անել դա»:

Ձեր ուսուցման և լեզվական հմտությունները սկսում են բարելավվել:

Դուք սովորում եք պատրաստակամորեն ենթարկվել միսիոներական կանոններին և ակնակիքներին:

Դուք համբերություն եք դրսևորում ձեր հանդեպ, երբ սովորում եք «ցուցում առ ցուցում» (տես Եսայիա 28.10, Մոսիա 4.27):

Ձեր ֆիզիկական սթրեսի ախտանիշները, եթե առկա են, սկսում են նվազել:

## 4. Էնդոյինալ ինքնավստահություն

Դուք հարմարավետ եք զգում նավարկելով առօրյա կյանքում:

Դուք ճանաչում եք ձեր անձնական ուժերը և առաջընթացը:

Դուք ձեռք եք բերում հասկացողություն, թե ինչ է նշանակում ընդունել կյանքը ամեն անգամ անելով մեկ քայլ (տես Վևու 98.12):

Դուք զարգացնում եք ավելի մեծ ինքնավստահություն և ծառայելու ավելի մեծ ցանկություն:



# 7

## Ուսուցանել Վերականգնման ուղերձը (Մաս 1)

### Նախաբան

Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսուցանվել է մարգարեների կողմից բոլոր տնտեսություններում, թույլ տալով Աստծո գավակներին հասկանալ հավերժական ճշմարտությունները և ձեռք բերել հավերժական կյանք: Հիսուս Քրիստոսի մահից հետո ավետարանի ճշմարտությունն ու քահանայության իշխանությունը կորսվեցին երկրի երեսից, հանգեցնելով Մեծ


Ուրացության: Վերջին օրերի Վերականգնումը հաղթեց Ուրացության հետևանքներին և ևս մեկ անգամ հաստատեց Քրիստոսի Եկեղեցին երկրի վրա: Ապագա միսիոներները պետք է հստակ հասկանան Ուրացության և Վերականգնման գաղափարները և պետք է պատրաստ լինեն բացատրելու նրանց պարզ ձևով և վկայելու նրանց գործությամբ:

### Նախնական պատրաստվածություն

- Ուսումնասիրեք *Քարոզիր Իմ Ավետարանը* ձեռնարկի 31–35 էջերը:
- Պատրաստվեք ցուցադրելու «The Great Apostasy» (16:33) տեսանյութը, որն առկա է LDS.org կայքում:
- Պատրաստեք մեկական օրինակ «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագրից յուրաքանչյուր ուսանողի համար:

### Ուսուցման առաջարկներ

#### Աստված մեզ սիրող Երկնային Հայրն է

 *Ուշադրություն. Գլուխ 3-ը Քարոզիր Իմ Ավետարանը ձեռնարկի պարունակում է դասեր, որոնք միսիոներներն ուսուցանում են, մարդկանց մկրտությանը նախապատրաստելու համար: Միսիոներները պետք է ուսումնասիրեն այս դասերը և ուսուցանեն դրանք սրտանց, իրենց խոսքերով, ինչպես կհուշի Հոգին (տես "Statement on Missionary Work," First Presidency letter, Dec. 11, 2002, quoted on pages 29–30 of Preach My Gospel): Որպեսզի ուսանողներն ավելի լավ հասկանան առաջին երեք միսիոներական դասերում պարունակվող վարդապետություններն ու սկզբունքները, այս դասընթացը կընդգրկի երկու դաս, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած կլինի 90 րոպեանոց երկու դասաժամից:*

Սկսեք դասը՝ ուսանողներին խնդրելով մտածել հետևյալ իրավիճակների մասին.

Այսօր քնելուց առաջ դուք ստանում եք ձեր ընկերոջ հաղորդագրությունը, ով հուսահատված է և կասկածում է, որ Աստված իրական է և որ Նա հոգ է տանում մեր մասին: Ձեր ընկերը հարցնում է. «Հավատո՞ւմ ես, որ Աստված կա: Քո կարծիքով, ինչպիսի՞ն է Աստված»:

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչպես իրենք կարձագանքեին իրենց ընկերոջը: Այնուհետև ասեք ձեր դասարանին, որ այսօրվա դասը կենտրոնանում է որոշ վարդապետությունների և սկզբունքների վրա, որոնք զետեղված են միսիոներական առաջին գրույցում՝ ներառյալ մեր Երկնային Հոր էություն:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ «Աստված մեզ սիրող Երկնային Հայրն է», որը գտնվում է *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի էջ 33-ում: Հրավիրեք ուսանողներին ընդգծել կամ գունավորել այն արտահայտությունները, որոնք կարող են օգտագործել, որպեսզի օգնեն որևէ մեկին ավելի լավ հասկանալ Աստծո էությունը՝ որպես մեզ սիրող Երկնային Հոր:

Ուսանողներին մի քանի թույլ ժամանակ տվեք, որ ուսումնասիրեն սուրբ գրության հատվածները, որոնք թվարկված են Սուրբ գրքերի ուսումնասիրություն վանդակում՝ *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի էջ 34-ում: Թող նրանք մտածեն, թե այդ հատվածներն ինչպես կօգնեն պատասխանել այն հարցերին, որոնք տալիս է մեկը, ով հարցեր ունի Աստծո մասին, ինչպես դասի սկզբին տեղի ունեցած իրավիճակների ուսումնասիրության ժամանակ: Կարող եք քաջալերել ուսանողներին իրենց սուրբ գրություններում գունավորել հատվածներից մեկը կամ մի քանիսը կամ գրել դրանք *Քարոզիչ Իմ Ավետարանը* իրենց ձեռնարկի լուսանցքում: Այնուհետև հարցրեք.

- Ինչպիսի՞ն կլինի կարճ ամփոփումը առավել կարևոր վարդապետությունների, որոնց մասին դուք կարդում եք *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում և սուրբ գրությունների հատվածներում: (Պատասխանները կարող են ընդգրկել այն վարդապետությունը, որ **Աստված մեզ սիրող Երկնային Հայրն է և Նա ցանկանում է, որ մենք բոլորս վերադառնանք ապրելու Նրա հետ**):
- Ինչո՞ւ է կարևոր, որ մարդիկ նախ հասկանան այս սկզբունքը մյուս վարդապետությունները սովորելուց առաջ:

### Ավետարանն օրհնում է ընտանիքները

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ «Ավետարանն օրհնում է ընտանիքները» բաժինը *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի 34 էջում և ձևակերպել ամփոփ միտք՝ Աստծո երջանկության ծրագրում տան և ընտանիքի դերի մասին: Երբ նրանք բավարար ժամանակ կունենան կարդալու համար, հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց ամփոփումներով: (Ամփոփումները կարող են ներառել այն վարդապետությունը, որ **ընտանիքները կարգված են Աստծուց և Նրա զավակներին երջանկություն պարգևելու Աստծո ծրագրի մասն են հանդիսանում**: Գրեք այս թավատառ սկզբունքը գրատախտակին:)

**Իրավիճակների ուսումնասիրություն**  
 Իրավիճակների ուսումնասիրության ժամանակ դիտարկվում են իրական կամ մտացածին իրավիճակներ, որոնք մոտ են կյանքին: Իրավիճակների ուսումնասիրությունը դրդում է սովորողներին խորհել կամ քննարկել, թե ինչ կրակ կանեն նմանատիպ դեպքերում: Ուշադիր եղեք, որ խոսափեք այնպիսի իրավիճակների ուսումնասիրությունից, որոնք վերցված են կոնկրետ անհատի կամ խմբի կյանքից:

Հաշվի առնելով ձեր ուսանողների կարիքները և ժամանակի առկայությունը, կարող եք ներկայացնել հետևյալ միջոցառումը. Ուսանողների ուշադրությունը հրավիրեք *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում կարդացած վերջին տողի վրա: «Բոլոր դարերում մարգարեների միջոցով՝ ներառյալ մերը, Աստված բացահայտել է անհատների և ընտանիքների համար երջանկության Իր ծրագիրը»:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչու է այս ճշմարտությունն այդքան կարևոր այսօրվա աշխարհում ցուցադրեք «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագիրը կամ բաժանեք դրա օրինակներից դասարանի անդամներին: Այնուհետև հրավիրեք ուսանողներին մի քանի ընտանիքներին կարդալ հայտարարությունը և բացահայտել այն արտահայտությունները կամ սկզբունքները, որոնք օգնում են մեզ ավելի լավ հասկանալ ամուսնության և ընտանիքի դերը Երկնային Հոր ծրագրում: Թող ուսանողներից մեկը գրի այդ բաները գրատախտակին:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ մեջբերումը.



Հակառակորդի մեծագույն նպատակը, ով «մեծ բարկություն ունի, գիտենալով, որ քիչ ժամանակ ունի» (Հայտնություն 12.12), տունը և ընտանիքը քայքայելն է, խանգարելը և ոչնչացնելը» (“The Father and the Family,” Ensign, May 1994, 19):

**Հարցրեք ուսանողներին.**

- Ինչո՞ւ է հակառակորդի «մեծագույն նպատակը» տունը և ընտանիքը քայքայելը: (Այն «ուսուցանելու, սովորելու և Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքները կիրառելու համար լավագույն վայրն է»:)
- Որո՞նք են որոշ աշխարհիկ միտումները, որոնք դեմ են ամուսնության, տան և ընտանիքի վերաբերյալ Երկնային Հոր ծրագրին: (Ուշադրություն. Այս միտումները քննարկելու համար շատ ժամանակ մի տրամադրեք: Բավական է միայն բացահայտել դրանք և ապա օգտագործել հաջորդակից հրահանգը՝ կենտրոնանալու ընտանիքներին նվիրված Երկնային Հոր ծրագրի վրա):

Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչպես նրանք կարող են օգտագործել «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագիրը, երբ ուսուցանում են իրավիճակներ, որոնք օգնում են տարբերել Երկնային Հոր ծրագիրը և աշխարհիկ միտումները, որոնք դեմ են ամուսնությանը, տանը և ընտանիքին նվիրված Նրա ծրագրին:

Բացատրեք ուսանողներին, որ որոշ մարդիկ, ում նրանք կհանդիպեն, կունենան ամուսնության, տան և ընտանիքի վերաբերյալ Եկեղեցու ուսմունքներից տարբերվող կամ նույնիսկ հակառակ տեսակետներ: Բերեք ձեր վկայությունը, որ երբ ուսուցանելու նպատակով միսիոներներն օգտագործում են սուրբ գրությունները և մարգարեների խոսքերը, նրանք կառաջնորդվեն Սուրբ Հոգու կողմից, օգնելու նրանց, ում ուսուցանում են, ավելի լավ հասկանալ ամուսնության, տան և ընտանիքի դերը՝ Իր զավակների համար նախատեսված Երկնային Հոր ծրագրում:



*Ուշադրություն. Եթե ուսանողները հարցեր ունեն համասնռամոլության կամ նույնասեռ ամուսնության վերաբերյալ Եկեղեցու դիրքորոշման հետ կապված, խրախուսեք նրանց*



կարդալ այս հոդվածները «Same-Sex Attraction» և «Same-Sex Marriage» հոդվածները, որոնք գտնվում են «Gospel Topics» էջում, lds.org/topics կայքում: Սևիտաբանության դեպքում դուք ևս կարող եք դասից հետո գրուցել ուսանողների հետ այս նրբանկատ հարցերի շուրջ:

### Մարգարեներ և տևականություններ

Բացատրեք ուսանողներին, որ կարևոր ուղիներից մեկը, որով Աստված ցույց է տալիս Իր սերը մեր նկատմամբ, մարգարեներ կանչելն է: Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ մեջբերումը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն: Խնդրեք ուսանողներին տեսնել, թե ինչպիսի՞ օրհնություններ են ստանում նրանք, ովքեր հետևում են մարգարեին:



«Մենք տեղիս կհարցնենք. մի՞թե կա մի ձայն, որը միշտ կտա մեզ հստակ ուղղություն գտնելու մեր ուղիս այսօրվա անհանգիստ աշխարհում: Պատասխանս է՝ այո: Այդ ձայնը ապրող մարգարեի և առաքյալների ձայնն է: ...»

Դա փոքր բան չէ, եղբայրներ և քույրեր, ունենալ Աստծո մարգարեին մեր մեջ: Մեծ և հրաշալի են այն օրհնությունները, որոնք մեր կյանք են գալիս, երբ մենք լսում ենք նրա միջոցով մեզ տրված Տիրոջ խոսքը: ... Երբ մենք լսում ենք Տիրոջ խորհուրդը՝ արտահայտված Եկեղեցու Նախագահի խոսքերի միջոցով, մեր արձագանքը պետք է լինի դրական և հստակ: Պատմությունը ցույց է տվել, որ առկա է անվտանգություն, խաղաղություն, բարեկեցություն և երջանկություն, եթե մենք արձագանքում ենք մարգարեական խորհրդին, ինչպես հնում Նեփին էր անում. «Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է» (1 Նեփի 3.7): ...»

Այսօր ես ձեզ խոստում եմ տալիս: Դա հասարակ խոստում է, բայց ճշմարիտ: Եթե լսեք ապրող մարգարեին և առաքյալներին ու հետևեք մեր խորհրդին, դուք չեք մոլորվի» (“His Word Ye Shall Receive,” Ensign, May 2001, 65–66):

Մեջբերումը կարդալուց հետո, հարցրեք.

- Ի՞նչ օրհնություններ են ստանում նրանք, ովքեր հետևում են Տիրոջ մարգարեի խորհրդին:

Ուսանողներին ժամանակ տվեք, որ մտքում կարդան Վարդապետություն և Ովստերի 1.37–38 հատվածները: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ են սովորեցնում այս հատվածները մարգարեների և նրանց խորհրդի մասին:
- Կարո՞ղ եք հիշել մի կոնկրետ ժամանակ, երբ Տիրոջ մարգարեի խորհրդին հետևելը օրհնել է ձեր կյանքը:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ առաջին պարբերությունը, որը կոչվում է «Երկնային Հայրն Իր ավետարանը հայտնի է դարձնում յուրաքանչյուր ժամանակաշրջանում» էջ 35, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկից: Օգնեք ուսանողներին բացահայտել այս պարբերությունում ուսուցանվող վարդապետությունները հետևյալ հարցերի միջոցով.

- Մարգարեների մասին ի՞նչ վարդապետություններ մենք կարող ենք սովորել այս պարբերությունից: (Մինչդեռ ուսանողները կարող են կիսվել մի քանի սկզբունքներով, օգնեք նրանց բացահայտել վարդապետությունը, որ մարգարեները սովորում են Հիսուս Քրիստոսի ավետարանը հայտնության միջոցով և պատասխանատվություն ունեն սովորեցնելու այն ուրիշներին և վկայելու Հիսուս Քրիստոսի մասին:)




**ՄՊԿ ուսուցման մոդել**  
Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի արդյունավետ ուսուցանել ավետարանի սկզբունքները, կարող եք կիրառել ուսուցման մոդելը, որն օգտագործվում է միսիոներների պատրաստման կենտրոններում. բացատրել, ցուցադրել, կիրառել, գնահատել և նորից կիրառել: Կան այս օրինակն օգտագործելու մի շարք եղանակներ, որոնք կօգնեն ուսանողներին միսիոներների պես կիրառել ուսուցումը: Լրացուցիչ օգնության համար տես այս ձեռնարկի նախաբանում «Ուսուցման մոդել» ենթաբաժինը:

Կարող եք օգտագործել ՄՊԿ ուսուցման մոդելը, որպեսզի օգնեք ուսանողներին ուսուցանել մարգարեների կարևորության մասին: Բացատրեք ուսանողներին, որ նրանք պետք է կարդան մարգարեի սահմանումը, որը գտնվում է էջ 48 *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկում և, ապա, պատրաստվեն դերերով խաղալու, թե ինչպես են ուսուցանում մի լսողի մարգարեների մասին: Այնուհետև ցուցադրեք դերախաղ՝ դասարանի մի անդամի մարգարեների մասին ուսուցանելով: Հետո խնդրեք ուսանողներին ընտրել մի զուգրակեր և պարապել դերերով խաղը, ներկայացնելով, իբրև ուսուցվող ուսանողը անդամ չէ և լսել է, որ Եկեղեցին ղեկավարվում է մարգարեի կողմից: Ուսուցչի դեր տանող ուսանողները պետք է հակիրճ բացատրեն, թե ով է մարգարեն և վկայություն բերեն ժամանակակից մարգարեների մասին: Այնուհետև այն ուսանողները, որոնց ուսուցանում էին, պետք է գնահատեն իրենց զուգրակերներին, ասելով, թե ներկայացման մեջ ինչն էր հատկապես նշանակալից ու ոգեշնչող իրենց համար: Ապա թող ուսանողները կրկնեն դերախաղը՝ փոխվելով դերերով, մյուս ուսանողներին ևս հնարավորություն տալով ուսուցանելու և կարծիք ստանալու դրա վերաբերյալ:

Մի քանի ուսանողների խնդրեք հերթով բարձրաձայն կարդալ էջ 35-ում *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկի վերջին չորս պարբերությունները: Խնդրեք դասարանի մյուս անդամներին հետևել՝ կապ փնտրելով մարգարեների, ուրացության և ժամանակահատվածների միջև: Անհրաժեշտության դեպքում կարող եք ուղղորդել ուսանողներին Սուրբ Գրքերի Ուղեցույցից ուսումնասիրել նաև «Տնտեսություններ» վերնագիրը: Օգնեք ուսանողներին քննարկել այս պարբերություններում գրված ճշմարտությունները տալով հետևյալ հարցերը.

- Ինչու՞ լսողների համար օգտակար կլինի հասկանալ, որ նախորդ տնտեսություններն ավարտվել են, երբ սկսվել է ուրացությունը:
- Ի՞նչ է արել Աստված ողջ պատմության մեջ՝ վերջ դնելու ուրացության ժամանակաշրջանին: Այս գիտելիքն ինչպե՞ս կնախապատրաստի լսողներին սովորելի մարգարե Ջոզեֆ Մաիթի միջոցով ավետարանի վերականգնման մասին:

 *Ուշադրություն. Եթե դասարանի անդամները դժվարանում են հասկանալ, թե ինչ են ավետարանի տնտեսությունները, կարող եք ուղղորդել նրանց կարդալու տերմինների սահմանումները, ինչպես օրինակ՝ ուրացություն, տնտեսություն և մարգարե, տես էջ 48, Քարոզիչի Իմ Ավետարանը ձեռնարկում:*

Եթե ժամանակը ներում է, կարող եք ուսանողներին մի քանի րոպե տրամադրել, որպեսզի վարժվեն՝ մեկը մյուսին բացատրելով նյութը, որը գտնվում է էջ 35-ում, *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկում: Խրախուսեք նրանց բացատրելու ընթացքում ընդգրկել *ուրացություն, տնտեսություն* և *մարգարե* բառերը:

**Փրկիչի երկրային ծառայությունը և Քավությունը**

Խնդրեք ուսանողներին դիտել էջ 37 *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկում տեղ գտած նկարը, որում պատկերված է Տասներկու Առաքյալների կարգումը Հիսուս Քրիստոսի կողմից: Հարցրեք ուսանողներին.

- Ի՞նչ բաներ է արել Հիսուս Քրիստոսն՝ Իր օրոք հիմնելու համար Իր Եկեղեցին երկրի վրա: (Կարող եք հրավիրել ուսանողներին որպես հղում

մտքում կարդալ «Փրկիչի երկրային ծառայությունը և քավությունը» բաժինը էջ 36-ում *Քարոզիչի ԲՄ Ավետարանը* ձեռնարկում:)

- Ինչպե՞ս է Փրկիչի ծառայությունը և հետագայում մերժված լինելը հաջորդում նախորդ տնտեսություններում ձևավորված իրավիճակին: (Հիսուս Քրիստոսի ծնունդից առաջ մարդիկ ուրացության վիճակում էին: Հիսուս Քրիստոսը վերականգնեց ավետարանը երկրի վրա, ինչպես Նոյը, Աբրահամը և Մովսեսն էին արել վաղ տնտեսություններում: Հիսուս Քրիստոսի և Առաքյալների մահից հետո Աստծո զավակները նորից ընկան ուրացության մեջ մինչև Աստված մեկ անգամ ևս կանչեց մարգարե՝ վերականգնելու Հիսուս Քրիստոսի ավետարանը):

### Մեծ ուրացություն

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման անհրաժեշտությունը, գրեք հետևյալ հարցը գրատախտակին:

*Ո՞ր գործունեները հանգեցրին մեծ ուրացությանը և որո՞նք էին դրա հետևանքները:*

Ուսանողներին խրախուսեք փնտրել այս հարցերի պատասխանները Մեծ ուրացություն բաժնի առաջին երկու պարբերություններում, *Քարոզիչի ԲՄ Ավետարանը* ձեռնարկի էջ 37-ում: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, խնդրեք ուսանողներին գրել հարցերի պատասխանները գրատախտակին: Համոզվեք որ ուսանողները հասկանում են, որ **Հիսուս Քրիստոսի և Նրա Առաքյալների մահից հետո անիրավ փոփոխություններն աղավաղեցին Եկեղեցու վարդապետություններն ու գործունեությունը, ի վերջո, հանգեցնելով քահանայության բանալիների և իշխանության հեռացմանը երկրի վրայից:**

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ սուրբ գրության մի քանի հատվածներ, որոնք թվարկված են Սուրբ գրքերի ուսումնասիրություն վանդակում՝ *Քարոզիչի ԲՄ Ավետարանը* ձեռնարկի էջ 38-ում: Խնդրեք ուսանողներին փնտրել, թե սուրբ գրությունների գրողներն ի՞նչ են մարգարեացել՝ թե ինչ է հետագայում տեղի ունենալու Հիսուս Քրիստոսի Եկեղեցու հետ: Երբ ուսանողները բավարար ժամանակ կունենան ուսումնասիրության համար հրավիրեք նրանց կիսվել իրենց ուսումնասիրած նյութով դասարանի մեկ այլ անդամի հետ: Կարող եք գրել պատասխաններից մի քանիսը գրատախտակին և, ապա, գրել հետևյալ ամփոփումը. **Հնագույն մարգարեությունները կանխագուշակել էին, որ լինելու է համատարած հեռացում ճշմարտությունից:**

Ուսանողներին բաժանեք զույգերի և հանձնարարեք նրանց միասին պատրաստվել ուսուցանելու չորս-հինգ ընդհանուր դաս ուրացության մասին: Բացատրեք, որ նրանց դասը պետք է լինի պարզ, հստակ և կենտրոնացած լինի լսողի վրա: Խնդրեք ուսանողներին օգտագործել էջ 37 *Քարոզիչի ԲՄ Ավետարանը* ձեռնարկում զետեղված նյութը (կամ նրանք կարող են օգտագործել միսիոներական գրքույկը, որը կոչվում է *Հիսուս Քրիստոսի Ավետարանի վերականգնումը*): Քաջալերեք զույգերին կիսվել ուրացության վերաբերյալ սուրբ գրությունների մեկ-երկու հատվածներով և բացատրել դրանց նշանակությունը:

Երբ ուսանողները բավարար ժամանակ ունենան պատրաստվելու, խնդրեք, որ յուրաքանչյուր զույգ ուսուցանի մեկ այլ զույգի: Երբ ուսանողներն ավարտեն իրենց ուսուցանումը հանձնարարեք խմբին քննարկել հետևյալը. Ի՞նչը լավ ընթացավ ձեր դասերում: Ի՞նչը կարող էիք ավելի լավ անել: Ի՞նչն էր ամենաարդյունավետը՝ մյուսներին օգնելու հարցում՝ հասկանալ, թե ինչ էր տեղի ունեցել Առաքյալների մահից հետո:

Այնուհետև ասեք, որ դերերով փոխվեն և այն զույգը, որին ուսուցանում էին, այժմ թող ուսուցանի մյուս զույգին: Հավաստիացեք, որ ժամանակ կա, որպեսզի նրանք կարծիք հայտնեն և ստանան:

Երբ բոլոր ուսանողները հնարավորություն ունենան ուսուցանելու, հրավիրեք դասարանի անդամներին դասարանի հետ կիսվել իրենց փորձով ու մտքերով:



Որպեսզի պատկերավոր դարձնեք ազդեցությունը, որը մեծ ուրացությունն ունեցել է աշխարհի վրա և ուսանողներին նախապատրաստեք հաջորդ դասին՝ Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնումը թեմայով, ցուցադրեք «The Great Apostasy» (16:33) տեսանյութը: Երբ դիտեն, քաջալերեք ուսանողներին մտածել, թե ինչպես է Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը հաղթահարել մեծ ուրացության հետևանքները:

Տեսանյութի դիտումից հետո, ուղղեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնումը հաղթահարել մեծ ուրացության հետևանքները:
- Երբ դիտեցիք Վիլֆորդ Վոլտրուֆի դարձի գալու պատմությունը, ի՞նչ մտքեր դուք ունեցաք՝ մյուսների հետ Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման ուղերձով կիսվելու հնարավորության վերաբերյալ:

Եզրափակեք հարցնելով ուսանողներին, թե արդյոք կա՞ն ցանկացողներ դասարանի հետ կիսվելու իրենց վկայությամբ՝ ավետարանի վերականգնման մասին:

### Գործելու հրավեր

Հրավիրեք ուսանողներին վերանայել այս դասում ընդգրկված վարդապետությունները, կատարելով առաջարկված հետևյալ վարժություններից մեկը կամ մի քանիսը.

- Օգտագործելով Թեմաների Ուղեցույցը «Apostasy of the Early Christian Church» անվանումով, ավելի շատ բան իմանալ մեծ ուրացության մասին: Ուսումնասիրության ձեր օրագրում նշեք սուրբ գրության այն հատվածները, որոնք դուք կօգտագործեք ուրացության մասին ուսուցանելիս:
- Ուսումնասիրեք և խորհեք Ավետարանի թեմաներով «Are Mormons Christian?» հոդվածը, որը գտնվում է [lds.org/topics](https://www.lds.org/topics) կայքէջում:
- Հաջորդ դասին նախապատրաստվելիս սկսեք անգիր սովորել Ջոզեֆ Մսիթի առաջին տեսիլքի նկարագիրը, ինչպես տրված է էջեր 39-40 *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում, (տես նաև Ջոզեֆ Մսիթ - Պատմություն 1.16–19):

# Ընտանիք

## Հայտարարություն աշխարհին

### Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահություն և Տասներկու Առաքյալների Խորհուրդ

**Մենք՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը,** պաշտոնապես հայտարարում ենք, որ տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և, որ ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում՝ Իր զավակների հավերժական ճակատագրի համար:

**Մարդկային էակները՝** տղամարդիկ և կանայք, բոլորն արարվել են Աստծո պատկերով: Յուրաքանչյուր երկնային ծնունդի կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և, որպես այդպիսին, յուրաքանչյուր ոք ունի աստվածային բնույթ և ճակատագիր: Մենք անհատի հիմնական բնույթագիրն է՝ նախատերկրային, երկրային և հավերժական կյանքի և նպատակի:

**Նախաերկրային աշխարհում** հոգևոր որդիներն ու դուստրերը ճանաչում և երկրպագում էին Աստծուն, որպես իրենց Հավերժական Հորը և ընդունում էին Նրա ծրագիրը, ըստ որի պետք է ֆիզիկական մարմիններ ձևավորվեին և աշխարհիկ փորձ կուտակեին դեպի կատարելություն ընթացակարգի և իրենց աստվածային ճակատագիրը որպես հավերժական կյանքի ժառանգներ բացառիկ կերպով գիտակցելու համար: Երջանկության աստվածային ծրագիրը հնարավորություն է տալիս, որ ընտանեկան կապերը շարունակվեն մահից հետո: Սուրբ տաճարներում կատարվող սուրբ արարողություններն ու ուխտերը հնարավոր են դարձնում անհատների համար՝ վերադարձը դեպի Աստծո ներկայությունը, իսկ ընտանիքների համար՝ հավերժական միասնությունը:

**Աղամին և Եվային** Աստծո կողմից տրված առաջին պատվիրանը վերաբերվում էր որպես ամուսին և կին նրանց ծնող դառնալու հնարավորությանը: Մենք հայտարարում ենք, որ դեռևս ուժի մեջ է Իր զավակներին տված շատանալու և երկիրը լցնելու վերաբերյալ Աստծո պատվիրանը: Մենք հայտարարում ենք նաև Աստծո այն պատվիրանը, որ ծնունդ տալու սուրբ գործունեությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին:

**Մենք հայտարարում ենք,** որ երկրի վրա կյանքի ստեղծման ուղիները ղեկավարվում են Աստծո կողմից: Մենք հաստատում ենք կյանքի սուրբ լինելը և՛ նրա կարևորությունն Աստծո հավերժական ծրագրում:

**Ամուսնությունը և կինը** սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց և երեխաների համար: «Որդիքը Տիրոջ ժառանգությունն են» (Սաղմոս 68:3): Ծնունդի սուրբ պարտականությունն է՝ դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում,

պապահովել նրանց նյութական և հոգևոր կարիքները, ուսուցանել նրանց սիրել և ծառայել մեկը մյուսին, պահել Աստծո պատվիրանները և օրինապաշտ քաղաքացիներ լինել, որտեղ էլ, որ ապրեն: Ամուսիններն ու կանայք՝ մայրերն ու հայրերը հաշվետու կլինեն Աստծո առջև այս պարտականությունների իրականացման համար:

**Ընտանիքը** հաստատված է Աստծո կողմից: Տղամարդու և կնոջ ամուսնությունը հիմնական մասն է՝ Նրա հավիտենական ծրագրի: Երեխաները պետք է ծնվեն ամուսնացած ծնողներից և դաստիարակվեն մոր և հոր կողմից, ովքեր ընդունում են ամուսնության խոստումը և հնազանդվում դրան որչափ հավատարմությամբ: Ընտանեկան կյանքում երջանկության հասնելու ամենամեծ հավանականությունն այն դեպքում է, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա: Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում և պահպանվում են հավատի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի և առողջ ու ստեղծարար միջոցառումների սկզբունքներով: Ըստ աստվածային ծրագրի՝ հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով ու առաքինությամբ, և պատասխանատու լինեն ապահովելու ընտանիքի կենսական կարիքներն ու պաշտպանությունը: Մայրերը, հատկապես, պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակման համար: Այս սուրբ պարտականություններն իրականացնելիս, հայրերն ու մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ: Անաշխատունակությունը, մահը կամ այլ իրավիճակները կարող են անհրաժեշտություն առաջացնել, որպեսզի փոփոխվեն ընտանիքի համար հոգ տանողների դերերը: Անհրաժեշտության դեպքում ընտանիքները կարող են ապավինել նաև մերձավորների օգնությանը:

**Մենք գգուզացնում ենք,** որ այն անհատները, ովքեր խախտում են ողջախոհության ուխտերը, բռնություն են գործադրում իրենց կանանց, ամուսինների կամ երեխաների հանդեպ, կամ թերաբույժ են ընտանեկան պարտականությունները կատարելիս, մի օր հաշվետու կլինեն Աստծո առջև: Դեռ ավելին, մենք գգուզացնում ենք, որ ընտանիքի քայքայումը անհատներին, համայնքներին և ազգերին կպատճառի այն դժբախտությունները, որոնց մասին կանխագուշակել էին հին ու՛ նոր մարգարեները:

**Մենք դիմում ենք** պատասխանատու քաղաքացիներին և կառավարության պաշտոնյաներին ամենուր, որպեսզի պայմաններ ստեղծեն և միջոցառումներ անցկացնեն ուղղված ընտանիքների, որպես հասարակության հիմնական միավորների, պահպանմանն ու ամրապնդմանը:

Որպես իր ուղերձի մի մաս՝ այս հայտարարությունը կարդացվել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի կողմից  
Կանանց Սփոփող Միության գերագույն ժողովին 1995թ. սեպտեմբերի 23-ին, Սոլթ Լեյք Սիթիում:

# 8

## Ուսուցանել Վերականգնման ուղերձը (Մաս 2)

### Նախաբան

Վերականգնման ուղերձն այն է, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը, որը ներառում է հավերժական վարդապետությունը, քահանայության իշխանությունը և փրկության արարողությունները, վերականգնվել է երկրի վրա՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի, նույն ավետարանի միջոցով,

որը հայտնի է դարձվել ավետարանի ամեն տևտեսությունում՝ Աստծո բոլոր զավակները կարող են ձեռք բերել հավերժական կյանք: Ապագա միսիոներները պետք է հստակորեն հասկանան Ուրացության և Վերականգնման դրույթները և պետք է պատրաստված լինեն բացատրելու դրանք հստակորեն և վկայելու գործությամբ դրանց վերաբերյալ :

### Նախապատրաստություն

- Ուսումնասիրեք Մորոնի 10.3–5-ը և Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.1-19 հատվածները:
- Ուսումնասիրեք *Քարոզիր իմ ավետարանը*, 39-43 էջերը:
- Ուսումնասիրեք Գորդոն Բ. Հինքլիի ելույթը «Մեր հավատքի սքանչելի հիմքը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2002, 78–81:
- Պատրաստվեք ցույց տալ տեսաֆիլմեր՝ «Եկեք, Աստծո որդիք», Մաս 1» (1.17) և «Եկեք, Աստծո որդիք», Մաս 2»(2:00; հատվածներ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի ելույթից, *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 66–69), որը հասանելի է [lds.org/media-library](https://www.lds.org/media-library)-ում:
- Պատրաստվեք ցույց տալ «Մորմոնի Գիրքը կարդալու հրավեր Ջինքսին» (8:06), *The District 2*, մատչելի է [youtube.com](https://www.youtube.com):
- Պատրաստեք օժանդակ նյութը, «Մեր հավատքի սքանչելի հիմքը», վերնագրով, որը գտնվում է դասի վերջում:

### Ուսուցման առաջարկներ

#### Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի Ջոզեֆ Սմիթի տեսիլքը



Ցույց տվեք առաջին տեսահոլովակը Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի ելույթից, «Եկեք, Աստծո որդիք», որում Նախագահ Մոնսոնը կիսվում է Էլմեր Փոլլարդի դարձի փորձառությամբ:



«Երբ 50 տարի առաջ ծառայում էի որպես միսիայի նախագահ Կանադայում, մի երիտասարդ միսիոներ, ով եկել էր փոքր գյուղական համայնքից, ապշած էր Տորոնտոյի չափերից: Նա հասակով կարճ էր, բայց բարձր էր իր վկայությամբ: Իր ժամանումից շատ չանցած, իր զուգընկերոջ հետ նա մտավ Էլմեր Փոլլարդի տուն Օշավայում, Օնտարիո, Կանադա: Պր. Փոլլարդը միսիոներներին տուն հրավիրեց, կարեկցելով երիտասարդներին, ովքեր կուրացնող փոթորկին գնում էին տևից տուն: Նրանք ներկայացրեցին իրենց ուղերձը: Նա չզգաց հոգին: Եվ խնդրեց տղաներին, որ հեռանան և այլևս չվերադառնան: Երբ տղաները իջնում էին տան դիմացի աստիճաններով, նա ծաղրանքով ասաց երեցների ետևից. «Դուք չեք կարող ասել, որ իսկապես հավատում եք, որ Ջոզեֆ Սմիթն Աստծո մարգարեն էր»:

Դուռը փակվեց» («Եկեք, Աստծո որդիք», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 68):

Տեսահոլովակը ցույց տալուց հետո հարցրեք.

- Եթե դուք լինեիք այդ միսիոներներից մեկը, ի՞նչ մտքեր կամ զգացումներ դուք կունենայիք Պր. Փոլլարդի տնից հեռանալիս:
- Ի՞նչ կանեիք դուք այս պարագայում:



Ցույց տվեք երկրորդ տեսահոլովակը, շարունակելով Նախագահ Մոնսոնի պատմության մնացած մասը:



«Երեցները քայլում էին ճանապարհով: Մեր գյուղացի տղան ասաց իր զուգընկերոջը. «Երեց, մենք չպատասխանեցինք Պր. Փոլլարդին: Նա ասաց, որ մենք չենք հավատում, որ Ջոզեֆ Սմիթը ճշմարիտ մարգարե էր: Արի վերադառնանք և բերենք մեր վկայությունները նրան»: Սկզբում ավելի փորձառու միսիոները տատանվեց, սակայն, ի վերջո, համաձայնվեց միանալ ընկերոջը:

Վախը պատեց նրանց սիրտը, երբ մոտեցան դռանը, որտեղից իրենց դուրս էին վռնդել: Նրանք թակեցին դուռը, Պր. Փոլլարդը բացեց, մի սարսափելի պահ ապրեցին, ապա հոգուց ծնված զորությամբ մեր անփորձ միսիոները խոսեց. «Պր. Փոլլարդ, դուք ասացիք, որ մենք իրականում չենք հավատում, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն էր: Ես վկայում եմ ձեզ, որ Ջոզեֆը մարգարե էր: Նա թարգմանել է Մորմոնի Գիրքը: Նա տեսել է Հայր Աստծուն և Որդուն՝ Հիսուսին: Ես գիտեմ դա»:

Որոշ ժամանակ անց, Պր. Փոլլարդը, այժմ Եղբայր Փոլլարդը, կանգնած քահանայության ժողովին հայտնեց. «Այդ գիշեր ես չկարողացա քնել: Իմ ականջներում հնչում էին խոսքերը. «Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն էր: Ես գիտեմ դա: Ես գիտեմ դա: Ես գիտեմ դա»: Հաջորդ օրը ես զանգահարեցի միսիոներներին և խնդրեցի վերադառնալ: Վկայություններով համեմված նրանց ուղերձը փոխեց իմ և իմ ընտանիքի կյանքը»: («Եկեք, Աստծո որդիք» Ensign կամ *Liahona*, մայիս 2013, 68):

**Հարցրեք.**

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին միսիոներների վկայությունը այդպիսի խորը տպավորություն թողեց Պր. Փոլլարդի վրա:

Խնդրեք ուսանողներին բացել *Ջոզեֆ Սմիթ—Պատմություն*՝ Թանկագին Մարգարիտ գրքում: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 5–6 հատվածները, իսկ հետո հանձնարարեք մեկ ուրիշ ուսանողի կարդալ բարձրաձայն հատվածներ 7–9-ը: Այնուհետև հարցրեք ուսանողներին.

- Ինչպե՞ս կամփոփեիք այս հատվածները ուղղակի մեկ կամ երկու նախադասությամբ:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ *Ջոզեֆ Սմիթ—Պատմություն* 1.10-ը: Երբ հատվածը կարդան, խնդրեք ուսանողներին մտածել, թե ինչպե՞ս *Ջոզեֆ Սմիթի* կրոնական ճշմարտության որոնումը նման է նրան, ինչին իրենք կհանդիպեն շատ մարդկանց հետ իրենց միսիոների ընթացքում: Այնուհետև հարցրեք.


- Որո՞նք էին այն հարցերը, որոնց հետ մաքառում էր երիտասարդ *Ջոզեֆ Սմիթը*:
- Ինչո՞ւ էր այդքան դժվար *Ջոզեֆի* համար որոշելը, թե որ եկեղեցուն միանա:
- Ինչո՞վ էին նման *Ջոզեֆ Սմիթի* հարցերը այն հարցերին, որոնք աշխարհի մարդիկ ունեն այսօր:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ *Ջոզեֆ Սմիթ—Պատմություն* 1.11-13: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ սկզբունք սովորեց Ջոզեֆ Մաիթը, թե ինչպես գտնել հոգևոր ճշմարտություն: (Չնայած նրանք կարող են օգտագործել տարբեր խոսքեր, ուսանողները հավանաբար կնշեն հետևյալ սկզբունքը: **Մենք կարող ենք սովորել հոգևոր ճշմարտություն Աստծուց, եթե մենք աղոթենք Նրան՝ պատասխանների համար և կամենանք գործել:**)
- Ինչպե՞ս կարող ենք օգտագործել Ջոզեֆ Մաիթի օրինակը, որպեսզի օգնենք ուրիշներին, ովքեր կամենում են գտնել հոգևոր ճշմարտություն:

Հանձնարարեք ուսանողներին լուս կարդալ Ջոզեֆ Մաիթ - Պատմություն 1.14-19: Երբ նրանք անեն այդ, հանձնարարեք նրանց մտածել այն տևական ազդեցության մասին, որ Առաջին Տեսիլքն ունեցավ աշխարհի և իրենց անձնական կյանքի վրա: Մի քանի լուս թույլենք կարդալն ավարտելուց հետո, հարցրեք հետևյալ տիպի հարցեր.

- Որո՞նք էին որոշ պատճառները, որ հակառակորդը հարձակվեց Ջոզեֆ Մաիթի վրա նախքան Երկնային Հոր և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի հայտնվելը: (Հակառակորդը կամենում էր խանգարել Ջոզեֆին հոգևոր ճշմարտությունն իմանալ և դրանով վերջնականապես խանգարել Վերականգնման իրականացմանը:)
- Ի՞նչ ուղիներով է Առաջին Տեսիլքը սկսում հաղթահարել Մեծ Ուրացության հետևանքները: (Շեշտադրեք այս ճշմարտությունը՝ ուսանողների համար. **Առաջին Տեսիլքի միջոցով երկինքները կրկին բացվեցին և սկսվեց Վերականգնումը:**)
- Ի՞նչ վարդապետական ճշմարտություններ կարելի է սովորել Առաջին Տեսիլքից: (Հայրը և Որդին առանձին անձնավորություններ են, երկինքները բաց են, մենք կարող ենք հայտնություն ստանալ և այլն:)
- Ձեր կարծիքով՝ *Քարոզիչ Իմ Ավետարանը* ինչո՞ւ է առաջարկում, որ միսիոներներն ուսուցանեն Առաջին Տեսիլքի մասին՝ ունկնդրի հետ իրենց հենց առաջին շփման ընթացքում:
- Ինչպե՞ս կարող էր Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի արտաքինի մասին իմանալը՝ օգնել ունկնդիրներին հոգևոր ճշմարտության իրենց որոնումում:

 Ուշադրություն. Եթե հասանելի է, դուք կարող եք ցույց տալ ուսանողներին օժանդակ նյութից մեջբերման տեսահոլովակը. Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, «Մեր հավատքի սքանչելի հիմքը»: Հոլովակի տևողությունն է մոտավորապես 9:30-ից մինչև 17:29:

Որպեսզի օգնեք ուսանողներին խորացնել իրենց ըմբռնումը Առաջին Տեսիլքի կարևորության մասին, տվեք յուրաքանչյուր ուսանողին օժանդակ նյութի մի օրինակ, որի վերնագիրն է «Մեր հավատքի սքանչելի հիմքը», որը պարունակում է Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի ելույթից մի մաս:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ առաջին երեք պարբերությունները: Այնուհետև հարցրեք.

- Ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու «ողջ ուժը» հիմնված փառափառ Առաջին Տեսիլքի վավերականության վրա: (Ուսանողները պետք է հասկանան, որ եթե Ջոզեֆ Մաիթի տեսիլքի պատմությունը ճիշտ է, ուրեմն ճիշտ է նաև հետևյալ պնդումը, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին միակ Եկեղեցին է երկրի վրա, որն ունի Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի լիարժեք հավանությունն ու իշխանությունը:)



- Ըստ Նախագահ Հինքլիի, ինչով էր Ջոզեֆ Սմիթի աշխատանքը տարբեր նախկին կրոնական առաջնորդների կատարած աշխատանքից, ովքեր փոխեցին երկրպագության ավանդույթները և վարդապետական ուսմունքները:

Ուսանողներին մի քանի բոլորով ժամանակ տվեք, որպեսզի մտքում կարդան օժանդակ նյութի մնացած մասը: Կարդալիս դուք կարող եք խրախուսել նրանց նշել բառերը, արտահայտությունները, կամ դրույթները, որոնք առանձնահատուկ նշանակություն ունեն իրենց համար: Երբ ուսանողներն ավարտեն կարդալը, մի քանիսին խնդրեք կիսվել իրենց ընդգծածով և բացատրել, թե ինչու էին դրանք կարևոր իրենց համար: Կարող եք տալ հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ կարող է դժվար լինել որոշ մարդկանց համար ընդունել Ջոզեֆ Սմիթի տեսիլքի ճշմարտացիությունը:
- Մտածելով այն սկզբունքների մասին, որոնք ուսումնասիրվեցին մեր նախորդ դասում, ինչպե՞ս է Առաջին Տեսիլքը համապատասխանում տնտեսությունների ուրացության և վերականգնման ձևաչափին: (Ուրացության ժամանակաշրջանին հաջորդած Առաջին Տեսիլքը սկիզբ դրեց վերականգնմանը և ավետարանի նոր տնտեսությանը: Ինչպես նախորդ տնտեսություններում, Աստծո կողմից կանչվեց մարգարե, վերականգնելու ավետարանական ճշմարտությունները և քահանայության իշխանությունը: Ջոզեֆ Սմիթը կանչվեց որպես «ժամանակների լրության տնտեսության» մարգարե [Եփեսացիս 1.10]: Սա նշանակում է, որ ավետարանը չի կորի ուրացության միջոցով, այլ կմնա երկրի վրա մինչև Քրիստոսի Երկրորդ Գալուստը:)
- Ինչպե՞ս կարող է ունկնդրին օգնելը հասկանալու ուրացության և վերականգնման սուրբգրքյան ձևաչափը, օգնել նրան ընդունել Առաջին Տեսիլքի իրական լինելը և ավետարանի ժամանակակից Վերականգնումը:

Հրավիրեք դասարանին բացել էջեր 39-40 «Քարոզիչի Իմ Ավետարանը» ձեռնարկում և լուռ կարդացեք վերջին երեք պարբերությունները՝ փնտրելով այն բաները, որոնք վերականգնվել են կամ վերահաստատվել Վերականգնման միջոցով: Ապա խնդրեք ուսանողներին պատմել՝ ինչ գտան նրանք: Հավաստիացեք, որ դասարանը նշի (1) քահանայության իշխանության, բանալիների և արարողությունների վերականգնումը, (2) Քրիստոսի Եկեղեցու վերահաստատումը, (3) Տասներկու Առաքյալներ կանչելը, (4) ավետարանի նոր տնտեսության սկզբնավորումը, և (5) ապրող մարգարե կանչելը:

Որպեսզի ուսանողներին օգնեք զգալ Առաջին Տեսիլքի և Վերականգնման ճշմարտությունն ու կարևորությունը, ուղղեք ձեր դասարանին հետևյալ տիպի հարցեր.

- Ինչպե՞ս էք դուք Առաջին Տեսիլքի իրականության և կարևորության մասին վկայություն ստացել:
- Ինչպե՞ս է ձեր վկայությունը Առաջին Տեսիլքի մասին ազդել Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնման վերաբերյալ ձեր հավատքի վրա:




Հարցրեք ուսանողներին, թե արդյոք կա՞ն ցանկացողներ՝ կիսվելու դասարանի հետ Առաջին Տեսիլքի կամ Վերականգնման վերաբերյալ իրենց վկայությամբ:

Դասարանը բաժանեք զույգերի: Կազմեք չորս ուսանողից բաղկացած փոքր խմբեր (յուրաքանչյուր խմբում երկու զույգ): Ուսանողներին տվեք բավականաչափ ժամանակ՝ նախապատրաստվելու, թե ինչպես ուսուցանեն երեք-չորս ընկերանոց կարճ դաս՝ Առաջին Տեսիլքի և Վերականգնման վերաբերյալ: Բացատրեք, որ նրանց ուսուցումը պետք է լինի պարզ և հստակ: Հանձնարարեք ուսանողներին վերանայել նյութը «*Քարոզիչ Իմ Ավետարանը*», 39–40 էջերում, կամ 11 էջում միսիոներական գրքույկի, որի վերնագիրն է *Հիսուս Քրիստոսի Ավետարանի Վերականգնումը*: Խրախուսեք ուսանողներին օգտագործել իրենց սեփական բառերը՝ բացատրելու Ջոզեֆ Սմիթի փորձառությունը (բացի այն դեպքերից, երբ նրանք մեջբերում են կամ կարդում Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.16–17-ը): Հիշեցրեք նրանց, որ եզրափակեն իրենց վկայությամբ: Հանձնարարեք յուրաքանչյուր խմբի մեկ զույգին ուսուցանել մյուս զույգին:

Երբ ուսանողները եզրափակեն իրենց ուսուցման փորձառությունը, հանձնարարեք յուրաքանչյուր խմբին քննարկել իրենց միջև, թե ինչը լավ ստացվեց ուսուցանելիս և ինչն ուսուցիչներն ավելի լավ կարող էին անել:

Ապա թող փոխվեն դերերով և թույլ տվեք, որ մյուս զույգն ուսուցանի: Հավաստիացեք, որ կարծիքներ լսելու համար ժամանակ կա: Երբ բոլոր զույգերն ուսուցանեն, հրավիրեք դասարանի անդամներին կիսվել իրենց փորձառություններից գաղափարներով դասարանի հետ:

Կարող է օգտակար լինել ձեր ուսանողներին իմանալը, թե ինչպես պատասխանել դժվարին հարցերին՝ կապված Ջոզեֆ Սմիթի գրած Առաջին Տեսիլքի պատմությունների հետ: Կարող եք բացատրել, որ Ջոզեֆ Սմիթը 1838թ-ին գրել է Առաջին Տեսիլքի պատմությունը, որպես Եկեղեցու պաշտոնական պատմություն, որպեսզի հրապարակվի աշխարհով մեկ: Քանի որ Ջոզեֆ Սմիթը արձանագրել է իր փորձառությունը ավելի քան մեկ անգամ, առկա են այլ պատմություններ Առաջին Տեսիլքի վերաբերյալ: Բացատրեք ուսանողներին, որ յուրաքանչյուր պատմություն տարբերվում է ինչ-որ բանով իր շեշտադրմամբ և մանրամասներով: Որոշ քննադատներ սխալմամբ վիճաբանում էին, թե պատմությունը վերապատմելիս ցանկացած տարբերություն փաստում է կեղծիքի մասին: Այնուամենայնիվ, երբ անհատը վերապատմում է մի փորձառություն բազմաթիվ միջավայրերում տարբեր ունկնդիրների համար շատ տարիների ընթացքում, յուրաքանչյուր պատմություն միտում ունի շեշտադրել փորձառության տարբեր կողմերը և պարունակել առանձնահատուկ մանրամասներ: Օրինակ՝ այդպիսի տարբերություններ, ինչպիսին առկա են Առաջին Տեսիլքի պատմություններում, գոյություն ունեն Դամասկոսի ճանապարհին տեսած իր տեսիլքի Պողոսի պատմություններում (Գործք 9.3–9, 22.6–11, 26.12–18):

 *Ուշադրություն. Օգնելու համար բացատրել Առաջին Տեսիլքի տարբեր պատմություններ, տես հոդված «Առաջին Տեսիլքի Պատմություններ» Gospel Topics բաժնում lds.org/topics կայքում: Մտածեք կիսվել այս ուղեկապով ուսանողների հետ, որպեսզի նրանք կարողանան ինքնուրույն կարդալ կյուրջը:*

**Հրավիրել ուրիշներին կարդալ Մորմոնի Գիրքը**

Սկսեք հաստատել դասի այդ բաժնի կարևորությունը, հանձնարարելով որևէ ուսանողի կարդալ բարձրաձայն վերջին երկու պարբերությունները Մորմոնի Գրքի նախաբանում: Հրավիրեք ուսանողներին փնտրել խոստումները, որոնք տրված են նրանց, ովքեր ընտրում են կարդալ Մորմոնի գիրքը, խորհել այն, և հարցնել Աստծուն, թե արդյոք այն ճշմարիտ է: Հրավիրեք ուսանողներին՝ կիսվել իրենց գտած նյութով:

Հանձնարարեք ուսանողներին բացել 41 էջը «Քարոզիչ Իմ Ավետարանը» ձեռնարկում և հանձնարարեք մի ուսանողի կարդալ բարձրաձայն բաժնի առաջին պարբերությունը «Մորմոնի Գիրքը՝ Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին» բաժնում: Օգնեք ուսանողներին սահմանել այս հատվածում ուսուցանվող սկզբունքը՝ տալով հետևյալ հարցը.

- Ինչո՞ւ է Մորմոնի Գիրքը արժեքավոր և հզոր գործիք միսիոներների համար: (Օգնեք ուսանողներին տեսնել, որ Մորմոնի Գիրքը պարունակում է հավիտենական ավետարանը, մի համոզիչ ապացույց, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն էր, և նա մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին: (Տես ՎեՌ 20.8-11:))

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս սկզբունքը, տվեք հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ է Մորմոնի Գիրքը համոզիչ ապացույց, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե է: (Եթե որևէ մեկը եզրակացնում է, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, ապա նրանք պետք է եզրակացնեն, որ Ջոզեֆ Սմիթը գործում էր աստվածային ղեկավարությամբ՝ հայտնաբերելու և թարգմանելու այն և Աստծո մարգարեն է:)

**Օգնել ուսանողներին պատասխանել դժվար հարցերին:**  
 Ուսանողները երբեմն հանդիպում են դժվար հարցերի, որոնք մարտահրավեր են նետում նրանց հավատքին: Որպես ուսուցիչ դուք կարող եք օգնել ուսանողներին պատրաստվել այդ հարցերին պատասխանել և դիմակայել իրենց հավատքին ուղղված մարտահրավերների (տես Եփեսացիս 6.11–13, 1 Նեփի 15.24, շեղման 3.29): Օգտակար է ուղղել մարտահրավերով հարցեր դասի ժամանակ, սակայն, այդպիսի հարցերը պետք է քննարկվեն գգուշորեն և հավատարմորեն: Հիշեցրեք ուսանողներին, որ դժվար հարցերի պատասխանող շատ աղբյուրներ առկա են Եկեղեցու պաշտոնական ցանցի կայքերում, օրինակ (Ավետարանական թեմաներ) Gospel Topics բաժնը LDS.org-ում:

- Ինչպե՞ս են ունկնդիրներն օրհնվում, երբ նրանք կարդում են Մորմոնի Գիրքը և ձեռք բերում վկայություն, որ այն ճիշտ է: (Նրանք կիմանան, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե է, և նրանք նախապատարաստված կլինեն ընդունելու Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնումը և կատանան փրկարար արարողությունները:)

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոնի 10.3–5-ը: Հարցրեք հետևյալը.

- Ի՞նչ քայլեր պետք է անձնավորությունը կատարի, որպեսզի ձեռք բերի վկայություն, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: (Չնայած նրանք կարող են օգտագործել տարբեր խոսքեր, ուսանողները հավանաբար կլինեն այս սկզբունքը. **Երբ մենք կարդում ենք, խորհում և աղոթում անկեղծ միտումով Մորմոնի Գրքի մասին, Աստված մեզ կհայտնի դրա ճշմարտացիության մասին Սուրբ Հոգու զորությամբ:** )
- Ի՞նչ է նշանակում հարցնել «անկեղծ միտումով» (Մորմոնի 10.4): (Անկեղծորեն ցանկանալով ստանալ պատասխան Սուրբ Հոգու միջոցով և պարտավորված լինել գործել ըստ պատասխանի:)



Լուսաբանելու համար, թե ինչու է կարևոր, որ ունկնդիրը կարդա Մորմոնի Գիրքը և աղոթի անկեղծ միտումով դրա ճշմարտացիության մասին, ցույց տվեք «Մորմոնի Գիրքը կարդալու հրավեր. Ջինքսին» տեսաֆիլմը (8:06):

Կանգնեցրեք տեսաֆիլմը 0:55-ի վրա և խնդրեք դասարանին խորհել մի պահ, թե ինչ մտքեր և զգացումներ նրանք կարող են ունենալ, եթե նրանք լինեին Ջինքսին ուսուցանող միսիոներներից մեկը: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ իրենք կասեին նրան:

Տեսաֆիլմի շարունակությունը ցուցադրելու ընթացքում կարող եք հանձնարարել դասարանի կեսին հետևել, թե ինչու՞ ունկնդիրները պետք է կարդան Մորմոնի Գիրքը և աղոթեն, որպեսզի ձեռք բերեն վկայություն նրա ճշմարտացիության մասին: Հանձնարարեք դասարանի մյուս կեսին դիտել, թե միսիոներներն ինչ ասացին, որն օգնեց Ջինքսին զգալ շարժառիթ Մորմոնի Գիրքը կարդալու համար: Տեսաֆիլմից հետո, ուսանողների հետ քննարկեք հետևյալը.

- Ի՞նչ ասացին և արեցին միսիոներները դրդելու Ջինքսին կարդալ և աղոթել Մորմոնի Գրքի մասին:
- Ի՞նչ ասացին և արեցին միսիոներները, որը հրավիրեց Սուրբ Հոգուն վկայություն բերել իրենց խոսքերի վերաբերյալ:
- Ինչո՞ւ է ունկնդրի համար կարևոր կարդալ և աղոթել Մորմոնի Գրքի ճշմարտացիության վերաբերյալ: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ բավարար չէ միսիոներների համար ուղղակի Մորմոնի Գրքի օրինակներ բաժանել: Միսիոների դերը մյուսներին օգնելն է զգալ Մորմոնի Գիրքը կարդալու և դրա մասին աղոթելու կարևորությունը, որպեսզի նրանք պարզեն, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն էր և որ Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել է:)

Բացատրեք դասարանին, որ նրանք այժմ կունենան հնարավորություն դերերով խաղալու, թե ինչպես են հրավիրում որևէ մեկին՝ կարդալու Մորմոնի Գիրքը: Ցույց տվեք, թե ինչպես ներկայացնել Մորմոնի Գիրքը և հղել հրավեր կարդալու այն և աղոթելու, որպեսզի իմանան, որ դրա ուղերձը

ճշմարիտ է: Այս բաժանեք դասարանը զույգերի կամ մտածեք օգտագործել մյուս առաջարկված ոսուցողական ձևակերպումները, որոնք գտնվում են «Ուսուցողական վարժություններ» բաժնում այս ձեռնակի նախաբանում:

Ուսանողներին տրամադրեք բավական ժամանակ՝ պատրաստվելու հրավիրել որևէ ունկնդրի՝ կարդալու Մորմոնի Գիրքը և աղոթելու՝ իմանալու համար, թե արդյոք այն ճշմարիտ է: Հրավիրեք ուսանողներին կարդալ վանդակը, որի վերնագիրն է «Օգտագործեք Մորմոնի Գիրքը՝ հաստատելու վերականգնման ճշմարտությունը», որը գտնվում է *Զարոգիր Իմ Ավետարանը*՝ ձեռնարկի 42-րդ էջի վերևում: Ուսանողները կարող են նաև օգտագործել էջ 15-ը միսիոներական գրքույկի, որը կոչվում է *Հիսուս Քրիստոսի Ավետարանի Վերականգնում*: Նրանք պետք է ավարտեն պրակտիկ վարժությունը, կիսվելով իրենց վկայությամբ Մորմոնի Գրքի մասին և տարածեն հրավեր՝ կարդալու և աղոթելու դրա ճշմարտացիության մասին:

Երբ բոլոր ուսանողները հնարավորություն կունենան գործնականում կիսվել Մորմոնի Գրքի մասին իրենց վկայությամբ և հրավեր հղել կարդալու այն և աղոթելու, խնդրեք դասարանի անդամներին դասարանի մնացած մասի հետ կիսվել իրենց փորձառություններից գաղափարներով:

Երբ դասը եզրափակեք, հիշեցրեք ուսանողներին մինչև լիաժամկետ միսիոներական ծառայություն սկսելը Մորմոնի Գիրքը կարդալու և իրենց անձնական վկայությունները գորացնելու օրհնությունների մասին: Հարցրեք, թե արդյոք նրանցից որևէ մեկը ցանկություն ունի կիսվելու իր վկայությամբ Մորմոնի գրքի մասին: Կիսվեք Մորմոնի Գրքի վերաբերյալ ձեր վկայությամբ և հավաստիացրեք ուսանողներին, որ նրանք կգտնեն ուրախություն, եթե հրավիրեն ուրիշներին կարդալ այս հզոր վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին:

## Գործելու հրավեր

Խրախուսեք ուսանողներին հաջորդ շաբաթվա ընթացքում կիրառել այն, ինչ իրենք սովորեցին այս դասի ընթացքում: Գուցե նրանք մտածեն անել հետևյալը.

- Աղոթեք Առաջին Տեսիլքի մասին ավելի ուժեղ վկայության և Մորմոնի Գրքի ճշմարտացիության համար:
- Կարդացեք «Առաջին Տեսիլքի պատմություններ» հոդվածը Gospel Topics, lds.org/topics բաժնում:
- Անգիր սովորեք Առաջին տեսիլքի պատմությունը, գրված Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.16–17 հատվածներում: Կիսվեք դրանով որևէ ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ և բերեք ձեր վկայությունն այդ իրադարձության կարևորության մասին:
- Աղոթեք օգնության համար՝ գտնելու ինչ-որ մեկին, ում դուք կարող եք տալ Մորմոնի Գրքի մի օրինակ: Գործեք ձեր ստացած հոգևոր հուշումների վրա հիմնվելով:

# Մեր հավատքի հրաշալի հիմքը

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

Ensign, Nov. 2002, 80-81



Մենք հայտարարում ենք առանց վարանելու, որ Հայր Աստվածը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, անձնապես հայտնվեցին պատանի Ջոզեֆ Սմիթին: . . .

. . . Մեր ողջ ուժը հիմնվում է [Առաջին Տեսիլքի] ճշմարտացիության վրա: Դա կամ տեղի է ունեցել կամ տեղի չի ունեցել: Եթե այն տեղի չի ունեցել, ապա այս աշխատանքը խաբեբայություն է: Իսկ եթե տեղի է ունեցել, ապա այն ամենակարևոր և ամենահրաշալի աշխատանքն է ողջ երկնքի տակ:

Մտածեք այդ մասին, իմ եղբայրներ և քույրեր: Դարեր շարունակ երկինքները փակված են եղել: Լավ տղամարդիկ և կանայք, ովքեր քիչ չեն եղել, իսկապես մեծ ու հրաշալի մարդիկ, փորձել են ուղղել, ամրացնել և բարելավել իրենց երկրպագության կարգերը և իրենց հիմնական վարդապետությունը: Ես իմ հարգանքի տուրքն եմ մատուցում նրանց: Որքան ավելի լավ է դարձել աշխարհը նրանց խիզախ արարքների շնորհիվ: Չնայած ես հավատում եմ, որ նրանց աշխատանքը ոգեշնչված է եղել, այն չի աջակցվել երկինքների բացվելով՝ Աստվածության հայտնվելով:

Այնուհետև 1820 թվականին տեղի ունեցավ այդ փառահեղ հայտնությունը՝ ի պատասխան մի տղայի աղոթքի, ով իր ընտանեկան Աստվածաշնչում կարդացել էր Հակոբոսի խոսքերը. «Եթե մեկը ձեզանից իմաստության պակասություն ունի թող խնդրե՛ք Աստուածանից, որ ամենին տալիս է առատությամբ և չէ նախատում, և կտրուի նորան» (Հակոբոս 1.5):

Եկեղեցու ճշմարիտ լինելու հիմքում գտնվում է այդ բացառիկ և հրաշալի փորձությունը:

Ողջ արձանագրված կրոնական պատմությունից չկա ոչ մի բան, որ համեմատվի սրա հետ: Նոր Կտակարանը պատմում է Հիսուսի մկրտության մասին, երբ Աստծո ձայնը լսվեց և Սուրբ Հոգին իջավ աղավառ տեսքով: Կերպարանափոխության սարի վրա Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը տեսան Տիրոջը կերպարանափոխված իրենց առջև: Նրանք լսեցին Հոր ձայնը, բայց նրանք չտեսան Նրան:

Ինչո՞ւ Հայրը և Որդին երկուսով եկան մի պատանու, մի սովորական տղայի մոտ: Մի բանի համար, նրանք եկան, որպեսզի առաջնորդեն բոլոր ժամանակների մեծագույն ավետարանական տնտեսության մուտքը, երբ բոլոր նախկին տնտեսությունները պետք է հավաքվեն և համախմբվեն մեկում: . . .

Աստծո այս աշխատանքի գործիքը դարձավ մի տղա, որի միտքը լցված չէր մարդկանց փիլիսոփայություններով: Այդ

միտքը թարմ էր և առանց այդ օրերի կրթության ավանդույթների:

Հեշտ է տեսնել, թե ինչու մարդիկ չեն ընդունում այս պատմությունը: Դա գրեթե հասկանալու կարողությունից վեր է: Բայց, այնուամենայնիվ, դա այնքան խելամուծ է: Նրանք, ովքեր ծանոթ են Հին Կտակարանին, ընդունում են Եհովայի հայտնվելը մարգարեներին, ովքեր ապրում էին համամետաբար այդ հասարակ ժամանակներում: Մրդյոք կարո՞ղ են նրանք օրինականորեն հեքթել երկնքի Աստծո և Նրա հարություն առած Որդու հայտնվելու անհաժեշտությունը աշխարհի պատմության այս շատ բարդ ժամանակաշրջանում:

Այն մասին, որ Նրանք եկան, Նրանք երկուսով, որ Ջոզեֆը տեսավ Նրանց Իրենց փառահեղ փայլով, որ Նրանք խոսեցին նրա հետ և որ նա լսեց և արձանագրեց Նրանց խոսքերը, այս նշանավոր բաների մասին ենք մենք վկայում:

Ես գիտեի մի այսպես կոչված մտավորականի, ով ասաց, որ Եկեղեցին իր պատմության թակարդն է ընկել: Իմ պատասխանն էր, որ առանց այդ պատմության մենք չունենք ոչինչ: Այդ եզակի, միակ և նշանավոր իրադարձության ճշմարտությունը հիմնական նյութն է մեր հավատքի:

Բայց այս փառահեղ տեսիլքը միայն սկիզբն էր մի շարք դրսևորումների, որ կազմում են այս աշխատանքի վաղ օրերի պատմությունը:

Կարծես այդ տեսիլքը բավական չէր հաստատելու մարդկության Քավիչի անձնավորության և իրականության մասին, դրան հետևեց Մորմոնի Գրքի առաջ գալը: Սիսա մի բան, որը մարդ կարող է բռնել իր ձեռքերում, կարող էր «ծանրութթեթև անել» ինչպես որ կար: Նա կարող էր կարդալ այն: Նա կարող էր աղոթել դրա մասին, քանի որ այն պարունակում էր խոստում, որ Սուրբ Հոգին կհայտնեք դրա ճշմարտացիության մասին, եթե այդ վկայությունը որոնեին աղոթքով: . . .

Հաջորդեց սուրբ քահանայության վերականգնումը, նախ Սիսարոնյան՝ Հովհաննես Մկրտիչի ձեռքերի ներքո, ով մկրտել էր Հիսուսին Հորդանանում:

Այնուհետև եկան Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը՝ Տիրոջ Առաքյալները, ովքեր շնորհեցին այս դարում այն, ինչ նրանք ստացել էին Տիրոջ ձեռքերի ներքո, ում հետ նրանք քայլել էին, այսինքն՝ «երկնքի արքայության բանալիներին» իշխանությամբ երկնքում կապելու այն, ինչ նրանք կկապեին երկրի վրա (տես Մատթեոս 16.19):

Հետագայում տեղի ունեցավ քահանայության մյուս բանալիների շնորհումը՝ Մովսեսի, Եղիասի և Եղիայի ձեռքերի ներքո:

Մտածեք այդ մասին, իմ եղբայրներ և քույրեր: Մտածեք այդ հրաշագործության մասին:

Սա Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցին է: Մենք՝ որպես ժողովուրդ, Վերջին Օրերի Մրբեր ենք: Մենք վկայում ենք, որ երկինքները բացվել են, որ վարագույները ճեղքվել են, որ Աստված խոսել է և Հիսուս Քրիստոսը հայտնել է Իրեն, որին հետևել է աստվածային իշխանության շնորհումը:

Մենք վկայում ենք, որ երկինքները բացվել են, որ վարագույները ճեղքվել են, որ Աստված խոսել է և Հիսուս Քրիստոսը հայտնել է Իրեն:

© 2014 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈՒՆՈՒ ԿՐՈՒՄԱՆ ԲԱՆԵՐ ԿԵՐԱՊԱՀՎԱԾ ԵՎ:



# 9

## Զարգացնել Քրիստոսանման հատկանիշներ

### Նախաբան

Միսիոներները պետք է ձգտեն դառնալ Փրկիչի նման, երբ նրանք աշխատում են հրավիրել մյուսներին գալ դեպի Նա: Փրկիչը մեր կատարյալ օրինակն է և հրահանգել է մեզ դառնալ Իր նման (տես 3 Նեփի 27.27) և Նրա Քավությունը հնարավորություն է տալիս մեզ ավելի նմանվել Նրան և մեր Երկնային Հորը: Հիսուս Քրիստոսին նմանվելու կարևոր

գործոններից մեկը սովորելն է, թե ինչպես էր Նա ապրում, վարվում և ուսուցանում: Եթե անձամբ մենք ավելի լիարժեք կերպով զարգացնենք Քրիստոսանման հատկանիշները, ապա մենք ավելի լավ պատրաստված կլինենք ծառայելու Աստծուն և մյուսներին մեր միսիաների և մեր ողջ կյանքի ընթացքում:

### Նախապատրաստություն

- Ուսումնասիրեք Ալմա 17.22–37, 18.1–3, 8–10, Մորոնի 7.45–48, և Վարդապետություն և Ուխտեր 4.1–7:
- Ուսումնասիրեք *Քարոզիչ Իմ Ավետարանը*, էջեր 129–137, 141:
- Ձեր դասարանի յուրաքանչյուր ուսանողի համար պատճենեք մեկական օրինակ Վարժություն հատկանիշի վերաբերյալ պարունակող էջ 141-ը, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկից:
- Պատրաստվեք ցուցադրելու «Christlike Attributes» (2:54) տեսանյութը, որն առկա է LDS.org կայքում:
- Պատրաստվեք ցուցադրելու «Impressions of Missionaries» (4:32) տեսանյութը, որն առկա է youtube.com կայքում:

### Ուսուցանման առաջարկներ

#### Քրիստոսանման հատկանիշների կարևորությունը

Հրավիրեք ուսանողներին բացել 138 էջը՝ *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում և դիտել միսիոներական անվանապիտակի նկարը: Հարցրեք.

- Որո՞նք են միսիոներական անվանապիտակի երկու ամենաշատն աչքի ընկնող մասերը: (Միսիոների անունը և Փրկիչի անունը):
- Ինչո՞ւ ձեր և մյուսների համար կարևոր կլինի, որ ձեր անունը Փրկիչի անվան հետ կապ ունենա:

Խնդրեք ուսանողներին հերթով բարձրաձայն կարդալ հինգ պարբերությունները էջեր 129-130, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկից, մինչ դասարանը կհետևի, փնտրելով, թե ինչպես մենք կարող ենք ընդունել Հիսուս Քրիստոսին հետևելու հրավերը: Նրանց կարդալուց հետո հարցրեք.

- Մենք ինչպե՞ս ենք ընդունում Հիսուս Քրիստոսին հետևելու Նրա հրավերը: (Ուսանողները պետք է նշեն այս սկզբունքը. **Մենք ընդունում ենք Հիսուս Քրիստոսի հրավերը՝ հետևելու Իրեն՝ դառնալով Նրա նման և զարգացնելով Նրա հատկանիշները:**)
- Քրիստոսանման հատկանիշներ զարգացնելն ինչպե՞ս կդարձնի ձեզ Հիսուս Քրիստոսի ավետարանի գորավոր և արդյունավետ ծառայողը:

Խնդրեք ուսանողներից յուրաքանչյուրին ընտրել սուրբ գրության մի հատված Սուրբ գրությունների ուսումնասիրություն վանդակից՝ *Քարոզիչ Իմ*

*Ավետարանը* ձեռնարկի էջ 130-ում: Թող ուսանողները կարդան իրենց ընտրած սուրբ գրությունների հատվածները և տեսնեն, թե այն ինչ է ասում՝ Հիսուս Քրիստոսի օրինակին հետևելու մասին: Հրավիրեք ուսանողներին դասարանի հետ կիսվել նրանով, ինչ սովորեցին: Երբ մի քանի ուսանողներ կարտահայտվեն, հարցրեք.

- Ձեզ բնորոշ ո՞ր մի քանի հատկանիշներն են ձեզ կապում Հիսուս Քրիստոսի հետ:



Ցուցադրեք «Christlike Attributes» (2:54) տեսանյութը, որում պատկերված են Փրկիչի հատկանիշներից մի քանիսը: Թող ուսանողները դիտեն, թե ինչպես էին Փրկիչի աստվածային հատկանիշներն արտահայտվում նրա գործերում, մասնավորապես մարդկանց հետ շփվելիս:

Տեսանյութը դիտելուց հետո, տվեք հետևյալ բնույթի հարցեր, համոզվելով, որ բավարար ժամանակ էք տալիս ուսանողներին, որպեսզի խորհեն պատասխանների շուրջ.

- Ինչպե՞ս էին Փրկիչի աստվածային հատկանիշներն ակնհայտ դառնում նրա գործերում, մասնավորապես մարդկանց հետ շփվելիս:
- Ինչպիսի՞ ազդեցություն էին ունենում Հիսուսի գործողություններն ուրիշների վրա:

Խնդրեք ուսանողներին իրենց կողքի նստողի հետ կիսվեն, թե ինչպիսի ազդեցություն է թողել որևէ մեկի Քրիստոսանման վարքը իրենց վրա: Այնուհետև նրանց մի փոքր ժամանակ տվեք խորհելու հետևյալ հարցի շուրջ.

- Տեսանյութում ցուցադրված Քրիստոսի հատկանիշներից որո՞նք դուք կցանկանայիք ավելի շատ զարգացնել:

### **Զարգացնել Քրիստոսանման հատկանիշներ**

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 4.1-7 հատվածները:

- Համաձայն Վարդապետություն և Ուխտեր 4.5–6-ի, ո՞րն է կապը Քրիստոսանման հատկանիշների և տվյալ գործին կանչված լինելու որակավորումների միջև: (Չնայած նրանք կարող են օգտագործել տարբեր խոսքեր, ուսանողները պետք է նշեն այս սկզբունքը. **Քրիստոսանման հատկանիշներ ունեցող անհատները որակավորվում են՝ ծառայելու Տիրոջ գործին:**)

Խնդրեք դասարանին բացել Վարժություն հատկանիշի վերաբերյալ՝ էջ 141, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ: Էջի վերևում տրված հրահանգները բացատրելուց հետո խնդրեք ուսանողներին կատարել վարժությունը: Օգտակար կլինի ասել ուսանողներին, թե որքան ժամանակ նրանք կունենան վարժությունը կատարելու համար: Կարող եք բաժանել ուսանողներին վարժության թերթիկի պատճենները: Եթե ուսանողները կնախընտրեն վարժությունը կատարել իրենց *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում, ապա խրախուսեք նրանց գրել մատիտով: Բոլոր ուսանողներին բավարար ժամանակ հատկացրեք, որպեսզի վարժությունն ավարտեն: Այնուհետև խնդրեք դասարանի անդամներին կիսվել, թե ինչ են նրանք սովորել և զգացել, երբ աշխատում էին այս ինքնագնահատման վրա: Անհրաժեշտության դեպքում տվեք հետևյալ բնույթի հարցեր.

**Ժամանակ տվեք, որ ուսանողները խորհեն պատասխանների շուրջ:** Դասարանի անդամներն ավելի մտածված պատասխաններ կտան հարցերին, եթե նրանց բավարար ժամանակ տրվի պատասխանների շուրջ մտածելու համար: Օրինակ հարցը տալուց հետո, դուք կարող եք ասել. «Խնդրում եմ մի պահ մտածեք ձեր պատասխանի շուրջ և հետո ես կլսեմ պատասխանները»:


- Վարժության ո՞ր հատկանիշներն են նշանակալից ձեզ համար և ինչո՞ւ:
- Ի՞նչ դուք սովորեցիք այս վարժությունից:

Օգնեք ուսանողներին խորացնել իրենց պատկերացումը Քրիստոսանման հատկանիշների վերաբերյալ հրավիրելով նրանց ընտրել մեկ հատկանիշ, որի մասին նրանք ցանկանում են ավելին իմանալ, և ավելի լիարժեքորեն զարգացնել այն իրենց կյանքում: Խնդրեք ուսանողներին բացել այն բաժինը, որտեղ նկարագրվում է իրենց ընտրած հատկանիշը՝ էջեր 130–137, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ: Այնուհետև նրանց ժամանակ տվեք, որ ուսումնասիրեն իրենց բաժինը համապատասխան սուրբ գրությունների հետ միասին: Օգտակար կլինի ասել ուսանողներին, թե որքան ժամանակ նրանք ունեն ուսումնասիրության համար: Նրանց կարդալու ընթացքում գրեք հետևյալ հարցերը գրատախտակին.

- Ի՞նչ նոր գաղափար դուք ունեցաք այս հատկանիշի վերաբերյալ:
- Ի՞նչ պետք է փոխվի ձեր սրտում, մտքում կամ գործողություններում, որ զարգանա այս հատկանիշը:
- Այս հատկանիշի զարգացումն ինչպե՞ս կարող է նպաստել, որ ավելի արդյունավետ միսիոներ լինեք:

Քայլեք սենյակով մեկ, որպեսզի տեսնեք, թե ինչ է անում ամեն մի ուսանողը և որպեսզի պատասխանեք նրանց ունեցած հարցերին: Բավարար ժամանակից հետո, հրավիրեք ուսանողներին պատասխանել գրատախտակին գրված հարցերին:

Ցուցադրեք Նախագահ Դիտեր Ֆ. Ուլստորֆի հետևյալ խոսքը, և խնդրեք ուսանողներին տեսնել, թե ըստ Նախագահ Ուլստորֆի մենք ինչ պետք է անենք, որպեսզի զարգացնենք Քրիստոսանման հատկանիշները.



«Սուրբ գրությունները նկարագրում են մի շարք Քրիստոսանման հատկանիշներ, որոնք մենք պետք է զարգացնենք մեր կյանքի ընթացքում: ... Քրիստոսանման հատկանիշները պարզևներ են Աստծուց: Դրանք հնարավոր չէ զարգացրել առանց Նրա օգնության: Մի օգնությունը, որի կարիքը մենք բոլորս ունենք, շնորհվել է մեզ Հիսուս Քրիստոսի Թավության միջոցով: Հիսուս Քրիստոսի և Նրա Թավության հանդեպ հավատք ունենալ նշանակում է ամբողջովին ապավինել Նրան, վստահել Նրա անսահման զորությանը, իմաստությանը և սիրուն: Քրիստոսանման հատկանիշները գալիս են մեր կյանք, երբ մենք մեր ազատ կամքն արդար կերպով ենք գործի դնում: ... Ձգտելով ավելի սմանվել Փրկիչին մենք պետք է պարբերաբար վերազնահատենք մեր կյանքը և ճշմարիտ ապաշխարության ճանապարհով ապավինենք Հիսուս Քրիստոսի արժեքներին և Նրա Թավության օրհնություններին» («Christlike Attributes—the Wind beneath Our Wings,» Ensign կամ *Liahona*, նոյ. 2005, 102–103):


- Ի՞նչ է նշանակում ձեզ համար, որ «Քրիստոսանման հատկանիշները պարզևներ են Աստծուց»: (Դրանք պարզևներ են, որոնք հնարավոր չէ լիարժեք զարգացնել առանց Աստծո օգնության):
- Համաձայն Նախագահ Ուլստորֆի՝ ինչ կարող ենք մենք անել, որպեսզի Աստծո օգնությամբ զարգացնենք այդ հատկանիշները: (Կարող եք ամփոփել ուսանողների պատասխանները գրատախտակին գրելով հետևյալը. **Մենք կարող ենք զարգացնել Քրիստոսանման**



**հատկանիշները, ապաշխարելով, հավատք ունենալով Հիսուս Քրիստոսի հանդեպ և ապավինելով Քավությանը):**

- Ապաշխարելը և առ Քավություն հավատք ունենալն ինչպե՞ս են մեզ օգնում զարգացնել Քրիստոսանման հատկանիշներ: (Հավատքով և ապաշխարությամբ մենք հրավիրում ենք Տիրոջը՝ օրհնել մեզ Քրիստոսանման հատկանիշներով: Երբ մենք ապաշխարում ենք, մենք ցույց ենք տալիս մեր ցանկությունը լինել ավելի Քրիստոսանման և մեր կյանք ենք հրավիրում Սուրբ Հոգու ավելի մեծ բաժին:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթն Հ. Օուքսի հետևյալ խոսքը և հանձնարարեք որևէ ուսանողի՝ բարձրաձայն կարդալ այն դասարանի համար:



«Նեփիացիներին ուսուցանելիս Փրկիչը նշել է, թե նրանք ինչպիսին պետք է դառնան: Նա կոչ է արել նրանց ապաշխարել, մկրտվել և սրբագործվել՝ ընդունելով Սուրբ Հոգին, ասելով «որպեսզի դուք կարողանաք կանգնել անբիժ իմ առջև վերջին օրը» (3 Նեփի 27.20): Նա ավարտեց հետևյալ կերպ. «Հետևաբար, ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել: Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ճիշտ ինչպես ես եմ» (3 Նեփի 27.27):

Հիսուս Քրիստոսի ավետարանն այն ծրագիրն է, որով մենք կարող ենք դառնալ այնպիսին, ինչպիսին Աստծո զավակները պետք է դառնան: Անբիժ և կատարյալ վիճակը կլինի ուխտերի, արարողությունների և գործողությունների, ճիշտ ընտրությունների և շարունակական ապաշխարության հաստատուն հաջողության արդյունքը: «Մարդկանց համար այս կյանքն է ժամանակը նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն» (Ավմա 34.32) («The Challenge to Become,” Ensign, Nov. 2000, 33):

**Հարցրեք.**

- Ըստ Երեց Օուքսի՝ ի՞նչ մենք պետք է անենք, որպեսզի ավելի նմանվենք Հիսուս Քրիստոսին: (Մենք պետք է կապենք և պահենք սուրբ ուխտեր, արժանիորեն ստանանք արարողությունները, ճիշտ ընտրություններ կատարենք և ապաշխարենք):

Ուսանողներին խնդրեք բացել Մորոնի 7.47–48 հատվածները: Բացատրեք, որ թեև այս հատվածները վերաբերում են մասնավորապես գթությանը, նրանք սովորեցնում են ավելի ընդհանուր սկզբունք՝ Քրիստոսանման հատկանիշներ ձեռք բերելու մասին: Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ հատվածները, մինչ դասարանը կհետևի, տեսնելով, թե ինչ մենք կարող ենք անել, հայցելով Երկնային Հոր օգնությունը Նրա Որդուն նմանվելու հարցում (պատասխանները կարող են ընդգրկել Երկնային Հորից օգնություն խնդրելու կարևորությունը և Քրիստոսի «ճշմարիտ հետևորդները» դառնալը): Նշեք, որ քանի որ Քրիստոսանման հատկանիշները պարզևներ են Աստծուց, մենք պետք է խնդրենք Նրան, որ օգնի զարգացնենք դրանք:

**Սովորողի կիրառումը:**

Կիրառումը տեղի է ունենում, երբ ուսանողներն (1) ընդունում են վարդապետությունը կամ սկզբունքը իրենց սրտում և մտքում և (2) սկսում են գործել համաձայն դրա և ապրել ըստ դրա: Ուսուցիչները կարող են նպաստել կիրառմանը՝ դասարանում ուսանողներին ժամանակ տալով խորհելու կամ գրելու այն, ինչ նրանք հասկացել և զգացել են և մտածելու, թե ինչ կոնկրետ գործողություններ նրանք կարող են ձեռնարկել, որպեսզի կյանքում կիրառեն այն, ինչ սովորել են:

Որպեսզի օգնեք ուսանողներին մտածել, թե ինչպես նրանք կարող են կիրառել այն, ինչ սովորեցին, կարող եք խնդրել ուսանողներին ասել, թե ինչ գործողություններ կարող է ձեռնարկել ապագա միսիոները, ձգտելով զարգացնել այն հատկանիշը, որի մասին սովորել է: Այնուհետև ուսանողներին մի քանի ռոպե ժամանակ տվեք՝ գրելու մի ծրագիր, ներառյալ որոշ հետևողական ճիշտ ընտրություններ, որոնք կարող են անել, ինչը կօգնի նրանց ավելի լավ զարգացնել այդ հատկանիշը: Խրախուսեք նրանց կիսվել իրենց ծրագրով ծնողների կամ վստահելի մի ընկերոջ հետ: Նաև խրախուսել ուսանողներին չհետաձգել իրենց ծրագրի կիրառումը: Այժմ կատարած նրանց ջանքերը կարող են մեծ ազդեցություն ունենալ նրանց միախառն փորձառությունների վրա:

Ավարտեք դասի այս հատվածը հավաստիացնելով ուսանողներին, որ Տերը կօրհնի նրանց, եթե նրանք հավատք գործադրեն Քավության հանդեպ և ձգտեն դառնալ Նրա նման:


**Քրիստոսանման հատկանիշները միսիոներական աշխատանքում**

Գրատախտակին գրեք Առաջին Նախագահության Նախագահ Դիտեր ֆ. Ուլադորֆի հետևյալ խոսքը, որտեղ նա մեջբերում է անում, որը հաճախ վերագրվում է Սբ. Ֆրենսիսին՝ Ասիզեից: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ խոսքը.

«Քարոզեք ավետարանը ամբողջ ժամանակ և, անհրաժեշտության դեպքում, օգտագործեք խոսքեր» (“Waiting on the Road to Damascus,” Ensign կամ *Liahona*, մայ. 2011, 77):

Այնուհետև տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս մենք կարող ենք քարոզել ավետարանն առանց խոսքեր օգտագործելու:
- Քրիստոսանման հատկանիշներ ձեռք բերելն ինչպե՞ս կարող է թույլ տալ մեզ ավելի լավ քարոզել ավետարանը՝ թե առանց խոսքերի, և թե խոսքերի օգնությամբ:
- Ի՞նչ է տեղի ունենում մարդկանց սրտերի հետ, երբ նրանց վերաբերվում են Քրիստոսանման ձևով: (Նրանց սրտերը փափկում են և նրանք ավելի հակված են դառնում ավետարանի ուղերձը լսելուն):
- Ինչո՞ւ են այդքան կարևոր միսիոների Քրիստոսանման հատկանիշները՝ միսիոներական աշխատանքի հաջողության համար: (Ուսանողների պատասխանները կարող են ներառել հետևյալ ճշմարտությունը. **Քրիստոսանման հատկանիշները հզոր ազդեցություն կարող են ունենալ մարդկանց դեպի Փրկիչը բերելու գործում:**)

 Ցուցադրեք «Impressions of Missionaries» (4:32) տեսանյութը: Թող ուսանողները նշումների տեսքով գրի առնեն այն հատկանիշները, որոնք ունկնդիրները նկատել են միսիոներների մեջ և այն ազդեցությունը, որն այդ հատկանիշները թողել են ունկնդիրների վրա:

Տեսանյութի դիտումից հետո հարցրեք.

- Միսիոներների ո՞ր դրական հատկանիշները նշեցին ունկնդիրները:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ այդ հատկանիշներն այդպիսի դրական ազդեցություն ունեցան ունկնդիրների վրա:

- Լսողներից ոմանք նշեցին ոչ այնքան դրական հատկանիշներ: Այդ հատկանիշներն ինչպե՞ս տպավորեցին ունկնդիրներին:
- Ինչպե՞ս կարող են միսիոներները խուսափել այդպիսի ոչ այնքան դրական ազդեցություն թողնելուց:

Որպեսզի մեկ անգամ ևս ցույց տաք, թե ինչպես են Քրիստոսանման հատկանիշները և վարքագծերը օգնում միսիոներներին պատրաստել նրանց, ում ուսուցանում են, ավետարանը ընդունելուն, խնդրեք որևէ ուսանողի ամփոփել Ամմոնի պատմությունը, ով ջանում էր քարոզել ավետարանը լամանացիներին: Դասարանը բաժանեք չորս խմբերի և յուրաքանչյուր խմբին հանձնարարեք սուրբ գրության հետևյալ հատվածներից մեկը. Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ իրենց հանձնարարված հատվածները և հայտնաբերել Քրիստոսանման հատկանիշները, որոնք Ամմոնը ցուցաբերեց:

*Արևա 17.22-25*  
*Արևա 17.28-31*  
*Արևա 17.33-37*  
*Արևա 18.1-3, 8-10*

Երբ ուսանողները բավական ժամանակ են ունեցել կարդալու, դասարանի հետ քննարկեք հետևյալը.

- Քրիստոսանման ո՞ր հատկանիշները դրսևորեց Ամմոնը ձեր կարդացած հատվածներում:
- Ամմոնի հատկանիշներն ինչպե՞ս ազդեցին մարդկանց վրա, ում նա ուսուցանում էր:
- Ինչպե՞ս կարող են ժամանակակից միսիոներները հետևել Ամմոնի օրինակին:

Խնդրեք ուսանողներին մտածել մեկի մասին, ով ըստ իրենց դիտարկումների Քրիստոսանման հատկանիշներ ունեցողի օրինակ է: Հարցրեք.

- Ինչպե՞ս է այդ անձը ազդել ձեզ վրա իր Քրիստոսանման վարքով:

**Ծառայել գուգրնկերոջ հետ**

Հիշեցրեք ուսանողներին, որ միսիոներներին միշտ հանձնարարվում է ծառայել գուգրնկերոջ հետ: Խնդրեք ուսանողներին թվարկել, թե ինչ հնարավոր դժվարություններ կարող են առաջանալ, երբ ծառայում ես գուգրնկերոջ հետ: Ուսանողներին տվեք հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են միսիոներները ծառայում ընկերակցությամբ:

Բարձրաձայն կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 42.6 և 2 Կորնթացիս 13.1 հատվածները, որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել, որ միսիոներները ծառայում են գուգրնկերներով, քանի որ դա Տիրոջ կողմից տրված օրենք է: Այնուհետև հարցրեք.

- Ինչո՞ւ է կարևոր, որ միսիոներները ցուցաբերեն Քրիստոսանման հատկանիշներ և վարք իրենց գուգրնկերների հանդեպ: (Տես ՎևՈւ 38.24–25, 27):

Յուցադրեք Առաջին Նախագահությունից Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստի (1920-2007) հետևյալ խոսքը, և որևէ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ այն դասարանի համար.



«Երբեք թույլ մի տվեք, որ հակառակություն լինի ձեր ընկերակցությունում: Ձեր միսիոներ գուցենկերներից ոմանք ձեր կյանքի ընթացքում կլինեն ձեր լավագույն ընկերները: Եղեք այնպիսի գուցենկեր, ինչպիսին կցանկանայիք, որ ձեր հետ լինեն: Եսասեր մի եղեք գուցենկերների հետ ձեր հարաբերություններում: Երբ հակառակություն կա, Տիրոջ Հոգին կհեռանա, անկախ նրանից, թե ով է մեղավոր:

Յուրաքանչյուր անհատականություն եկք՝ ուրույն գործություններով ու տաղանդներով, տարբերվող աշխարհի ցանկացած այլ անձից: Յուրաքանչյուր ունենք թույլ կողմեր: Ներդաշնակ գուցենկերության մեջ կա թիմային աշխատանք՝ որտեղ մեկը թույլ է, մյուսը՝ ուժեղ» (“What I Want My Son to Know before He Leaves on His Mission,” Ensign, May 1996, 41):

- Ըստ Նախագահ Ֆաուստի՝ ի՞նչ տեղի կունենա, երբ միսիոներ գուցենկերների մեջ հակառակություն կա: (Տես նաև 3 Նեփի 11.29):
- Ինչպե՞ս կարող են հատկանիշները, որոնք մենք ուսումնասիրում ենք, օգնել գուցենկերներին խուսափել հակառակությունից և ավելի ներդաշնակ հարաբերություններ ունենալ: (Օգնեք ուսանողներին ճանաչել այս սկզբունքը, որ **երբ միսիոներ գուցենկերները ցուցաբերում են Քրիստոսանման հատկանիշներ և վարք՝ մեկը մյուսի նկատմամբ, նրանք օրհնվում են Հոգով:**)
- Ինչո՞ւ է ավելի արդյունավետ դառնում ավետարանի քարոզումը, եթե ընկերակցության մեջ ներդաշնակ հարաբերություններ են:

Կարող եք բարձրաձայն կարդալ առաջին հինգ պարբերությունները “Your Companion” ենթաբաժնից (“Relationships with Others” բաժնում) Missionary Handbook (էջեր 29–30): Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս եք օգտագործել այս պարբերություններում նկարագրվող սկզբունքը ընտանիքի անդամի կամ ընկերոջ հետ ձեր հարաբերություններն ամրապնդելու համար:

Եզրափակեք՝ հրավիրելով ուսանողներին բերել իրենց վկայությունները Քրիստոսի և Նրան նմանվելու կարևորության մասին:

### Գործելու հրավեր

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ Քրիստոսանման հատկանիշներ զարգացնելու գործընթացը պահանջում է Տիրոջ օգնությունը և անձնական մեծ ջանքեր: Խրախուսեք ուսանողներին կատարել առաջարկված հետևյալ վարժություններից մեկը կամ մի քանիսը որպես մի ջանք՝ Փրկիչին նմանվելու գործում.

- Ընտրեք Քրիստոսանման հատկանիշներից մեկը՝ գլուխ 6 *Քարոզիր Իմ Ավետարանը* ձեռնարկից և ուսումնասիրեք այն, օգտվելով նաև սուրբ գրություններից, այդ թվում Աստվածաշնչի բառարանից, Թեմատիկ Ուղեցույցից, ցուցիչից և այլն: Կազմեք մի ծրագիր՝ ավելի լիարժեք ձևով այդ հատկանիշը ձեր կյանքում զարգացնելու համար: Կիսվեք այդ ծրագրով ձեր ծնողների կամ վստահելի մի ընկերոջ հետ:
- Մտածեք, թե ինչ կարող եք անել՝ ավելի Քրիստոսանման լինելու համար ձեր ընտանիքի, ընկերների (թե անդամների և թե՛ ոչ անդամների) և

Եկեղեցու ղեկավարների հանդեպ: Գրեք ձեր ունեցած հատուկ գաղափարները և այս շաբաթ գործեք ըստ դրանց:

- Մի քանի նպատակներ դրեք, թե ինչպես կարող եք պատրաստվել խուսափելու հակառակությունից ձեր ապագա միսիոներ զուգրնկերոջ հետ:
- Հարմար պահեր գտեք ձեր սերն արտահայտելու ձեր ընտանիքի անդամներին ու ընկերներին և նրանց ծառայելու համբերությամբ ու գլխությամբ:

# 10

## Փրկության ծրագրի ուսուցում (Մաս 1)

### Նախաբան

Փրկության ծրագիրը Երկնային Հոր ծրագիրն է Իր զավակների երջանկության համար: Այն կենտրոնացած է Հիսուս Քրիստոսի Քավության վրա և ուսուցանում է, թե ինչու է Քավությունն անհրաժեշտ: Երկնային Հոր ծրագիրը նաև պատասխանում է «Որտեղի՞ց եմ եկել:», «Ո՞րն է իմ նպատակը կյանքում», և «Ո՞ւր

եմ գնալու մահից հետո» հարցերին: Ապագա միսիոներները պետք է ունենան հստակ ըմբռնում փրկության ծրագրի վարդապետության վերաբերյալ և պատրաստ լինեն բացատրելու այն պարզորեն և վկայեն դրա մասին զորությամբ:

### Նախապատրաստություն

- Ուսումնասիրեք 2 Նեփի 2.22–25, Ալմա 12.32–34, Մովսես 1.39:
- Ուսումնասիրեք *Քարոզիչ Իմ Ավետարանը*, էջեր 52-54:
- Պատրաստվեք ցույց տալ «God Is Our Father» տեսանյութը (3:05), որը մատչելի է LDS.org կայքում:
- Պատրաստվեք ցուցադրել «Փրկության ծրագիրը» տեսանյութը (4:30), որը մատչելի է LDS.org-ում:


### Ուսուցման առաջարկներ

#### Նախաներկային կյանք Մեզ համար Աստծո նպատակն ու ծրագիրը

Հանձնարարեք դասարանին երգել «Աստծո զավակն եմ» օրհներգը որպես հոգևոր երեկոյի բացող մաս: Դասը սկսելու համար, հանձնարարեք ուսանողներին լուռ վերանայել «Աստծո զավակն եմ» օրհներգի խոսքերի առաջին տունը և խնդրեք նրանց որոնել այն վարդապետություններն ու սկզբունքները, որոնք գտնվում են երգի խոսքերում:

*Չափակն եմ ես Աստծո,  
Նա է ինձ կրանք տվել,  
Տվել է ինձ տուն երկրային  
Եվ ծնողներ բարի:  
Առաջնորդիդ, քայլիդ ինձ հետ,  
Որ ուղին գտնեմ:  
Մովորեցրու՝ ինչ անել,  
Որ մի օր Քեզ հասնեմ:*

*(«Աստծո զավակն եմ», Հիմներ և մանկական երգեր, էջ 58)*

 **Ուշադրություն.** *Որպես մեկ այլ տարբերակ, գուցե սկսեք դասը ցույց տալով «God Is Our Father» (3:15) տեսանյութը: Մի քանի րոպե քննարկմանը հատկացնելուց հետո, հանձնարարեք դասարանին երգել «Աստծո զավակն եմ» օրհներգը:*

Մի քանի րոպեից հրավիրեք ուսանողներին բացատրել բոլոր կարևոր վարդապետությունները կամ սկզբունքները, որոնք նրանք գտան օրհներգում: Անհրաժեշտության դեպքում տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ են այս երգի տողերն արտահայտում մեր կյանքի մասին նախքան մեր երկիր գալը:

- Ի՞նչ են այս երգի տողերն արտահայտում մեր կյանքի նպատակի մասին այստեղ երկրի վրա:

Ասեք ուսանողներին, որ որպես միսիոներներ, նրանք հնարավորություն կունենան ուսուցանելու կյանքի նպատակի մասին: Թող ուսանողներից մեկը բարձրաձայն կարդա առաջին երկու պարբերությունները, որը կոչվում է «Նախաերկրային կյանք Աստծո նպատակը և ծրագիրը մեզ համար» բաժնից, էջ 52 *Քարոզիչ Իմ Ավետարանը ձեռնարկ*:

Կարող եք նաև կիսվել Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյո Զ. Փաքերի հետևյալ խոսքերով.



«Ավելի խորը ճշմարտություն չի փոխանցվել մեզ վերականգնման ժամանակ, քան Նախամահականացու գոյության գիտելիքն է: Ոչ մի այլ եկեղեցի չգիտի կամ չի ուսուցանում այդ ճշմարտությունը: Վարդապետությունը տրված է միայն ուրվագծային տեսքով, բայց կողմնակի փաստերը բավական հաճախ են կրկնվում հայտնություններում, որպեսզի մեզ հավաստիացնեն որոշակի հիմնարար ճշմարտությունների մեջ» (Our Father’s Plan [1984], 14).

**Հարցրեք.**

- Ինչպե՞ս կարող է մեր նախամահականացու կյանքի մասին իմանալը և որ մենք ապրել ենք մեր Երկնային Հոր հետ որպես ոգեղեն զավակներ՝ ավելի մեծ իմաստ տալ մեր կյանքին: (Մինչ ուսանողները պատասխանում են, դուք գուցե ընտրեք շեշտել այս սկզբունքը. **Երբ մենք հասկանում ենք, որ Երկնային Հոր զավակներն ենք, մենք ավելի մեծ իմաստ ենք գտնում երկրի վրա մեր կյանքում:**)



Որպեսզի օգնեք խորացնել այս սկզբունքի վերաբերյալ նրանց հասկացողությունը, ցույց տվեք «God Is Our Father» տեսանյութը (3:05), և ուսանողներին լսել տվեք այն օրհնությունները, որոնք նկարագրվում են տեսանյութի մարդկանց կողմից:

Տեսանյութը դիտելուց հետո, ուսանողներին ուղղեք հետևյալ հարցերը.

- Որո՞նք էին տեսանյութի մարդկանց կողմից նկարագրված որոշ օրհնությունները, որ մարդիկ ստացել են գիտե՞նալուց, որ իրենք Աստծո զավակներն են:
- Ինչպե՞ս է գիտելիքը, որ դուք Աստծո զավակն եք, օգնել ձեզ գտնել ավելի մեծ իմաստ ձեր կյանքում:

Մի քանի ուսանողների խնդրեք բարձրաձայն հերթով կարդալ վերջին չորս պարբերությունները էջ 52, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկից: Հրահանգեք դասարանին որոնել վարդապետություններ և սկզբունքներ, որոնք ուսուցանում են, թե որն է Աստծո նպատակը Իր զավակների համար և ինչպե՞ս է փրկության ծրագիրը իրականացնում այդ նպատակը: Այնուհետև հարցրեք.

- Ո՞րն է Իր զավակների գործելու համար Աստծո նախագծած ծրագիրը: (Իրենց պատասխաններում ուսանողները գուցե ներառեն այն վարդապետությունը, որ **փրկության ծրագիրը դարձնում է հնարավոր բոլոր Աստծո զավակների համար վայելել անմահության օրհնությունները և հավերժական կյանքը**: Եթե կարիք կա պարզաբանման, դուք կարող եք դիմել *անմահության* և *վեհացման*

**Անգիր սերտել** Անգիր սերտելը կարող է օգնել ուսանողներին իմանալ և սիրել սուրբ գրությունների ընտրված հատվածները: Դա նաև մեծացնում է հավանականությունը, որ Սուրբ Հոգին կբերի այս հատվածները նրանց հիշողության մեջ անհրաժեշտության դեպքում (տես Հովհաննես 14.26): Երբ դուք հանձնարարեք ուսանողներին անգիր սերտել սուրբ գրություններից հատվածներ, ուշադիր եղեք հարմարեցնել ակնկալիքները յուրաքանչյուր ուսանողի ունակությունների և հանգամանքների հետ: Ուսանողները չպետք է անհարմար դրության մեջ հայտնվեն կամ ճնշված զգան, եթե դժվարանում են անգիր սովորել հատվածները:

սահմանումներին, էջ 64, *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկ: Շեշտեք, որ հավերժական կյանքն այն կյանքն է, որով ապրում է Աստված):

Հասկանալու համար այդ վարդապետությունը, թող նրանք կարդան և անգիր սերտեն Մովսես 1.39: Մի քանի ընդհանուր այս հատվածը սերտելուց և արտասանելու պրակտիկա ձեռք բերելուց հետո, հարցրեք.

- Ինչպե՞ս կարող է ունկնդիրներին ուսուցանելը, որ Աստծո նպատակն է իրականացնել մեր անմահությունը և հավերժական կյանքը, ազդել այն ընտրությունների վրա, որոնք նրանք կատարում են իրենց ամենօրյա կյանքում:

Ուսանողներին տրամադրեք մի պահ՝ խորհելու միսիոներների դերի մասին, որպես Երկնային Հոր օգնականների Նրա աշխատանքում՝ «մարդու անմահությունն ու հավերժական կյանքն իրականացնելու» համար (Մովսես 1.39): Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց մտքերով մեկ ուրիշ ուսանողի հետ կամ գրել իրենց մտքերը ուսումնասիրության օրագրում:

**Մեր ֆիզիկական մարմինների ստեղծումը**

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ բաժինը, որը կոչվում է «Արարում» էջ 53 *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկ: Հրահանգեք ուսանողներին փնտրել Արարման կարևորությունը Աստծո փրկության ծրագրում: Այնուհետև հարցրեք.

- Ինչո՞ւ ենք կարծում, որ երկրի ստեղծումը Աստծո փրկության ծրագրի կարևոր մասն է հանդիսանում: (**Որպեսզի առաջադիմեինք և դառնայինք Աստծո նման, մեզանից յուրաքանչյուրը պետք է գար երկիր՝ ձեռք բերելու մարմին և ստուգվեր մի փորձաշրջանի ընթացքում:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ ֆիզիկական մարմին ստանալու կարևորությունը, ցուցադրեք և կարդացեք բարձրաձայն հետևյալ միտքը, որն արտահայտել է Քույր Սյուզան Թանները, երբ նա ծառայում էր որպես Երիտասարդ կանանց գերագույն նախագահ: Հանձնարարեք ուսանողներին փնտրել, թե ինչու էինք բոլորս հուզված ֆիզիկական մարմին ստանալու առիթով:



«Նախամահականացու ոլորտում մենք սովորեցինք, որ մարմինը Աստծո երջանկության մեծ ծրագրի մի մասն էր հանդիսանում մեզ համար: Ինչպես նշվում է ընտանիքի վերաբերյալ հայտարարության մեջ. «Հոգևոր որդիներն ու դուստրերը ճանաչում և երկրպագում էին Աստծուն՝ որպես իրենց Հավերժական Հայր, և ընդունում էին Նրա ծրագիրը, ըստ որի Նրա զավակները կարող էին ձեռք բերել ֆիզիկական մարմին և աշխարհիկ փորձ կուտակելին դեպի կատարելություն առաջ ընթանալու և որպես հավերժական կյանքի ժառանգներ իրենց աստվածային ճակատագիրն ի վերջո իրականացնելու համար»: Փաստորեն, մենք «ուրախությամբ գովաբանում էինք» (Յոբ 38.7) այս ծրագրի մի մասը լինելու համար:

Ինչո՞ւ էինք մենք այդպես հուզված: Մենք հասկանում էինք մեր մարմինների վերաբերյալ հավերժական ճշմարտությունները: Մենք գիտեինք, որ մեր մարմինները լինելու էին Աստծո պատկերով: Մենք գիտեինք, որ մեր մարմինները տևավորելու էին մեր ոգիները: Մենք գիտեինք նաև, որ մեր մարմինները ենթակա կլինեն ցավի, հիվանդության, հաշմանդամության և գայթակղության: Բայց մենք հոժար էինք, նույնիսկ անհամբեր, ընդունելու այս մարտահրավերները, որովհետև մենք գիտեինք, որ միայն ոգին տարրերի հետ անքակտելիորեն միացած կարող էին առաջընթաց ապրել՝ դառնալու մեր Երկնային Հոր նման (տես Վնու 130.22) և «ստանալ ուրախության լիություն» (Վնու 93.33)» («Մարմնի սրբությունը» *Ensign* կամ *Լիա՛հոնա*, նոյ. 2005, 13):



Այնուհետև հարցրեք.

- Նախամահկանացու աշխարհում ի՞նչ ճշմարտություններ մենք հասկացանք, որոնք մեզանում ցանկություն առաջացրեցին՝ երկիր գալու և ֆիզիկական մարմին ստանալու:.
- Ինչո՞ւ էինք մենք հոժար և անհամբեր սպասում երկիր գալուն, չնայած որ մենք գիտեինք, որ հանդիպելու էինք դժվարին մարտահրավերների մահկանացու կյանքում:

Ժամանակ տվեք ուսանողներին խորհել հետևյալ հարցի շուրջ. Ինչպե՞ս կարող եք բացատրել ունկնդրին, թե ինչպես է մեր մահկանացու փորձառությունն օգնում մեզ առաջադիմել՝ դառնալով մեր Երկնային Հոր նման: Եթե ժամանակը ներում է, հրավիրեք նրանց ուսումնասիրել սուրբ գրությունների հղումները Սուրբ գրությունների ուսումնասիրություն վանդակում, «Արարում» բաժնից հետո, էջ 53, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ: Մոտ մեկ րոպեից հետո, հանձնարարեք ուսանողներին դիմել իրենց կողքին նստածին և բացատրել հարցի իրենց պատասխանը:

### Ազատ կամքը և Ադամի ու Եվայի Անկումը

Գրատախտակին գրեք հետևյալ վերնագրերը.

<p><i>Ադամն ու Եվան ի՞նչ կարող էին անել Պարտեզում</i></p>	<p><i>Ադամն ու Եվան ի՞նչ չէին կարող անել Պարտեզում</i></p>
---	--

Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել 2 Նեփի 2.22–25-ը և «Ազատ կամքն ու Ադամի և Եվայի անկումը» բաժինը՝ էջ 53, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ: Երբ նրանք կարդան, հանձնարարեք դասարանի կեսին ցուցակ կազմել, թե ինչ Ադամն ու Եվան *կարող էին* անել Եդեմի պարտեզում (նրանք կարող էին հավերժ ապրել անմեղ վիճակում, նրանք կարող էին օգտագործել իրենց սեփական ազատ կամքը՝ որոշումներ ընդունելու համար):

Հանձնարարեք դասարանի մյուս կեսին ցուցակ կազմել թե Ադամն ու Եվան ինչ *չէին կարող* անել Եդեմի պարտեզում (նրանք չէին կարող առաջընթաց ունենալ կամ զգալ ընդդիմություն, նրանք չէին կարող ճաշակել ուրախություն կամ վիշտ, կամ ցավ ու թշվառություն, նրանք չէին կարող մեղանչել, նրանք չէին կարող տանել հիվանդություն կամ տառապանք, նրանք չէին կարող երեխաներ ունենալ): Մի քանի րոպե հետո խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով: Մինչ ուսանողները պատասխանում են, դուք խնդրեք դասարանի մի անդամի գրել ուսանողների պատասխանները գրատախտակին:

Ուսանողների ուշադրությունը հրավիրեք *Ֆիզիկական մահ և հոգևոր մահ* արտահայտությունների վրա, էջ 54, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ: Հավանաբար բոլոր ուսանողները կհասկանան, որ ֆիզիկական մահը վերաբերում է ֆիզիկական մարմնի մահին: Բացատրեք, որ «հոգևոր մահ» արտահայտությունը վերաբերում է Աստծո ներկայությունից բաժանված լինելուն: Երկու մահերն էլ Ադամի անկման հետևանքն էին: Միայն Հիսուս Քրիստոսի Քավությանը է, որ մենք կարող ենք հաղթահարել երկու մահերն էլ:

Դուք կարող եք խորացնել ուսանողների հասկացողությունը Անկման կարևորության վերաբերյալ՝ ցուցադրելով Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի (1876–1972) հետևյալ մեջբերումը և հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ այն բարձրաձայն դասարանի համար:



«Երբ Ադամը վտարվեց Եդեմի պարտեզից, Տերը պատժեց նրան: Որոշ մարդիկ նայում են այդ պատժին, որպես սոսկալի մի բանի: Դա այդպես չէր, դա օրհնություն էր: Ես չգիտեմ տույնիսկ, թե դա կարո՞ղ է իրոք համարվել քողարկված պատիժ:

Որպեսզի մարդկությունը ձեռք բերի փրկություն և վեհացում, անհրաժեշտ է նրանց համար ձեռք բերել մարմիններ այս աշխարհում, և անցնել փորձառությունների և ուսումնառության միջով, որոնք գտնվում են միայն մահկանացու կյանքում: Տերն ասել է, որ Իր մեծ գործը և փառքն է «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» [Մովսես 1:39]: Առանց մահկանացու կյանքի այս մեծ օրհնությունը չէր կարող իրականացվել: Այդ պատճառով աշխարհներ են ստեղծվում և բնակեցվում Աստծո զավակներով, և նրանց տրվում է արտոնություն անցնել մահկանացու գոյությամբ, ունենալով ազատ կամքի մեծ պարզևր: Այս պարզևի միջոցով նրանք ընտրում են բարին կամ չարը, և այսպիսով ստանում պարզև ծառայության համար գալիք հավերժություններում: Ադամի օրինազանցության պատճառով մենք այստեղ ենք՝ մահկանացու կյանքում: ...

Մարդու անկումը եկավ որպես քողարկված օրհնություն և հանդիսացավ ավելի շուտ միջոց առաջ տանելու Տիրոջ նպատակները մարդու զարգացման գործում, քան միջոց նրանց խոչընդոտելու համար» (Doctrines of Salvation, comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 1:29):

Այնուհետև հարցրեք.

- Ինչո՞ւ է տեղին դիտելը Ադամի և Եվայի անկումը որպես Աստծո փրկության ծրագրի կենսական մասը: **(Ադամի և Եվայի անկումը թույլ տվեց Աստծո հոգևոր երեխաներին ձեռք բերել ֆիզիկական մարմիններ և նրանց համար հնարավոր դարձրեց զարգանալը և Նրա նման դառնալը:)**

Հրավիրեք ուսանողներին վերանայել «Ուսուցանել անկման մասին» վանդակը՝ *Քարոզիր Իմ Ավետարանը* ձեռնարկի 54 էջում: Այնուհետև հանձնարարեք ուսանողներին բացատրել Անկման մասին վարդապետությունը իրենց իսկ խոսքերով՝ իրենց կողքին նստած ուսանողին:

### Մեր կյանքը երկրի վրա



Ցույց տվեք «The Plan of Salvation» տեսանյութը (4:30) կամ հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Զ. Փաքերի խոսքերից հետևյալ մեջբերումը: Հանձնարարեք ուսանողներին փնտրել, թե ինչպես է երեք գործողությամբ ներկայացումը խորհրդանշում է փրկության ծրագիրը.



«Փրկագնման ծրագիրը՝ իր երեք բաժիններով, կարելի է համեմատել երեք գործողությամբ մեծ ներկայացման հետ: Գործողություն 1-ը կոչվում է «Նախաերկրային կյանք»: Սուրբ գրությունները նկարագրում են այն որպես մեր առաջին վիճակ (տես Նուդա 1.6, Աբրահամ 3.26, 28): Գործողություն 2-ը, ծննդից մինչև հարության պահը, «երկրորդ վիճակն» է: Իսկ գործողություն 3-ը կոչվում է «Կյանք մահից հետո» կամ «Հավերժական կյանք»:

Մահկանացու կյանքում, մենք նման ենք դերասանների, ովքեր մտնում են թատրոն հենց որ վարագույրը բարձրանում է երկրորդ գործողությունում: Մենք բաց ենք թողել գործողություն 1-ը:

Բեմադրությունն ունի շատ սյուժեներ և ենթասյուժեներ, որոնք միահյուսվում են, դժվարացնելով հասկանալը, թե ով ում հետ է կապված և ինչը ինչի հետ է կապված, ովքեր են հերոսները և ովքեր են ոճրագործները: Գնալով բարդանում է, որովհետև մենք պարզապես հանդիսատեսներ չենք, մենք թատերախմբի անդամներ ենք, բեմի վրա, այդ ամենի մեջտեղում:

Որպես հավերժական ծրագրի մաս, մեր նախամահկանացու կյանքի հիշողությունը, գործողություն 1-ը, ծածկված է վարագույրով: Երբ մտնում ենք մականացու կյանք, գործողություն 2-ի սկզբում առանց հիշելու գործողություն 1-ը, զարմանալի չէ, որ դժվար է հասկանալ, թե ինչ է կատարվում: ...

Եթե դուք անկալում եք գտնել միայն թեթևություն, խաղաղություն և երանություն գործողություն 2-ում, դուք անկասկած կհիասթափվեք: Դուք քիչ բան կհասկանաք, թե ինչ է կատարվում և ինչո՞ւ են թույլատրվում բաներ, ինչպիսիք կան:

Հիշեք սա: Այս տողը. «Եվ նրանք բոլորն ապրեցին երջանիկ հավերժ», երբեք չի գրվել գործողություն 2-ի համար: Այդ տողը վերաբերում է երրորդ գործողությանը, երբ առեղծվածները լուծվում են և ամեն ինչ ճիշտ է դարձվում: ...

Գոյություն ունի սցենար այս մեծ ներկայացման համար, դարերի դրաման: Այն շարադրում է, թեպետ համառոտ ձևով, թե ինչ է պատահել գործողություն 1-ում՝ նախամահկանացու կյանքում: Չնայած չկան մեծ քանակությամբ մանրամասներ, սցենարը հստակեցնում է այդ բոլորի նպատակը և այն բավականաչափ բացահայտում է բովանդակությունը՝ օգնելու ձեզ պատկերացնել, թե իրենից ինչ է ներկայացնում կյանքը:

Այդ սցենարը, ինչպես դուք արդեն գիտեք, սուրբ գրություններն են՝ հայտնությունները: Կարդացեք դրանք: Ուսումնասիրեք դրանք: Դրանք ասում են ձեզ, թե ինչ է մարդը, ինչո՞ւ է Աստված «հիշում նրան», և թե ինչու մեզ. «մի քիչ ցածրացրեց հրեշտակներիցը» և, այնուամենայնիվ, «փառքով ու պատվով ... պսակեց» (Սաղմոս 8.4-5):

Սուրբ գրությունները խոսում են ճշմարտությունը: Դրանցից դուք կարող եք բավականաչափ սովորել՝ բոլոր երեք գործողությունների մասին՝ ստանալու աջակցություն և ուղղություն ձեր կյանքում: Դրանք բացահայտում են, որ «դուք նույնպես սկզբում Հոր մոտ էիք. այն էիք, որ Հոգի է, այսինքն՝ ճշմարտության Հոգին:

Եվ ճշմարտությունը գիտություն է բաների մասին, ինչպես որ կան, և ինչպես որ կային, և ինչպես որ կլինեն» (ՎնՈւ 93.23-24)» (Boyd K. Packer, "The Play and the Plan" [Church Educational System fireside, May 7, 1995], 2-3; si.lds.org):

Ապա ուղղեք հետևյալ տիպի հարցեր.

- Ինչպե՞ս է երեք գործողությամբ ներկայացումը խորհրդանշում փրկության ծրագրի որոշ էլեմենտներ:
- Համաձայն այս համանմանության, ինչո՞ւ են շատ մարդիկ դժվարանում հասկանալ կյանքի նպատակը երկրի վրա:
- Համաձայն այս համանմանության, որտե՞ղ մենք կարող ենք գտնել այս մեծ երեք գործողությամբ ներկայացման սցենարը:
- Ինչպե՞ս կարող են սուրբ գրություններն օգնել Աստծո զավակներին ավելի լավ հասկանալ իրենց նպատակը Աստծո ծրագրում:

Բացատրեք ուսանողներին, որ երբ միսիոներներն ուսուցանում են փրկության ծրագիրը, նրանք օգնում են ունկնդիրներին ավելի լավ հասկանալ մահկանացու կյանքի նպատակը և թե ինչպես մենք կարող ենք վերադառնալ կրկին ապրելու Երկնային Հոր հետ (տես Ալմա 12.32-34): Հանձնարարեք ուսանողներին կարդալ բաժինը, որը կոչվում է «Մեր կյանքը երկրի վրա» էջ 54, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ: Երբ ուսանողները բավականաչափ ժամանակ են ունեցել կարդալու համար, հարցրեք.

- Ինչպե՞ս կբացատրեիք այս կյանքի նպատակը մեկ կամ երկու նախապատրաստությամբ:

Ասեք ուսանողներին, որ ունկնդիրների համար կարևոր է հասկանալ, որ մեր նախապատրաստվելը Աստծո ներկայություն վերադառնելու համար, կախված է այն որոշումներից, որոնք մենք կատարում ենք երկրի վրա մեր կյանքի ընթացքում: Աստծո պատվիրաններին հետևելու որոշումները կարող են օգնել մեզ ավելի մոտենալ Երկնային Հորը, մինչդեռ Աստծո պատվիրանները խախտելը մեզ ետ է պահում Նրա ներկայություն վերադառնալուց: Գրատախտակին գրեք հետևյալը.

*Մեղքի հետևանքները:*

Այնուհետև հարցրեք.

- Որո՞նք են մեղքի հետևանքները: (Անհրաժեշտության դեպքում խրատախտակի նախապատրաստվելու վերանայել երկրորդ պարբերությունը «Մեր կյանքը երկրի վրա» էջ 55, *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկ: (Չնայած նրանք կարող են թեթևակիորեն օգտագործել տարբեր խոսքեր, ուսանողները պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունները. **Մեղքը տանում է դեպի դժբախտություն և առաջացնում է հանցանքի և ամոթի զգացումներ:** Այն դարձնում է մեզ անմաքուր և անարժան՝ մտնելու Աստծո ներկայություն: Մեղքը մեզ հետ է պահում մեր Երկնային Հոր մոտ վերադառնալուց, մինչև մենք չներվենք:)
- Մեղքի հետևանքները հասկանալը ինչպե՞ս կօգնի ունկնդիրներին նախապատրաստվել՝ ընդունելու Քավության ուղերձը:

Հիշեցրեք ուսանողներին, որ այս կյանքում մենք բոլորս տանում ենք հոգևոր մահ, մենք առանձնացված ենք Աստծո ներկայությունից: Հարցրեք ուսանողներին.

- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի ավետարանը մեզ օգնում հաղթահարել հոգևոր մահը և վերադառնալ Աստծո ներկայություն: (Երբ ուսանողները պատասխանեն, գուցե հարցնեք նրանց, թե ինչպե՞ս է հավատքն առ Հիսուս Քրիստոս, ապաշխարությունը, ընկղմամբ մկրտությունը և Սուրբ Հոգու պարզևր՝ յուրաքանչյուրն օգնում մեզ հաղթահարել Անկման հետևանքները և նախապատրաստվել վերադառնալու Աստծո ներկայություն:)

Կարևոր է, որ ուսանողներին հնարավորություն տրվի պրակտիկա ձեռք բերել՝ բացատրելով փրկության ծրագրի էլեմենտները, որոնք ընդգրկված են այս դասում: Սա կօգնի նրանց ավելի լավ հասկանալ վարդապետությունը և սկզբունքները, որոնք նրանք կուսուցանեն ունկնդիրներին:

Ուսանողներին բաժանեք զույգերի: Բավականաչափ ժամանակ հատկացրեք զույգերին պատրաստվելու ուսուցանել հինգ-տասը ընդհանուր դասեր՝ երկրի վրա մեր կյանքի նպատակի մասին: Հանձնարարեք ուսանողներին վերանայել նյութերը 54–55 էջերում, *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկից, ներառյալ սուրբ գրությունների հատվածները՝ Սուրբ Գրությունների ուսումնասիրության վանդակներից: Եթե մատչելի է, նրանք կարող են նաև ուսումնասիրել 2–9 էջերը միսիոներական գրքույկից, որը կոչվում է *Փրկության ծրագիրը*: Երբ ուսանողները պատրաստվում են, շրջեք դասարանով և օգնեք նրանց պատրաստել պարզ և համառոտ բացատրություններ Փրկության

ծրագրի էլեմենտների մասին: Վերահավաստեք, որ իրենց դասի գործությունը կավելանա, եթե օգտագործեն սուրբ գրությունների հատվածներն իրենց ուղերձում և վկայեն վարդապետությունների և սկզբունքների մասին, որոնք իրենք ուսուցանում են:

Նյութերը վերանայելու և մի կարճ դաս պատրաստելու համար ուսանողներին բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, հանձնարարեք յուրաքանչյուր ուսանողական զույգին ուսուցանել մյուս զույգին: Այնուհետև թող նրանք փոխվեն դերերով, որպեսզի յուրաքանչյուր զույգ մեկ անգամ ուսուցանելու հնարավորություն ունենա: Երբ յուրաքանչյուր զույգն ավարտի ուսուցման փորձառությունը, հանձնարարեք նրանց քննարկել հետևյալն ուսանողների հետ, ում ուսուցանել են.

- Ի՞նչն ուսուցիչները լավ արեցին:
- Ո՞ր մեթոդները կարող էին ներկայացումն ավելի արդյունավետ դարձնել:

Երբ յուրաքանչյուր զույգ իրենց ուսուցումը կիրառելու և գնահատելու հնարավորություն կունենա, հրավիրեք դասարանի անդամներին կիսվել իրենց փորձառություններից գաղափարներով՝ դասարանի մնացած մասի հետ:

Ավարտեք դասը, գրելով հետևյալ դրույթները գրատախտակին և խնդրեք ուսանողներին մտածել, թե ինչպես այս սկզբունքները կարող են մեծացնել միսիայում ծառայելու նրանց ցանկությունը.

*Յուրաքանչյուր անձնավորություն, ում հանդիպում եք, Երկնային Հոր զավակն է և սիրված է Նրա կողմից:*

*Յուրաքանչյուր մարդ, ում հանդիպում եք, կրում է դժբախտության բեռ, որը գալիս է մեղքերից, որոնք չեն լուծվել Քրիստոսի մաքրագործող Զավության միջոցով:*

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ են նրանք զգում, երբ խորհում են այս գաղափարների շուրջ: Ավարտեք դասը, հարցնելով ուսանողներին, թե նրանցից ով կցանկանա վկայություն բերել դասարանին փրկության ծրագրի հետ կապված վարդապետությունների վերաբերյալ:

**Շարունակել**

**բարելավել:** Ինչպես ուսուցիչները, այնպես էլ միսիոներները պետք է սովորեն արդյունավետ ուսուցման սկզբունքներ և տիրապետեն արդյունավետ ուսուցման հմտությունների՝ տող առ տող ուսումնասիրության, հավատքի, կիրառման և փորձառության միջոցով: Յուրաքանչյուր միսիոների նպատակը պետք է լինի որքան հնարավոր է լավ ներկայացնել աշխարհի Փրկիչին և լինել «Աստուածանից եկած վարդապետ» (Հովհաննես 3.2): Նրանք, ովքեր կանչում են Տիրոջն ամեն օր, կզգան Նրա օգնությունը, երբ ձգտեն բարեփոխվել:

**Գործելու հրավերներ**

Հրավիրեք ուսանողներին խորացնել իրենց հասկացողությունը փրկության ծրագրի վերաբերյալ և բարելավել իրենց ուսուցանելու հմտությունները՝ ընտրելով հետևյալ միջոցառումներից մեկը՝ դասարանից դուրս աշխատելու համար.

- Վերանայեք «Հիմնական սահմանումներ» բաժինը 64–65 էջերում՝ *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկ: Պրակտիկա ձեռք բերեք բացատրելով արտահայտություններից յուրաքանչյուր ձեր սեփական խոսքերով՝ օգտագործելով ճշմարտության պարզ ձևակերպումներ:
- Վերանայեք սուրբ գրությունների հատվածները, որոնք գտնվում են Սուրբ գրությունների ուսումնասիրության վանդակներում՝ էջեր 53-54 *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկում: Ընտրեք մեկ կամ երկու հատվածներ, որոնք դուք կցանկանայիք օգտագործել, երբ ուսուցանեք փրկության ծրագրի տարբեր մասերը և նշեք դրանք ձեր սուրբ գրություններում: Աշխատեք այս հատվածներից մեկը կամ ավելին պահել ձեր հիշողության մեջ:
- Մտեղծեք փրկության ծրագիրն ուսուցանելու մի ուրվագիծ: Աշխատեք օգտագործել դասի ծրագրի գաղափարները էջեր 60–61 *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկից որպես մեջբերում:
- Մտածեք, թե երբ է եղել, երբ փրկության ծրագրի գիտելիքն օրհնել է ձեր կյանքը: . Գրեք այդ փորձառության ամփոփումը ձեր ուսումնասիրության օրագրում, կամ կիսվեք դրանով որևէ ընկերոջ հետ:

# Փրկության ծրագրի ուսուցում (Մաս 2)

# 11

## Նախաբան

Փրկության ծրագիրն ապահովել է Փրկիչ՝ հաղթահարելու Ադամի Անկման հետևանքները: Փրկիչի Քավության միջոցով մենք կարող ենք հաղթահարել մահը, մեղքը և վիշտը: Բացի այդ մենք հարություն կառնենք և արդարները կվերադառնան Աստծո ներկայություն և կդառնան Նրա նման: Ապագա

միսիոներները պետք է ունենան փրկության ծրագրի վարդապետության հստակ ըմբռնում և պատրաստ լինեն՝ բացատրելու այն հստակորեն և վկայեն դրա մասին զորությամբ:

## Նախապատրաստություն

- Ուսումնասիրեք Եսայիա 53.3–5, 1 Կորնթացիս 15.20–22, Ավմա 7.11–13, Ավմա 11.42–44, Ավմա 34.8–9, և Վարդապետություն և Ուխտեր 19.15–19:
- Ուսումնասիրեք *Քարոզիր իմ Ավետարանը*, էջեր 55–59:
- Պատրաստվեք ցուցադրել «For God So Loved the World» (4:48) տեսանյութը, որը մատչելի է [LDS.org](http://LDS.org)-ում:

## Ուսուցման առաջարկներ

### Հիսուս Քրիստոսի Քավությունը

Նախքան դասի սկսվելը հետևյալը գրեք գրատախտակին.

«[Հովհաննես 3.16-ը] ամփոփում է ողջ փրկության ծրագիրը» (Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի):

Երբ դասը սկսվի հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Հովհաննես 3.16 հատվածը և խորհել, թե ինչպես է այս հատվածն ամփոփում փրկության ամբողջ ծրագիրը:

Կարդալու և խորհելու համար բավարար ժամանակ ունենալուց հետո հրավիրեք ուսանողներին քննարկել, թե ինչպես է սուրբ գրության այս հատվածն ամփոփում փրկության ծրագիրը: Անհրաժեշտության դեպքում կարող եք կարդալ Հովհաննես 3.16 հատվածի վերաբերյալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակքոնկիի (1915–1985) խոսքերը.



«Սա երևի ամենահայտնի և ամենահզոր միակ հատվածն է, որ երբևէ ասվել է: Այն ամփոփում է ողջ փրկության ծրագիրը, միմյանց կապելով Հորը, Որդուն, Նրա քավող զոհաբերությունը, Նրա հանդեպ այն հավատքը, որը կանխատեսում է արդար գործեր և վերջում հավերժական վեհացում հավատարիմների համար» (Doctrinal New Testament Commentary, 3 vols. [1965–73], 1:144):

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ առաջին պարբերությունը «Քավություն» բաժնից, էջ 55, *Քարոզիր իմ Ավետարանը* ձեռնարկ: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս կձևակերպեիք մեկ նախադասությամբ այն, թե ինչու է Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերությունն այդքան կարևոր Աստծո

զավակներից յուրաքանչյուրի համար: (Ուսնողների պատասխանները պետք է ներառեն այն վարդապետությունը, որ **Հիսուս Քրիստոսի Քավությունը հնարավոր դարձրեց մեզ համար հաղթահարել Անկման հետևանքները:**)

- Որո՞նք են Անկման հետևանքները, որոնք մենք բոլորս ենք զգում: (Գլխավոր հետևանքներն են [1] ֆիզիկական մահը, [2] մեղքը և հոգևոր մահը [բաժանում Սատժուց], և [3] տառապանքն ու վիշտը:)

Երբ ուսանողները պատասխանեն, մտածեք գրի առնել նրանց պատասխանները գրատախտակին մի սյունակում՝ «Անկման հետևանքները» վերնագրի ներքո: Այնուհետև լրացրեք աջկողմյան սյունակը «Ինչպե՞ս է Քավությունը հաղթահարում անկման հետևանքները» վերնագրի ներքո (կամ ցուցադրեք այս աղյուսակը՝ օգտագործելով մեկ այլ մեթոդ):

<i>Անկման հետևանքները</i>	<i>Ինչպես է Քավությունը հաղթահարում Անկման հետևանքները</i>
<i>Ֆիզիկական մահ</i>	<i>Ա Կորնթացիս 15.20–22 Արմա 11.42-45 Քարոզիչ Իմ Ավետարանը, 55, «Քավություն», պարբերություն 2:</i>
<i>Մեղք և հոգևոր մահ</i>	<i>Արմա 34.8-9 ՎևՈւ 19.15-19 Քարոզիչ Իմ Ավետարանը, 55–56, «Քավություն» պարբերություններ 3–5</i>
<i>Տառապանք և կործանում</i>	<i>Եսայիա 53.3-5 Արմա 7.11-13 Քարոզիչ Իմ Ավետարանը, 55–56, «Քավություն», պարբերություն 6:</i>

Դասարանը բաժանեք եռյակների և հանձնարարեք յուրաքանչյուր եռյակին ուսումնասիրել երեք կարգերից մեկում գտնվող հղումները : Խնդրեք ուսանողներին պատրաստվել կիսվելու, թե ինչպես իրենց ուսումնասիրած նյութերը օգնեցին բացատրել, թե ինչպես է Հիսուս Քրիստոսի Քավությունը հաղթահարում Անկման հետևանքները: Ասեք ուսանողներին, որ սուրբ գրություններն այս աղյուսակում ներկայացնում են շատ հատվածներ, որոնք կարող էին օգտագործվել լուսաբանելու Քավության վարդապետությունը և որ նրանք պետք է ուսումնասիրեն լրացուցիչ հատվածներ՝ այս վարդապետությունը ավելի խորապես հասկանալու համար: Ուսումնասիրելու համար նրանց բավական ժամանակ տրամադրելուց հետո, հրավիրեք մի քանի ուսանողների դասարանի յուրաքանչյուր եռյակից բացատրել, թե ինչ նրանք ուսումնասիրեցին և ինչպես է դա օգնում մեզ հասկանալ, թե ինչպես Քավությունը կարող է օրհնել մեզ:



Ուսանողներին մի քանի թույլ տրամադրեք գրի առնելու համար մի քանի նախադասություններ, որոնք ամփոփում կամ ընդգծում են, թե ինչ իրենք կկամենային ուսուցանել որևէ ունկնդրի՝ Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Մի քանի թույլ անց որոշ ուսանողների խնդրեք դասարանի համար կարգալ իրենց գրածը:



Հրավիրեք Հոգու, որ օգնի ուսանողներին զգալ ճշմարտությունը և Հիսուս Քրիստոսի Քավության կարևորությունը՝ ցուցադրելով «For God So Loved the World» (4:48) տեսանյութը: Հանձնարարեք ուսանողներին փնտրել, թե ինչպես Հիսուս Քրիստոսը ցույց տվեց Իր սերն աշխարհի հանդեպ:

Տեսանյութի դիտումից հետո, ուղղեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ ուղիներով Հիսուս Քրիստոսը սեր ցուցաբերեց ուրիշների հանդեպ:
- Ինչպե՞ս է այս տեսանյութը օգնում ձեզ գնահատել Փրկիչի ծառայությունը և քավող առաքելությունը:

**Զգալով ճշմարտությունը և վարդապետության կամ սկզբունքի կարևորությունը:**  
Չնայած ուսանողները հավանական է կարողանան գտնել և հասկանալ սկզբունքներն ու ավետարանի վարդապետությունները, նրանք հաճախ ոգեշնչված չեն զգա կիրառելու դրանք, մինչև նրանք չզգան դրա ճշմարտությունը և կարևորությունը Հոգու միջոցով:

**Ուսանողի**

**վկայություն:** Դուք կարող եք օգնել ուսանողներին ավելի հարմարավետ զգալ իրենց վկայությունը բերելիս՝ նրանց տալով բազում հնարավորություններ դասարանում դա անելու համար: Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Զ. Փաքերը սովորեցրել է, որ. «Վկայությունը պետք է գտնել այն բերելիս: ... Մի բան է վկայություն ստանալը ձեր կարողացածից կամ մեկ ուրիշի ասածներից ... Լրիվ այլ բան է, երբ Հոգին է հաստատում ձեր հոգու խորքում, որ այն, ինչի մասին դուք վկայել եք, ճշմարիտ է» (“The Candle of the Lord,” Ensign, Jan. 1983, 54–55):

Հրավիրեք ուսանողներին վերհիշել իրենց գրածները, թե որ բաներն էին ցանկանում ուսուցանել ունկնդիրներին Հիսուս Քրիստոսի Քավության վերաբերյալ: Նրանց մի քանի ընթացակարգեր ավել տրամադրեք՝ գրելու լրացուցիչ նախադասություններ, որոնք ամփոփում են այն, ինչին նրանք հավատում են և կարող են վկայել Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Մի քանի ընթացակարգ անց հանձնարարեք ուսանողներին գույգեր կազմել դասարանի մեկ այլ անդամի հետ և դերակատարում անել միմյանց հետ, թե ինչպես կվկայեին որևէ ունկնդրի Հիսուս Քրիստոսի Քավության մասին:

Երբ յուրաքանչյուր ուսանող կունենա դերակատարելու հնարավորություն, եզրափակեք դասի այս մասը հարցնելով.

- Ինչու՞ է կարևոր միսիոներների համար կանոնավորապես կիսվել իրենց վկայությամբ Հիսուս Քրիստոսի մասին նրանց հետ, ում նրանք սովորեցնում են: (Գուցե կամենաք շեշտադրել, որ Սուրբ Հոգու դերերից մեկը վկայելն է Հիսուս Քրիստոսի մասին [տես Հովհաննես 15.26, 3 Նեփի 11.32], ուստի, երբ մենք վկայում ենք Հիսուս Քրիստոսի մասին ուրիշներին, մենք հրավիրում ենք Սուրբ Հոգուն հաստատել մեր վկայությունը նրանց սրտերում:)

Քաջալերեք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչ կարող են անել, որպեսզի խորացնեն իրենց երախտագիտությունը և վկայությունը Հիսուս Քրիստոսի և նրա Քավության վերաբերյալ: Հավաստիացրեք ուսանողներին, որ խորացնելով իրենց վկայությունը Փրկչի վերաբերյալ նրանք ավելի լավ պատրաստված կդառնան հրավիրելու ուրիշներին գալ դեպի Քրիստոսը:

**Մեր հավերժական ճակատագիրը**

Ուսանողներին մատնացույց արեք սխեման, որը գտնվում է «Փրկության Ծրագիր» վանդակում՝ էջ 59 *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկում: Հրավիրեք ուսանողներին նախ ուսումնասիրել սխեման, իսկ հետո գծել իրենց սեփական տարբերակը առանց նայելու *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկին: Նրանց սեփական սխեմաները կարող են տարբեր ձևաչափերով լինել, քանի դեռ դրանք ներառում են փրկության ծրագրի գլխավոր մասերը: Հիշեցրեք ուսանողներին, որ միսիոներները պետք է կարողանան բացատրել ունկնդրին փրկության ծրագրի հիմնական էլեմենտները պարզ բառերով:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ դաս 2-ի երեք մնացած բաժինները *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկի (էջեր 57–58), խնդրեք ուսանողներին մի քանի ընթացակարգեր տրամադրել կարդալու համար բաժինները և գտնել վարդապետությունները, սկզբունքները և գաղափարները, որոնք ունկնդիրները պետք է իմանան: Ուսանողների կարդալու ընթացքում ցուցադրեք բաժնի վերնագրերը գրատախտակին գծված աղյուսակում:

<i>Ի՞նչ պետք է իմանա ունկնդիրը:</i>		
<i>Հոգևոր աշխարհ</i>	<i>Հարություն, դատաստան և անմահություն</i>	<i>Փառքի արքայությունները</i>

Կարող է օգտակար լինել հանձնարարել ուսանողներին ուսումնասիրել մեկ բաժին ամեն անգամ և կիսվել վարդապետություններով, սկզբունքներով կամ գաղափարներով, որոնք նրանք գտել են նախքան առաջ անցնելու հաջորդ

բաժինը կարողալուն: Կարող եք ուսանողներից որևէ մեկին հանձնարարել, որ գրատախտակին գրի առնի դասարանի պատասխանները համապատասխան վերնագրի ներքո: Կարող եք խնդրել ուսանողներին արտագրել աղյուսակը իրենց ուսումնասիրության օրագրերում և լրացնել այն, մինչ դասարանը քննարկում է յուրաքանչյուր բաժինը:

Հետևյալ տիպի հարցերը կարող են օգնել ուսանողներին վերլուծել այն, ինչ իրենք կարդում են.

- Ի՞նչ ազդեցություն կունենան այստեղ երկրի վրա ընդունած մեր որոշումները մեզ վրա մահից հետո:
- Ինչպե՞ս կարող է Դատաստանի մասին մեր ըմբռնումը ազդել մեր որոշումների վրա այժմ:
- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի Քավությունն ազդում մեր գոյության յուրաքանչյուր փուլի վրա (նախաերկրային, մահկանացու և հետմահկանացու):
- Ինչո՞ւ է կարևոր, որ մենք պարզ և հստակ լինենք, երբ ներկայացնենք այս ճշմարտություններն ուրիշներին:

Բացատրեք ուսանողներին, որ վերականգնման կարևոր վարդապետություններից մեկն այն է, որ Աստծո զավակները ունենան ներուժ դառնալու Նրա նման: Երկնային Հոր մասին մեր ըմբռնումը տալիս է մեզ հույս, որ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք կարող ենք առաջընթաց ունենալ և ստանալ վեհացման օրհնությունը (տես «Վեհացում», *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ, էջ 64): Չնայած մենք կարող է մի օր դառնանք Աստծո նման, մենք միշտ կերկրպագենք Նրան: Մեր զարգացումը երբեք չի փոխի Նրա ինքնությունը որպես մեր Հայր և մեր Աստված: (Այս նյութի վերաբերյալ ավելի շատ տեղեկության համար, տես Ավետարանական Թեմաներ հոդվածը, որը կոչվում է «Դառնալ Աստծո նման» [lds.org/topics-ml](https://lds.org/topics-ml)։)

Ուսանողներին բաժանեք զույգերի և հրավիրեք յուրաքանչյուր զույգին՝ պատրաստվել ուսուցանելու որևէ մեկին կյանքի նպատակի մասին և ինչ է տեղի ունենում մեզ հետ մեր մեռնելուց հետո: Երբ նրանք պատրաստվեն, ուսանողները պետք է բացեն էջեր 55–58-ը *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում, կամ էջեր 10–15-ը միսիոներական գրքոյկում *Փրկության ծրագիրը*, եթե այն մատչելի է: Հորդորեք ուսանողներին ուսուցանելիս օգտագործել առնվազն մեկ սուրբ գրություն Նրանց նաև խրախուսեք օգտագործել իրենց ստեղծած փրկության ծրագրի սխեմաները, կամ սխեման, որը գտնվում է էջ 59-ում, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ: Բացատրեք, որ նրանց ուսուցումը պետք է պարզ և հստակ լինի և պետք է ավարտվի իրենց վկայությամբ: Տվեք բավական ժամանակ զույգերին՝ ուսուցանելուն պատրաստվելու համար, իսկ հետո հրավիրեք յուրաքանչյուր զույգի խումբ կազմել մեկ ուրիշ զույգի հետ: Հանձնարարեք ուսանողների մեկ զույգին ուսուցանել մյուս երկու ուսանողներին:

Երբ ընկերակազմերն ավարտեն իրենց ուսուցանման փորձառությունը, հանձնարարեք յուրաքանչյուր խմբին քննարկել հետևյալը միմյանց հետ. Ի՞նչը լավ ընթացավ ուսուցման ընթացքում: Ինչպե՞ս կարող են ուսանողները, ովքեր ուսուցանեցին, բարելավվել:

Այնուհետև թող փոխվեն դերերով և թույլ տվեք ուսանողներին, ովքեր ուսուցանվել են, ուսուցանել ուսանողների մյուս զույգին: Հավաստիացեք, որ

նրանց համար ժամանակ կա արձագանքներ ստանալու համար: Երբ բոլոր զույգերը կուսուցանեն, հրավիրեք դասարանի անդամներին կիսվել գաղափարներով իրենց փորձառություններից դասարանի մնացած մասի հետ:

Երբ ժամանակը թույլ տա եզրափակեք դասը՝ բերելով ձեր վկայությունը փրկության ծրագրի վերաբերյալ, կամ հրավիրեք դասարանի անդամներին անել նույնը:

### **Գործելու հրավերներ**

Հրավիրեք ուսանողներին ընտրել հետևյալ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը՝ աշխատելու դասարանից դուրս՝ փրկության ծրագրի իրենց հասկացողությունը խորացնելու համար.

- Փորձեք գծել սխեման էջ 59, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկից և բացատրել փրկության ծրագրի հիմնական էլեմենտները, օգտագործելով սուրբ գրության որևէ հատված՝ յուրաքանչյուր էլեմենտը հիմնավորելու համար:
- Մտածեք, թե ինչպես կարող եք ուսուցանել փրկության ծրագիրը, որպեսզի օգնեք ինչ-որ մեկին, ով վերջերս է կորցրել ընտանիքի անդամին կամ իր սիրելիին: Սուրբ գրությունների ուսումնասիրության ձեր օրագրում մի կարճ ամփոփագիր կամ ակնարկ գրեք ձեր գաղափարների մասին:
- Ուսումնասիրեք մի հոդված Հիսուս Քրիստոսի Քավության մասին վերջին գերագույն համաժողովի ելույթներից: Գտեք սկզբունքներ ելույթից, որոնք կօգնեն ձեզ ավելի լավ հասկանալ Հիսուս Քրիստոսի Քավությունը: Կազմեք մի ցուցակ, թե ինչպես է Քավությունն օրհնում ձեզ ամեն օր:
- Աղոթեք հնարավորության համար՝ կիսվելու փրկության ծրագրով ինչ-որ մեկի հետ, ով կարող էր օրհնվել՝ ավելի լավ հասկանալով Երկնային Հոր ծրագիրը: Ապա գործեք հավատքով և ուսուցանեք այս վարդապետությունը՝ օրհնելու այդ մարդու կյանքը:

# Գտնել մարդկանց ուսուցանելու համար

# 12

## Նախաբան

Միսիոներները չեն կարող կիսվել ավետարանով, մինչև չգտնեն որևէ մեկին ուսուցանելու համար: Մարդկանց գտնելը պահանջում է հավատքի գործադրում, հավատք՝ խոսելու մարդկանց հետ Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին, հավատք՝ փնտրելու ուսուցման հնարավորություններ և հավատք, որ Աստված կառաջնորդի նրանց այն մարդկանց մոտ, ովքեր պատրաստ են լսելու: Ուսուցանելու համար մարդկանց գտնելու ամենաարդյունավետ ուղին եկեղեցու

անդամների միջոցով է: Բոլոր եկեղեցու անդամները, ներառյալ հետագա միսիոներները, ունեն անձնական պատասխանատվություն օգնելու գտնել մարդկանց, ովքեր պատրաստ են ընդունելու վերականգնված ավետարանը: Երիտասարդները կարող են պատրաստվել լիաժամկետ ծառայությանն այժմ՝ կիսվելով ավետարանով, ինչպես անձնապես այնպես էլ առցանց ռեսուրսների միջոցով:

## Նախապատրաստություն

- Ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 18.10-ը, 14–16-ը, 33.6–11-ը, 100.5–6-ը:
- Ուսումնասիրեք *Քարոզիչ Իմ Ավետարանը*, էջեր 175, 181, 183, 192:
- Պատրաստվեք ցուցադրելու «Developing the Faith to Find» (2:55), The District 1, տեսանյութը, որը մատչելի է LDS.org կայքում:
- Պատրաստվեք ցուցադրելու «The Lord of the Harvest: The Adams Family» (4:41) տեսանյութը, որը մատչելի է LDS.org կայքում:
- Պատրաստվեք ցուցադրելու «Sharing Your Beliefs» (2:02) տեսանյութը, որը մատչելի է LDS.org կայքում:
- Նախապես հանձնարարեք մեկ կամ երկու ուսանողների դասի ընթացքում ցուցադրել հետևյալից մեկը կամ երկուսն էլ. (1) ինչպե՞ս LDS.org կամ mormon.org կայքերի օգնությամբ կիսվել տեսաֆիլմերով կամ այլ նյութերով՝ օգտագործելով սոցիալական կայքերը և (2) թե՛ ինչպես ստեղծել էջ mormon.org-ում:

## Ուսուցման առաջարկներ

### Ջարգացնել հավատք գտնելու մարդկանց ուսուցանելու համար

Բացատրեք, որ Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը ծառայել է որպես միսիոներ Անգլիայում Առաքյալ ձեռնադրվելուց անմիջապես հետո: Ցուցադրեք և խնդրեք ուսանողներին հերթով բարձրաձայն կարդալ հետևյալ պատմությունը՝ ներկայացնելու ուսուցանելու համար մարդկանց գտնելիս Տիրոջ օգնությունը փնտրելու կարևորությունը: Հանձնարարեք դասարանին փնտրել, թե ինչ արեց Երեց Վուդրուֆը մարդկանց գտնելու ուսուցանելու համար:



«Երեց Վուդրուֆը աղոթքով փնտրեց Տիրոջը... հարցնելով, թե ուր գնար: Նա պատմել է. Հավատալով, որ դա իմ արտոնությունն էր և պարտականությունը իմանալ Տիրոջ կամքը դրա վերաբերյալ, ուստի, ես խնդրեցի իմ Երկնային Հորը Հիսուս Քրիստոսի անունով ուսուցանել ինձ Իր կամքը այս բանի վերաբերյալ, և երբ ես հարցրեցի, Տերը պատասխան տվեց և ցույց տվեց ինձ, որ Իր կամքն էր, որ ես գնայի անմիջապես դեպի Անգլիայի հարավային կողմը: Ես խոսեցի եղբայր Ուիլյամ Բենբրուի

հետ այս թեմայով, ով ապրել էր շերտաշրջանում և դեռ ընկերներ ուներ այնտեղ ապրող և շատ ցանկացած, որ ես այցելեի երկրի այդ շրջանը և [ևս] մեծահոգաբար առաջարկեց ուղեկցել ինձ իր եղբոր տուն և վճարել իմ ճանապարհածախսը, որը ես պատրաստակամորեն ընդունեցի:

1840 թվականի մարտի 4 -ին Երեց Վուդրուֆը և Վիլյամ Բենբրուն ժամանեցին Վիլյամի եղբոր՝ Ջոնի տուն: «Այս տուն ժամանելուց մեկ ժամ հետո, - հիշում է Նախագահ Վուդրուֆը, - ես հասկացա, թե ինչու էր Տերն ինձ ուղարկել այդտեղ: ... Ես գտա տղամարդկանց և կանանց մի ընկերախումբ՝ մոտ վեց հարյուր մարդ, ովքեր միախմբվել էին միմյանց հետ Միացյալ Եղբայրություն անվան տակ և աշխատում էին հնադարյան կարգ ու կանոնով: Նրանք կամենում էին ունենալ Ավետարանը, ինչպես այն ուսուցանվել էր մարգարեների և առաքյալների կողմից, ինչպես ես՝ իմ երիտասարդ ժամանակ:

Աստվածաշնչի ջանասեր ուսումնասիրության միջոցով Ջոն Բենբրուն և Նրա ընտանիքն ու ընկերները նախապատրաստվել էին ավետարանն ընդունելուն:

Բենբրունի ընտանիքը արագ ընդունեց Վերականգնման ուղեճը և Ուիլյամը վերադարձավ Սթաֆորդշիր «Երջանիկ արտոնություն ունենալուց հետո տեսնելու իր եղբայր Ջոն Բենբրունին և Նրա ողջ գերդաստանը, ... մկրտված Նոր և հավիտենական ուխտով:» Երեց Վուդրուֆը մնաց այդ տարածքում մոտ ութ ամիս: Նա հետագայում հիշում է. «Առաջին երեսուն օրվա ընթացքում շերտաշրջանում իմ ժամանելուց հետո, ես մկրտեցի քառասունհինգ քարոզիչների և մի քանի հարյուր անդամների: ... Մենք ընգրկեցինք երկու հազարի՝ մոտ ութ ամիս աշխատելու արդյունքում»:

Անդրադառնալով այս փորձառությանը, Վիլֆորդ Վուդրուֆը գրել է. «Շերտաշրջանի միսիայի ողջ այս պատմությունը ցույց է տալիս Աստծո մեղմ հանդարտ ձայնին և Սուրբ Հոգու հայտնություններին ականջ դնելու կարևորությունը: Տերն այնտեղ ժողովուրդ ուներ պատրաստված ավետարանի համար: Նրանք աղոթում էին լույսի և ճշմարտության համար և Տերն ուղարկեց ինձ նրանց մոտ» (Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff [2004], 90–91):

**Հարցրեք ուսանողներին.**

- Ի՞նչ արեց Երեց Վուդրուֆը որոշելու, թե որտեղ գտներ մարդկանց, ովքեր պատրաստ էին ընդունել ավետարանը:
- Ինչպե՞ս Տերն օգնեց Երեց Վուդրուֆին: (Դուք կարող եք նշել ուսանողներին, որ Տերը ոչ միայն ոգեշնչեց Երեց Վուդրուֆին գնալու Անգլիայի հարավային մասը, այլ Նա նաև ճանապարհ բացեց Երեց Վուդրուֆի համար ուսուցանելու Ջոն Բենբրունի ազարակում, որտեղ հարյուրավոր տղամարդիկ և կանայք նախապատրաստված էին ընդունելու վերականգնված ավետարանը:)
- Երեց Վուդրուֆի պատմությունն ի՞նչ սկզբունք ցույց տվեց՝ ուսուցանելու համար մարդկանց գտնելու վերաբերյալ: (Ուսանողների պատասխանները կարող են ամփոփվել, գրելով հետևյալ սկզբունքը գրատախտակին. **Տերը կարող է օգնել մեզ գտնել մարդկանց, ովքեր պատրաստված են ընդունելու ավետարանը, երբ մենք աղոթում ենք օգնության համար, լսում ենք Հոգուն, և հետո զործում ենք հավատքով:)**

Խնդրեք դասարանին բացել 175 էջը *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկում և խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ առաջին պարբերությունը «Գտնելու հավատք զարգացնել» վերնագրի ներքո: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս է իմանալը, որ «Տերը պատրաստում է մարդկանց, որոնք կընդունենձեզ և վերականգնված ավետարանը» ոգեշնչում ձեզ պատրաստվել միսիա ծառայելու:

Հանձնարարեք ուսանողներին կարդալ հաջորդ պարբերությունը էջ 175-ում, *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկում՝ «Աստծո ընտանիքը» ենթավերնագրի ներքո: Այնուհետև հարցրեք:

- Ինչպե՞ս է այն վարդապետությունը, որ բոլոր տղամարդիկ և կանայք Աստծո ընտանիքի մասն են հանդիսանում, ազդում ձեր զգացումների վրա, երբ ուսուցանելու համար մարդիկ եք գտնում:
- Ավմա 31.34–35-ի մեջբերման մեջ, ինչի՞ համար աղոթեց Ավման, երբ նա պատրաստվում էր քարոզել գործառնություններին:
- Ի՞նչ կարող եմք սովորել Ավայի աղոթքից:



Ցույց տվեք «Developing the Faith to Find» (2:55) տեսանյութը, և հանձնարարեք ուսանողներին փնտրել գաղափարներ՝ մարդկանց գտնել ուսուցանելու համար թեմայով: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին նշումներ կատարել այն բաների վերաբերյալ, որ իրենք սովորում են:

Հարցրեք:

- Ի՞նչ գաղափարներ միսիոներները հաղորդեցին այդ տեսանյութում՝ ուսուցանելու համար մարդկանց գտնելու վերաբերյալ: (Ուսանողները կարող են տալ այս տիպի պատասխաններ. Միսիոներները պետք է աղոթեն հնարավորությունների համար, սիրեն ուրիշներին և նրանց տեսնեն՝ ինչպես Աստված է տեսնում նրանց և հիշեն, որ Տերը պատրաստում է Իր զավակներին ընդունելու ավետարանը և առաջնորդում է Իր միսիոներներին գտնելու նրանց: Քանի որ Աստված սիրում է Իր զավակներին, Նա կամենում է, որ յուրաքանչյուրն ունենա հնարավորություն լսելու և ընդունելու ավետարանը:)
- Ինչո՞ւ է կարևոր գործել ուրիշներին օգնության հասնելու զգացմունքների վրա և հրավիրել նրանց սովորել ավետարանի մասին:

Հանձնարարեք ուսանողներին կարդալ երեք պարբերություն ենթաբաժնից, որը կոչվում է «Գտեք նրանց, ովքեր կրնդունեն ձեզ», էջ 176, *Քարոզիչի Իմ Ավետարանը* ձեռնարկ: Այնուհետև հարցրեք:

- Որո՞նք են այն մարտահրավերները, որոնց առնչվում ենք մենք, երբ փորձում ենք գտնել մարդկանց ուսուցանելու համար: (Մենք սովորաբար չգիտենք, թե ով է պատրաստ ավետարանի համար: Մարդիկ գուցե անմիջապես չճանաչեն մեզ որպես Տիրոջ ծառաներ: Նրանք կարող է չհասկանան, որ իրենք որոնում են վերականգնված ավետարանը:)
- Ինչպե՞ս է Տերն օգնում մեզ գտնել մարդկանց ուսուցանելու համար: (Նա ուղարկում է Սուրբ Հոգուն ուղեկցելու մեզ:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ կկամենար Տերը, որ միսիոներներն անեին, երբ նրանք չեն տեսնում անմիջական արդյունքներն իրենց ջանքերի՝ գտնելու մարդկանց ուսուցանելու համար:

Եթե կան ուսանողներ դասարանում, ովքեր Եկեղեցու նորադարձներ են, մտածեք նրանցից մեկին կամ երկուսին հրավիրել կիսվելու, թե ինչպես նրանք շփման մեջ մտան Եկեղեցու հետ և ինչպես սկսեցին ճանաչել, որ միսիոներներն ուսուցանում էին իրենց ճշմարտությունը: Եթե դասարանում նորադարձներ չկան, հրավիրեք ուսանողներին մտածել իրենց ընտանիքից կամ իրենց ծխից մի նորադարձի մասին, որին նրանք լավ են ճանաչում:

Կարող եք հրավիրել նրանց կիսվել, թե ինչպես այս անձնավորությունը եկավ ավետարանն ընդունելուն:

### Անդամների միսիոներական աշխատանքի կարևորությունը

Ցուցադրեք Նախագահ Թոմաս Մ. Մոնսոնի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Այժմ է ժամանակը, որ անդամները և միսիոներները միավորվեն, աշխատեն միասին Տիրոջ այգում՝ բերելով Նրան հոգիներ: Նա պատրաստել է միջոցներ մեզ համար՝ կիսվելու ավետարանով բազմաթիվ ուղիներով և Նա կօգնի մեզ մեր աշխատանքներում, եթե մենք գործենք հավատքով՝ Նրա աշխատանքը կատարելու համար» («Հավատք փրկության աշխատանքում» [Ելույթ, որը տրվել է Փրկության աշխատանքին նվիրված ղեկավարների համաշխարհային հեռարձակման ժամանակ, հունիս 23, 2013]):

Կարող եք տալ հետևյալ տիպի հարցեր.

- Ինչո՞ւ է կարևոր հիշել, որ Աստծո մարգարեն խնդրել է մեզ, որ մենք մասնակցենք անդամների միսիոներական աշխատանքին: (Միգուցե մտածեք մեջբերել Կարդապետություն և Ուխտեր 88.81-ը, որը լուսաբանում է Տիրոջ ակնկալիքները նրանց համար, ովքեր ընդունել են ավետարանը:)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Նախագահ Մոնսոնն ասել, որ «այժմ է ժամանակը» անդամների և միսիոներների համար աշխատել միասին:

Ապա հրավիրեք ուսանողներին բացել 181 էջը *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում և հանձնարարեք երեք ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ առաջին երեք պարբերությունները «Անդամների կարևորությունը» վերնագրի ներքո: Այնուհետև հարցրեք.

- Ինչպիսի՞ն կարող է լինել արդյունքը, երբ անդամներն ու միսիոներները աշխատեն միասին՝ քարոզելու ավետարանը: Ուսանողների պատասխանները կարող են ներառել հետևյալ սկզբունքը. **Երբ անդամները հրավիրում են ուրիշներին ուսուցանվելու և ներկա են լինում ուսուցման ժամանակ, ավելի շատ մարդիկ են մկրտվում և մնում ակտիվ Եկեղեցում:**



Ցույց տվեք տեսանյութը «The Lord of the Harvest: The Adams Family (4:41) տեսանյութը, և խնդրեք ուսանողներին ուշադրություն դարձնել այն բանին, թե Եկեղեցու անդամներն ի՞նչ արեցին օգնելու Ադամի ընտանիքին ստանալու ավետարանի օրհնությունները:

Հարցրեք.

- Ո՞ր ջանքերը տարան Ադամի ընտանիքին ավետարանի օրհնությունները ստանալուն:
- Ձեր կարծիքով, ի՞նչը դրդեց տեսանյութի անդամներին կիսվել ավետարանով Ադամի ընտանիքի հետ:

Հանձնարարեք ուսանողներին բարձրաձայն կարդալ երկու պարբերություն այն բաժնից, որը կոչվում է «Ոչ մի ջանք կորած չէ», *Քարոզիչ Իմ Ավետարանը*, էջ192: Ապա մտածեք ուղղել հետևյալ տիպի հարցեր.



- Նույնիսկ եթե մարդիկ չեն ընդունում վերականգնված ավետարանն ուսումնասիրելու հրավերը, ինչո՞ւ ծառայելու և ուսուցանելու ոչ մի ջանք կորած չէ:
- Ինչպե՞ս կարող է միսիոները պահպանել առողջ մոտեցում, երբ մարդիկ չեն ուզում ուսումնասիրել ավետարանը:

Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչ են իրենք արել անցյալում՝ մասնակցելու անդամների միսիոներական աշխատանքին: Հրավիրեք ուսանողներին բացատրել թե, ինչ էին զգում, երբ նրանք փորձում էին կիսվել ավետարանով ուրիշների հետ:

### **Մասնակցել անդամների միսիոներական աշխատանքին**

Գրատախտակին թվեարկեք հետևյալ սուրբ գրությունները, ապա հանձնարարեք յուրաքանչյուր ուսանողի լուռ կարդալ հատվածներից մեկը և փնտրել օրհնությունները, որոնք խոստացվել են նրանց, ովքեր ընտրում են մասնակցել միսիոներական աշխատանքին:

ՎևՈւ 18.10, 14–16

ՎևՈւ 33.6–11

ՎևՈւ 100.5–6

**Խրախուսեք բոլոր ուսանողներին մասնակցել:**

Ուսուցիչները պետք է ձգտեն գտնել ուղիներ՝ խթանելու բոլոր ուսանողների մասնակցությունը դասարանային քննարկումներին, նույնիսկ նրանց, ովքեր վարանում են մասնակցել: Երբեմն մեկ կամ մի քանի ուսանողներ միտում են ունենում իշխել դասարանային քննարկումներում: Ուսուցիչներն այդպիսի ուսանողների հետ պետք է հանդիպեն առանձին և շնորհակալություն հայտնեն դասի քննարկումներին աջակցելու նրանց պատրաստակամության համար, և ապա ներգրավեն նրանց օգնությունը՝ դրդելու մյուսներին ևս մասնակցել:

Ուսանողներին իրենց ընտրած հատվածը վերանայելու համար մի քանի բոլոր տրամադրելուց հետո, խնդրեք բացատրել հատվածները, որոնք իրենք կարդացել են և կիսվել, թե ինչպես խոստացված օրհնությունները կոգեղնչեն նրանց գտնել մարդկանց, ովքեր կընդունեն ավետարանական ուղերձը: Խրախուսեք ողջ դասարանի անդամներին, որ մասնակցեն այս քննարկմանը: Գուցե գրի առնեք ուսանողների պատասխանները գրատախտակին՝ համապատասխան սուրբ գրության հատվածի կողքին:

**Գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. Որպես անդամ միսիոներներ մենք կարող ենք սկսել այժմ գտնել մարդկանց, որոնց միսիոներները կարող են ուսուցանել:**

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչպես նրանք կարող են մասնակցել անդամների միսիոներական աշխատանքին, հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ մեջբերումը: Խնդրեք դասարանին լսել խորհուրդը, թե ինչպես ձեռք բերեն վստահություն և քաջություն՝ ուրիշներին օգնության հասնելիս:



«Եղբայրներ և քույրեր, վախճան կվերափոխվի հավատքի և վստահության, երբ անդամները և լիաժամկետ միսիոներները ծնկի իջնեն և խնդրեն Տիրոջից օրհնել իրենց միսիոներական հնարավորություններով: Հետո, մենք պետք է դրսևորենք մեր հավատքը և որոնենք հնարավորություններ ներկայացնելու Հիսուս Քրիստոսի ավետարանը մեր Երկնային Հոր զավակներին և, անկասկած,

հնարավորությունները կզան: Այդ հնարավորությունները երբեք չեն պահանջի ստիպողական կամ հարկադրված պատասխան: Դրանք կհոսեն որպես մեր եղբայրների և քույրերի հանդեպ մեր սիրո բնական արդյունք: Ուղղակի եղեք լավատես և նրանք, ում հետ դուք կխոսեք, կզգան ձեր սերը: Նրանք երբեք չեն մոռանա այդ զգացումը, նույնիսկ, եթե այդ ժամանակը ճիշտ չլինի իրենց համար ընդունելու ավետարանը: Դա կարող է նաև փոխվել ապագայում, երբ նրանց հանգամանքները փոխվեն:

Անհնարին է ձախողվել, երբ անում ենք մեր լավագույնը, երբ Տիրոջ հանձնարարության տակ ենք: Չնայած արդյունքն ազատ կամքի գործադրման հետևանք է, ավետարանով կիսվելը մեր պարտականությունն է:

Ապավինեք Տիրոջը: Նա է բարի Հովիվը: Նա գիտի Իր ոչխարներին, և Նրա ոչխարները ճանաչում են Նրա ձայնը, և այսօր Բարի Հովիվի ձայնը ձեր ձայնն է և իմ ձայնը: Եվ եթե մենք ներգրավված չենք այդ աշխատանքին, շատերը, ովքեր կկամենային լսել Վերականգնման ուղերձը, կանցնեն դրա կողքով: Պարզ ասած դա մեր կողմից հավատքի և գործողության հարց է: Սկզբունքները բավականին պարզ են. աղոթեք անձնապես և ձեր ընտանիքով միսիոներական հնարավորությունների համար: •

Դուք պարտադիր չէ, որ կենսուրախ անձնավորություն կամ պերճախոս համոզիչ ուսուցիչ լինեք: Եթե դուք ունեք մնայուն սեր և հույս ձեր մեջ, Տերը խոստացել է՝ եթե դուք «բարձրացնեք ձեր ձայնը դեպի այս ժողովուրդը, [և] ասեք այն մտքերը, որոնք [Նա] կրնի ձեր սրտում, ... դուք ամօթով չեք մնա մարդկանց առաջ:

«[Եվ] ... այն նույն պահին տրվելու է ձեզ, թե ինչ պիտի ասեք» (ՎևՈւ 100.5–6) («Ապավինեք Տիրոջը», Ensign կամ *Liahona*, նոյ. 2013, 44):

**Հարցրեք.**

- Ի՞նչ առաջարկեց Երեց Բալլարդը, որ կարող են անել անդամները, զարգացնելու ավելի մեծ վստահություն ավետարանն ուրիշներին ներկայացնելու համար:

- Ի՞նչ առումներով է ուսուցանելու համար մարդկանց գտնելը հավատքի հարց:

Հանձնարարեք ուսանողներին մի քանի ընթացիկ հետազոտել «Մտքեր անդամներին օգնելու համար» ցուցակը էջ 183, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում և փնտրեք առանձնահատուկ ուղիներ, որոնցով անդամները կարող են մասնակցել միսիոներական աշխատանքին: Հրավիրեք ուսանողներին կիսվել մեկ-երկու մտքերով, թե ինչպես իրենք այժմ կարող են մասնակցել անդամների միսիոներական աշխատանքին: Այնուհետև հարցրեք.


- Այս գաղափարներից ո՞րը դուք կարող եք անել այժմ, որպեսզի հրավիրեք ուրիշներին լսելու ավետարանի ուղերձը:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են որոշ Եկեղեցու անդամներ տատանվում օգնության հասնել ուրիշներին այն ուղիներով, որոնք նշված են այս ցուցակում:

Խրախուսեք ուսանողներին մի քանի ընթացիկ տրամադրել գրի առնելու այն մի քանի բաները, որ իրենք անելու են, որպեսզի միսիոներների համար գտնեն մարդկանց, որ ուսուցանեն: Առաջարկեք ուսանողներին, որ նրանց պլաններն ավելի արդյունավետ կարող են լինել, եթե նրանք գրեն հատկապես ոչ անդամ ընկերների և ընտանիքի անդամների անունները, ում հետ նրանք կարող են կիսվել ավետարանի ուղերձով: Դուք գուցե առաջարկեք, որ ուսանողները ներառեն գործողություններ, ինչպես օրինակ կանոնավորապես աղոթելը միսիոներական հնարավորությունների համար, օգնության հասնել ուրիշներին՝ խոսելով ավետարանական թեմաների շուրջ, հրավիրելով երկրպագության ծառայություններին կամ Եկեղեցու այլ միջոցառումներին, հրավիրելով ուրիշներին լսել դասեր միսիոներներից, կարդալ Մորմոնի Գիրքը և այլն: Կարող եք նաև խնդրել մի քանի ուսանողների՝ դասարանի հետ կիսվել իրենց ծրագրերով:

**Գրավոր հանձնարարություններ**  
Գրավոր հանձնարարություններն ապահովում են ուսանողներին հնարավորություններ՝ անձնապես մասնակցելու, ոգեշնչում ստանալու և նախապատրաստվելու ուսուցանել և կիսվել իրենց զգացումներով ուրիշների հետ:

**Օգտագործեք բոլոր միջոցները, որ Աստված է պատրաստել**

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Զվորումից Երեց Լ. Թոմ Փերիի (1922–2015) հետևյալ խոսքերը և խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե ինչպես է ուսուցանելու համար մարդկանց գտնելու գործընթացը փոխվել.




«Երբ ես երիտասարդ միսիոներ էի, մենք կարողանում էինք խոսել՝ շփման մեջ մտնելով փողոցում և թակելով դռները՝ ավետարանով կիսվելու համար: Աշխարհը փոխվել է այդ ժամանակից ի վեր: Այժմ, շատ մարդիկ ներգրավված են իրենց կյանքի զբաղվածության մեջ: Նրանք շտապում են այստեղ ու այնտեղ, և նրանք հաճախ ավելի քիչ պատրաստակամ են՝ թույլ տալու լիովին անձանդանի մտնել իրենց տներն առանց հրավերի, կիսվելու ավետարանի վերականգնման ուղերձով: Ուրիշների հետ, թեկուզ մոտ ընկերների, նրանց հիմնական շփման կետը համացանցն է: Ուստի միսիոներական աշխատանքի բուն էությունը պետք է փոխվի, եթե Տերը պետք է իրականացնի Իսրայելը հավաքելու Իր աշխատանքը «երկրի չորս ծայրերից» [2 Նեփի 21.12]: Միսիոներներն այժմ լիազորված են օգտագործելու համացանցը քարոզման իրենց ջանքերում: ...

Երբ միսիոներները մտնեն այս նոր դարը, որտեղ նրանք կօգտագործեն համակարգիչներ Տիրոջ աշխատանքում, մենք հրավիրում ենք երիտասարդներին և մեծերին, չափահասներին և դեռահասներին, պատանիներին և երեխաներին ամենուրեք միասալ մեզ... ավետարանի իրենց ուղերձներն առցանց կիսվելու ջանքերում: ...

ճիշտ ինչպես միսիոներները պետք է հարմարվեն փոխվող աշխարհին, այնպես էլ անդամները պետք է փոխեն իրենց մտածելակերպը միսիոներական աշխատանքի վերաբերյալ: Այս ասելով են կկամենայի պարզաբանել, որ այն, ինչ խնդրվում է որպես անդամներ անել, չի փոխվել, այլ՝ այն ուղի, որով մենք կատարում ենք ավետարանով կիսվելու մեր պարտականությունները պետք է հարմարեցվի փոխվող աշխարհին» («Միսիոներական աշխատանքը թվայնացման դարում» [Էլույթ տրված՝ «Փրկության աշխատանք» թեմայով դեկավարների համաշխարհային հեռարձակումում, հունիսի 23, 2013]):

**Հարցրեք.**

- Ըստ Երեց Փերիի, ինչո՞ւ պետք է անդամները և միսիոներները սկսեն օգտագործել առցանց ռեսուրսները, երբ կիսվում են ավետարանով: Որո՞նք են այս ռեսուրսներն օգտագործելու առավելությունները:
- Որո՞նք են առցանց որոշ գործիքները կամ միջոցները, որոնք դուք կարող եք օգտագործել կիսվելու ավետարանի ձեր վկայությամբ և հրավիրելու ուրիշներին ավելի շատ բան սովորել:
- Որո՞նք են այն առանձնահատուկ ուղիները, որոնցով դուք կարող եք օգտագործել այս միջոցները՝ ավետարանի ուղերձով կիսվելու համար: (Այս քննարկումը կօգնի ուսանողներին գտնել սկզբունքը, որ **Հիսուս Քրիստոսի հետևորդները կարող են օգտագործել ժամանակակից տեխնոլոգիան՝ կիսվելու իրենց վկայությամբ մարդկանց հետ ողջ աշխարհում:**)

 *Ուշադրություն. Երբ դասարանը քննարկի առցանց միսիոներական ռեսուրսները, նկատի առեք նշել [mormon.org](http://mormon.org) կայքը, որը նախատեսված է և գրված ոչ անդամների հասանելի լինելու համար: Կայքը գերազանց միջոց է ունկկողմի համար: Այն պարունակում է պատասխաններ հաճախակի տրվող շատ հարցերին, իսկ դրա պարունակությունը համապատասխանում է Քարոզի Իմ Ավետարանը ձեռնարկի դասերին: [Mormon.org](http://Mormon.org)-ին նույնպես բնորոշում են հազարավոր անձնական էջերի կապուղիները (պրոֆիլները), որոնք տեղադրվել են Եկեղեցու անդամների կողմից ողջ աշխարհով մեկ: Գուցե կամենաք խրախուսել դասարանի անդամներին ստեղծել իրենց իսկ էջերի կապուղիները (պրոֆիլները), որոնք միջոցով կարող են կիսվել ավետարանի վերաբերյալ իրենց զգացումներով:*

Ցուցադրեք հետևյալ ուղեգծերը [LDS.org](http://LDS.org)-ից, և հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ առաջին պարբերությունը. Ապա, համձնարարեք մյուս ուսանողներին բարձրաձայն կարդալ ուղեգծերի ցուցակը սոցիալական կայքերն օգտագործելու վերաբերյալ: Խնդրեք դասարանին ուսումնասիրել, թե ինչպես կարող է այս տեղեկությունը օգնել նրանց ավելի արդյունավետ լինել՝ ավետարանով առցանց կիսվելիս:

Սոցիալական կայքերը կարող են լինել հզոր ազդեցություն նրանց կյանքում, ովքեր օգտագործում են այն: Այն կարող է ուղիներ ապահովել արտահայտելու մեր հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ և ամրացնելու փոխհարաբերությունները: Եկեղեցին խրախուսում է սոցիալական կայքերի օգտագործումը այնքանով, որքանով այն աջակցում է Եկեղեցու առաքելությանը, բարելավում է փոխհարաբերությունները, և օժանդակում հայտնությանը Երկնային Հոր զավակների մեջ: Եկեղեցու անդամները խրախուսվում են լինել օրինակներ իրենց հավատքում ամեն ժամանակներում և ամեն տեղերում, ներառյալ, երբ մասնակցում են համաշխարհային գրույցների, որոնք մատչելի են սոցիալական կայքերում: ...

Հետևյալը առաջարկություններ են սոցիալական կայքերն օգտագործելու համար մեր անձնական կյանքում: ...

Եղեք քաղաքակիրթ ձեր առցանց համագործակցություններում ուրիշների հետ: Վերջին Օրերի Սրբերի ուսմունքները պահանջում են անդամներից հարգանքով վերաբերվել ուրիշներին:

Արտահայտեք ձեր անձնական վկայությունը վերկանազնված ավետարանի վերաբերյալ, երբ առաջնորդվեք Հոգու կողմից: Այդպիսի ուղերձները պետք է անձնական լինեն, մի թողեք մարդկանց այն տպավորությամբ, որ դուք խոսում եք Եկեղեցու համար, և մի ստեղծեք խմբեր, որոնք տպավորություն են թողնում, որ նրանք պաշտոնապես ներկայացնում են կամ հովանավորվում Եկեղեցու կողմից:

Միշտ եղեք Քրիստոսի հետևորդի օրինակ՝ սոցիալական կայքերում մյուսների հետ ձեր շփումներում: Ձեր դրական օրինակը կարող է ազդել նրանց վրա, ում հետ դուք ընկերներ եք: Խելամիտ է դադարել ընկերակցելը նրանց հետ, ովքեր անընդհատ ձգտում են մյուսներին վարքաշել և հատկապես նրանց, ովքեր տեղադրում են անպատշաճ նյութեր: ...

Գործադրեք առողջ դատողություն, երբ տեղադրում եք նյութեր սոցիալական կայքերում: Համացանցում չկա «ջնջել» կոճակը: Պատկերները կամ գրառումները կարող են մնալ շատ տարիների ընթացքում և կարող են վճռորոշ դեր խաղալ, երբ դուք աշխատանք եք որոնում կամ քղելը ընդունվում, ինչպես նաև այլ դեպքեր, որոնց ժամանակ հասարակավ ձեր համացանցի արձանագրությունը կարող է աչքի անցկացվել: Հավաստիացեք, որ ձեր հաղորդակցությունները համապատասխանեն ձեր պարտավորության հետ՝ ձեզ վրա վերցնելու Փրկիչի անունը» (“Social Media Helps for Members,” LDS.org):

Խնդրեք ուսանողներին կիսվել դասարանի հետ իրենց մտքերով, թե ինչու այս ցուցակի առաջարկությունները կարևոր կլինեն նրանց համար հիշելու, երբ նրանք կիսվեն ավետարանով առցանց:

Եթե բավարար ժամանակ կա, կարող եք խնդրել որևէ ուսանողի դասարանում ցուցադրել, թե ինչպես կիսվել LDS.org-ի կամ mormon.org-ի տեսանյութերով կամ այլ նյութերով սոցիալական կայքերում: Դուք կարող եք մեկ այլ ուսանողի հանձնարարել ցույց տալ, թե ինչպես ստեղծել անձնական էջի կապուղի (պրոֆիլ) mormon.org-ում:



Մտածեք ցույց տալ «Sharing Your Beliefs» (2:02) տեսանյութը՝ օգնելու ուսանողներին վստահ զգալ իրենց ունակություններում տեխնիկական միջոցներն օգտագործելիս՝ կիսվելու ավետարանի մասին իրենց զգացմունքներով և վկայությամբ: Նախքան տեսանյութը ցույց տալը, խրախուսեք ուսանողներին փնտրել հնարավոր ազդեցություն, որ ինչ-որ մարդ կարող է ունենալ՝ օգտագործելով տեխնիկական միջոցները, կիսվելու իր զգացումներով ավետարանի վերաբերյալ:

Դիտումից հետո հարցրեք.

- Ինչպես կարող է տեխնիկական արգացնել անդամների ջանքերը, ովքեր ցանկանում են կիսվել ավետարանի ուղերձով:

Հրավիրեք ուսանողներին թվարկել այն եղանակները, որոնց միջոցով մենք կարող ենք ավետարանով կիսվել մյուսների հետ: Ավարտեք, բերելով ձեր վկայությունը դասի ընթացքում ուսուցանված վարդապետությունների և սկզբունքների վերաբերյալ:

## Գործելու հրավերներ

Օգնեք ուսանողներին սկսել այժմ՝ գտնել մարդկանց, ովքեր պատրաստ են լսել ավետարանի ուղերձը՝ լրացնելով հետևյալ առաջարկված միջոցառումներից մեկը կամ ավելին:

- Լրացրեք կետերը, որոնք դուք թվարկել եք այս դասի գրավոր հանձնարարության ընթացքում՝ որպեսզի միսիոներների ուսուցանելու համար մարդկանց գտնեք:
- Վերանայեք կոնտակտների ցանկը՝ ձեր բջջային հեռախոսի վրա և գտեք մի ավելի քիչ ակտիվ անդամ կամ ոչ անդամ: Ջանգահարեք կամ հաղորդագրություն գրեք այդ մարդուն և հրավիրեք նրան միանալ ձեզ եկեղեցում այս կիրակի:
- Հետազոտեք [mormon.org](http://mormon.org) վեբկայքը և հետազոտեք կայքի ռեսուրսները, ինչպես օրինակ տեսանյութերը, հոդվածները և պրոֆիլները, որոնք տեղադրվել են Եկեղեցու անդամների կողմից: Կիսվեք մի տեսաֆիլմով, հոդվածով կամ այլ էջով ուրիշների հետ՝ օգտագործելով սոցիալական կայքերը:
- Ստեղծեք ձեր սեփական պրոֆիլը [mormon.org](http://mormon.org)-ում: Կիսվեք ձեր պրոֆիլով մյուսների հետ՝ օգտագործելով սոցիալական կայքերը:
- Կիսվեք Mormon Messages տեսանյութով և ձեր զգացումներով դրա վերաբերյալ՝ օգտագործելով սոցիալական կայքերը:

# Ուսուցանել Հիսուս Քրիստոսի Ավետարանը (Մաս 1)

# 13

## Նախաբան

Հիսուս Քրիստոսի ավետարանը ընդգրկում է հավերժական վարդապետություններ, սկզբունքներ, օրենքներ, ուխտեր և արարողություններ, որոնք անհրաժեշտ են մարդկությանը Աստծո ներկայություն ետ վերադառնալու և սելեստիալ արքայությունում վեհանալու համար: Ավետարանի առաջին սկզբունքներն ու արարողություններն են՝ հավատքը Հիսուս

Քրիստոսի հանդեպ, ապաշխարությունը, ջրում ընկղմամբ մկրտությունը և Սուրբ Հոգու պարգևը: Ապագա միսիոներները պետք է պատրաստ լինեն օգնելու ունկնդիրներին հավատք ունենալ Հիսուս Քրիստոսի հանդեպ և ապաշխարել իրենց մեղքերից մինչև իրենց մկրտվելը և Սուրբ Հոգին ստանալը:

## Նախապատրաստություն

- Ուսումնասիրեք Մոսիա 3.19, 4.1–3, 5.2, և Ալմա 36:
- Ուսումնասիրեք *Քարոզիչ Իմ Ավետարանը*, էջեր 66-70:
- Պատրաստվեք ցուցադրելու Conversion of Alma the Younger նկարը (Gospel Art Book [2009], no. 77) կամ նմանատիպ մի նկար:
- Պատրաստվեք ցուցադրելու «Jesus Christ Is the Way» (5:02) տեսանյութը, որն առկա է LDS.org կայքում:
- Այս դասի վերջում տրված՝ Ապաշխարություն օժանդակ նյութից օրինակներ պատճենեք, որպեսզի օգտագործեք ապաշխարության ուսուցման գաղափարի հետ (ըստ ցանկության):

## Ուսուցման առաջարկներ

### Քրիստոսի միջոցով մենք կարող ենք մաքրվել մեղքից

Որպեսզի օգնեք ուսանողներին պատրաստ լինել դասը սովորելուն, դասից առաջ գրեք այս հարցը գրատախտակին.

*Ճշտի ու սխալի աշխարհի չափանիշն ինչո՞վ է տարբերվում Երկնային Հոր չափանիշից:*

Դասը սկսելուց հետո, հրավիրեք մի քանի ուսանողների պատասխանել գրատախտակին գրված հարցին: Երբ ուսանողներից մի քանիսը պատասխանեն հարցին, խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ «Մեղք» անվանումով վանդակը *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի էջ 67-ում: Այնուհետև հարցրեք.

- Ինչո՞ւ է կարևոր, որ ունկնդիրները մինչև Հիսուս Քրիստոսի ավետարանը սովորելը հասկանան, թե ինչ է մեղքը և որոնք են մեղքի հետևանքները:

Գրատախտակին գրեք հետևյալ հարցը և հրավիրեք ուսանողներին փնտրել այդ հարցի պատասխանը, երբ նրանք ուսումնասիրեն «Քրիստոսի միջոցով մենք կարող ենք մաքրվել մեղքից» բաժինը *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի 66-67 էջերում:

*Ի՞նչ ճշմարտություններ են ուսուցանվում այս բաժնում, որոնք կօգնեն ունկնդիրներին ցանկանալ ավելի մոտենալ Հիսուս Քրիստոսին:*

Վարդալու համար ուսանողներին բավարար ժամանակ հատկացնելուց հետո, խնդրեք նրանց կիսվել իրենց գտածով: Նրանց պատասխանները կարող են ներառել հետևյալ ճշմարտությունները.

- Աստված ուղարկեց Իր Սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին աշխարհ, որպեսզի մենք մահից հետո հնարավորություն ունենանք վերադառնալու և ապրելու Իր ներկայությունում:
- Միայն Փրկիչի ողորմածությամբ և շնորհով մենք կարող ենք մաքրվել մեղքից:
- Հիսուս Քրիստոսի Քավության և Հարության միջոցով բոլոր մարդիկ ետ կբերվեն՝ Տիրոջ ներկայությունը, որպեսզի դատվեն:
- Ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել Աստծո ներկայության մեջ:
- Հիսուս Քրիստոսը կանգնել է մեր տեղը և կրել պատիժը մեր մեղքերի համար:
- Հիսուս Քրիստոսը ներում է մեր մեղքերը, երբ մենք ընդունում ենք Նրան, ապաշխարում ենք և հնազանդվում Նրա պատվիրաններին:

Հաջորդը, ուսանողներին մի քանի րոպե ժամանակ տվեք, որ ուսումնասիրեն կամ նշեն սուրբ գրության հատվածները, որոնք թվարկված են իրենց կարդացած պարբերություններում, կամ Սուրբ գրությունների ուսումնասիրություն վանդակում՝ էջ 67, որոնք արտացոլում են սկզբունքներից մեկը, որը նրանք հենց նոր բացահայտեցին: Դասարանի կեսը կարող է ընտրել հատվածներ նոր կարդացած պարբերություններից,

**Պատրաստ՝ սովորելուն**  
Ուսուցիչները կարող են կենտրոնացնել ուսանողների մտքերը ուսուցման ընթացքի վրա, սկսելով յուրաքանչյուր դասն այնպես, որ գրավեն ուսանողների ուշադրությունը: Օրինակ, դուք կարող եք գրատախտակին գրված խորհելու առիթ տվող տեղին մի հարց ունենալ, կամ կարող եք ցույց տալ մի առարկա կամ նկար, որը կխթանի ուսանողների հետաքրքրությունը, երբ նրանք դասարան մտնեն:



իսկ մյուս կեսը՝ Սուրբ գրությունների ուսումնասիրության վանդակից: Խնդրեք ուսանողներին պատրաստ լինել բացատրելու, թե ինչպես նրանք կարող են օգտագործել այդ սուրբ գրությունների հատվածներից մեկը կամ մի քանիսը, որպեսզի օգնեն ունկնդրին հասկանալ և զնահատել այն, ինչ Երկնային Հայրը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսն արեցին՝ որ օգնեն մեզ հաղթահարել մեղքի հետևանքները: Մի քանի բոպե անց հրավիրեք մի քանի ուսանողների բացատրել այն, ինչ սովորեցին:

### Հավատք առ Հիսուս Քրիստոս

Ուսանողների հետ միասին վերանայեք միսիոներների նպատակը, որը գտնվում է «Ձեր նպատակը» անվանումով վանդակում՝ *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի էջ 1-ում: Այնուհետև հարցրեք.

- Ո՞րն է տարբերությունը այս երկուսի միջև՝ (1) օգնելու մեկին «գալ դեպի Քրիստոսը» և դարձի գալ դեպի Նրա վերականգնված ավետարանը և (2) ընդամենը օգնելու մեկին դառնալ Եկեղեցու անդամ:
- Ինչո՞ւ է ավելի կարևոր, որ միսիոներներն օգնեն մարդկանց գալ դեպի Քրիստոսը, քան օգնեն նրանց դառնալ Եկեղեցու անդամներ:

Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել «Հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ» բաժնի առաջին պարբերությունը *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի էջ 67-ում: Ուսումնասիրելիս, խնդրեք ուսանողներին փնտրել, թե Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքն ինչպես կարող է օգնել մարդուն դարձի գալ դեպի Նրա վերականգնված ավետարանը: Այնուհետև հարցրեք.

- Ձեր կարդացածի հիման վրա ասեք, թե ի՞նչ է նշանակում հավատք ունենալ Հիսուս Քրիստոսի հանդեպ:
- Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքն ինչպե՞ս է նպաստում, որ մարդը դարձի գալ դեպի Նրա վերականգնված ավետարանը:

Գրեք գրատախտակին. **Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը մղում է գործողության:** Հրավիրեք ուսանողներին կարդալ «Հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ» բաժնի մնացած մասը *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի 67-68 էջերում: Երբ կարդան, հրավիրեք նրանց նշել որոշ գործողություններ, որոնք արտացոլում են տվյալ անձի հավատքը Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ: Մի քանի բոպե անց հարցրեք.

- Որո՞նք են այն գործողությունները, որոնք ցույց են տալիս, որ ունկնդիրը հավատք է զարգացնում Հիսուս Քրիստոսի հանդեպ: (Պատասխանները կարող են ներառել. ապաշխարելը, Փրկիչին նմանվելու մասին սովորելը, պատվիրաններին հնազանդվելը, մեղքից խուսափելը, զայրակոչությունը հաղթահարելու գործության համար աղոթելը, Աստծո խոսքը սովորելը և ավետարանի սկզբունքներին հետևելու պարտավորություններ ստանձնելը):
- Համաձայն ձեր կարդացածի՝ ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսն օրհնում մեզ մեր առօրյա կյանքում, երբ մենք հավատք ենք գործադրում Նրա հանդեպ: (Պատասխանները կարող են ներառել. Նա մեզ գործություն է տալիս դիմակայելու կյանքի դժվարություններին, Նա օգնում է մեզ փոխելու մեր սրտի ցանկությունները, Նա բուժում է մեզ ֆիզիկապես և հոգեպես):

Խնդրեք, որ ուսանողները գրեն հետևյալ հարցերի պատասխանները՝ իրենց ուսումնասիրության օրագրերում.

- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր հավատքը մղել ձեզ գործելու այս բաժնում նկարագրված եղանակով:
- Ե՞լ ինչ դուք կարող եք անել, ցույց տալու ձեր հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Ուսանողներին բաժանեք զույգերի կամ ընկերակցությունների: Հրավիրեք զույգերին պատրաստել երկու-երեք բուլետենոց դաս Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի մասին: Պատրաստվելիս ուղղորդեք նրանց օգտագործել *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի նյութը 67–68 էջերից, ներառյալ մեկ-երկու սուրբ գրության հատվածներ: Սուրբ գրությունների ուսումնասիրության վանդակից: Ուսանողները կարող են նաև օգտագործել *Հիսուս Քրիստոսի Ավետարանը* անվանումով միսիոներական գրքույկը: Երբ ուսանողները բավարար ժամանակ ունենան պատրաստվելու համար, զույգերից կազմեք չորս հոգանոց խմբեր (երկու զույգ՝ ամեն խմբում): Հանձնարարեք, որ զույգերից մեկն ուսուցանի մյուսին: Բացատրեք, որ իրենց սեփական խոսքերով ուսուցանեն և ուսուցանելիս լինեն պարզ ու հստակ:

Երբ ուսանողներն ավարտեն ուսուցանելը, խնդրեք նրանց փոքր խմբերով քննարկել, թե ինչը լավ ընթացավ, ինչը նրանք զգացին, որ դժվար էր ուսուցանել և ինչու, և ինչպես նրանց ուսուցանածն օգնեց ուսուցանվողներին զգալ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք ունենալու կարևորությունը:

Այնուհետև թող դերերով փոխվեն, թույլ տալով մյուս զույգին ուսուցանել: Հավաստիացեք, որ ժամանակ կա, որպեսզի նրանք նաև կարծիքներ լսեն:

Գործնական այս վարժության ավարտին հարցրեք ուսանողներին, թե ինչ հարցեր նրանց մտտ առաջացան, կամ ինչ գաղափարներ ունեցան: Եթե ուսանողները տատանվում են պատասխանել, կարող եք հարցնել. «Ի՞նչը ձեզ դուր եկավ նրանից, ինչ ձեզ ուսուցանեցին»: Հարցրեք, թե արդյոք կա՞ն ցանկացողներ՝ դասարանի հետ կիսվելու իրենց կյանքի փորձով, երբ նրանք օրհնվել են՝ ունենալով հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ:

### Ապաշխարություն

Ցուցադրեք Ալման և Մոսիայի որդիները նկարը (տես *Ավետարանի արվեստի գիրք*, 77) և հրավիրեք ուսանողներից մեկին հակիրճ ամփոփել Ալմա Կրտսերի դարձի գալու պատմությունը (տես Ալմա 36.6–24): Ապա թող մի քանի ուսանողներ հերթով բարձրաձայն կարդան Ալմա 36.13, 17–21, և 23–25 հատվածները:




Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս Ալման ցույց տվեց, որ նա հավատք ուներ Հիսուս Քրիստոսի հանդեպ:
- Ի՞նչ տեղի ունեցավ նրանից հետո, երբ Ալման հավատք ցուցաբերեց:
- Ո՞րն էր Ալմայի անկեղծ ապաշխարության արդյունքը:

**Դրականորեն արձագանքել:** Երբ ուսանողը պատասխանում է, ուսուցիչը պետք է դրական եղանակով ընդունի պատասխանը: Այս ընդունումը կարող է արտահայտվել պարզ «շնորհակալություն» բառով կամ պատասխանը հաստատող որևէ մեկնաբանությամբ: Երբ սխալ պատասխան է հնչում, ուսուցիչը կարող է հարցը այլ կերպ ձևակերպել, ուսանողին պատասխանի մեկ այլ հնարավորություն տալով: Ուսուցիչը պետք է դասարանում վստահության մթնոլորտ զարգացնի, որպեսզի բոլոր ուսանողները ազատ զգան՝ կիսվելու իրենց մտքերով և զգացումներով:

Ուսանողներին մեկ րոպե ժամանակ տվեք, որպեսզի իրենց ուսումնասիրության օրագրերում մեկ նախադասությամբ գրեն ապաշխարության սահմանում: Հրավիրեք մի քանի ուսանողների կարդալ իրենց նախադասությունները դասարանին: Որպեսզի օգնեք ուսանողներին ամրապնդել իրենց մտքերում ապաշխարության սահմանում, ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ մեջբերումը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Երբ մեք ենք գործում, մենք շրջվում ենք Աստծուց: Երբ ապաշխարում ենք, մենք հետ ենք շրջվում դեպի Աստված: ...

... Ապաշխարությունը հեռանալն է որոշ բաներից, ինչպիսիք են անազնվությունը, հպարտությունը, զայրույթը և անմաքուր մտքերը, և դառնալն է դեպի այլ բաներ, ինչպիսիք են բարությունը, նվիրվածությունը, համբերությունը և հոգևոր բաները:

Դա վերադարձն է դեպի Աստված» (“Repent ... That I May Heal You,” Ensign կամ *Լիահոնա*, Նոյ. 2009, 40–41):

- Ինչպե՞ս կարող է այս պարզ սահմանումն օգնել ձեզ, որ բացատրեք ապաշխարության նշանակությունը: (Երբ ուսանողները պատասխանեն գրեք այս սկզբունքը գրատախտակին. **Ապաշխարությունը ետ շրջվելն է դեպի Աստված:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ ապաշխարության ընթացքն ու արդյունքները, կարող եք խնդրել ուսանողներին ուսումնասիրել Մոսիա 3.19, 4.1–3, և 5.2 հատվածները: Երբ նրանք ուսումնասիրեն, խնդրեք, որ գտնեն այն բառերն ու արտահայտությունները, որոնք օգնում են պարզաբանել, թե ինչ է նշանակում ապաշխարել: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո մի քանի ուսանողներին խնդրեք կիսվել իրենց գտած նյութով: Այնուհետև հարցրեք.

- Այս հատվածներում ի՞նչ ապացույց եք դուք տեսնում, որ Բենիամին թագավորի ժողովուրդը հավատք էր գործադրում Հիսուս Քրիստոսի հանդեպ, որպեսզի վերջնականապես ստանային իրենց մեղքերի թողությունը:

Բաժանեք հետևյալ աղյուսակը պարունակող օժանդակ նյութը, կամ գծեք գրատախտակին և թող ուսանողներն արտագծեն այն իրենց ուսումնասիրության օրագրերի մեջ:



Ի՞նչ է ապաշխարությունը:	Ինչպե՞ս ենք մենք ապաշխարում:	Որո՞նք են ապաշխարության պտուղները կամ ապացույցը:
Մտքերի, հավատալիքների և վարքի փոփոխություն	Զգալ խղճի խայթ կամ աստվածային տրտմություն	Ստանալ Քրիստոսի ողորմածությունը

Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել «Ապաշխարություն» բաժինը՝ *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի 68-69 էջերում: Երբ նրանք կարդան, խնդրեք լրացնել իրենց օժանդակ նյութի կամ աղյուսակի սյունակները, օգտագործելով *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկի բառերը, արտահայտությունները կամ նախադասությունները: Որպեսզի ուսանողները կողմնորոշվեն, թե որ արտահայտությունները պետք է ներառեն՝ յուրաքանչյուր սյունակում տրված է օրինակ: Ավարտելուց հետո նրանց աղյուսակը պետք է ունենա հետևյալ տեսքը.

Ի՞նչ է ապաշխարությունը:	Ինչպե՞ս ենք մենք ապաշխարում:	Որո՞նք են ապաշխարության պտուղները կամ ապացույցը:
<p>Մտքերի, հավատալիքների և վարքի փոփոխություն</p> <p>Նոր հայացք ինքներս մեր, Աստծո և աշխարհի հանդեպ</p> <p>Մեր կյանքը համապատասխանեցնում ենք Աստծո կամքին</p> <p>Շրջվում ենք մեղքից և այլևս չենք անում դա</p> <p>Շարունակաբար փորձում ենք ուղղել մեղսագործությունները և բարելավվել</p>	<p>Զգում ենք խղճի խայթ կամ աստվածային տրտմություն</p> <p>Դադարում ենք սխալներ անելը</p> <p>Շարունակում ենք ճիշտ բաներ անելը</p> <p>ճանաչում ենք մեղքերը</p> <p>Խոստովանում ենք մեղքերը</p> <p>Աստծուց ներում ենք խնդրել</p> <p>Շտկում ենք մեր գործողությունների հետևանքով առաջացած խնդիրները</p> <p>Դիմադրում ենք մեղք գործելու ցանկության դեմ</p> <p>Զարգացնում ենք Քրիստոսանման հատկանիշներ, աճում գիտելիքով, ծառայում</p> <p>Մեր ցուցաբերում Աստծո հանդեպ՝ հնազանդվելով</p>	<p>Ստանում ենք Քրիստոսի ողորմածությունը</p> <p>Տեսնում ենք մեր և աշխարհի փոփոխությունները</p> <p>Հասկանում ենք մեր կապը Աստծո հետ</p> <p>Աստծուն հետևելու ցանկությունը ավելի ուժեղ է դառնում</p> <p>Զգում ենք Աստծո ներումը</p> <p>Զգում ենք Աստծո խաղաղությունը</p> <p>Հանցանքն ու տրտմությունը հեռանում են</p> <p>Ավելի առատորեն ենք զգում Հոգու ազդեցությունը</p> <p>Ավելի պատրաստված ենք՝ ապրելու Աստծո և Հիսուս Քրիստոսի հետ</p> <p>Հիսուսին ավելի նման ենք դառնում</p> <p>Ուրախություն ենք զգում</p>

**Վարդապետություններն ու սկզբունքները հասկանալը:**

Երբ ուսանողներն իսկապես հասկանում են որևէ վարդապետություն կամ սկզբունք, նրանք ավելին կանեն, քան դրա վերաբերյալ պարզ սահմանում տալը:

Նրանք նաև հասկանում են, թե ինչպես է

վարդապետությունը կամ սկզբունքը ազդում իրենց կյանքի վրա: Երբ ուսանողները բացահայտում են ու հասկանում վարդապետությունն ու սկզբունքը, նրանք կարողանում են ավելի պատրաստակամորեն կիրառել այն:

Ուսուցիչները կարող են օգնել ուսանողներին ավելի լավ հասկանալ և կիրառել վարդապետություններն ու սկզբունքները, տալով հարցեր, որոնք կօգնեն ուսանողներին վերլուծել այն, ինչ սովորել են:

Աղյուսակը լրացնելու համար բավարար ժամանակ հատկացնելուց հետո, հրավիրեք ուսանողներին քննարկել դասարանի մեկ այլ անդամի հետ այն արտահայտություններն ու բառերը, որոնք նրանք գրել են իրենց աղյուսակում: Կարդացած վարդապետությունների և սկզբունքների մասին ուսանողների պատկերացումը խորացնելու համար կարող եք նրանց տալ հետևյալ հարցերից մի քանիսը, կամ բոլորը.

- Առաջին և երկրորդ սյունակներում ձեր հայտնաբերած սկզբունքներն ինչպե՞ս են օգնում ձեզ իմանալ, թե արդյոք ունկնդիրն իսկապես ապաշխարում է:
- Համաձայն երրորդ սյունակում գրվածների՝ ի՞նչ օրհնություններ են գալիս ապաշխարությունից, բացի մեղքերի ներում ստանալուց:
- Դիտարկեք առաջին և երրորդ սյունակներում գրվածները: Ինչո՞ւ է հարկավոր հավատք ունենալ Քրիստոսի հանդեպ, եթե այս բաներն իրոք լինելու են:

Երբ ուսանողները պատասխանեն, կարող եք նշել, որ միսիոներներն ուսուցանում են ավետարանը, որպեսզի օգնեն մարդկանց հավատք կառուցել Հիսուս Քրիստոսի հանդեպ և որ դրդեն նրանց ապաշխարելու: Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը և ապաշխարությունը այն պայմաններն են, որոնք գործի են դնում Քավությունը: Ապաշխարությունը նաև կօգնի ունկնդիրներին մոտենալ Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Որպեսզի նախապատրաստեք ուսանողներին վարժվել ապաշխարությունն ուսուցանելու հարցում, դասարանի հետ կիսվեք հետևյալ սցենարով.

Դուք և ձեր զուգրակները երեք շաբաթ ուսուցանում եք նույն սենյակում ապրող երկու ընկերների: Նրանցից մեկը շատ արագ առաջադիմում է: Մյուս ունկնդիրը կարծես կորցրել է հետաքրքրությունը և այժմ հեռանում է սենյակից, երբ սկսվում են ձեր զրույցները: Երբ դուք վերջապես հնարավորություն եք ունենում հարցեր տալու չհետաքրքրվող ընկերոջը, նա բացատրում է, որ ինքը գիտի, որ այս պահին չի ապրում համաձայն Աստծո կամքի, բայց նա ապրել է այդպես իր ամբողջ կյանքում և եկել է այն մտքին, որ ինքն այդպիսին է և այլևս ոչինչ փոխել հնարավոր չէ:

Ուսանողներին բաժանեք զույգերի կամ ընկերակցությունների: Զույգերին բավարար ժամանակ տվեք պատրաստվելու, թե ինչպես նրանք կաշխատեին միասին՝ ուսանողների մյուս զույգին ապաշխարության մասին երեք-չորս ընդհանուր մի կարճ դաս ուսուցանելու: Խրախուսեք ուսանողներին պատրաստվել դերերով կատարելու երկու ընկերակիցների մասին սցենարը: Բացատրեք, որ նրանց դասը պետք է լինի պարզ, հստակ և կենտրոնացած լինի ընկերակիցների կարիքների շուրջ: Նրանք պետք է մտածեն, թե ինչպես օգնել անտարբեր սենյակակցին հասկանալ, թե ինչու է անհրաժեշտ, որ ինքը փոխվի, և պատկերացնել, որ Փրկիչի օգնությամբ ապաշխարությունը հնարավոր է: Խնդրեք ուսանողներին օգտագործել *Քարոզիչ Իմ Ավետարանը*, 68-69 էջերի նյութը, կամ միսիոներների գրքույկը՝ *Հիսուս Քրիստոսի ավետարանը*: Քաջալերեք նրանց ընդգրկել սուրբ գրությունների մեկ-երկու հատվածներ, որոնք հաղորդում են ապաշխարության կարևորությունը:

Ուսանողներին փոքր խմբերի բաժանեք՝ յուրաքանչյուր խմբում երկու զույգ: Հանձնարարեք, որ զույգերից մեկն ուսուցանի մյուս զույգին, ովքեր կկատարեն սցենարում նկարագրված ընկերակիցների դերը: Բացատրեք

ուսանողներին, որ երբ նրանք ունկնդիրներին դեր են խաղում, պետք է ազատ զգան՝ անկեղծորեն արտահայտելու իրենց մտահոգությունները, բայց չպետք է փորձեն լինել ողբերգական կամ հակադրվող՝ ուսանողների հանդեպ, ովքեր ուսուցանում են:

Երբ ուսանողներն ավարտեն իրենց ուսուցումը, թող խումբը քննարկի, թե ինչը լավ անցավ, իսկ ինչն ուսուցիչները կարող էին ավելի լավ անել:

Այնուհետև թող ուսանողները դերերով փոխվեն, թույլ տալով մյուս զույգին փորձել ուսուցանել: Հավաստիացեք, որ ժամանակ կա, որպեսզի նրանք կարծիք ստանան:

Դերախաղից հետո հարցրեք ուսանողներին, թե ինչ հարցեր կամ մտքեր նրանք ունեցան ուսուցանելու փորձից:



Որպեսզի օգնեք ուսանողներին զգալ ապաշխարության կարևորությունն ու ճշմարտությունը՝ որպես ուղի, որով մարդիկ կարող են ետ դառնալ դեպի Աստված, ցուցադրեք «Jesus Christ Is the Way» (5:02) տեսանյութը:

Տեսանյութը դիտելուց հետո հարցրեք.

- Ի՞նչ ապացույցներ եք տեսնում այս տեսանյութում, որ այդ քույրն իսկապես փոխվեց ապաշխարության միջոցով, և որ նա ետ շրջվեց՝ դեպի Աստված:
- Ի՞նչ զգացումներ ունեցաք, երբ դիտեցիք, թե ինչպես է ավետարանի ուղերձն օգնել այդ քրոջը փոխվել և շրջվել դեպի Աստված:

Եզրափակեք հարցներով ուսանողներին, թե արդյոք կա՞ն ցանկացողներ դասարանի հետ կիսվելու իրենց վկայությամբ՝ հավատքի գործության և ապաշխարության մասին և ասել, թե ինչու են նրանք ցանկանում կիսվել ավետարանով: Ավարտեք՝ բերելով նաև ձեր վկայությունը:

## Գործելու հրավերներ

Հրավիրեք ուսանողներին ավելի սովորել օրհնությունների մասին՝ որոնք են հավատքն առ Հիսուս Քրիստոսը, մեղքերից ներում ստանալը, և ապաշխարության շնորհիվ եկող ուրախությունը՝ կատարելով առաջարկված հետևյալ վարժություններից մեկը կամ մի քանիսը.

- Գալիք ընտանեկան երեկոյի ժամանակ ուսուցանեք Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք ունենալու և ապաշխարության կարևորության մասին:
- Ուսումնասիրեք հավատքի մասին սուրբ գրության հատվածները Սուրբ գրությունների ուսումնասիրություն վանդակից՝ *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ, էջ 68: Նշեք կամ գունավորեք նրանք, որոնք դուք կցանկանայիք ուսուցանել մյուսներին ձեր միսիայի ժամանակ:
- Օգտագործեք Թեմատիկ Ուղեցույցը և ժամանակակից մարգարեների և առաքյալների խոսքերը՝ ուսումնասիրելու համար ապաշխարության վարդապետությունը: Ձեր ուսումնասիրության օրագրերում նշումներ կատարեք այն մասին, ինչ սովորում եք: Մտածեք այս վարդապետության մասին վկայություն ունենալու ուղղությամբ, որով դուք կարող եք կիսվել ուրիշների հետ ձեր միսիայի ժամանակ: Ամրապնդեք ձեր հավատքը ապաշխարության սկզբունքի հանդեպ, ձգտելով ապաշխարել ամեն օր, և գրի առեք այդ փորձը ձեր ուսումնասիրության օրագրերում:

- Օգտագործեք առցանց միջոցները, ինչպիսիք են սոցիալական լրատվամիջոցները, որպեսզի տեղադրեք «Jesus Christ Is the Way» տեսանյութը (կամ այլ տեսանյութ Փրկիչի և Նրա Քավոյթյան մասին), որ մյուսները դիտեն: Մեկնաբանեք, թե ինչու է այս տեսանյութը նշանակալից ձեզ համար:



# Ապաշխարություն

Ի՞նչ է ապաշխարությունը:	Ինչպե՞ս ենք մենք ապաշխարում:	Որո՞նք են ապաշխարության ապացույցի պտուղները կամ ապացույցը:
<p>Փոխել մտքերը, հավատալիքները, վարքը</p>	<p>Զգալ խղճի խայթ կամ աստվածային տրտմություն</p>	<p>Ստանալ Քրիստոսի ողորմածությունը</p>



# 14

## Ուսուցանել Հիսուս Զրիստոսի Ավետարանը (Մաս 2)

### Նախաբան

Հիսուս Զրիստոսի ավետարանը ներառում է հավերժական ճշմարտություններ, սկզբունքներ, օրենքներ, ուխտեր և արարողություններ, որոնք անհրաժեշտ են մարդկությանը Աստծո ներկայություն ետ վերադառնալու համար: Ավետարանի առաջին սկզբունքներն ու արարողություններն են՝ հավատքն առ Հիսուս Զրիստոս, ապաշխարությունը, ընկրմամբ մկրտությունը և Սուրբ Հոգու պարգևը: Միսիոներները կարևոր պարտականություն ունեն՝ հրավիրելու

ուրիշներին մկրտվել և ստանալ Սուրբ Հոգու պարգևը: Բացի այդ, երբ Աստծո զավակները դառնում են Եկեղեցու անդամ, նրանք պետք է համբերեն միևնույն վերջ՝ ընդունելով այլ սկզբունքներ և արարողություններ և հավատարիմ մնալով Աստծո պատվիրաններին: Ապագա միսիոներները պետք է ունենան հստակ ըմբռնում այս վարդապետությունների մասին և պատրաստ լինեն բացատրել դրանք պարզորեն և վկայեն դրանց մասին զորությամբ:

### Նախապատրաստություն

- Ուսումնասիրեք Մատթեոս 3.13–17, Հովհաննես 3.3–6, 2 Նեփի 31.17–20, և Վարդապետություն և Ուխտեր 20.37:
- Ուսումնասիրեք *Քարոզիչ Իմ Ավետարանը*, էջեր 66-69:
- Պատրաստվեք ցուցադրել Հիսուսի մկրտության նկարը:
- Պատրաստվեք ցուցադրել «Invitation to Be Baptized: German» տեսանյութը (2:43), The District 2, որը մատչելի է LDS.org-ում:

### Ուսուցման առաջարկներ

#### Մկրտություն՝ մեր առաջին ուխտը

Որպեսզի պատրաստեք ուսանողներին գտնելու մկրտության մասին սկզբունքները, ցուցադրեք նկարը, որտեղ Հովհաննեսը մկրտում է Հիսուսին, և հրավիրեք ուսանողներին ամփոփել այն, ինչ իրենք գիտեն Հիսուս Զրիստոսի մկրտության մասին:

Գուցե նախընտրեք վերանայել Փրկիչի մկրտության պատմությունը, հանձնարարելով որևէ ուսանողի կարդալ Մատթեոս 3.13-17-ը բարձրաձայն: Ապա հրավիրեք ուսանողներին շրջվել դեպի իրենց կողքի նստողը և պատասխանել այս հարցին.

- Ի՞նչ կարևոր ճշմարտություններ են ուսուցանվում այս պատմության մեջ Հիսուսի մկրտության մասին:

Գրատախտակին գրեք հետևյալ հարցերը.

Արարողություն	Ուխտ
---------------	------

Խնդրեք դասարանի կեսին ուսումնասիրել առաջին չորս պարբերությունները «Մկրտություն՝ մեր առաջին ուխտը» էջեր 69-70, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում, փնտրելով, թե ինչպես կարելի է բացատրել արարողությունը: Հանձնարարեք մյուս կեսին ուսումնասիրել նույն բաժինը, փնտրելով, թե ինչպես կարելի է բացատրել *ուխտը*:



Հովհաննեսը մկրտում է Հիսուսին

Ուսանողներին գրելու համար բավականաչափ ժամանակ տալուց հետո, խնդրեք կամավորների սահմանել *արարողություն* և *ուխտ* բառերը: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս են *արարողություն* և *ուխտ* բառերը կապված մկրտության հետ: (Օգնեք ուսանողներին հասկանալ այս ճշմարտությունը. **Մկրտության արարողության միջոցով մենք սրբազան ուխտ ենք կապում Աստծո հետ:**)

Կենտրոնացրեք ձեր ուսանողների ուշադրությունը «Մկրտություն՝ մեր առաջին ուխտը» բաժնի չորրորդ պարբերության վրա, և ապա հարցրեք.

- Երբ մենք ստանում ենք մկրտության արարողությունը, ի՞նչ ենք մենք ուխտում անել: (**Երբ մենք մկրտվում ենք, սրբազան ուխտ ենք կապում՝ մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը, միշտ հիշել Նրան և պահել Նրա պատվիրանները:** Եթե զգում եք, որ ուսանողները կարիք ունեն այս գաղափարի հետ կապված ավելի շատ ուսուցման, դուք կարող եք մի քանի ընթացակարգներ ներմուծել ձեր սեփական վարդապետություն և Ուխտեր 20.37-ը:)

Դուք կարող եք օգնել ուսանողներին ավելի լավ հասկանալ իրենց մկրտության ուխտը, ցուցադրելով Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ մեջբերումը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Մկրտության ժամանակ մենք ուխտ ենք կապում մեր Երկնային Հոր հետ, որ կամենում ենք գալ Նրա արքայություն և պահել Նրա պատվիրանները այդ ժամանակից ի վեր, չնայած մենք դեռ ապրում ենք աշխարհում: Մեզ հիշեցվել է, որ մեր մկրտությունը ուխտ է՝ «կանգնելու որպես Աստծո (և Նրա արքայության) վկաներ *բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում*, որ դուք կարող է լինեք, նույնիսկ մինչև մահ, որպեսզի դուք կարողանաք փրկագնվել Աստծո կողմից և համարվեք նրանց հետ, ովքեր պատկանում են առաջին հարությանը, որպեսզի դուք կարողանաք հավերժական կյանք ունենալ» [Մոսիա 18.9, շեշտադրումն ավելացված է]:

Երբ հասկանում ենք մեր մկրտության ուխտը և Սուրբ Հոգու պարգևը, դա մեր կյանքը փոխում է և հաստատում է մեր լիարժեք հավատարմությունն առ Աստծո արքայությունը: Երբ գայթակղությունների հանդիպենք մեր ճանապարհին, եթե լսենք, Սուրբ Հոգին կհիշեցնի մեզ, որ խոստացել ենք հիշել մեր Փրկիչին և հնազանդվել Աստծո պատվիրաններին» (“The Covenant of Baptism: To Be in the Kingdom and of the Kingdom,” Ensign, Nov. 2000, 7).

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «հաստատել մեր լիարժեք հավատարմությունն առ Աստծո արքայությունը»:
- Ինչպե՞ս կարող է մկրտությունը փոխել մարդու կյանքը:

Հրավիրեք ուսանողներին կարդալ մնացած պարբերությունները մկրտության մասին էջեր 69-70, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում: Խնդրեք նրանց գտնել և նշել մկրտության վարդապետության լրացուցիչ կողմերը, որոնք կարևոր կլինեն ունկնդիրների հետ կիսվելու համար: Նրանց տվեք մի քանի ընթացակարգներ վարժությունը կատարելու համար և ապա խնդրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գտածով: Երբ ուսանողներն արձագանքեն, դուք կարող եք տալ ստուգող հարցեր.

- Ինչո՞ւ է կարևոր ունկնդրի համար հասկանալ այս վարդապետությունները:

- Ո՞րն է փոխհարաբերությունը մկրտության ուխտի և առ Հիսուս Քրիստոս հավատքի և ապաշխարության սկզբունքների միջև, որը մենք քննարկեցինք անցյալ դասին:
- Ինչո՞ւ է ընկղմվելը մկրտության արարողության կարևոր մասը: (Այն խորհրդանշում է մահը, թաղումը և Հիսուս Քրիստոսի Հարությունը: Այն նաև խորհրդանշում է մեր հին կյանքի ավարտը և մեր վերածնունդը որպես Քրիստոսի աշակերտ [տես Հռովմայեցիս 6.3–6]:)

Բացատրեք, որ կարևոր է, որ ունկնդիրները պատշաճորեն պատրաստվեն մկրտությանը: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 20.37-ը: Ապա հանձնարարեք ուսանողներին շրջվել դեպի դասարանի մեկ ուրիշ անդամը և քննարկել հետևյալը.



*Ուշադրություն. Չեղյալ հարցերից յուրաքանչյուրից հետո, բավականաչափ դադար տվեք, որպեսզի ուսանողները քննարկեն պատասխանն իրենց կողքի նստողի հետ:*

- Ինչպե՞ս կարող է այս սկզբունքն օգնել ձեզ ձեր ներկա և ապագա պարտականություններում: (Եթե ուսանողները դժվարանում են պատասխանել այդ հարցին, նրանց խորհուրդ տվեք օգտվել վանդակից, որը կոչվում է «Նախքան մկրտությունը»՝ 71 էջի վերևում, *Քարոզիր Իմ Ավետարանը* ձեռնարկ):
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «առաջ գալ կոտրված սրտով և փշրված հոգով»:
- Ինչպե՞ս է մարդ ցույց տալիս, որ ինքն իսկապես «ընդունել է Քրիստոսի Հոգին»:

Ուսանողներին հատկացրեք մի պահ՝ գրելու իրենց ուսումնասիրության օրագրերում այն առանձնահատուկ ուղիների մասին, որ նրանց մկրտության ուխտերը պահելը օրհնություններ են բերել իրենց կյանք: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, հրավիրեք երկու կամ երեք ուսանողի կիսվել իրենց գրածով դասարանի հետ:



Ցույց տվեք «Invitation to be Baptized: German» տեսանյութը (2:43): Երբ ուսանողները դիտեն տեսանյութերը, խնդրեք նրանց փնտրել, թե ինչպես են միսիոներներն ուսուցանում Գերմանիան մկրտության կարևորության մասին:

- Ի՞նչ ասացին միսիոներները Գերմանիան, որպեսզի օգնեն հասկանալ մկրտության կարևորությունը:
- Ի՞նչ ապացույց կար, որ Գերմանը զգացել էր Սուրբ Հոգին և ցանկություն ուներ մկրտվելու:

Բաժանեք դասարանը զույգերի, և հրավիրեք յուրաքանչյուր զույգին օգտագործել նյութը 69-70 էջեր, *Քարոզիր Իմ Ավետարանը* ձեռնարկում և մեկ կամ երկու սուրբ գրությունների հատվածներ՝ Սուրբ գրությունների ուսումնասիրություն վանդակից, էջ 71, պատրաստելու չորս-հինգ ընդհանուր դաս՝ մկրտությունն ունկնդրին ներկայացնելու համար: Ուսանողները կարող են նաև օգտագործել *Հիսուս Քրիստոսի Ավետարանը միսիոներական գրքային 8 էջի նյութը*:

Ուսանողներին պատրաստվելու համար բավարար ժամանակ հատկացնելուց հետո, կազմավորեք դասարանը չորս ուսանողից բաղկացած փոքր խմբերի, յուրաքանչյուր խմբում երկու զույգով: Ցուրաքանչյուր խմբի մեկ զույգին խնդրեք ուսուցանել մկրտության մասին չորսից հինգ ընդհանուր

**Վարժություններ**

**գրելը:** Գրելը կարող է արդյունավետ միջոց լինել՝ օգնելու ուսանողներին մտածել և խորհել դասարանում ուսուցանվող վարդապետությունների և սկզբունքների մասին: Գրավոր հանձնարարությունը պետք է հստակորեն բացատրվի և համապատասխան ժամանակ պետք է տրամադրվի ուսանողներին այն լրացնելու համար: Երբ վարժությունն ավարտեք, կարելի է ժամանակ տալ, թույլ տալով մի քանի ուսանողների կիսվել իրենց արձագանքներով դասարանի հետ:

գույզին: Խրախուսեք ուսանողներին, ովքեր միսիոներների դեր են կատարում, բացել իրենց ընտրած սուրբ գրությունների հատվածները և իրենց ուսուցման ընթացքում բարձրաձայն կարդալ դրանք: Երբ ուսանողներն ավարտեն իրենց ուսուցման փորձառությունը, թող փոքրիկ խմբերը քննարկեն իրենց խմբում հետևյալը: Ի՞նչը լավ ստացվեց: Ինչպե՞ս դասն օգնեց նրանց, ովքեր ուսուցանվեցին, հասկանալ մկրտության կարևորությունը: Ի՞նչ կարող էին փոխել ուսուցիչները՝ իրենց ուսուցումն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Այնուհետև, փոխեք դերերը և թույլ տվեք ուսանողական գույզին, ովքեր ուսուցանվել էին, այժմ ուսուցանել մյուս գույզին: Հավաստիացեք, որ կա ժամանակ երկրորդ գույզի համար ստանալ արձագանք: Այս վարժության ընթացքում, քայլեք սենյակով, հետևելով ուսանողների ուսուցմանը և գովեք և արեք առաջարկություններ, թե ինչպես նրանք կարող են բարելավվել:

Երբ բոլոր ուսանողները հնարավորություն ունենան ուսուցանելու, տրամադրեք մի քանի ընթացք՝ դասարանի հետ միասին քննարկելու փորձառությունը: Քննարկում սկսելու համար, ուղղեք հետևյալ տիպի հարցեր.

- Ի՞նչ բաներ դուք սովորեցիք այս վարդապետությունն ուսուցանելիս:
- Ինչո՞ւ է կարևոր, որ դուք պատրաստվեք այժմ՝ ուսուցանելու այս սկզբունքները, ճշմարտությունները և վարդապետություններն ուրիշներին:
- Ի՞նչ կարող եք անել այժմ ավելի լավ պատրաստվելու համար, որպեսզի ուսուցանեք Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին ձեր միսիայի ընթացքում:

### Սուրբ Հոգու պարզևը

Որպեսզի պատրաստեք ուսանողներին դասի այս մասի համար, հարցրեք դասարանին, թե ինչ արարողություն է կատարվում անմիջապես մարդու մկրտությունից հետո (հաստատում, որի միջոցով անձնավորությունները դառնում են Եկեղեցու անդամներ և ստանում են Սուրբ Հոգու պարզևը): Խնդրեք ուսանողներին տրամադրել երեսուն վայրկյան խորհելու, թե ինչու են մարդիկ անմիջապես հաստատվում՝ մկրտվելուց հետո: Նախքան ուսանողների պատասխանելը, կարող եք կարդալ նրանց համար Մարգարե Ջոզեֆ Միլթի այս մեջբերումը.



«Դուք կարող եք նույն հաջողությամբ որպես մարդ մկրտել մի մեշոկ ավազը, եթե չանեք դա՝ ի նկատի ունենալով մեղքերի թողությունը և Սուրբ Հոգու ստացումը: Ջրով մկրտությունը կիսատ մկրտություն է, և ոչ մի բանի պիտանի չէ առանց մյուս կեսի, այսինքն՝ Սուրբ Հոգու մկրտության» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Միլթ [2007], 95):

Հարցրեք.

- Ինչո՞ւ մկրտությունը կարող է համարվել միայն «կիսատ մկրտություն», եթե այն չի հաջողվում «Սուրբ Հոգու մկրտությամբ»: (Մի քանի պատասխաններից հետո, դուք կարող եք խրախուսել ուսանողներին լսել այս հարցի լրացուցիչ պատասխանները, երբ դասը առաջ ընթանա:)

Բացատրեք ուսանողներին, որ հրեա մի առաջնորդ Նիկողեմոս անունով գաղտնի եկավ գիշերով՝ հարցեր տալու Հիսուս Նազովրեցուն: Թող մի ուսանող բարձրաձայն կարդա Հովհաննես 3.3, և հարցրեք.

- Ի՞նչ են Փրկիչի խոսքերը Հովհաննես 3.3-ում նշանակում այն բանի վերաբերյալ, թե ինչ է պահանջվում Աստծո արքայությունը մտնելու համար.

Կարդացեք Հովհաննես 3.4–6-ը դասարանի համար և հարցրեք.

- Ի՞նչ հարցրեց Նիկողեմոսը, որից ենթադրվում է, որ նա չէր հասկանում 3 հատվածում գրված Փրկիչի ուսմունքը:
- Ինչպե՞ս Հիսուսը պատասխանեց Նիկողեմոսի հարցերին: (Նա ուսուցանեց Նիկողեմոսին ավետարանական մի հիմնական վարդապետություն. **Մենք պետք է ծնվենք ջրից և Հոգուց Աստծո արքայությունը մտնելու համար:** Նա ուսուցանեց, որ «վերստին ծնվելը» վերաբերում է հոգևոր վերածննդին, ոչ թե ֆիզիկականին:)

Գրեք գրատախտակին.

<p><b>Վերստին ծնվել</b>  <i>Ջրից ծնվել</i>  <i>Հոգուց ծնվել</i></p>
---

Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ է նշանակում «ծնվել ջրից»: (Դա նշանակում է ընկղմամբ մկրտվել:)
- Ի՞նչ է նշանակում «ծնվել Հոգուց»: (Դա նշանակում է ստանալ Սուրբ Հոգու պարգևը: Եթե ուսանողները դժվարանան պատասխանել այս հարցին, թող նայեն Հովհաննես 3.5-ը, ծանոթություն ա:)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է օգտագործվում «ծնվել» բառը նկարագրելու համար, թե ինչ պետք է պատահի մեզ հետ հոգեպես: Ֆիզիկապես ծնվելու ո՞ր հատկանիշներն են համեմատելի մեր հոգևոր վերածննդի հետ: (Եթե կարիք կա, կարող եք կարդալ Մովսես 6.58–59, որպեսզի օգնեք պատասխանել այս հարցին:)

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ «Սուրբ Հոգու պարգևը» էջ 71, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ: Թող դասարանի մնացած մասը ընթացքում հետևի, որոնելով օրհնությունները, որոնք ուղեկցում են Սուրբ Հոգու պարգևին:

Հարցրեք դասարանին.

- Որո՞նք են օրհնություններից մի քանիսը, որոնք ուղեկցում են Սուրբ Հոգու պարգևին: (Վարդապետություններից մեկը, որ ուսանողները պետք է բացահայտեն, սա է. **Սուրբ Հոգու պարգևը կարող է սրբագործող և մաքրագործող ազդեցություն ունենալ նրանց վրա, ովքեր ստանում են այն:**)

Ուսանողներին օգնելու համար ավելի լավ հասկանալ վարդապետությունը, խնդրեք նրանց ուսումնասիրել մեկ կամ երկու սուրբ գրության հատվածներ «Սուրբ Հոգու օրհնություններն ու ազդեցությունը» վերնագրի ներքո, Սուրբ գրությունների ուսումնասիրություն վանդակից, էջ 72, *Քարոզիչ Իմ*

*Այլեստարանը* ձեռնարկում: Երբ նրանք ուսումնասիրեն, հրավիրեք նրանց նշել իրենց սուրբ գրքերում օրհնություններից մի քանիսը, որոնք գալիս են Սուրբ Հոգու պարզևն ընդունելուց: Այնուհետև հարցրեք.

- Ինչո՞ւ է կարևոր մարդու համար ընդունել Սուրբ Հոգին մկրտվելուց հետո:

Ուղղեք հետևյալ հարցը, բայց նախքան ուսանողների պատասխանելը, թույլ տվեք նրանց մի պահ լուռ խորհել իրենց պատասխանների շուրջ: Բավարար ժամանակ անց հրավիրեք մի քանի ուսանողների պատասխանել և դասարանի հետ կիսվել իրենց իսկ փորձառություններով:

- Ի՞նչ օրհնություններ եք դուք ստացել Սուրբ Հոգու պարզևն միջոցով:

Դասարանը բաժանեք զույգերի: Խնդրեք ուսանողներին օգտագործել տեղեկություն *Քարոզիչ Իմ Այլեստարանը* ձեռնարկից (կամ բաժնից, որը կոչվում է «Ինչո՞ւ ես պետք է ստանամ Սուրբ Հոգին» 8–10 էջերում, *Հիսուս Քրիստոսի այլեստարանը* միսիոներական գրքույկից) և թող պատրաստեն չորս-հինգ ընդհանուր դաս՝ Սուրբ Հոգու պարզևն վերաբերյալ: Հիշեցրեք նրանց ներառել իրենց դասում մեկ կամ երկու սուրբ գրությունների հատվածներ Սուրբ գրությունների ուսումնասիրություն վանդակից՝ 72 էջ, *Քարոզիչ Իմ Այլեստարանը* ձեռնարկ:

Պատրաստվելու համար բավական ժամանակ տրամադրելուց հետո, կազմավորեք դասարանը չորս ուսանողից բաղկացած փոքր խմբերի, ամեն խմբում երկու զույգ: Թող մեկ զույգը ուսուցանի մյուս զույգին: Երբ ուսանողներն ուսուցանեն, քայլեք սենյակով և հետևեք, զովասանք տալով և առաջարկներ անելով, թե ինչպես նրանք կարող են բարելավվել: Երբ ուսանողներն ավարտեն իրենց ուսուցման փորձառությունը, թող փոքրիկ խմբերը քննարկեն իրենց միջև հետևյալը. Ի՞նչը լավ ստացվեց: Ի՞նչ կարող էին ուսուցիչներն անել այլ ձևով՝ իրենց ուսուցումը դարձնելու ավելի արդյունավետ: Ինչպե՞ս նրանց դասն օգնեց մյուսներին, ովքեր ուսուցանվում էին՝ հասկանալ Սուրբ Հոգու պարզևն:

Ապա թող զույգերը յուրաքանչյուր խմբում դերերով փոխվեն, թույլ տալով ուսանողական զույգին, ովքեր ուսուցանվում էին, ուսուցանել մյուս զույգին: Հավաստիացեք, որ երկրորդ զույգը կհասցնի կարծիքներ լսել:


Երբ յուրաքանչյուր զույգ հնարավորություն կունենա ուսուցանելու, տրամադրեք մի քանի ընդհանուր գնահատելու փորձառությունը՝ ուղղելով հետևյալ տիպի հարցեր:

- Ի՞նչ բաներ դուք սովորեցիք այս վարդապետությունն ուսուցանելիս:
- Այս փորձառության վրա հիմնվելով, ի՞նչ դուք կանեիք՝ բարելավելու ձեր ուսուցումը որպես միսիոներ:

**Համբերել միևնույն վերջ**

Գրատախտակին նկարեք դարպաս, որի ետևում արահետ է:

**խորհրդածելը:**  
 Դասարանում ուսանողներին ժամանակ տրամադրելով խորհրդածելու համար, դուք խրախուսում եք նրանց սովորել Հոգու միջոցով: Հոգու դերերից մեկը մեզ ցույց տալիս է «բոլոր բաները, [ինչ] մենք պետք է անենք» (2 Նեփի 32.5): Ամենաարդյունավետ դասերը ժամանակ են նախատեսում, որ ուսանողները խորհրդածեն իրենց սովորած ճշմարտությունների շուրջ:



Խնդրեք մի ուսանողի դասարանում բարձրաձայն կարդալ 2 Նեփի 31.17: Այնուհետև հարցրեք դասարանին.

- Ի՞նչը Նեփին նշեց որպես դարպաս, որը տանում է դեպի մեր հավերժական կյանքը:

Հրավիրեք մեկ ուրիշ ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 31.18-20-ը մինչ դասարանը ընթացքում հետևում է, որոնելով, թե ի՞նչ մենք պետք է անենք մկրտվելուց հետո:

- Ի՞նչ ասաց Նեփին այն մասին, թե ի՞նչ կա դարպասից այն կողմ: (Դեպի հավերժական կյանք տանող նեղ և անձուկ արահետ:)
- Ըստ Նեփիի, ի՞նչ պետք է մարդ անի մկրտվելուց հետո, որպեսզի ստանա հավերժական կյանք:
- Ինչպե՞ս է մինչև վերջ համբերելը կապված Փրկիչի օրինակին հետևելու հետ:

Ուսանողներին խնդրեք կարդալ «Համբերել մինչև վերջ» 72 էջ, *Քարոզիչ Իս Ավետարանը* ձեռնարկ: Խրախուսեք նրանց որոնել, թե ի՞նչ մենք կարող ենք անել մինչև վերջ համբերելու համար: Այնուհետև հարցրեք.

- Ինչո՞ւ է մեզ համար կարևոր մինչև վերջ համբերելը: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալ սկզբունքը. **Երբ մենք անկեղծորեն ձգտում ենք համբերել մինչև վերջ, մենք կորակավորվենք հավերժական կյանքի համար:**)
- Ինչպե՞ս կօգնի համբերել մինչև վերջ Փրկիչի օրինակին հետևելը:

Ավարտեք՝ կիսվելով ձեր իսկ վկայությամբ Հիսուս Քրիստոսի ավետարանի կարևորության մասին, հատկապես մկրտության, Սուրբ Հոգու պարգևի և մինչև վերջ համբերելու վերաբերյալ:

## Գործելու հրավերներ

Մտածեք եկող շաբաթվա ընթացքում հրավիրել ուսանողներին խորացնել իրենց հասկացողությունը Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին՝ անելով հետևյալ վարժություններից մեկը կամ մեկից ավելին:

- Աշխատեք բացատրել մկրտության պահանջները, ինչպես դրանք տրված են Վարդապետություն և Ուխտեր 20.37-ում: Գրեք մի քանի նախադասություններ ձեր ուսումնասիրության օրագրում, որոնք նկարագրում են, թե ի՞նչ եք դուք անում այժմ՝ ապրելու համաձայն մկրտության ուխտին, որն ուրվագծված է այս հատվածում:
- Ընթերցեք հատվածները Սուրբ Հոգու պարգևի մասին, որոնք գտնվում են Սուրբ գրությունների ուսումնասիրություն վանդակում, էջ 72, *Քարոզիչ Իս*



*Ավետարանը* ձեռնարկ: Կարդացեք նաև «Սուրբ Հոգի» վերնագիրը Սուրբ գրքերի ուղեցույցում: Նշեք ձեր սուրբ գրքերում կամ գրեք ձեր ուսումնասիրության օրագրում այն հատվածները, որոնք դուք կկամենայիք օգտագործել, երբ ուսուցանեք որևէ մեկին Սուրբ Հոգու պարզևի մասին:

- Սովորեցրեք «Դաս 3. Հիսուս Քրիստոսի ավետարանը» դասի սկզբունքները ընտանիքի որևէ անդամի կամ ընկերոջ (նախընտրելի է ինչ-որ մեկին, ով Եկեղեցու անդամ չէ, կամ անձնավորության, ով ավելի քիչ ակտիվ է), անձնապես, կամ առցանց: Ուսուցանելիս կիսվեք ձեր վկայությամբ այս սկզբունքների մասին:

# 15

## Տաճարային և ընտանեկան պատմության աշխատանք

### Նախաբան

Ապագա և լիաժամկետ միսիոներները կարող են առաջ տանել փրկության աշխատանքը, սովորելով տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը և, ապա, օգնելով մյուսներին զգալ Հոգու զգացումները, որոնք ուղեկցում են այս աշխատանքին: Ընտանեկան պատմությունը կարող է լինել հզոր միջոց գտնելու մարդկանց՝ ուսուցանելու և գործադրելու նորադաձների և քիչ ակտիվ անդամների հավատքը:

Ընտանեկան պատմության աշխատանքին մասնակցելը դարձնում է մարդկանց սրտերը դեպի իրենց նախնիները և դեպի Տերը: Ընտանեկան պատմությունը գործիք է, որը միսիոներները կարող են օգտագործել, հրավիրելու ուրիշներին գալ դեպի Քրիստոսը և ստանալու փրկության արարողությունները:

### Նախապատրաստություն

- Ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 109.22–23, 110.13–16, 138.29–35, և Զոզեֆ Սմիթ—Պատմություն 1.38–39:
- Ուսումնասիրեք *Քարոզիչ Իմ Ավետարանը*, էջեր 94–95, 184–187:
- Պատրաստվեք ցուցադրել «Այժմ է ժամանակը» տեսանյութը (3:20), որը մատչելի է LDS.org-ում:
- Պատրաստվեք ցուցադրել «Ընտանեկան Պատմությունը և միսիոներական աշխատանքը՝ Գտնելը» տեսանյութը (3:53), որը մատչելի է LDS.org-ում:
- Պատրաստվեք ցուցադրել «Ընտանեկան պատմությունը և միսիոներական աշխատանքը՝ Ակտիվացնելը» տեսանյութը (3:05), որը մատչելի է LDS.org-ում:
- Պատրաստեք հովհարաձև աղյուսակի մի տպագրված օրինակ FamilySearch.org-ից:
- Ծանոթացեք որոնման հիմնական միջոցների հետ FamilySearch.org-ում, կամ հրավիրեք մի ծխի կամ ճյուղի ընտանեկան պատմության խորհրդատուի՝ ուսուցանելու այդ միջոցների մասին:
- Պատրաստվեք ցուցադրել մոտակա տաճարի մի նկար:
- Պատճենեք չորս սերնդի տոհմաբանական աղյուսակի դատարկ օրինակը (որը գտնվում է դասի վերջում) յուրաքանչյուր ուսանողի համար:

### Ուսուցման առաջարկներ

#### Տաճարային օժտման կարևորությունը

Ցուցադրեք մոտակա տաճարի մի օրինակ, իսկ հետո կարդացեք հետևյալ մեջբերումը Նախագահ Հովարդ Վ. Հանթերից.



«Եկեք պատրաստեք յուրաքանչյուր ուսանողի՝ գնալու տաճար և այդ փորձառությանը տանք էլ ավելի մեծ նշանակություն, քան միսիոներական կանչ ստանալուն» (“Follow the Son of God,” *Ensign*, Nov. 1994, 88):

Շեշտադրելու համար դուք կարող եք կրկին կարդալ մեջբերումը, իսկ հետո հարցնել ուսանողներին.

- Ինչպե՞ս տաճար գնալը կարող է ունենալ «ավելի մեծ նշանակություն», քան միսիոներական կանչ ստանալը: (Հնարավոր պատասխանները կարող են ներառել հետևյալը. մինչդեռ միսիան ժամանակավոր է, այդ ուխտերը, որոնք մենք կապում ենք տաճարում, հավերժական են, տաճարային օրհնությունները զորություն են բերում արժանի միսիոներներին:)

Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ առաջին պարբերությունը «Տաճարներ և քննական պատմություն» բաժնից, էջ 95, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկ: Այնուհետև հարցրեք.

- Որո՞նք են այն մի քանի օրհնությունները, որոնք մենք կարող ենք ստանալ տաճարում:
- Ինչպե՞ս այս օրհնությունները կարող են օգնել մարդուն, ով ձգտում է գալ դեպի Քրիստոս:

Տեսնելու համար, թե ինչպես են միսիոներներն օրհնվում տաճար հաճախելով նախքան միսիոներական ծառայությունը, խնդրեք դասարանին բացել Վարդապետություն և Ուխտեր 109.22–23-ը, և բացատրեք, որ այս հատվածները Կիրթլենդի Տաճարի նվիրագործման աղոթքի մասն են կազմում: Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ հատվածները, մինչ դասարանը կհետևի նրան, փնտրելով տաճարային օրհնությունները, որոնք Տիրոջ ծառաներն են ստանում: Այնուհետև օգնեք ուսանողներին գտնել մի սկզբունք, որն ուսուցանվում է այս հատվածներում՝ հարցնելով հետևյալը.

- Ինչպե՞ս են այս հատվածներն օգնում ձեզ հասկանալ, թե ինչու է այդքան կարևոր միսիոներների համար ստանալ տաճարային օրհնությունները նախքան միսիա մեկնելը: (Ուսանողների պատասխանները կարող են ամփոփվել այս սկզբունքով. **Տաճարային օրհնություններ ստանալը հնարավորություն է տալիս միսիոներներին առաջ գնալ աշխարհում աստվածային օգնությամբ և զորությամբ:** Կարող եք այդ սկզբունքը գրել գրատախտակին:)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Այնքան կարևոր է, որ դուք հասկանաք, որ տաճար գնալը ձեր սեփական օժտման համար ... ձեր միսիոներական պատրաստվածության անբաժան մասն է: ... [Դուք պետք է ] հասկանաք տաճարային այդ ուխտերի կարևորությունը [և] անբաժանելի կապը ձեր օժտման և ձեր միսիոներական հաջողության միջև: Իսկապես հենց *օժտում* բառն արտահայտում է այդ կենսական կապի էությունը: Օժտումը պարզն է: ...

Գիտեք, այս աշխատանքը չեք կարող մենակ անել: Մենք պետք է ունենաք երկնքի օգնությունը, մենք պետք է ունենանք Ստոժ *պարզվածքը*: ... Այս աշխատանքը լուրջ է, հակառակորդի դիմադրությունը այնքան մեծ է, որ մենք կարիք ունենք ամեն աստվածային զորության՝ ավելացնելու մեր ջանքերը և Եկեղեցին կայուն կերպով առաջ տանելու համար» («Պահելով ուխտերը. Ուղերձ նրանց համար, ովքեր կժառայեն միսիայում», *New Era*, Jan. 2012, 3–4):

Հարցրեք.

- Ինչպե՞ս է Երեց Հովանդի միտքն ամրացնում այն, ինչ ուսուցանվում է Վարդապետություն և Ուխտեր 109.22-23-ում:

Բացատրեք, որ նախքան տաճարային օժտում ստանալը, արժանի անդամները պետք է ստանան տաճարային երաշխավորագիր իրենց տեղական քահանայության առաջնորդներից: Այնուհետև ցուցադրեք հետևյալ միտքը և հրավիրեք որևէ ուսանողի կարդալ այն բարձրաձայն դասարանի համար.


«Տաճարային երաշխավորագիրը հաստատում է, որ մենք արժանի ենք համարվել եպիսկոպոսության անդամի կամ ճյուղի նախագահի հետ հարցազրույցի արդյունքում, ինչպես նաև մեր ցցի նախագահության կամ միսիայի նախագահության անդամի հետ հարցազրույցի արդյունքում: Տաճարային երաշխավորագրի հարցազրույցները հնարավորություն են մեզ համար՝ քննելու մեր արժանավորությունը: Յուրաքանչյուր հարցազրույցի ընթացքում մեր քահանայության առաջնորդները կհարցնեն մեզ մեր անձնական վարքի և հավատքի մասին: Մեր քահանայության առաջնորդները այդ հարցազրույցները պահում են գաղտնի և կոնֆիդենցիալ: ...

Ստորև տրված են մի քանի թեմաներ, որոնք ձեր քահանայության առաջնորդները կհարցնեն ձեզ.

1. Ձեր վկայությունը Երկնային Հոր, Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու մասին:
2. Արդյոք աջակցո՞ւմ եք Եկեղեցու Նախագահին:
3. Արդյոք ապրո՞ւմ եք մաքրաբարոյության օրենքով, տասանորդ վճարո՞ւմ եք, ազնի՞վ եք ուրիշների հետ և պահո՞ւմ եք Իմաստության խոսքը:
4. Արդյո՞ք ձգտում եք հաճախել Եկեղեցի, պահել ուխտերը, որոնք կապել եք և ձեր կյանքը ներդաշնակության մեջ պահել ավետարանի պատվիրանների հետ» («Լինել արժանի տաճար մտնելու համար» Ensign, օգոստ. 2010, 8–9, կամ *Լիստիս*, օգոստ. 2010, 12–13):

- Ի՞նչ ուղիներով են արժանավորության համար պահանջներն օգնում ձեզ հասկանալ տաճարի սրբազան բնույթը և ձեր կոչումը որպես միսիոներ:
- Եթե դրանք խիստ սրբազան չեն կամ անձնական, ի՞նչ փորձառություններով կարող եք կիսվել, որոնք օգնել են ձեզ հասկանալ և զգալ տաճարի և այնտեղ կատարվող աշխատանքի կարևորությունը:

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչ իրենք պետք է անեն, արժանավայել ստանալու իրենց տաճարային օժտումները:

 *Ուշադրություն. Քաջալերեք ուսանողներին արժանի լինել և ձեռք բերել տաճարային երաշխավորագիր: Դուք կարող եք առաջարկել, որ նրանք պատրաստվեն միսիայի համար՝ որքան հնարավոր է հաճախ տաճար հաճախելով, երբ նրանց պայմանները թույլ տան կատարելու աշխատանք իրենց սեփական նախնիների և ուրիշների համար:*

Նախքան առաջ շարժվելը, դուք կարող եք նշել ձեր ուսանողներին, որ որպես միսիոներներ նրանք պետք է անեն այն ամենը, ինչ կարող են՝ խրախուսելու նոր մկրտվածներին պատրաստվել տաճար գնալու: Նորադարձները, ովքեր գնում են տաճար կատարելու փոխարինաբար մկրտություններ իրենց նախնիների համար, ամենայն հավանականությամբ ակտիվ են մնում, իսկ հետո գնում են տաճար ստանալու իրենց տաճարային օժտումը և կնքումը: Ավարտեք դասի այս մասը, կիսվելով ձեր վկայությամբ տաճարի մասին և այն հոգևոր ուժի, որը դուք ստացել եք այնտեղ երկրպագելուց:

### Մահացածներին փրկագներու Աստծո ծրագիրը

Հիշեցրեք ուսանողներին, որ Հիսուս Քրիստոսը մահից հետո այցելեց հոգևոր աշխարհի (տես 1 Պետրոս 3.18–20, 4.6): Ապա ուսանողներին խնդրեք բացել Վարդապետություն և Ուխտեր 138.29–35 հատվածները: Բացատրեք, որ այս բաժինը պարունակում է Նախագահ Ջոզեֆ Ֆ. Մաիթի տեսիլքի պատմությունը հոգևոր աշխարհի մասին: Մի քանի ուսանողի խնդրեք հերթով բարձրաձայն կարդալ հատվածները: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ արեց Փրկիչը կազմակերպելու համար ավետարանի քարոզումը մահացածներին՝ հոգևոր աշխարհում:
- Ինչպե՞ս են 33–35 հատվածներն օգնում մեզ հասկանալ այն միջոցները, որոնց շնորհիվ, ովքեր ընդունում են ավետարանը հոգևոր աշխարհում, կարողանում են ստանալ փրկության արարողությունները: (Նրանք, ովքեր ընդունում են ավետարանի ուղերձը, կարող են ունենալ իրենց կողմից փոխարինաբար կատարվող փրկող արարողություններ:)

Հանձնարարեք ուսանողների մի զույգի հերթով բարձրաձայն կարդալ վերջին երկու պարբերությունները «Տաճարներ և ընտանեկան պատմություն» բաժնի՝ 95 էջում, *Քարոզիչ Իմ Ավետարանը* ձեռնարկում: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս է Տիրոջ ծրագիրը հոգ տանում մարդկանց մասին, ովքեր մահանում են առանց ստանալու ավետարանի հիմնական արարողությունները: (**Ապրողները կարող են կատարել փրկարար արարողություններ նրանց համար, ովքեր մահացել են:**)

### Եղիայի առաքելությունը

Բացատրեք, որ Եղիան Հին Կտակարանի մարգարե էր, ով ապրել է մոտավորապես 900 տարում Ք.ժ.ա.: Մարգարե Մադաքիան մարգարեացավ, որ Եղիան վերադառնալու էր երկիր (տես Մադաքիա 4.5–6), և երբ Մորոնին հայտնվեց Ջոզեֆ Մաիթին 1823 թվականին, նա կրկնեց, որ Եղիան վերադառնալու է: Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Ջոզեֆ Մաիթի—Պատմություն 1.38–39 հատվածները, մինչ դասարանը հետևում է, գտնելով, թե ինչ է Մորոնին ուսուցանել Եղիայի մասին: Հարցրեք.

- Ի՞նչ իմացավ Ջոզեֆ Մաիթը Եղիայի մասին: (Չնայած նրանք կարող են օգտագործել տարբեր բառեր, ուսանողները պետք է հասկանան, որ **նախքան Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը, Եղիան կվերադառնա երկիր և կդարձնի զավակների սրտերը դեպի իրենց հայրերը:**)
- Ի՞նչ է նշանակում, որ զավակների սրտերը կդառնան դեպի իրենց հայրերը: (Մարդիկ հետաքրքրված և մտահոգված կդառնան անցյալ, ներկա և ապագա իրենց ընտանիքների բարօրության համար: Այս հետաքրքրությունը մասն է այն դրդապատճառի, որը ստիպում է մարդկանց հետազոտել իրենց ցեղի մահացածների վերաբերյալ արձանագրությունները և մասնակցել նրանց համար փոխարինաբար արարողություններ կատարելուն:

Բացատրեք ուսանողներին, որ 1836 թվականին Կիրթլենդի Տաճարի նվիրագործումից մեկ շաբաթ հետո, հատուկ իրադարձություններ տեղի ունեցան, որոնք արձանագրված են Վարդապետություն և Ուխտեր 110-ում: Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 110.13-16 հատվածները, մինչ դասարանը կհետևի նրան,

փնտրելով, թե ինչ Եղիան վերականգնեց երկրի վրա: Հարցրեք ուսանողներին.


- Ի՞նչ բանալիներ Եղիան վերականգնեց Ջոզեֆ Սմիթի համար: (Անհրաժեշտության դեպքում, հրավիրեք ուսանողներին նայել Վարդապետություն և Ուխտերի 110.16, ծանոթագրություն *ս-ն*, որպեսզի օգնեք նրանց հասկանալ, որ Եղիան վերականգնեց քահանայության կնքող բանալիները:)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես են քահանայության կնքող բանալիներն օրհնում ընտանիքներին, խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ բաժնի առաջին պարբերությունը, որը կոչվում է «Հավերժական ամուսնություն» *Քարոզիչ Իմ Ավետարանը*, ձեռնարկի 94 էջում: Այնուհետև հարցրեք.


- Այս պարբերության համաձայն, ո՞րն է կնքող բանալիների նպատակը, որ Եղիան վերականգնեց երկրի վրա: (Ուսանողները կարող են տարբեր խոսքերով բացատրել, սակայն նրանք պետք է նշեն հետևյալ վարդապետությունը. **Կնքող բանալիների միջոցով, սրբազան արարողություններ կարող են կատարվել տաճարներում, որոնք կապում են ընտանիքներին միմյանց հավերժության համար:**)
- Ինչպե՞ս են այս բանալիներն օրհնել ձեզ, ձեր ընտանիքին, ձեր ազգականներին և ձեր ընկերներին:

Գրատախտակին գրեք «Եղիայի ոգին»: Ցուցադրեք հետևյալ մեջբերումները և համձնարարեք ուսանողների մի զույգի դրանք բարձրաձայն կարդալ դասարանի համար.

**Ցուցադրել մեջբերումները:** Երբ հնարավոր է, լավ միտք է ցուցադրել մեջբերումները, որոնք պետք է կարդացվեն բարձրաձայն: Երբ սովորողները կարողանում են տեսնել և լսել մեջբերումը, նրանք հաճախ ավելի լավ են հասկանում, թե ինչ է ուսուցանվում: Մեջբերումների ինչպես ցուցադրումը, այնպես էլ ընթերցումը կարող են նաև թույլ տալ անկարողունակ ուսանողներին ավելի լավ հասկանալ ներկայացվող նյութը:



Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից սահմանել է Եղիայի ոգին որպես «Սուրբ Չոգու դրսևորում, որը վկայում է ընտանիքի աստվածային բնույթի մասին» (*'A New Harvest Time,' Ensign, May 1998, 34*):



Երեց Դեյվիդ Ա. Քեդնարը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից տվել է լրացուցիչ գաղափար, թե ինչպես է Եղիայի ոգին ազդում անձանց վրա. «Սուրբ Չոգու այս հատկանշական ազդեցությունը մղում է մարդկանց ճանաչել, փաստագրել և գնահատել իրենց նախնիներին և ընտանիքի անդամներին՝ թե՛ մահացած, թե՛ կենդանի:

Եղիայի Ոգին ազդում է մարդկանց վրա ինչպես Եկեղեցու ներսում, այնպես էլ դրսում: Որպես Քրիստոսի վերականգնված Եկեղեցու անդամներ, մենք ուխտի միջոցով պարտավորվել ենք փնտրել մեր նախնիներին և կատարել նրանց համար ավետարանի փրկարար արարողությունները: ...


Այդ պատճառով ենք մենք կատարում ընտանիքի պատմության ուսումնասիրություն, կառուցում տաճարներ և փոխարինաբար կատարում ծեսեր: Այս պատճառով էր Եղիան ուղարկվել՝ վերականգնելու կնքման իշխանությունը, որը կապում է երկրի վրա և երկնքում» («Ջավակների սրտերը կդառնան» *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2011, 25–26):

Օգնեք ուսանողներին գտնել և ավելի լավ հասկանալ վարդապետությունները, որոնք ուսուցանվել են Երեց Նելսոնի և Երեց Բեդնարի կողմից, հարցնելով.

- Ի՞նչ ի նկատի ունենք, երբ մենք հղում ենք կատարում «Եղիայի ոգու» վրա:

- Ի՞նչ ուղիներով կարող է Սուրբ Հոգին ազդել մեր զգացմունքների վրա մեր ընտանիքի վերաբերյալ: (**Եղիայի ոգին, որը Սուրբ Հոգու բնորոշ ազդեցությունն է, որը վկայում է ընտանիքի աստվածային բնույթի մասին և օգնում մեզ փայփայել մեր ընտանիքի անդամներին, ինչպես անցյալ, այնպես էլ ներկա:** Այն նաև պատվաստում է մեր մեջ ցանկություն՝ ապահովել փրկարար արարողություններ մեր նախնիների համար:)
- Դուք երբևէ զգացել եք, որ ձեր սիրտը դարձել է դեպի ձեր նախնիները ինչ-որ ձևով: Եթե այդպես է, ի՞նչ անելու հուշում էիք դուք ստացել: (Անհրաժեշտության դեպքում հիշեցրեք ուսանողներին դասընթացի ավելի վաղ դասերից, թե ինչպես է Սուրբ Հոգին հաղորդակցվում:

**Ընտանեկան պատմության աշխատանքին մասնակցելը**

 *Ուշադրություն. երբ դուք ուսուցանեք դասի այս բաժինը, դուք կարիք կունենաք (1) FamilySearch.org կայքից տպված չորս սերունդների լրացված տոհմաբանական մի աղյուսակի և հովհարաձև աղյուսակի, որպեսզի ցույց տաք դասարանին, (2) մեկական դատարկ տոհմաբանական աղյուսակ՝ յուրաքանչյուր ուսանողին տալու համար, և (3) մի պատմություն ձեր նախնիներից մեկի մասին՝ դասարանի հետ կիսվելու համար:*

Ցույց տվեք ուսանողներին չորս սերունդ լրացված տոհմաբանական աղյուսակը կամ հովհարաձև աղյուսակը, որը տպվել է FamilySearch.org-ից: Խնդրեք նրանց բացատրել, թե ինչ տեղեկություն են պարունակում այդ փաստաթղթերը:


Ուսանողներին բաժանեք չորս սերունդ պարունակող մեկական դատարկ աղյուսակներ: Ուսանողներին տրամադրեք մի պահ՝ ուսումնասրելու տոհմաբանական աղյուսակը և լրացնելու իրենց նախնիների անունները՝ իրենց հնարավորությունների սահմաններում:

Հարցրեք ուսանողներին.

- Որտեղի՞ց կարող եք գտնել տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են ձեր տոհմաբանական աղյուսակը կամ հովհարային աղյուսակը լրացնելու համար: (Հիշեցրեք ուսանողներին, որ իրենք պետք է առաջինը օգնություն փնտրեն ծնողներից, տատիկներից, պապիկներից կամ ընտանիքի մյուս անդամներից: Ծխի կամ ճյուղի ընտանեկան պատմության խորհրդատուները նույնպես կարող են օգնություն տրամադրել ընտանեկան պատմության հետազոտություններում: Բացի այդ, ուսանողները պետք է տեղյակ լինեն Եկեղեցու ընտանեկան պատմության կայքին՝ FamilySearch.org-ին:)



Հարցրեք, թե արդյոք ուսանողները կկամենայի՞ն կիսվել իրենց փորձառություններով, օգտագործելով FamilySearch-ը իմանալու իրենց նախնիների մասին: Եթե ուսանողները չեն օգտագործել FamilySearch-ը, տվեք նրանց մի արագ ակնարկ այն մասին, թե ինչ նրանք կարող են գտնել այնտեղ: Դուք կարող եք նույնիսկ բեռնել FamilySearch.org-ը համակարգչի վրա և որոնում կատարել, օգտագործելով ձեր ուսանողներից մեկի մահացած նախնիներից մեկի անունը: Շեշտադրեք, որ FamilySearch-ը գործիք է, որն օգնում է մեզ գտնել մեր նախնիներին և պատրաստել նրանց տեղեկությունները տաճար ուղարկելու՝ փոխարինաբար արարողություններ կատարելու համար:

 *Ուշադրություն. եթե FamilySearch-ը ձեզ ծանոթ չէ, դուք կարող եք հրավիրել ծխի կամ ճյուղի ընտանեկան պատմության խորհրդատուին, որպեսզի նա ցույց տա, թե ինչպես օգտագործել կայքը:*

Բացատրեք ուսանողներին, որ ընտանեկան պատմությամբ զբաղվելու մեկ այլ ուղի է պատմություններ հավաքելը մեր նախնիների և ընտանիքի անդամների մասին: Ընտանեկան պատմության պատմվածքները կարող են օգնել մեզ զգալ Եղիայի ոգին և մեծացնել մեր սերը և գնահատանքը ընտանիքի անդամների հանդեպ, ովքեր մեզանից առաջ են գնացել: Կարող եք կիսվել մի համառոտ պատմությամբ ձեր նախնիների մասին: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս կարող են ընտանեկան պատմության պատմվածքներն ազդել ընտանիքի անդամների հանդեպ ձեր զգացմունքների վրա:
- Ինչպե՞ս են դրանք օգնում ձեզ ավելի լավ հասկանալ, թե ով եք դուք և ինչ կարող եք դառնալ:



Տեսանյութի ցուցադրում՝ «Հիմա է ժամանակը» (3:20): Երբ նրանք դիտեն քննարկումը Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետ, խրախուսեք ուսանողներին մտածել պատճառներ, թե ինչո՞ւ են նրանք սկսել կամ կարող է ուզենան սկսել մասնակցել ընտանեկան պատմության աշխատանքին:

- Դուք ի՞նչ սովորեցիք ընտանեկան պատմության աշխատանքի մասին Երեց Բեդնարից և երիտասարդներից այս տեսանյութում:
- Ի՞նչ զգացումներ ունեցան այս երիտասարդները, երբ նրանք մասնակցեցին ընտանեկան պատմության աշխատանքին:

Պատմեք ուսանողներին, որ Երեց Բեդնարը մի խոստում տվեց երիտասարդներին, ովքեր մասնակցում են տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքին: Ցուցադրեք հետևյալ մեջբերումը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Եթե դուք հավատքով արձագանքեք ընտանեկան պատմության աշխատանքին մասնակցելու և ձեր նախնիների համար փոխարինաբար մկրտություններ կատարելու՝ հրավերին, ձեր սրտերը կդառնան դեպի հայրերը: Աբրահամին, Իսահակին և Հակոբին տրված խոստումները կարմատավորվեն ձեր սրտերում: Ձեր հայրապետական օրհնությունը ձեր տոհմաբանական գծի

հայտարարությամբ կկապի ձեզ այս հայրերի հետ և ավելի իմաստալից կդառնա ձեզ համար: Ձեր սերն ու երախտագիտությունը ձեր նախնիների հանդեպ կմեծանա: Փրկիչի մասին ձեր վկայությունը և դարձը կդառնան ավելի խորը ու հաստատուն: Եվ ես խոստանում եմ, որ դուք պաշտպանված կլինեք թշնամու սաստկացող ազդեցությունից: Մինչ դուք մասնակցեք այս սուրբ աշխատանքին և սիրեք այն, դուք պաշտպանված կլինեք ձեր երիտասարդության տարիներին և ձեր ողջ կյանքի ընթացքում» («Ջավակների սրտերը պետք է դառնան», Ensign կամ *Liahona*, նոյ. 2011, 26–27):

Հարցրեք ուսանողներին.

- Երեց Բեդնարի կողմից նշված ո՞ր օրհնությունները դուք կկամենայիք ստանալ և ինչո՞ւ: Պատասխանները կարող են ընդգրկել այն սկզբունքը, որ **ընտանեկան պատմության աշխատանքին մասնակցելը զորացնում է մեր դարձը դեպի Փրկիչը և բերում հոգևոր պաշտպանություն հակառակորդի ազդեցության դեմ:**



Դուք կարող եք օգնել ուսանողներին կիսվել անձնական փորձառությամբ, որը կապված է ընտանեկան պատմության աշխատանքի հետ՝ ուղղելով հետևյալ տիպի հարցեր.

- Արդյոք զգացել էք այս խոստացված օրհնություններից մեկը կամ ավելին ձեր կյանքում:
- Ձեզանից որևէ մեկը կամ ձեր ընտանիքի որևէ անդամ արդյոք գտնել է մի նախնու անուն և հետո գնացել տաճար փոխարինաբար մկրտվելու այդ մարդու համար: Ինչո՞վ է այդ փորձառությունը տարբերվում ինչ-որ մեկի համար մկրտվելուց, ով ազգական չէ:
- Եթե ոչ մի ուսանող չի ունեցել այս փորձառությունը, մտածե՞ք հարցնել. Ինչպե՞ս էք դուք զգացել մահացածների համար մկրտություններ կատարելու խոստացված օրհնությունները:

Եթե ձեր դասարանային քննակման ժամանակ դուք տեղեկանաք մեկ կամ ավելի շատ ուսանողների մասին, ովքեր մասնակցել են և ուժեղ զգացողություններ ունեն ընտանեկան պատմության վերաբերյալ, դուք կարող եք հարցնել նրանց, թե ինչ խորհուրդ նրանք կտային իրենց տարիքի որևէ մեկին, ով դեռ չի սկսել կատարել ընտանեկան պատմության աշխատանք:

**Ընտանեկան պատմությունն օգտագործելով հրավիրել ուրիշներին գալ դեպի Քրիստոս**

Ասեք ուսանողներին, որ ընտանեկան պատմության տեղեկություններ փնտրելը դարձել է հանրաճանաչ գործունեություն աշխարհում այսօր: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ հայտարարությունը.

**Կիսվել փորձառություններով:**  
 Երբ ուսանողները կիսվում են անձնական փորձառություններով, Սուրբ Հոգին հաճախ վկայում է իրենց փորձի ընթացքում սովորածի ճշմարտացիության մասին: Փորձառություններով կիսվելը մեկ այլ առավելություն ունի, որ ուսանողները հաճախ ոգևորվում են, երբ նրանք լսում են, թե ինչպես են իրենց հասակակիցները կիրառել ավետարանի վարդապետություններն ու սկզբունքներն իրենց կյանքում:



«Ողջ աշխարհում կան միլիոնավորներ, ովքեր աշխատում են ընտանեկան պատմության արձանագրությունների վրա: Ինչո՞ւ: Ինչո՞ւ են նրանք անում դա: Իմ համոզմամբ դա այն պատճառով է, որ նրանք զգացել են այս աշխատանքի ոգին, մի բան, որը մենք կոչում ենք Եղիայի ոգի: Դա գավակների սրտերը դեպի իրենց հայրերը դարձնելն է: Նրանց մեծ մասը չեն հետապնդում սրանում որևէ իրական նպատակ, բացի հավանաբար ուժեղ և մղող հետաքրքրասիրություն ունենալուց:

Այդտեղ պետք է լինի մի նպատակ՝ այս վիթխարի ժամանակի և փողի ծախսի համար: Այդ նպատակը, որի մասին մենք բերում ենք մեր հանդիսավոր վկայությունը, մահացած սերունդների ինքնությունը պարզելն է, որպեսզի կարողանան արարողություններ կատարվել նրանց համար իրենց հավերժական և հավիտենական օրհնության և առաջընթացի համար» (“A Century of Family History Service,” Ensign, Mar. 1995, 62):

Հարցրեք.

- Ինչպե՞ս կարող են միսիոներներն օգտագործել այս աճող, գլոբալ հետաքրքրությունը ընտանեկան պատմության հանդեպ՝ ուրիշներին ավետարանը ներկայացնելու համար:

Խնդրեք ուսանողներին բարձրաձայն կարդալ առաջին երեք և վերջին պարբերությունները «Ընտանեկան պատմություն» բաժնի, *Քարոզիչ Իմ Այնտարանը*, ձեռնարկից, էջեր 185–187: Հանձնարարեք նրանց փնտրել, թե ինչո՞ւ ընտանեկան պատմության աշխատանքի մասին խոսելը ոչ անդամների հետ բնական և ոչ սպառնալի ուղի է միսիոներների համար զրույց սկսելու: Այս պարբերությունները կարդալուց հետո, հարցրեք.

- Ինչպե՞ս կարող է ուրիշների հետ ընտանեկան պատմության մասին խոսելն արդյունավետ միջոց լինել միսիոներների համար մարդկանց գտնելու, որպեսզի ուսուցանեն: (Ուսանողները պետք է հասկանան, որ **ընտանեկան պատմությունը կարող է լինել հզոր միջոց՝ գտնելու նրանց, ում Տերը պատրաստում է՝ ընդունելու ավետարանը:** )



Ուսանողների արձագանքներից հետո պատրաստվեք ցուցադրել «Ընտանեկան Պատմություն և միսիոներական աշխատանք՝ Գտնելը» (3:53) տեսանյութը, որը մատչելի է LDS.org-ում: Երբ նրանք դիտում են, հանձնարարեք ուսանողներին մտածել, թե ինչպես կարող են օգտագործել ընտանեկան պատմության թեման՝ ուրիշների հետ զրույց սկսելու համար:

Դիտումից հետո հարցրեք.

- Ի՞նչ արեցին տեսաֆիլմի միսիոներները՝ զրույց սկսելու ուրիշների հետ ընտանեկան պատմության աշխատանքի մասին:
- Ի՞նչ ազդեցություն ունեցան ունկնդիրների վրա ընտանեկան պատմության մասին զրույցները:

Ասացեք ուսանողներին, որ նրանք այժմ գործնական աշխատանք կկատարեն, օգտագործելով տոհմաբանական աղյուսակը հրավիրելու որևէ մեկին ավելի շատ բան սովորել Եկեղեցու մասին: (Բացի այդ, դուք կարող եք հանձնարարել ուսանողներին մտածել, թե ինչպես նրանք կարող են օգտագործել մի պատմություն՝ իրենց նախնիներից մեկի մասին, սկսելու խոսակցություն ավետարանի մասին): Որպեսզի օգնեք ուսանողներին հաջողակ լինել այս հանձնարարության մեջ, հարցրեք նրանց գաղափարների մասին, թե ինչպես օգտագործեն տոհմաբանական աղյուսակը (կամ մի պատմություն նախնիներից մեկի մասին) սկսելու խոսակցություն ընտանեկան պատմության աշխատանքի մասին և թե ինչպես այն կարող է տանել դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման ուղեծրը: Երբ նրանք պատասխանեն, գրեք նրանց պատասխանները գրատախտակին:

Գծեք նրանց գաղափարներից մի քանիսը և ցույց տվեք դասարանին, թե ինչպես օգտագործեն տոհմաբանական աղյուսակը սկսելու խոսակցություն ինչ-որ մեկի հետ ավետարանի մասին: Այնուհետև ուսանողներից զույգեր կազմեք և հանձնարարեք նրանց գործնականում անել նույնը: Երբ յուրաքանչյուր ուսանող ունեցել է հնարավորություն ուսուցանելու դասարանի մեկ ուրիշ անդամի, ուղղեք մի քանի հետևյալ տիպի ստուգող հարցեր.

- Ձեր կարծիքով, ի՞նչը լավ ստացվեց այս ուսուցման գործընթացում:
- Ի՞նչը կցանկանայիք ավելի լավ անել:



Եթե ժամանակը թույլ է տալիս, բացատրեք ուսանողներին, որ շատ տարածքներում, որտեղ նրանք կծառայեն, նրանց որպես միսիոներներ կխնդրեն աջակցել Եկեղեցու քիչ ակտիվ անդամներին՝ զորացնելու նրանց հավատքը և պարտավորվածությունը: Ընտանեկան պատմությունը կարող է լինել արժեքավոր միջոց օգնելու այդ անձանց՝ զգալու Սուրբ Հոգին և գալու դեպի Քրիստոս: Այնուհետև ցույց տվեք տեսանյութը («Ընտանեկան պատմություն և միսիոներական աշխատանք՝ ակտիվացում»), “Family History and Missionary Work—Activation” (3:05), և հանձնարարեք ուսանողներին փնտրել ուղիներ, երբ ընտանեկան

պատմության աշխատանքը կարող է օգտագործվել օգնելու ակտիվացնել քիչ ակտիվ անդամներին:

Դիտումից հետո հարցրեք.

- Ինչպե՞ս կարող ընտանեկան պատմության աշխատանքի և հավերժական ընտանիքների վարդապետության մասին խոսելն օգնել՝ զորացնելու քիչ ակտիվ անդամների հավատքը:


Տվեք ուսանողներին մտածելու մի պահ, թե ինչ կարող են այժմ անել և ինչ կարող են անել որպես միսիոներներ օգտագործելու ընտանեկան պատմության աշխատանքը որպես միջոց հրավիրելու մյուսներին գալու դեպի Քրիստոս: (Երբ Հոգուց հուշում է գալիս, դուք կարող եք կանչել մի քանի ուսանողների կիսվելու իրենց պատասխաններով դասարանի հետ:) Կիսվեք ձեր վկայությամբ այն սկզբունքների վերաբերյալ, որոնք ուսուցանվեցին այս դասում:

### Գործելու հրավեր

Հրավիրեք ուսանողներին մասնակցել այժմ փրկության գործին, կատարելով հետևյալ գործողություններից մեկը կամ մի քանիսը.

- Բացեք ՎՕՍ Հաշիվ, որպեսզի հասանելի լինեք FamilySearch.org-ում: Եթե հնարավոր է ստեղծեք և տպեք չորս սերունդների տոհմաբանական աղյուսակ կամ հովհարածն աղյուսակ ձեր ընտանիքի տեղեկություններով:
- Ցույց տվեք ձեր չորս սերնդով տոհմաբանական աղյուսակը որևէ ընկերոջ կամ հարևանի և հրավիրեք նրան ավելի շատ բան սովորել ընտանեկան պատմության մասին: Նշանակեք մի ամսաթիվ՝ տանելու ձեր ընկերոջը ընտանեկան պատմության խորհրդատուի մոտ կամ այցելելու ընտանեկան պատմության գրադարան:
- Օգտագործելով FamilySearch.org-ը, նշեք մեկ կամ մի քանի ձեր նախնիներին, ովքեր կարիք ունեն իրենց համար տաճարային արարողություններ կատարելու: Եթե հնարավոր է, պատարաստեք տեղեկություն նրանց տաճարային աշխատանքի համար, որպեսզի կատարվեն մկրտության և հաստատման արարողությունները նրանց համար:

# Իմ չորս սերունդների տոհմաբանական աղյուսակը



© 2014 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՆՈՐ ԻՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀԱԾ ԵՍ:







ՄԵՄԻՆԱՐԻԱՆԵՐ և  
ԿՐՈՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

---

ՀԻՍՈՒՍ  
ՔՐԻՍՏՈՍԻ  
ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԻ ՄՐԵՐԻ  
ԵԿԵՂԵՑԻ